

**«ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ**

**ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
11 (2)**

Երևան 2023

Ցեղասպանագիտական հանդես

Գլխավոր խմբագիր

Հարություն Մարության, պ.գ.դ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Գլխավոր խմբագրի տեղակալ

Էդիտա Գոդյան, պ.գ.թ.,

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Խմբագրական խորհուրդ

Աննա Ալեքսանյան, Քլարկի համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մելինե Անուսյան, պ.գ.թ., Արևմտահայոց հարցերի ուսումնասիրությունների կենտրոն,
Հայաստան

Արսեն Ավագյան, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Ռայմոնդ Գևորգյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ
արտասահմանյան անդամ, Ֆրանսիա

Անդրանիկ Դաթեսյան, քաղաքագիտության դոկտոր, Հայկազյան համալսարան,
Լիբանան

Ռոբերտ Թաթոյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Վահե Թաշճյան, պատմագիտության դոկտոր, «Հուշամատյան» ծրագիր, Գերմանիա

Վալերի Թունյան, պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայաստան

Անահիտ Խոսրոնա, պ.գ.թ., Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոն, Չիկագոյի
համալսարան, ԱՄՆ

Աշոտ Հայրունի, պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան

Էլկե Հարթման, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Բեռլինի ազատ համալսարան,
Գերմանիա

Սևանե Ղարիբյան, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ժնևի համալսարան,
Շվեյցարիա

Նարինե Մարգարյան, պ.գ.թ., «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ»
հիմնադրամ, Հայաստան

Հայկ Մարտիրոսյան, պ.գ.թ., Լեփսիուսհաուս, Պոտսդամ, Գերմանիա

Վահրամ Շեմասյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի պետական
համալսարան, Նորթրիջ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Պետրոս Տեր-Մաթոսյան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, Ներքասկա-Լինքոլնի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Ռուբինա Փիրումյան, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր, Կալիֆորնիայի
համալսարան, Ամերիկայի Միացյալ Նահանգներ

***Ts'èghaspanagitakan handes* (“Journal of Genocide Studies”)**

Editor in Chief:

Dr. Harutyun Marutyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Associate Editor:

Dr. Edita Gzoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Editorial Board

Anna Aleksanyan, Clark University, USA

Dr. Meline Anumyan, Research Center on Western Armenian Studies, Armenia

Dr., Prof. Arsen Avagyan, Yerevan State University, Armenia

Dr. Antranik Dakessian, Haigazian University, Lebanon

Dr., Prof. Bedross Der Matossian, University of Nebraska-Lincoln, USA

Dr., Prof. Elke Hartmann, Free University Berlin, Germany

Dr., Prof. Ashot Hayruni, Yerevan State University, Armenia

Dr., Prof. Sévane Garibian, University of Geneva, Switzerland

Dr., Prof. Raymond Kevorkian, foreign member of National Academy of Sciences of the Republic of Armenia, France

Dr. Anahit Khosroeva, Center for Middle Eastern Studies, University of Chicago, USA

Dr. Narine Margaryan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Hayk Martirosyan, Lepsiushaus, Potsdam, Germany

Dr., Prof. Rubina Perroomian, University of California, Los Angeles (UCLA), USA

Dr., Prof. Vahram Shemmassian, California State University, Northridge, USA

Dr. Vahé Tachjian, Houshamadyan Project, Germany

Dr. Robert Tatoyan, Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

Dr. Valery Tunyan, Institute of History, National Academy of Sciences of the Republic of Armenia

Цехаспанагитакан андес (“Журнал исследований геноцида”)

Главный редактор

Арутюн Марутян, доктор ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,”
Армения

Заместитель главного редактора

Эдита Гзоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Редакционная коллегия

Арсен Авагян, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Ашот Айруни, доктор ист. наук, профессор, Ереванский государственный университет, Армения

Анна Алексанян, Кларкский университет, Соединённые Штаты Америки

Мелине Анумян, канд. ист. наук, Центр изучения западноармянских вопросов, Армения

Элке Артманн, доктор истории, профессор, Свободный университет Берлина, Германия

Севанэ Гарибян, доктор права, профессор, Женевский университет, Швейцария

Раймонд Геворгян, доктор истории, профессор, иностранный член Национальной академии наук Республики Армения, Франция

Андраник Дакесян, доктор политологии, Айказян университет, Ливан

Айк Мартиросян, канд. ист. наук, дом-музей Лепсиуса (Лепсиусхаус), Потсдам, Германия

Нарине Маргарян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Рубина Пирумян, доктор филологии, профессор, Калифорнийский университет в Лос-Анджелесе, Соединённые Штаты Америки

Роберт Татоян, канд. ист. наук, фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Ваге Ташчян, доктор истории, проект “Ушамадян,” Германия

Петрос Тер-Матосян, доктор истории, профессор, Университет Небраски-Линкольна, Соединённые Штаты Америки

Валерий Тунян, доктор ист. наук, профессор, Институт истории Национальной академии наук Республики Армения

Анаит Хосроева, канд. ист. наук, Центр ближневосточных исследований, Чикагский университет, США

Ваграм Шеммассян, доктор филологии, профессор, Калифорнийский государственный университет в Нортридже, Соединённые Штаты Америки

Յեղասպանագիտական հանդեսը (ISSN 1829-3980) գրախոսվող պարբերական է և լույս է տեսնում տարին երկու անգամ՝ մայիսին և դեկտեմբերին, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի կողմից (Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0028, Ծիծեռնակաբերդի խճուղի 8/8, հեռ.՝ (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am): Հանդեսը Հայաստանում ցեղասպանագիտության ոլորտի հիմնական պարբերականն է, որի նպատակն է ցեղասպանությունների ուսումնասիրությունը՝ պատմական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդագրական, կրոնական, մարդաբանական, իրավական, սեռային, մշակութաբանական և այլ գիտակարգերի տեսանկյունից՝ Հայոց ցեղասպանության շեշտադրմամբ: *Յեղասպանագիտական հանդեսում* տպագրված հոդվածները, գրախոսությունները և այլ նյութերն արտահայտում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի մոտեցումներին: «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը որևէ իրավական պատասխանատվություն չի կրում հեղինակների սխալների և բացթողումների համար: *Յեղասպանագիտական հանդեսն* ինդեքսավորվում է Գիտական հղման հայկական ցուցիչ (ԳՀՀՑ) մատենագիտական շտեմարանում: Հոդվածները և գրախոսությունները կարելի է ներկայացնել տպագիր կամ ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ handes@genocide-museum.am:

Ts'eghaspanagitakan handes (“Journal of Genocide Studies”) (ISSN 1829-3980) is a peer-reviewed journal and published twice a year in May and December by the Armenian Genocide Museum-Institute Foundation (8/8 Tstitsernakaberd highway, 0028 Yerevan, Republic of Armenia, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). *Journal of Genocide Studies* is the main forum for scholarship in the field of genocide studies in Armenia and features articles, reviews and other relevant materials related to the study of genocides from historical, social-psychological, demographic, religious, anthropological, legal, gender, cultural and other scientific fields with a special emphasis on the Armenian Genocide. Articles, reviews and other materials published in the *Journal of Genocide Studies* reflect the opinion of the authors and may not necessarily coincide with the approaches of the Armenian Genocide Museum-Institute Foundation. The Armenian Genocide Museum-Institute Foundation cannot accept any legal responsibility for the errors and omissions made by the authors. *Journal of Genocide Studies* is indexed/abstracted in the Armenian Science Citation Index (ASCI). Articles, reviews, and other relevant materials can be presented in print or sent to the following address: handes@genocide-museum.am.

Цехаспанagitakan андес (“Журнал исследований геноцида”) (ISSN 1829-3980) – рецензируемое издание, выходит в свет два раза в год, в мае и декабре. Журнал издается фондом “Музей-институт Геноцида армян” (Республика Армения, г. Ереван, 0028, Цицернакабердское шоссе 8/8, (+374 10) 39 09 81, www.genocide-museum.am). Это единственное в Армении периодическое издание в области геноцидоведения, целью которого является научное изучение геноцидов с исторической, социально-психологической, социологической, этнографической, религиозной, антропологической, юридической, гендерной, культурной и других точек зрения с акцентированием на исследование Геноцида армян. Статьи, обзоры и другие материалы, опубликованные в “Журнале исследований геноцида,” отражают мнение авторов и могут не совпадать с подходами фонда “Музей-институт Геноцида армян.” Фонд “Музей-институт Геноцида армян” не несет юридической ответственности за ошибки, допущенные авторами. “Журнал исследований геноцида” индексируется в Армянском индексе научного цитирования (АИНЦ). Статьи, обзоры и другие материалы могут быть представлены в печатном виде или отправлены по следующему электронному адресу: handes@genocide-museum.am.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Նարինե Վ. Մարգարյան

*Բերվին արաբների վերաբերմունքը համակենտրոնացման ճամբարների հայ արտոսականների նկատմամբ.....*9

Ռոբերտ Ա. Թաթոյան

*Զմյուռնիայի աղետից հետո Հունաստանում ապաստանած հայ փախստականները. թվաքանակ, բաշխում, ներքին ու արտաքին միգրացիաներ (1922–1928 թթ.).....*40

Անահիտ Խ. Աստոյան

*Զմյուռնիայի հայության տնտեսական վիճակն Առաջին աշխարհամարտից առաջ և 1922 թ. ունեցրելուր.....*70

Մարիյա Ա. Բրուտյան

*Զմյուռնիան 1922-1923 թթ.՝ ըստ հունական «Ամայթեա» թերթի (1923 թ. հունվար-օգոստոս).....*89

Արմինե Վ. Վահանյան

*Օրագրային մեթոդը՝ որպես ցեղասպանության հոգեցունց իրականության արտացոլման ներքին մեխանիզմ (բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի օրինակով).....*100

Նարեկ Մ. Պողոսյան

*Իրաքի քրդերի դեմ «Անֆալ» արշավը.....*114

*Էթիկայի կանոններ.....*156

*Ցուցումներ հեղինակներին.....*157

CONTENT

ARTICLES

Narine V. Margaryan

The Attitude of Bedouin Arabs towards the Armenian

Refugees in the Concentration Camps.....9

Robert A. Tatoyan

Armenian Refugees Found Asylum in Greece after Smyrna Catastrophe:

Numbers, Distribution, Internal and External Migrations (1922–1928).....40

Anahit Kh. Astoyan

The Economic Situation of the Armenians of Smyrna before the First World War

and Deprivation of Property in 1922.....70

Mariya A. Brutyan

Smyrna in 1922-1923 According to the Greek Newspaper “Amalteya” (January-August 1923).....89

Armine V. Vahanyan

The Diary Method as an Internal Mechanism for the Expression of Spiritual Reality

of Genocide (on the Materials of the Diary of Doctor Garabed Hatcherian).....100

Narek M. Poghosyan

The “Anfal” Campaign against the Kurds of Iraq.....114

Ethical Guidelines.....156

Instructions for Authors.....157

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Нарине В. Маргарян

*Отношение арабов-бедуинов к депортированным армянам в концентрационных лагерях.....*9

Роберт А. Татоян

*Армянские беженцы, нашедшие приют в Греции после Смирнской катастрофы: численность, распределение, внутренние и внешние миграции (1922–1928 гг.)*40

Анаит Х. Астоян

*Экономическое состояние армян Смирны перед Первой мировой войной и их экспроприация в 1922 году.....*70

Мария А. Брутян

*Смирна в 1922-1923 гг. по данным греческой газеты “Амальтея” (январь-август 1923 г.).....*89

Армине В. Ваганян

*Дневниковый метод как внутренний механизм выражения духовной реальности геноцида (по материалам дневника доктора Карапета Хачеряна).....*100

Нарек М. Погосян

*Кампания “Анфаль” против курдов Ирака.....*114

*Правила этики.....*156

*Руководство для авторов.....*157

ԲԵՂՎԻՆ ԱՐԱԲՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՄԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ՀԱՄԲԱՐՆԵՐԻ ՀԱՅ ԱՔՍՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՐ

Նարինե Վ. Մարգարյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ

Հայոց ցեղասպանության իրականացման ընթացքում հայ տարագիրները բռնի տեղահանվում են սիրիական անապատներ՝ ճանապարհին պարբերաբար ենթարկվելով քարավաններն ուղեկցող ոստիկանների, տարածքի քրդերի ու թուրքերի բռնություններին: Տեղահանության ողջ ընթացքում համակենտրոնացման վայրերում կարևոր դերակատարություն ունեին նաև տեղի արաբները, մասնավորապես՝ բեդվին արաբները, որոնց դիրքորոշումը կարող էր իրենց և հարակից ցեղախմբերի շրջաններում հայ տարագիրների հետագա ճակատագրի հարցում վճռորոշ լինել:

Սիրիայի արաբներն ականատես են եղել հայերի ցեղասպանությանն ու տեղահանությանը: Հայ տարագիրների նկատմամբ արաբների դիրքորոշումը տարբեր դրսևորումներ է ունեցել՝ քաղաքական և տնտեսական տարբեր իրավիճակներով պայմանավորված՝ կարելի է հանդիպել դրականից մինչև խիստ բացասական վերաբերմունքի:

Հոդվածում ուսումնասիրվել է հայ գաղթականների նկատմամբ ցուցաբերված վերաբերմունքն արաբական ցեղախմբերում՝ քաղաքական իրավիճակի, ցեղախմբերում տիրող տրամադրությունների, նրանց ընկալումների և դրանցից բխող գործողությունների (ինչպես վերնախավում, այնպես էլ անհատների մակարդակներում) համատեքստում: Քննարկվել են արաբական ցեղախմբերի ցուցաբերած օգնությանը նպաստող կամ խանգարող հանգամանքները, վերլուծվել դրանց պատճառներն ու հետևանքները: Աղբյուրագիտական հենք են ծառայել ժամանակի մամուլը, մի շարք հուշամատյաններ, ժողովածուներ, վերապրողների տպագիր և անտիպ հուշագրություններ, ինչպես նաև օտարերկրացի ականատեսների, դիվանագետների վկայություններ:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, սիրիական անապատներ, բեդվիններ, արաբական ցեղախմբեր, շեյխ, Շամմար, Անագե, Բակկարա, հայ տարագիրներ, որբեր, կանայք, վկայություն, վերաբերմունք, ինքնություն, ինտեգրում:

Հոդվածը ներկայացվել է՝ 03.10.2023: Ընդունվել է տպագրության 15.11.2023:

The article was submitted on 03.10.2023 and accepted for publication on 15.11.2023.

Статья поступила 03.10.2023 и была принята к публикации 15.11.2023.

Ինչպես հղել՝ Նարինե Վ. Մարգարյան, «Բեդվին արաբների վերաբերմունքը համակենտրոնացման ճամբարների հայ քաղաքականների նկատմամբ», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 9-39:

How to cite: Narine V. Margaryan, “The Attitude of Bedouin Arabs towards the Armenian Refugees in the Concentration Camps,” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 9-39.

Как сослаться: Нарине В. Маргарян, “Отношение арабов-бедуинов к депортированным армянам в концентрационных лагерях,” *Цехаспанagitakan андес* 11, no. 2 (2023): 9-39.

Ներածություն

Հայոց ցեղասպանության հետևանքով հայ տարագիրները հայտնվում են Սիրիայում՝ մի ժամանակաշրջանում, երբ Առաջին համաշխարհային պատերազմը շարունակվում էր, սով էր, Սիրիան դեռ համարվում էր Օսմանյան կայսրության մաս և կիզակետերից մեկը, իսկ մեծ տերությունները Մերձավոր Արևելքում իրենց քաղաքական սահմաններն էին ուրվագծում: Աշխարհամարտը ծանր է անդրադառնում արաբների վրա. աշխատուժի մեծ մասը զորակոչվում է բանակ, ռազմական նպատակների համար գյուղացիներից բռնագրավվում են անասուններ, պարենամթերք, աստիճանաբար ավելանում է դասալիքների թիվը, հակաթուրքական տրամադրություններն են սկսում գերիշխել՝ թուրքական կողմի վերահսկողության և բազմապիսի սպառնալիքներին զուգահեռ: Սիրիայում և Պաղեստինում թուրքական չորրորդ բանակի հրամանատար էր նշանակվել Ահմեդ Ջեմալը², որի ձեռքում էր կենտրոնացված քաղաքացիական և ռազմական իշխանությունը: Աստիճանաբար տարածում է ստանում արաբական ազգային գաղափարախոսությունը, որի հետևանքով հասունանում են ապստամբության միջոցով Օսմանյան կայսրության տիրապետությունից դուրս գալու ծրագրերը³: Արաբները հստակ պատկերացում չունեին հայերի՝ իրենց երկիր քարտրվելու իրական պատճառների, ինչպես նաև թուրքերի վերջնական նպատակադրության մասին:

Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիա հասած հայ տարագիրների և նրանց նկատմամբ անապատաբնակ արաբների վերաբերմունքին անդրադառնալիս պետք է

1 Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակահատվածում Սիրիան՝ որպես աշխարհագրական միավոր, ներկայիս Սիրիայի Արաբական Հանրապետությունից ավելի մեծ տարածք է ներառել. 1872-1918 թթ. բաժանվել է Հայեայի, Դամասկոսի, Բեյրութի նահանգների, Չորի սանջակի, Լեռնային Լիբանանի և Երուսաղեմի, 1895 թ. սկսած՝ նաև Քարաքի մուլթասարիֆությունների:

2 Հայոց ցեղասպանության տարիներին հայ տարագիրների նկատմամբ Ջեմալ փաշայի գործունեության վերաբերյալ կան տարբեր գնահատականներ: Հարկ ենք համարում նշել, որ տեղահանման և բնաջնջման ճանապարհին գտնվող հայերի նկատմամբ ցուցաբերած որոշակի մեղմ դիրքորոշումը պայմանավորված է եղել ոչ այնքան Ջեմալ փաշայի մարդասիրական մղումներով, որքան քաղաքական հաշվարկով: Հայերին նա դիտարկում էր որպես Սիրիայում և Լիբանանում արաբներին հավասարակշռող տարր և, հայարհեստավորներին արաբական տարածքներում բնակեցնելով, ձգտում էր լուծել երկու խնդիր. առաջինը՝ թուլացնելն էր արաբական ներկայությունը, արաբական ազգային-ագատագրական շարժման միտումները (բացի այդ՝ նա գիտակցում էր դեպի ֆրանսիական կողմ արաբների հակվածությունը), երկրորդ՝ նա ստեղծել էր բանակի կարիքները հոգալու նոր հենարան: Ռազմավարական մոտեցումներով պայմանավորված՝ Ջեմալը կիսաստրկային, կիսագետտոյական պայմաններում շահագործում էր հայ տարագիրների ներուժը: 1916 թ. կեսերին Ջեմալ փաշայի նախաձեռնությամբ հիմնվել էր արիեստագործական վեց ֆաբրիկա, որտեղ աշխատում էր մոտ 10 000 հոգի, հիմնականում՝ կանայք և դեռատի աղջիկներ: Որպես փոխհատուցում նրանք Ջեմալ փաշայի ստորագրությամբ վկայականներ էին ստանում և զինվորների համար հագուստ և սպիտակեղեն կարում: Թերևս այս տեսանկյունով է կարելի բացատրել ժամանակ առ ժամանակ հայ տարագիրների նկատմամբ նրա ձեռնարկած քայլերը: Մանրամասն տե՛ս Արսեն Ավագյան, Կերածական. – Հասան Ամջա, *Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը)*, (Երևան, ՀՅԹԻ, 2007) 21, Վահէ Թաշճեան, *Օրագիր եղեռնի ու պայքարի. Շողակաթին մահը Սալամիայի մէջ* (Հալէպ, Ոսկետառ, 2019), 93-107, Նայիմ Ալ Յաֆի, *Արյունարբու Ջեմալ փաշա* (Լաթակիա, 1992):

3 David Fromkin, *A Peace to End All Peace: The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East* (Henry Holt and Company, 2001); Ali A. Alawi, *Faisal I of Iraq* (New Haven and London: Yale University Press, 2014).

շեշտել ամենակարևոր գաղափարը: Երբ խոսում ենք արարների դիրքորոշման մասին առհասարակ, ամենևին չի նշանակում, որ արարների՝ հայերին փրկելու մասին է խոսքը. դա իրականում հեռու է փրկություն⁴ կոչվելուց:

Հարցը փրկության տեսանկյունից դիտարկելով այն վերածվում է «Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի խախտման, երբ մարդիկ չեն սպանվում, կենդանի են մնում, սակայն դա չի ենթադրում, որ նրանք ցեղասպանության զոհեր չեն: Եթե նրանց կենդանի մնալն ուղեկցվել է վերոնշյալ վեց կետերից թեկուզ և որևէ մեկի կիրառմամբ, նրանք համարվում են ցեղասպանության ենթարկված, սակայն կենդանի մնացած: Նրանք, փաստորեն, այս կամ այն կերպ փրկվել են ցեղասպանությունից, վերապրել են այն, սակայն ենթարկվել են ցեղասպանական գործողությունների⁵: Խոսքը վերաբերում է արարների ցուցաբերած աջակցության միջոցով հայ գաղթականների վերապրելը, ֆիզիկական գոյությունն ինչ-որ կերպ պահելը հնարավոր դարձնելուն: Հողվածում վերոնշյալ խնդիրը դիտարկվում է կոնկրետ օրինակների ու վերլուծությունների միջոցով:

Հայերի տեղահանություններն ու բնաջնջումը կազմակերպվում էր Կ.Պոլսից հրահանգող նախարարական հեռագրերի համաձայն. գաղթականներն անցնում էին Ադանա – Հալեպ երկաթգծի երկայնքով՝ Մամուրա, Ինթիլի, Իսլահիյե, Գաթմա, Ռաջո, Ազազ, Բաբ վայրերում տեղակայված համակենտրոնացման ճամբարներով, որտեղից էլ Հալեպի շրջակայքում տեղակայված քարավաններն ուղարկվում էին Մեսքենե, ապա՝ Եփրատի հունով դեպի հարավ՝ Տիրսի, Աբու Հարար, Համամ, Ռաքքա, Սաբղա, Դեր Զոր, մյուս կողմից էլ՝ Ռաս ու Այն, Հասիջե, Շադադիյե, Սուվար, Մարաթ և հարակից անապատային շրջաններ⁶, որտեղ պետք է ի կատար ածվեր հայոց ողբերգության վերջին արարը⁷:

Կ.Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն հուշերում վկայում է, որ երիտթուրքական կառավարությունը 2 մլն հայությանը որոշում է տեղափոխել անապատ՝ գիտակցելով, որ «հայ տարագիրների մեծ մասը սահմանված վայրը չէր կարող հասնել. ծարավից, քաղցից կմահանային կամ զոհ կդառնային անապատների վայրենի

4 Իրական և կեղծ փրկության վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Richard G. Hovannisian, “Intervention and Shades of Altruism during the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin’s Press, 1992), 173-207, Հարություն Մարության, «Հայոց ցեղասպանության տարիներին հայերի իրական և կեղծ փրկության խնդիրը», *Լրաբեր հասարակական գիտությունների* 2 (2018), 30-60:

5 Հարություն Մարության, ««Փրկություն» եզրույթի մեկնաբանության շուրջ», *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.*, խմբագիրներ՝ Հ. Մարության, Ն. Մարգարյան (Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020), 52:

6 Քարավանների ուղղությունների մասին ավելի մանրամասն տե՛ս Map of the 1915 Armenian Genocide in the Turkish Empire, <https://www.armenian-genocide.org/map-full.html#>, դիտվել է՝ 24.10.2023:

7 Մուսա Բրենս, *Անպատիժ ցեղասպանությունն մը հայասպանությունը* (Պեյրուք, Համազգային, 1969), 49:

մուսուլման ցեղերին»⁸: Դեռ ավելին՝ Մորգենթաունն նշում է, որ երիտթուրքերը հայերին տարագրում էին սիրիական անապատ՝ «նվազագույն չափով անգամ մտադրություն չունենալով հայերին այդ երկրում հաստատելու»⁹:

Մուհամմադ Քուրդ Ալին¹⁰ նույն կարծիքն է հայտնում, որ երիտթուրքական կառավարությունը ցանկանում էր արաբների շրջանում շահարկել իսլամի գործոնը՝ նրանց հայերի դեմ լարելով, որի հետևանքով արաբները պետք է երիտթուրքերի կիսատ թողած գործն ավարտեին¹¹:

Երիտթուրքական կառավարության նույն մտադրությանն է անդրադառնում Դամասկոսում Գերմանիայի հյուպատոս Լոյթվեդ Հարդեգը Կ.Պոլսի դեսպանին հասցեագրած նամակում, որտեղ գրում է. «Հալեպում տեղակայված հայ գաղթականների Մոսուլ և Դեր Ջոր ուղարկելու նպատակը նրանց բեդվիններին որպես զոհ հանձնելն է»¹²:

Փաստորեն, սկսվել էր «Սիրիայից Սիրիա», «անապատից անապատ» տարագրության փուլը, որտեղ, ինչպես վկայում են հայկական և արաբական աղբյուրները, կազմակերպվում էին հիմնական ջարդերը¹³: Թուրք ոստիկանների հսկողությամբ անապատներում տեղից տեղ անցնող քարավանների հայ գաղթականները զրկված են եղել ապրելու միջոցներից: Տաժանակիր ճամփորդության վերջնականատակը նրանց «.... բռնամահով հալել-մաշել սպառել, մինչև անապատներու խորերը անոնց մնացորդները ցրուել, ոսկերտոիքն իսկ անհետացնել»-ն է եղել, ընդ որում՝ «.... Կարաւանի մը մինչև և վերջնական բնացնջումը պէտք էր աստիճանաբար ըլլար, այն է՝ օրստօրէական սպառումով»¹⁴:

«Սուրուն, Բագգա, Պապ, Մէմբիճ, Հալէպ եւ այլ շատ մը տեղեր հաստատուած են հիւանդանոց կամ պաղչէ անունին տակ այսպիսի ջարդարարներ, մահաստաններ, ուր եկող-հասնող ժողովուրդը իր վերջնական հանգիստը կը գտնէ.... Իսկ թէ անոնք որ դեռ աներեսութեամբ կը յամառին.... դատապարտուած են շարունակելու Մահուան Ճանապարհը դէպի վար, դէպի ներս անապատները, մինչև որ անոնք ալ ճերմակ-Ջարդով սպառին. անցնին, վերջանան....»¹⁵:

8 Henry Morgenthau, *Ambassador Morgenthau's story* (NY: Doubleday, Page & Company, 1918), 309.

9 Նույն տեղում:

10 Մուհամմադ Քուրդ Ալի՝ սիրիացի քաղաքական ու մշակութային գործիչ (1876-1953): 1920 թ. ստանձնել է Սիրիայի Գիտությունների նախարարության աշխատանքների կառավարման գործը, հիմնել է Արաբական գիտությունների խորհուրդը՝ երկար տարիներ վարելով վերջինիս տնօրենի պաշտոնը: 1908 թ. Դամասկոսում սկսել է հրատարակել ու խմբագրել է «Ալ-Մուքթաբաս» օրաթերթը, որտեղ տպագրվել են հայերի տեղահանությունների, Սիրիայում նրանց հաստատման և թվաքանակի հետ կապված կյուրթեր:

11 Մուհամմադ Քուրդ Ալի, *Շամի ծրագրերը* (Դամասկոս, 1983), հ. 3, 163 (արաբերեն):

12 *Deutschland und Armenien, 1914-1918, Sammlung diplomatischer Aktentücke, herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius* (Bremen: Donnat Temmen Verlag, 1986), 272-273.

13 Արամ Անտոնյան, *Մեծ ոճիրը* (Երևան, Արևիկ, 1990):

14 Կարապետ Գաբրիելեան (Գուժկան Սերաստիոյ), *Եղեռնասպանու Փորնու Հայոց եւ նորին Մեծի մայրաքաղաքին Սերաստիոյ* (Պոսթըն, Հայրենիք, 1924), 319-320:

15 Նույն տեղում, 359:

Յեղասպանությունը վերապրած Մելքոն Ասատուրը¹⁶ թվարկում է այն բոլոր մեթոդներն ու պայմանները, որոնք երիտթուրքական կառավարությանն աջակցել են գործել «հայ կալանատուր և ձեռնկապ գաղթականի դէմ»՝ հավելելով, որ բնաջնջման գործընթացն ավարտին հասցնելու համար կառավարությունն ուներ նաև անտես զինակիցներ՝ թշվառություն, համաճարակներ, ինչպես նաև պատմաքաղաքական իրավիճակի պատեհություն¹⁷: Նշելով հետևյալ հավաքակալանները՝ Օսմանիյե, Մամուրիյե, Գանլը Կեչիտի, Հասան Բեյլի, Իսթիլի, Իսլահիյե, Ռաջոյի դաշտերը, Գաթմա, Ազազ, Միջագետքի և Սիրիայի անապատները, Ռաքքա, Գատեմ, նա որակում է վերջիններս «Թուրքիոյ շահած ճակատներն են յաղթապանծ»¹⁸:

Յեղահանության ողջ ընթացքում համակենրոնացման վայրերում կարևոր դերակատարություն է ունեցել նաև տեղի արաբ ժողովուրդը, մասնավորապես՝ բեդվինները, որոնք կարող էին իրենց ցեղախմբերի և նրանց հարակից շրջաններում իրավիճակ փոխել: Հիմնվելով հուշագրությունների, վավերագրերի վրա՝ կարելի է փաստել վրանաբնակ արաբների ներգրավվածությունը տարագիրներին ցուցաբերած աջակցությունից մինչև քարավանների կողոպուտների ու սպանությունների հարցում: Հայերը տարագրվել էին տարերային ձևով, բացի դրանից՝ տեղի արաբներին ժամանակ էր հարկավոր սիրիական անապատներում հայերի հայտնվելու պատճառները և դրանցից բխած հետևանքներն ու բարդությունները գիտակցելու համար:

Դրական կամ բացասական վերաբերմունքի դրսևորումներն ունեցել են իրենց հիմնավորումները: Դրական վերաբերմունքը, մարդասիրական կամ շահադիտական բնույթից զատ, կարելի է հիմնավորել արաբների այն մտավախությամբ, որ իրենք նույնպես կանգնած են եղել թուրքական վտանգի առջև՝ որպես բախտակից ժողովուրդ. հայերի բնաջնջմանը կարող էր հաջորդել արաբներինը: Բացի այդ՝ հայերի տարագրության ժամանակ տուժել է նաև տեղի արաբ ժողովուրդը. տիրող սովն ու համաճարակները տարածվել են նաև իրենց վրա: Տեղահանվածների հարցերով Հալեպի գրասենյակի գլխավոր տնօրենի օգնական Աբդուլահատ Նուրի բեյն այդ կապակցությամբ հայտարարում է, որ թուրքական ապագայի համար պետք է հայերից ու արաբներից միասնաբար ազատվել¹⁹: Բացասական վերաբերմունքը պայմանավորված է եղել արաբների ցուցաբերած զգուշավորությամբ կրոնապես ու բարքերով տարբերվող, տեղահանված, իրենց աղքատ երկրում աղքատությունը խորացնող հազարավոր մարդկանց խմբի հետ, որը կարող էր, օրինակ, իրենց ապրուստի միջոցը կամ աշխատանքը վերցնել: Այս պարագայում պետք է հաշվի առնել նաև օտար-յուրային գաղափարախոսության ազդեցությունը, «օտարի» թիրախավորման, ապամարդկայնացման, «թշնամու» կերպարի ձևավորման մեխանիզմ-

16 Մելքոն Ասատուրը «Արևելյան Մամուլ» օրաթերթում 1921-1922 թթ. 88 մասերից կազմված հոդվածաշարով հրատարակել է իր գաղթի ճանապարհի հուշերը՝ «Տէյր-էլ-Ջօր» վերտառությամբ:

17 Մելքոն Ասատուր, «Տէյր-էլ-Ջօր. Հայ ազգին գոյամարտը», *Արևելեան մամուլ* (Իզմիր), 25 հոկտեմբերի 1921:

18 Նույն տեղում:

19 Աստոնյան, *Մեծ ոճիրը*, 25:

ները՝ բռնության զանգվածայնությունն ապահովելու համար: Վերջիններս հմտորեն կիրառվում էին երիտթուրքական կառավարության սիրիական տեղական իշխանությունների կողմից²⁰:

Հասկանալու համար նրանց վերաբերմունքի հիմքերը կարևոր է պատկերացում ունենալ նաև արաբական ցեղախմբերում տիրող կառավարչական համակարգի, սոցիալական, կրոնական կյանքի, սովորույթների ու կենցաղի մասին: «Ցեղ-պետություն» երկրաժամումն ավելի ակնհայտ է դառնում Օսմանյան կայսրության գոյության վերջին տարիներին, երբ ցեղային կառույցների դերը նվազում էր, կլանային պատկանելությունն ու հավատարմությունն իրենց տեղը զիջում էին ազգային ինքնությանը²¹, ավելի ուշ՝ նաև պետականություն ունենալու գաղափարին:

Սիրիական ցեղերը մշտապես եղել են Օսմանյան կայսրության ուշադրության կենտրոնում: 19-րդ դարում և մինչև արաբական տարածաշրջանում թուրքական տիրապետության ավարտը Կ.Պոլիսն իր տեղական կառավարիչների միջոցով (Դամասկոս, Հալեպ ևն) պայմանագրային հարաբերությունների մեջ է եղել ցեղերի առաջնորդների հետ, օգտագործել շեյխերին՝ նրանց պատասխանատվության տակ գտնվող տարածքներում կարգուկանոն հաստատելու և անվտանգություն ապահովելու համար, անհնազանդության և բախումների դեպքում օսմանյան իշխանությունները ուժ են կիրառել ցեղերի նկատմամբ, գերեվարել, երբեմն սպանել որոշ շեյխերի: Ի դեպ, արաբական ցեղախմբերի դեմ ռազմական արշավները միշտ չէին հաջողությամբ պսակվում. պատահել է, որ թուրքերը ստիպված են եղել նահանջել քոչվորների հզորության և խուսափողականության առաջ: Շեյխն է եղել այն հեղինակությունը, որի հետ հաշվի են նստել օսմանյան կառավարությունն ու արտաքին ուժերը. ցեղի առաջնորդը վեճերը լուծելու ամենաբարձր իշխանությունն է ցեղակիցների համար²²:

Նշենք, որ, հակառակ թուրքական կառավարության կենտրոնամետ ջանքերին, արաբական ցեղախմբերը համեմատաբար անկախ են եղել, ապրել են առանձնացված, սեզոնային տեղաշարժերով և համայնքային ներփակված կենցաղով: Նրանց շրջանում գործել են ցեղապետի որոշումը, վճիռը կամ ցանկությունը, որոնք հիմնականում տրվել են բանավոր հրամանների ու ցուցումների միջոցով՝ ելնելով ստեղծված իրավիճակից, այլ ոչ թե գործող իշխանությունների պահանջներից: Հետևաբար նրանց վերաբերմունքն էլ հայ տարագիրների նկատմամբ անհատական բնույթ է ունեցել. թեև Սիրիայի ողջ տարածքում թուրքական կառավարությունը պաշտոնապես արգելել է օգնել տարագիր հայերին, ցեղախմբերը մտավախություն են ունեցել՝ հայերին օգնելու պարագայում թուրքական իշխանությունների կողմից հայտնաբերվելու և պատժվելու:

20 Հասմիկ Գրիգորյան, *Ջանգվածները և զանգվածային բռնությունները. Օսմանյան կայսրության մուսուլման բնակչության մասնակցությունը Հայոց ցեղասպանությանը*, Հիշողության ազգագրություն 6 (Երևան, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017), 37-68:

21 Айдар Рашидович Аганин, *Племена сирийской пустыни и долины Евфрата* (М.: Институт Ближнего Востока, 2018), 12.

22 Ահմեդ Ուսաֆի Չաքարիյա, *Շամի ցեղախմբերը* (Դամասկոս, Դար ալ Ֆիքր, 1983), 124-174 (արաբերեն):

Արաբական ցեղախմբերի նկատմամբ օսմանյան կառավարության ղեկավար շրջանակների դիրքորոշմանն անդրադառնալիս հարկ է նշել, որ վերջիններս փորձել են իրենց վարած քաղաքականությամբ նվազեցնել անկախությանը միտված արաբական ցեղախմբերի գործողությունները, ինչպես նաև կանխել իրենց դեմ ձևավորվող ընդդիմադիր շարժումները, որոնք միշտ չեն հաջողությամբ ավարտվել: Որպես հակադարձման միջոց օսմանյան կառավարությունը Կ.Պոլսում բացում է բեդվին շեյխերի դպրոց, որը լծակ է եղել ցեղի առաջնորդներին կախվածության մեջ պահելու և սպայական զինվորական ծառայության հարցերում ներգրավվելու համար²³:

Բացի այդ ուսումնասիրողները փոքր-ինչ վիճարկելի էին համարում այն տեսակետը, որ սուլթանը և նրա կառավարությունն էին ղեկավարում իրենց ողջ տիրույթներն այն իմաստով, որով եվրոպացիները հասկանում էին կառավարությունն ու վարչակազմը²⁴: Օսմանյան կայսրությունում վարչաձևն ավելի շատ հակված էր տեղական լինելուն. ցեղը, տոհմը, կրոնական խումբը կամ քաղաքը քաղաքական առանձին միավորներ են եղել, որին քաղաքացիները հպատակվել են²⁵:

Յեղապետը կամ աշիրաթապետը համարվել են ցեղախմբի սոցիալական հարցերով զբաղվող վարչական ղեկավար, իսկ նահանգի, գավառի կամ գավառակի օսմանցի կառավարիչը սուլթանին հաշվետու է եղել տվյալ տարածաշրջանի վարչական, նյութական, ռազմական հարցերի շուրջ²⁶: Այլ կերպ ասած՝ աշիրաթապետերը համեմատաբար ազատ են եղել սոցիալական հարցեր կարգավորելու իրենց նախաձեռնություններում. նրանք կարող էին և համագործակցել պետական կառավարիչների հետ, և ինքնուրույն որոշումներ կայացնել, ինչին ականատես ենք լինում հայ տարագիրներին ցուցաբերած վերաբերմունքի պարագայում: Տարածքային առումով էլ «Ռեֆտեվի երկիրը [տվյալ դեպքում՝ Միջագետքի անապատը] եղաւ նաեւ դժբախտ բնակավայրը... 1915ի և 1916ի Հայկական ահաւոր եղեռնէն ազատուող մեր հարիւր հազարաւոր որբ ու որբուհիներուն, որոնք ունէ՛ ձեռով որդեգրուեցան պէտէվիներէն ու մնացին իրենց մօտ, իբր հովիւ, իբր ծառայ, գերի, իբր կին կամ աղախին»²⁷:

Շատ են վկայություններն ու փաստերն այն մասին, որ հայ տարագիրների ամենատարածվածն ապաստանել է Անագե (Անիզա)²⁸ և Շամմար²⁹ ցեղախմբերի մոտ, որոնք անապատների քոչվոր ուղտաբույծ ամենամեծ ցեղերից կազմված համադաշնություններն են եղել. «Դեռ մինչև քառորդ դար առաջ Հայուն համար

23 Аганин, *Племена*, 15.

24 Fromkin, *A Peace to End*, 36.

25 Նույն տեղում:

26 Նորա Արիսեան, *Տէր Զոր. մարտիրոսաց քաղաք*, «Այգ» մատենաշար - 14 (Հալեպ, Ոսկետառ, 2010), 34-35:

27 Արտաազդ արք. Միրմէան, *Պատմութիւն Հայկալի Հայոց. Սուրիա*, հ. Ա (Հալեպ, Կիլիկիա, 2002), 501:

28 Аганин, *Племена*, 44-108; Զաքարիյա, *Շամի ցեղախմբերը*, 357-401:

29 Аганин, *Племена*, 611-651.

անձանօթ մնացող Շամմար ու Անէգէ ցեղախումբերը՝ վերապրող բիրատու հայորդիներու ընտանի անուններ դարձան ու թերեւս ուղտի երես չտեսնող հայ մանուկներ, դարձան հովիւր ուղտի կարաւաններուն»³⁰:

Սիրիայի բեդվին բնակչությունը 1928 թ. դրությամբ կազմել է 279 898³¹, որը փոքր թիվ չի եղել հայ տարագիրներին աջակցելու կամ թուրքական կառավարական ծրագրերի հարցում գործիք լինելու համար: Նրանք բնակեցված են եղել Դամասկոսի, Հալեպի, Հաուրանի, Ջերբլ Դրուզի, Հոմսի, Լաթակիայի, Համմայի, Եփրատի հովտի՝ Ջազիրայի, Դեր Ջորի շրջակայքում³²:

Տեղախմբերի վերաբերմունքը հայերի նկատմամբ տարբերվել է նաև ըստ ցեղախմբերի, ժամանակահատվածների, երբեմն նաև անհատների մակարդակով: Այս առումով հատուկ ուշադրության է արժանի Ռաս ուլ Այնի, Դեր Ջորի, Մեսքենեի, Ռաքքայի, Շադադիեի, Ջեզիրեի տարածքներում բնակվող վրանաբնակ ցեղախմբերի վերաբերմունքը, քանի որ այստեղ են տեղակայված եղել համակենտրոնացման հիմնական ճամբարները:

Ներքին գործերի նախարար Թալեաթի 1915 թ. սեպտեմբերի 9-ի հեռագիր-հրահանգում, որն ուղղված է Հալեպի կուսակալությանը, ասվում է. «Հանեցիք հոնկէ բոլորին եւ տեղի մի տաք որ զանոնք պաշտպանէ տեղի ժողովուրդը, որը տգիտութեանը բերմունքով նիւթական շահերը իր հայրենասիրական զգացմունքներէն բարձր կը դասէ»³³:

Տեղախմբերում հայերին համատարած սպանելու փաստերը գերակշռող չեն՝ հակառակ թուրքական կառավարության հսկողությանը և սպառնալիքներին, երբ պահանջվել է չխնայել ոչ ոքի կամ կանանց ու երեխաներին միացնել քարավաններին ու քշել անապատներ. «Հանուն իսլամի, հանուն խալիֆայության սիրիական ցեղախմբերում արարները հայ չեն կոտորել՝ հակառակ թուրքերի անունից հայտարարված հրամանների և սպառնալիքների»³⁴: Արևմտահայ գրող Երվանդ Օտյանը, արաբական միջավայրում որոշ ժամանակ ապրած և անապատաբնակ արաբների հոգեբանությունն ուսումնասիրած լինելով, գրում է. «Գիտեի՝ ամէնքն ալ աւագակ էին, բայց մարդ չէին սպաններ, թէ իրենց վրանը գացողը կը հիւրընկալէին, կը կերակրէին»³⁵:

Գաղթական հայերը որոշ ժամանակ անց արդեն հասկացել էին արաբական ցեղախմբերում տիրող բարքերը, այն, որ այնտեղ հիմնականում գողությունը սո-

30 Սիրմէեան, *Պատմութիւն*, 503:

31 Аганин, *Племена*, 16.

32 Արաբական ցեղախմբերի սոցիալական, կրոնական կյանքին վերաբերող մանրամասներ տե՛ս Զաքարիյա, *Շամի ցեղախմբերը*, 114-236; Սիրմէեան, *Պատմութիւն*, 455-501:

33 Աստույան, *Մեծ ոճիրը*, 35:

34 Հանի Իսալի, «Արաբասիրիական-հայկական հարաբերությունների սոցիոլոգիան», տե՛ս *Արաբաւա թագաւորիկ* (Բեյրութ), 1995, 207 (արաբերէն):

35 Երվանդ Օտյան, *Անհծեալ տարիներ 1914-1915 (անձնական յիշատակներ)* (Երևան, Նաիրի, 2004), 300:

վորական էր, կողոպուտը՝ օրինական, ինչպես նաև, որ «արաբը կը կողոպտե, բայց չի սպաններ»³⁶:

Արաբական ցեղախմբերի դրական դիրքորոշումն ընդհանուր գծերով ներկայացրել է ցեղասպանության ականատես արաբ Ֆայեզ ալ Ղուսեյնը³⁷ հուշագրության «Արաբական աշիրաթները և հայերը» ենթագլխում. «... երբ մոտեցա Դիարբեքիին, եղա մի քանի արաբական ցեղախմբերում ու տեսա, որ այնտեղ շատ հայ կանայք, երեխաներ ու տղամարդիկ կան, և արաբները բարյացակամ են նրանց նկատմամբ, թեև կառավարությունն այստեղ զգուշացրել էր հայերին սպանելու նրանց պարտականության մասին, բայց ես երբեք չլսեցի, որ արաբական ցեղերում որևէ հայի սպանած լինեն»³⁸: Շարունակելով թեման՝ գրում է, որ մի անգամ արաբները հանել են ջրհորն ընկած հայ կանանց ու երեխաներին, որոնք մահվան շեմին են եղել, բժշկել են ու իրենց մոտ պահել³⁹:

Հալեպցի մարոնի ժոզեֆ Թաուրթելը⁴⁰, որ դեպքերի բերումով 1916-1918 թթ. եղել է Դեր Ջորում, վկայում է, որ սկզբնական շրջանում քաղաքը խաղաղ է եղել՝ շնորհիվ գավառի կառավարիչ Ջալալ բեյի (Ջեյալ Ադ Դին ալ Ջուբրան, կառավարման տարիները որոշակի ընդմիջումներով՝ 1910-1916 թթ.): «Վերջինս հաստատ մնաց իր գաւառի քրիստոնեաներուն հանդէպ ունեցած կեցուածքին վրայ... ազնուական մուօթասարեֆը հայ տարագիրներուն տեղաւորեց քաղաքի արուարձաններն ու խաները եւ հրամայեց օգնել անոնց՝ իր կարողութեան սահմաններուն մէջ»⁴¹:

Դեր Ջորի մյուս կառավարիչ Սուայդ բեյը⁴² հայերին վրաններ է տրամադրել, և կարճ ժամանակ անց հայերի աքսորավայրը վերածվել է մեծ վրանաքաղաքի՝ կոչվելով նրա անունով՝ *Սուայդիյա*, որտեղ հայերը բացել են դերձակի, կոշկակարի, նպարավաճառի

36 Գաբիկեան, *Եղեռնասպանում*, 426:

37 Ֆայեզ ալ Ղուսեյնը Սիրիայի հարավում և Հորդանանին սահմանակից Հաուրանի շրջանում բնակված արաբական Սուլուք ցեղից է: Ցեղասպանության նախօրեին երեքուկես տարի զբաղեցրել է Խարբեթի նահանգի Մալաթիայի գավառի Քյալաթայի գավառակի կայմակամի պաշտոնը, ականատես եղել հայերի ցեղասպանությանը: 1915 թ. հուլիսին Ջեմալ փաշայի հրամանով ձերբակալվել է հակաթուրքական քարոզչության մեղադրանքով (անդամակցել է Արաբական երիտասարդական ընկերությանը՝ Ալ Ֆաթաթին) և արտրվել Էրզրում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռուսական զորքերը մոտենում են Էրզրումին, Դիարբեքիի նահանգապետ Ռաշիդ բեկը խորհրդակցում է Ջեմալ փաշայի հետ. որոշում են Ֆայեզին պահել Դիարբեքիում, որտեղ ապրում է մինչև 1916 թ. փետրվար ամիսը: Ֆայեզը Դիարբեքիից փախչում է, դժվարություններով հասնում Դեր Ջոր, ապա՝ Բասրա և Հնդկաստան: Տե՛ս El Gusein Faiz, *Beduin Notable of Damascus, Martyred Armenia* (London: George H. Doran company, 1918), V-VII.

38 Ֆայեզ ալ Ղուսեյն, *Ջարդերը Հայաստանում* (Հալեպ, Արևելք, 1991), 88 (արաբերեն):

39 Նույն տեղում, 55:

40 Ժոզեֆ Թաուրթելը տպավորությունները գրի է առել դեպքերից անմիջապես հետո՝ որպես ականատես, վկա, ինչպես ինքն է իրեն բնութագրում: Նրա հուշերն առաջին անգամ լույս են տեսել Բեյրութի «Ալ Մաշրեք» հանդեսում 1922 թ. հունիսին, 562-570:

41 Միհրան Մինասեան, «Ժոզեֆ Թաուրթել. Տեր-Ջորի դեպքերը պատերազմի ժամանակ», *Ազդակ* (Պեյրութ), 24 ապրիլի 2004, 53:

42 Ալի Սուայդի գործունեությանն անդրադարձել են բազմաթիվ վերապրողներ, ականատեսներ: Մանրամասն տե՛ս Միհրան Մինասեան, «Արամ Անտոնեսանի անտիպ գրառումները Տեր Ջորի

խանութներ և փոեր⁴³: Ընդ որում՝ անգամ նման դրական վերաբերմունքի պարագայում Սուայդ բեյը գերծ չի մնացել հայերի դեմ ոտնձգություններին մասնակցելուց: Արամ Անտոնյանը վկայում է, որ Տուրի անունով մի բեյ ազարակ է գնել Ռաս ու Այնում, որտեղ 30 ընտանիք է առանձնացրել, վստահեցրել, որ եթե այդտեղ աշխատեն, անապատներ չեն տարագրվի: Շատերն են փորձել օգտվել այդ հնարավորությունից, բայց նա ընտրել էր միայն այն ընտանիքներին, որոնք գեղեցիկ աղջիկներ ունեին. նրանց «Փրկությունը այդ կոյսերուն գնով կը կատարուէր... Պղծուած աղջիկները սովորաբար կը նուիրէր շրջակաները հաստատուած Պըկկարա⁴⁴ արաբ աշիրէթին պետերուն որոնք ջարդերուն մէջ մեծ դեր խաղացին»⁴⁵: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տուրի բեյն իր ընկերն է, իսկ նրա հայրը՝ բարեկամը, Սուայդ բեյը չի կարողանում արգելել, ինչը համանման դեպքերի կրկնության առիթ է դառնում (Ռաս ու Այնի մոֆթին՝ 30 հայ ընտանիք էր պահում-շահագործում, Իամայիլ բեյը՝ 30 ընտանիք, Հուսեյն բեյը՝ 30 ընտանիք)⁴⁶:

Ամեն դեպքում Ալի Սուայդ բեյի բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ դառնում է նրա պաշտոնանկության պատճառը: 1916 թ. հունիսին հայերին բնաջնջելու ծրագրով Դեր Զոր է գնում Զեքի բեյը, որը մտադրություն է ունեցել վերջնականապես լուծելու հայերի խնդիրը և հայերի «մաքրագործման յոյսը դրած էր Տեր Զորի արաբներուն վրայ»⁴⁷: Մինչդեռ հայտարարում էր. «Ես Տէյր-Էլ-Զոր եկա նորանոր բարօրութեան ծրագիրներով, ի մասնատրի հայ գաղթականաց հանգիստ տեղադրումին համար...»⁴⁸:

Նա Դեր Զոր է կանչում չեչենների, որոնք միանում են Սեֆայի⁴⁹ իրենց ազգակիցներին, իսկ շրջակայքի արաբ աշիրաթներին զոհերի հագուստներ է խոստանում, եթե իրենց օգնեն⁵⁰:

Զեքիի աջակիցներից էր նաև Թուրքի Մահմուդը, որը նշանակվելով Աննայի կայմական, սկսում է այցելությունների գնալ շէյխերի մոտ: Այդ շրջանակում այցելում է Զիրուրի Ալեյդաթ ցեղախմբի պետ Ռապան Թֆեհլին⁵¹ համոզելով, որ հայե-

կոտորածներուն մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս* 35 (2015), 692-693, 714, Աղազարեան Միհրան, *Աքսորականի յուշեր* (Ատանա, Տպարան Հայ ձայն, 1919), 13-21, Անտոնյան, *Մեծ ոճիրը*, 46-47: Մելքոն Ասատուր, «Տէյր-Էլ-Զոր», *Արեւելեան մամուլ*, 26 հունվարի 1922:

43 Անտոնյան, *Մեծ ոճիրը*, 60:

44 Բակկարա՝ արաբական մեծ ցեղախումբ է, որի մի մասը բնակվում էր Սիրիայում՝ հիմնականում Դեր Զորի, Հասաբեյի և Հալեպի նահանգներում, մի մասն էլ Իրաքում՝ Նիսնայի նահանգում:

45 Անտոնյան, *Մեծ ոճիրը*, 48:

46 Նույն տեղում, 48-49:

47 Աղեւտն վերապրողներ, *Տէր-Զոր* (Փարիզ, Էլեկեան, 1955), 28:

48 Մելքոն Ասատուր, «Զեքի պէյի հրամանները ու անոր օձի սուլում նշանատր ճառը», *Արեւելեան Մամուլ*, 16 դեկտեմբերի 1921:

49 Սաֆա՝ գյուղ Ռաս ու Այնից հարավ-արևելք, բնակիչները եղել են հիմնականում չեչեններ:

50 Անտոնյան, *Մեծ ոճիրը*, 57:

51 Թֆեհլիները բնակվել են Հասաբեյի շրջանում: Տե՛ս Аганин, *Племена*, 283:

րին սպանեն, ջարդեն և կողոպտեն և վերադարձին Ջեքիին հաղորդել է, որ ստացել է նրա համաձայնությունը⁵²:

Նման ձեռնարկումներից գատ Ջեքին իր աջակիցներին ուղարկում էր արաբ բեդվինների մոտ և սպանալիքներով պահանջում իրենց տներում հայերին չպահել: Նման մարդկանցից էր գրագիր Ալի Սաիդը, ով Մեադին է ուղարկվում այդ հարցով⁵³:

Անապատաբնակ արաբներն ականատես են լինում հայերի նկատմամբ թուրքերի դաժան վերաբերմունքին, իրավիճակի բարդությունը հասկանալով՝ գիտակցում, որ միայն տեղում ցուցաբերված օգնությամբ հազարավոր տարագիրներ չեն կարող փրկվել, ապաստան ունենալ, անհրաժեշտ է ընդլայնել օգնություն ցուցաբերողների ու ֆինանսավորման շրջանակները: Այդ առումով հետաքրքրական է Փարիզի «Արձագանք» թերթում տպագրված մի խումբ արաբ շեյխերի 1916 թ. հունվարի նամակը՝ ուղղված քրիստոնյա աշխարհին, որտեղ նկարագրվում է Միջագետքի անապատներում հայերի իրական վիճակը. «... կը տեղեկագրենք այս կողմերու Հայոց տսկալի կացութեան մասին հետեւեալ աչքառու խնդիրները: Կը գրենք Ձեզի, իբրեւ Քրիստոնեայ Քաղաքակիրթ ներկայացուցչի մը... Կը տարակուսինք, թէ անոնք կրնան ապրիլ այս կացութեան մէջ, օգնեցէք անոնց, եթե ոչ անոնք կորսուած են... պատմութիւնը պիտ արձանագրէ, Ձեր անունը ոսկի տառերով»: Նամակն ավարտվում է հետևյալ կերպ. «Մենք կը հաստատենք վերոյիշեալ գրութիւնների ճշմարտութիւնը և կը ստորագրենք իբրեւ Շեյխերը... նահանգի և գետահովտի շեյխ... Փոխհրամանատար ոստիկան զօրաց շեյխ...»⁵⁴:

Շեյխերի անունները գրված չեն. կարելի է ենթադրել միայն, որ վերոնշյալ արաբ շեյխերը բավականին ազդեցիկ են եղել՝ հաշվի առնելով այն փաստը, որ նրանց նամակը տեղ է հասել, դեռ ավելին՝ տպագրվել մամուլում արդեն 1916 թ. հունիսին:

Անապատաբնակ արաբների վերաբերմունքի մասին են վկայում հայ որբերը, նրանց հարազատները, տեղացի և օտարերկրացի ականատեսները հուշագրություններում և վկայություններում: Անդրադառնալով մեր հանդիպած որոշ օրինակների՝ վերաբերմունքի դրսևորման հիմնական ձևերն ընդհանրացնելու համար կարելի է փաստել, որ արաբ բեդվինները հայ տարագիրներին օգնել են տարբեր ձևերով. սնունդ, հագուստ և աշխատանք են տվել (տղաները հիմնականում որպես հովիվ են ծառայել, կանայք՝ սպասուհի, երբեմն ամուսնացել են բեդվինների հետ): Արաբները հաճախ օգնություն են ցուցաբերել հայ տարագիրներին՝ իրենց իսկ շահերից ելնելով. որդեգրել կամ իրենց վրանում ապաստան են տվել հայ երեխաներին ու կանանց աշխատող նոր ձեռք ավելացնելու և/կամ հետագայում նրանց վաճառելու նպատակով:

Կեսարացի Միսակ Մարտիրոսյանին ութ տարեկանում փրկել են արաբները, դրանից հետո ապրել է բեդվինների վրանի տակ՝ Հաթալա կոչվող անապատային գյուղում⁵⁵: Հալեպի հարավում բնակված Հադիդի աշիրաթի շեյխ Նաուաֆ Աս Սալի-

52 «Տեր Զօրի ջարդարարները. Տեր Զօրի Պելլետիե ռեիսի Հաճը Ֆազլի յայտարարութիւնները», *Արևելեան Մամուլ*, 5 մայիսի 1920:

53 «Տեր Զօրի ջարդարարները». *Արևելեան Մամուլ*, 6 մայիսի 1920:

54 «Նամակ Միջագետքին», *Արձագանք Փարիզի* (Փարիզ), 10 հունիսի 1916:

55 Աղէտէն վերապրողներ, *Տէր-Զօր*, 214:

հը հայ տարագիրների համար գումար է վճարում՝ ազատելով Դեր Ջորի՝ «մահվան ճանապարհից»⁵⁶:

Հետաքրքրական է նաև հաճընցի Արամ Քերիկյանի դեպքը: Նրան փրկել են բեդվիհները՝ վերանվանելով Սալման ալ Դրբո. հետագայում դարձել է Համրայի շրջանում գտնվող Ալ Դրբո ցեղի աշիրաթապետ⁵⁷:

Ալ Ջաբուր⁵⁸ ցեղախմբից շատերն են հետևել իրենց առաջնորդի հրամաններին: Արուշ Մութաֆյանին, որին տվել էին Խալաֆ անունը, Ջաբուր ցեղի արաբ մի կին է որդեգրել: Հետագայում, երբ հայտնվել է իրական մայրը, մեծ դժվարությամբ է թողել արաբ մորը: Նա պատմում է, որ պատերազմի ավարտից հետո անգլիացիները սկսում են հայերին վերցնել արաբների մոտից և նրան հանձնում են իր մորը: Հակառակ հայ մոր լավ վերաբերմունքին՝ փախչելու փորձ է անում՝ անապատներում բնակվելու: «Վրանարևակի ազատ կեանքին վարժուած՝ տան մեջ չէի ուզեր բնակուիլ և... մեր ցեղախումբէն արաբներու հետ հասայ արաբ մօրս քով... բայց կրկին պահանջ եղաւ ինձ յանձնելու»⁵⁹: Ալ Ջաբուր ցեղում տեղի ունեցած դեպքերի անանուն մի ակնաատես⁶⁰ վկայություններում գրում է. «Ջաբուր ցեղի մարդիկ բարեհամբույր էին, պայքարում էին հայերին սպանել ցանկացողների դեմ, օգնում փախուստի դիմել, Խաբուր գետն անցնել»⁶¹: Մարդիկն Մանուշը փախուստի է դիմում մորն ու եղբորը սպանած ու իր հետ բռնի ամուսնացած արաբի մոտից: Նրան ապաստան է տալիս Ջաբուր ցեղախմբից Խալեֆ Աբդալլահը, որ բարյացակամ է եղել Մանուշի նկատմամբ⁶²:

Ցեղասպանությունը վերապրած Հովհաննես Գրիգորյանը պատմում է, որ Ռ-աս ուլ Այնից Դեր Ջոր գաղթի ճանապարհին արաբ շելխն իրենց հյուրասիրելուց հետո առաջարկել է. «Ես ունեմ 25 կին և մեկ ալ հայ կին առած եմ, բայց ես հայ կնոջմեն շատ շնորհակալ եմ: Կուգեմ, որ մեկ հայ կին ևս առնեմ, որ կինս մինակ չնեղվի: Տեսեք, իր տղան ալ հոս է... ուզեմ, բռնությամբ կարող եմ առնել, բայց բռնությունը լավ բան չէ, բռնի սեր չըլլար, ես կյանքիս մինչև վերջն իրեն հետ պիտի ապրիմ»⁶³:

56 Նորա Արիսյան, *Հայերի սարսափները սիրիական մոքում. սիրիացի մտավորականների դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում* (Դամասկոս, Ալ Ֆուրատ, 2002), 160-161 (արաբերեն):

57 Գեորգ Աբելեան, *Ցկեանս նահատակութիւն* (Այնճար, Համազգային. Վահէ Սէթեան, 2005), 11-37:

58 Ջաբուր ցեղախումբը տեղակայված է եղել Եփրատի Ջազիրա շրջանում: Այն իր մեջ է միավորել բազմաթիվ ենթացեղեր, որոնք գրեթե անկախ են եղել: Դրանցից են՝ Ալբու Թ-սամա, Ադ Դ-ախամեշ, Ալբու Սալեմ, Ալբու Նաջադ, Ալ Քուդա: Ցեղախմբի բնակավայրը Ֆեթղամն է եղել:

59 Ադետէն վերապրողներ, *Տէր-Ջօր*, 108-109:

60 «Քրիստոնյաների աղետների վերջնական նպատակները 1914-1919. ակնատեսի վկայություններ» գրքի հեղինակը ծնունդով Մարդինից է, կաթոլիկ հայ: Անցնելով տարագրության ճանապարհը՝ 1914-1919 թթ. հուշերը մանրամասն գրի է առել. գիրքը տպագրվել է, ամենայն հավանականությամբ, մինչև 1925 թ.:

61 *Քրիստոնյաների աղետների վերջնական նպատակները 1914-1919. ակնատեսի վկայություններ*, 365:

62 *Հայեպի փրկության տուն: Հայոց ցեղասպանությունը վերապրածների 1 464 վկայություն*, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Էդիտա Գոգյան (Երևան, ՀՅԹԻ, 2021), 758:

63 Հարություն Գրիգորյան, *Իմ կենսագրությունը*, ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆհ. 8, թպ. 31, 108:

Այնթափցի Էլիզին (արաբական անունը՝ Խաալա) Բակկարա ցեղախմբից երիտասարդ բեղվին է փրկել, երբ նա փորձել է նետվել Խաբուր գետը, քանի որ «փրկություն համար մահին զատ ուրիշ միջոց չէր մնացած»: Երիտասարդի ընտանիքում նրան լավ են վերաբերվել, և երբ չափահաս է դարձել, ամուսնացրել են իրեն փրկող բեղվինի հետ⁶⁴:

Բակկարա ցեղախմբի՝ հայ կանաց ու աղջիկներին ապաստան տալու փաստն է տասնամյակներ անց արձանագրել իրենց ցեղապետ Աբդուլբերիմ Իսա Սուլեյմանը՝ նշելով. «Տարագրության օրերուն Բակկարա ցեղը շատ մը հայեր փրկեց, շատեր որդեգրվեցան: Հետագային՝ ամուսնացած շատ աղջիկներ հետ վերադարձվեցին հայերի»⁶⁵:

Նասիպ Աբրահամ Չալյանը ցեղասպանության տարիներին Մոսուլի և Բաղդադի շրջանների վրանաբնակ արաբների մոտ շուրջ երեք տարի ուղտերի հովիվ է եղել: Զինադադարից հետո, գիտակցելով իր հայկական ինքնության փաստը, փախչում և ապաստան է գտնում Բաղդադում՝ անապատներում զբաղվելով հայ երեխաների փրկության գործով⁶⁶:

Տիրուհի Ավետյանը, որ Շատադիեի կոտորածներից կարողանում է փրկվել միայն այն բանի հետևանքով, որ մահացածների թմբի մեջ է հայտնվում, արաբ բեղվինների մոտ է ապաստանում, որտեղ դեմքին դաջվածք են անում: Որոշ ժամանակ անց նրան վաճառում են Շամմարների Իբրն ցեղախմբին: Արաբ հայրը նրան լավ վերաբերմունքի է արժանացնում՝ ի տարբերություն մայրացուի, որը նրան դաժանորեն ծեծում է այն հայտարարության համար, թե ինքը քրիստոնյա գյավուր է և եթե տասը օճառով էլ լվացվի, էլի քրիստոնյա է մնալու⁶⁷:

Ցեղասպանությունը վերապրած ու Անագե ցեղախմբի արաբների մոտ ապաստանած Գևորգ Սարաֆյանը հուշերում դրական է խոսում նրանց մասին. «Անցան տարիներ ու մենք փրկվեցինք մեր հարևանների օգնությամբ՝ ապրելով նրանց հետ... Թուրքական կառավարության կողմից հետապնդվող քրիստոնյա հայերի ու մեզ հովանավորող մուսուլման արաբների մեջ կար փոխադարձ համակրանք: Հարկ եղած դեպքում ներկայանում էինք նրանց անուններով ու ապրում ինչպես եղբայրներ»⁶⁸:

Վերապրած Հովհաննես Զարիկյանը մի քանի ընտանիքների հետ Սալամիեի արաբների մոտ հաստատվելու կապակցությամբ գրում է. «Անոնք մեզ ընդունեցան արտակարգ սիրով... առատ կերակուր հրամցուցին... ամէն կերպ ջանացին օգնել և տեղափոխել»⁶⁹: Սալամիեի արաբների վերաբերմունքին են անդրադառնում

64 Ադէտէն վերապրողներ, *Տէր-Զօր*, 196-197:

65 Վերծինե Սվազյան, *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ* (Երևան, Գիտություն, 2011), 562:

66 Գրիգոր Թաթուլեան, *Անթեղուած գաղտնիքներ* (Պէյրոյթ, Ատլաս, 1967), 369:

67 Քնար Մանճիկեան, *Դէմքեր, դէպքեր, դէպի արևմտներ* (Լոս Անճելըս, H. and K. Manjikian, 2006), 148:

68 Գևորգ Սարաֆյան, *Եփրատից Ռիո Դե Լա Պլատա* (Երևան, Գիտություն, 2002), 17:

69 Ռոպէր Ճեպեճեան, «Սելիմիէին», *Զարթօնք* (Պէյրոյթ), 5 հունիսի 1987:

Տեր Ներսես քահանա Թավուզյանն ու Գրիգոր Պողարյանն իրենց օրագիր-հուշագրություններում⁷⁰: «Սելիմիեի մեծանուն Տերերը/իշխանները հայասեր էին, ի մասնատրի Էմիր Թամիր եւ Էմիր Միրզա երկու եղբայրներ»⁷¹: Քաղաքը կարծես «հայաքաղաք» էր դարձել⁷²: Իհարկե, Սալամիեի արաբների վերաբերմունքը նույնպես կրոնական և քաղաքական հիմնավորումներ ունի, բայց նաև փաստ է, որ հայերը Սալամիեում վերականգնել են տեղի շուկան, ակտիվացրել շինարարական աշխատանքները, արհեստագործության տարբեր ճյուղեր ներմուծել⁷³: Սա դեռ չի նշանակում, որ հայերն այստեղ հուսադրող պայմաններում են եղել. այն պարզապես գոյատևման համառ ջանքերի շտրիկիվ հուսադրող միջավայր էր դարձել:

Նույն տպավորությունը կարելի է ստանալ նաև Ռաքքայի որոշ շրջանների վերաբերյալ, երբ տեղի արաբներն ու հայ տարագիրները համագործակցել են. արաբ ավագանին, շեյխերը մեծ ազդեցություն են ունեցել ժողովրդի և կառավարության վրա, լավ են վերաբերվել տարագիրներին: «Տէր Զօր և Արաբական անապատները տարագրուած հայութենէն զանգուածօրէն վերապրողները Բագգայի Հայ գաղթականները եղան: Յայդմ որքան մարդասիրական տեսակէտը, նոյնքան եւ ատելի նիթական շահն էր որ կը խօսէր»⁷⁴:

Այս կապակցությամբ վերապրած Կարապետ Գաբիկյանը նշում է, որ եղել են նաև ծայրահեղ կարոտյալներ՝ 400-500 հոգի, որոնց որպես նպաստ մեկական հաց են բաժանել քաղաքապետարանի փոխ դիմաց և քաղաքապետարանի աշխատողներն ու ժանդարմները շատ անգամներ չարաշահել են իրենց պաշտոնը կամ նվաստացրել ստացողներին, որոնք հիմնականում կանայք են եղել⁷⁵:

Ռաքքայի շրջակայքի շեյխ Մեհմեդ էլ Ֆարաճը Եփրատի աջ ափին բնակվող նստակյաց արաբների շեյխերից է եղել, որ «երբեք ձեռն մխած չէ հայու կեանքի, ինչքի, պատիւի»⁷⁶: Նրա ցեղում հայուհիներ չեն եղել, չի անարգել հայերի պատիվը, 8-10 զեյթունցի պատանիների է որդեգրել, նրանց չի պարտադրել իսլամ ընդունել ու իսլամական անուններ վերցնել⁷⁷:

Շեյխ Համուդ Օքլայը⁷⁸ հարգանքով է վերաբերվել իր ցեղախմբում ապաստան տված Ստեփան Միսրճյանին, մշտապես հայկական անունով դիմել⁷⁹: Ստեփանը

70 Վահե Թաշճեան, *Օրագիր եղեռնի ու պայքարի*, Գրիգոր Պողարեան, *Տեղասպան թուրքը*, հ. 1 և 2 (Պէյրուֆ, Շիրակ, 1973):

71 Թաշճեան, *Օրագիր եղեռնի ու պայքարի*, 114:

72 Նույն տեղում, 125:

73 Նույն տեղում, 121-136:

74 Գաբիկեան, *Եղեռնապատում*, 431:

75 Նույն տեղում, 440:

76 Նույն տեղում, 535:

77 Նույն տեղում, 533-535:

78 Օքլա ցեղախումբը Շամմար ցեղախմբի Ալ Ջաֆար ենթացեղերից է, ինչպես նաև Օբեյդը:

79 Ստեփան Միսրճեան, *Եւ Տէր Զօրի դժոխքէն փախած եմ*, Հ. Բ (Փարիզ, 1966), 34:

պատմում է, որ այդ ցեղախմբում իր նման ևս չորս հայեր են եղել⁸⁰: Նա մեծ վստահություն է ձեռք բերում ցեղապետի մոտ ու երբ Անագեները հարձակվում են իրենց ցեղախմբի վրա և ոչխարներ գողանում, ինքը նույնպես մասնակցում է գողոնը հետ բերելու հարձակմանը⁸¹: Ընդ որում, Ստեփանին մինչ այդ Մարաթի շրջակայքում ապաստան էր տվել մի բեդվին ընտանիք, երբ նա փախուստի էր դիմել ընդհանուր քարավանից, անգամ արաբական ձևով նրան սափրում են, որ թուրք ժանդարմները նրան չճանաչեն⁸²: Մի ուրիշ անգամ, Ռաքքայի մոտակայքում Ստեփանին և փախուստի դիմած տարագիրներին արաբներն իրենց վրաններում տեղ ու ուտելիք են տվել⁸³:

Ռասա ուլ-Այնից Հաբ Ալին վկայում է, որ ինքը մի քանի հայ գաղթականների թաքցրել է փոսի մեջ՝ փրկելով թուրքերի հետապնդումներից: Նա թվարկել է նաև մի քանի ցեղախմբերի, ովքեր իրենց ընտանիքներում ապաստան են տվել հայերին. Շամմար, Բակկարա, Օբայդ, Աջուբեն, Հարբ, Ալ Մուհամմադ, Ալ Հասան, Ալ Ուդուան, Ջաբրան, Ջուբեյդ⁸⁴:

Արաբական ցեղախմբերում ընդունված է եղել հանգուցյալների հոգու համար չքավորներին ուտելիք բաժանել, ինչը հաճախ արգելել են թուրքերը⁸⁵: Վերապրած Մարիամ Գաբիկյանը փաստում է, որ արաբներին, թեև արգելքներին, Դեր Ջորում հաջողվում էր դա անել. «... հաց կամ կերակուր կը բերէին եւ կը բաժանէին իրենց մեռելներուն հոգոյն համար»⁸⁶: Արաբ կանայք ձմերուկը, սեխը, հացը հաճախ փոխանակել են գաղթականների շորերի ու կոշիկների հետ⁸⁷: Այնթափցի Երվանդ Տերենցի հիշողություններում տպավորվել է Բաբ, Մամբուջ, Բերեջիք գաղթի ճանապարհը, Դեր Ջորի սարսափները, ծնողների կորուստը, ինչպես նաև բեդվինները, ովքեր սեխ ու ձմերուկ էին բերում և զարդեղենի հետ փոխանակումներ անում⁸⁸: Սեբաստացի Սաթենիկ Դողրամջյանը պատմում է, որ արաբ բարեսիրտ շեյխերը գումար էին բերում, ուտելիք ուղարկում⁸⁹: Էվերեկցի Խոբեն Գըլճյանի և նրա համաքաղաքացիների քարավանի անդամներին թուրքական հետապնդումներից ազատել է տեղի մի արաբ շեյխ, որը տեսնելով նրանց ծանր վիճակը, հրամայել է ուտելիք տրամադրել: Իր ձեռագիր հուշերում Գըլճյանը գրում է. «Շեյխը՝ այդ անապատի ցեղախումբին թագաւորն էր, ունէր զինուած իր մարդիկը, ... անապատի այդ անուս տգէտ մարդը մարդկայնօրէն խղճաց այդ իրենց անծանօթ տառապեալ

80 Նույն տեղում, 38:

81 Նույն տեղում, 65-66:

82 Ստեփան Միսրճեան, *Ես Տէր Զօրի դժոխքէն փախած եմ* (Փարիզ, 1965), 11:

83 Նույն տեղում, 105-106:

84 Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 517:

85 Աղէտէն վերապրողներ, *Տէր-Զօր*, 46:

86 Նույն տեղում, 192:

87 Յարութիւն Գալայճեան, *Միլիոնէն մէկը. Յեղասպանութեան ականատես զէթունցի պատանիի մը յուշերը* (Պէլյոյթ, Զարթօսք, 2018), 54, 57:

88 Երուանդ Տէրենց, *Ես տեսայ Տէր-Զօրի դժոխքը* (Պէլյոյթ, Սեան, 1966), 17:

89 Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 336:

մարդոց վիճակը, իսկ թուրքը այս անապատները բերելով պիտի ջարդեր: Ես ամօթով դիտեցի Շելյխին մարդկային ազնի ծառայութեանը»⁹⁰:

Արաբ բեդվիհները, տեղյակ լինելով տեղանքին ու հայ տարագիրների գտնվելու վայրերին, օգնել են գաղթականներին փախուստի դիմել քարավաններից, խորհուրդ տվել, թե որ ուղղությամբ գնան փրկվելու համար, իսկ հետագայում օգնել են հարազատներին գտնել ազգակիցներին, հուշել՝ որ աշիրաթում կարող են հարազատներ կամ առհասարակ հայեր լինել:

Հայ տարագիրները ոստիկան հսկիչներից գաղտնի դուրս են եկել գաղթակայանից, տարբեր միջոցներով ուտելիք հայթայթել ու կրկին հավաքակայան մտել: Այս պարագայում նույնպես արաբներն օգնել են հայերին. «Ապերախտություն կլինի չհիշատակել արաբների ազնվությունն այս հարցում, չնայած կախադանի սպառնալիքով արգելված էր գաղթականների հետ շփումը, բայց մեզ հետ առևտուր անող ոչ մի արաբի կողմից մեզ մատնելու փորձ կամ դեպք տեղի չունեցավ, իմանալով հանդերձ, որ նրանք նույնպես մեզ հետ հավասարաչափ վտանգում են իրենց կյանքը»⁹¹: Թեև պետք է փաստել, որ արաբներն ու հայերը գիտակցել են, որ «ասանկ ժամանակ մը հայու մը կեանքը ազատել մեծ բան էր»⁹²:

Տեղասպանությունը վերապրածներից շատերն իրենց հուշերում գնահատել են արաբների ցուցաբերած օգնությունը: Դեր Զորում, Ռաքքայում քրոջ հետ դեգերող Հովակիմ Դիշդիշյանը երախտագիտությամբ է հիշում արաբ մի կնոջ, որ երկար ժամանակ հաց է տվել նրանց անվարձահատույց. «Աքսորի ամբողջ ճանապարհին, առաջին անգամ կուշտ փորով հաց էինք ուտում և.... շարունակ օրհնելով այդ անձանոթ կնոջը, նրա երեխաներին, ցեղին, որ մեզ նման ընչազուրկների օգնության ձեռք էին մեկնում»⁹³:

Դեր Զորում հայտնված Մկրտիչ Կարապետյանը պատմում է, որ արաբ շելյա Աբդուլ Խազըր Գելյանի իրենց ընտանիքի անդամներին տարել է իր վրանը, հայտարարել, որ նրանք իր հովանավորյալներն են, մորն էլ առաջարկել իր արհեստով՝ դերձակությամբ զբաղվել Դեր Զորի շրջակայքում ու օրվա ապրուստը հոգավ⁹⁴:

Գաղթի ճանապարհի բարդությունների միջով անցած չորս հայ որբեր՝ Գրիգոր Տետեյանը, Հարություն Գույումճյանը, Զավեն Սերայտարյանը և Գևորգ Թուֆենկճյանը, հանդիպում են անապատներում: Նրանք գրի են առել իրենց նմանատիպ պատմությունները. ապաստան են գտել արաբ բեդվիհների ընտանիքներում, ուղտարածությամբ զբաղվել: Հարություն Գույումճյանը պատմում է. «Արաբին կինը, որ նոր մայրս եղաւ, այնքան բարի կին էր, որ երբ տեսնէր իմ լացս, ինքն ալ մօտս կը նստէր

90 Խորեն Գրլճեան, *Վերապրող որբի մը յուշեր*, ՀՅԹԻ թանգարանային ֆոնդեր, բաժին 8, ֆի. 44, թպ. 42, 12:

91 Հովակիմ Դիշդիշյան, *Դեր-Զորի անապատներում* (Երևան, Գիտություն, 2006), 72:

92 Գաբրիկեան, *Եղեռնապատում*, 464:

93 Դիշդիշյան, *Դեր-Զորի անապատներում*, 40:

94 Սվազլյան, *Հայոց ցեղասպանություն*, 295:

ու կու լար»⁹⁵: Արաբ հայրն էլ մի ամբողջ օր ուղտի վրա նրան ման է տվել, որ այլևս չվախենա և հավանաբար վարժվի իր հովվի աշխատանքին: Արաբ ընտանիքի հովիվը՝ Սալեհը, ամեն օր իրեն հիշեցրել է. «Տղաս, դուն հայ ես, անունդ Արթին, չմոռնաս»⁹⁶:

Գևորգ Թուֆենկյանը 1916 թ. մոր մահանալուց հետո սկսել է հաց մուրալ Մեսքենի շրջանի բեդվիհների մոտ: Իսալի Մուհամմադ անունով մի արաբ նրան իր համաձայնությամբ որպես հովիվ տարել է իր տուն, որտեղ ծառայել է 12 տարի: 1917 թ., երբ տեղափոխվել են Խսան Համրա, անապատներում ծանոթացել է հայ ընկերների հետ⁹⁷:

Գրիգոր Տետյանին իր հայրենակից կանանցից մեկը հանձնում է մի արաբ բեդվիհի՝ ասելով. «Եավրուս, քեզի արաբի մը պիտի տամ, մեզ պիտի մորթեն, գոնե դուն գնա՛ եւ ազատու՛ե»⁹⁸: Բեդվիհ արաբը նրան Ահմեդ է կոչել: Հուշագրության վերջում նա նույնպես գնահատում է արաբների դերը. «Մի մոռնաք նաեւ, որ մեզ փրկեցին ու մեծցուցին արաբները: Լալին լաւով հատուցելը մեր պարտքն է: Միրեցեք այս ժողովուրդը, որ մեզ հազարներով փրկեց ու տեղ տուաւ այս արեւին տակ: Չեղաւ թուրքին պէս, որ մեզ ջարդեց ու դարձուց անհայրենիք»⁹⁹:

Ընկերներից Զավեն Սերայտարյանը արաբ բեդվիհների մասին գրում է. «Մենք չենք մոռնար անոնց ըրածը: Անօթի էինք՝ հաց տուին, ծարաւ էինք՝ ջուր տուին, մերկ էինք՝ հագուստ տուին ու մենք մահէն ազատեցանք»¹⁰⁰:

Հարություն Գալայճյանը պատմում է, որ զեյթունցիների իրենց քարավանը Դեր Զորից անցել է Աբու Քեմալ: Տեղի շէյխերից մեկն իր հպատակներին առաջարկել է քարավանի հայերի հետ հանգիստ խոսել և հայտարարել, որ իրենք տարագիրների պաշտպանությունն են ստանձնում և որևէ մեկին վնաս չեն հասցնի կամ կառավարության հրամանով չեն հանձնի: Բեդվիհները հայերի համար հյուղակներ են կառուցել: Շէյխը բնակիչներին պատվիրել է ձմեռվա համար նրանց կաթ-մածուն, ձմեռվա պաշար տրամադրել¹⁰¹:

Ման օրինակները բազմաթիվ են. հողվածում փորձել ենք ամբողջացնել այդօրինակ դեպքերը: Իհարկէ, վերապրողների հիշողություններում նկատելի է փրկարար, ասպնջական և ազատարար արաբի կերպարի վերհանումը, որը մի փոքր, մեր կարծիքով, ուռճացված է, և այդ ազդեցությամբ գրում են հիմնականում հետագայում որոշակի ժամանակահատված կամ իրենց ողջ կյանքն արաբական երկրներում հաստատված տարագիրները: Վախէ Թաշճյանն այս կապակցությամբ նշում է.

95 Թորոս Թորանեան, *Փայտէ դգային պատմութիւնը* (Պէյրութ, Technopresse moderne, 1984), 24:

96 Նույն տեղում, 27:

97 Նույն տեղում, 69:

98 Նույն տեղում, 90:

99 Նույն տեղում, 96:

100 Նույն տեղում, 7:

101 Գալայճեան, *Միլիոնէն մէկը*, 27-28:

«Այն իր խորքին մեջ հետագայ կառուցում մըն է, ու յայտնապես կը կրէ արաբական երկրիրներու մեջ հայ արաբ շարունակուող գոյակցության ազդեցութիւնը»¹⁰²:

Այստեղ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հայ գաղթականների հաստատումը անապատաբնակ արաբների մոտ երկուստեք շահավետ է եղել, քանի որ հայերը տնտեսական վիճակի բարելավմանն են նպաստել, որոշ հարցերում դաշնակից եղել այլ ցեղախմբերի դեմ պայքարում: Այսինքն՝ արաբները, իրենց հողերի վրա հայերին բնակեցնելով, հակված են եղել բնակչության թիվն ավելացնել, ի դեմս հայերի հուսալի հենարան ունենալ և, ինչու չէ, նաև իրենց հայրենակիցներին երկրագործություն սովորեցնել: Նրանք հաճախ, մրցակիցներից բացի, տարագիրների մեջ տեսել են այն ներուժը, որն իրենց շրջանում կնպաստեր նորամուծությունների տարածմանը, անապատի արաբներին նստակյաց կյանքին կվարժեցնել:

Արաբական ցեղախմբերում հայերին ցուցաբերված օգնության մասին խոսելիս հարկ է նշել, որ, դրան զուգահեռ, հանդիպում ենք բազմաթիվ վկայությունների, որ հակառակն են հաստատում. արաբները հարձակվել են տարագիրների քարավանների վրա, կողոպտել նրանց, առևանգել կանանց, եղել են նաև սպանությունների դեպքեր:

Վերապրած Հովհաննես Սարաֆյանը հուշերում գրում է. «Արաբներն ալ կը կողոպտէին մեզ... եւ այս տառապանքներուն ենթարկուողները միայն մենք չէինք, այլ մեր նախորդ եւ յաջորդ կարաւաններն ալ միեւնոյն վիճակին ենթարկուած էին»¹⁰³:

Գաթմայի¹⁰⁴ մոտակա գյուղերի արաբները, սողոսկելով մոտենում էին դիակներին, նրանց ցեխոտ հագուստը կողոպտելու համար պրպտում էին գրպանները, հանում էին ոսկի ատամները, կտրում էին ականջները՝ ոսկի օղերին տիրանալու համար: Նրանց շրջանում տարածված էր հետևյալ արտահայտությունը. «Հայ գաղթականի թողօնը (հոգին) Ալլահին, ու գօղոնը՝ Ֆելլահին»¹⁰⁵:

Դեր Զորի հասած Հակոբ Միմոնյանը պատմում է, որ Դեր Զորի անապատով «ժողովուրդը կը քալէ անընդհատ... յանկարծ արաբները կը յարձակին, կը կողոպտեն, կը մերկացնեն, երեխաները կը յափշտակեն»¹⁰⁶: Մեկ այլ դրվագ, երբ Մեսքենտի մոտակայքում Անագե ցեղի մարդիկ փորձել են կողոպտել տարագիրների քարավանները, ինչը թուրք ոստիկանները կանխել են¹⁰⁷: Իհարկե, սա չի կարելի դիտարկել հայ տարագիրներին պաշտպանելու քայլ. ամենայն հավանականությամբ արաբ բեդվինները չեն համաձայնեցրել իրենց քայլերը թուրքերի հետ կամ թուրքերն այլ ծրագրեր են ունեցել քարավանի հետ կապված:

102 Թաշճեան, *Օրագիր եղեռնի*, 119:

103 Նույն տեղում, 114:

104 Գաթման թուրքական զինվորականության իշխանության կողմից նշանակված էր հայ գաղթականների «հանգստավայր»՝ գաղտնի խորհրդով. այն է «իր յետին ծայր հանգիստի անյարմարության միակ առաւելութեամբ»: Տե՛ս Ասատուր, «Տէյր-էլ-Զօր. Ղաթմա», *Արևելեան մամուլ*, 21 հոկտեմբերի 1921:

105 Ասատուր, «Տէյր-էլ-Զօր. Ղաթմա», *Արևելեան մամուլ*, 21 հոկտեմբերի 1921:

106 1915. *Աղէտ եւ վերածնունդ* (Փարիզ, Արաբս, 1952), 256:

107 Կարապետ Տօնիկեան, *Կեսնքիս Յուշերը 1900 -1972* (Պէյրոս, Կ. Տօնիկեան և որդիք, 2004), 41:

Դեր Չորի ջարդերին տեղի արարների մասնակցության հարցում նույնպես հանդիպում ենք հակոտնյա փաստերի. կան վկայություններ, որ տեղի արարները մերժել են թուրքերի առաջարկը՝ հիմնավորելով. «Մեր խիղճը չենք կրնար բեռնաւորել անմեղներու արինով»¹⁰⁸: Սակայն դրան հակադարձող վկայություններ էլ կան. Չեքի բեյի 300 հոգանոց չեչենական հեծյալ և լավ զինված խումբը, որպես օժանդակ ուժ ունենալով շրջակայքի արարներին, Դեր Չորում հունիս-սեպտեմբեր ամիսներին ավելի քան 100 000 հայերի կողոպտելուց հետո համատարած սպանել են¹⁰⁹:

Արամ Անտոնյանի վկայությունները փաստում են, որ «Չորի բնիկ տարրը, սեվքի-յաթներու միջոցին առ հասարակ ցնծութեան մէջ էր»¹¹⁰: Անդրադառնալով Բակկարա, Ջաբուրի, Շարաբի, Թ-այ և Շամմար աշիրաթներին՝ գրում է. «Բոլորն ալ, գրեթէ առանց բացառութեան, մասնակցեցան ջարդերուն եւ կողոպուտին: Չեքի պէլ ամէնուն հետ ալ բանակցած էր նախապէս, եւ անոնց նոյն իսկ լաւագոյն տարրերը յաջողած էր անբարոյականացնել, կատարուելիք կողոպուտին հրապուրիչ հեռանկարը խաղցնելով անոնց սովորական ընչաքաղց արարներուն առջեւ»¹¹¹:

Վերապրած Խոսրով Շիրիկյանը պատմում է, որ օգոստոսի 1-ին Ինթիլիից իրենց մոտ՝ Շադադիե են հասնել Ուրֆա, Մերդին և Ռ-աս ուլ Այն ճանապարհով եկող 1300 տարագիրների խումբ, որը կոչվել է «մերկերի խումբ»: Վերջիններս Հասիջեից երեք ժամ հեռավորության վրա գտնվող տեղացի արաբ բնակչության կողմից կողոպտվել էին ց'ջապիկ¹¹²:

Հայ տարագիրների նկատմամբ արարների բացասական վերաբերմունքի փաստերն ուսումնասիրելիս մի շարք մասնավոր դեպքերի հիման վրա կարող ենք հետևյալ դրույթն առանձնացնել: Անապատարնակները մի դեպքում հարձակվել և կողոպտել են հայ տարագիրներին, մեկ ուրիշ դեպքում իրենց բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ ազատել թուրքերի հետապնդումներից կամ վերահաս մահվանից: Յեղասպանությունը վերապրած, հետագայում բեղվին արաբ դարձած Շուքրին Ռ-աս ուլ Այնում ականատես է եղել, թե ինչպես են թուրքերի իրագործած համատարած ջարդից հետո բեղվիները հարձակվել քարավանի մահացած անդամների վրա, պատռել նրանց փորոտիքը՝ ոսկյա իրեր գտնելու ակնկալիքով: Ալի Աբդուլ Ռ-ահման անունով մի արաբ փրկել է տասնամյա երեխային ու որդեգրել¹¹³՝ առաջարկելով փոխել անունն ու կրոնը՝ այլընտրանք չթողնելով: Արաբ ծնողները նրան հարազատի նման են վերաբերվել, բայց նա 1933 թ. վերադառնում է հայությանն այն պարագայում, երբ արաբ կին ու երկու երեխա ուներ¹¹⁴:

Վերապրած Արամ Ավետյանը փախուստի փորձի ժամանակ Բակկարա ցե-

108 Աղէտէն վերապրողներ, *Տէր-Չոր*, 28:

109 Յարութին Աթանասեան, «Տէր Չորի Ջարդարարները», *Շողովուրդ* (Կ.Պոլիս) 6/19 նոյեմբերի 1918:

110 Մինասեան, «Արամ Անտոնեանի անտիպ գրառումները», 693:

111 Նույն տեղում:

112 Ասատուր, «Տէր-էլ-Չոր. Ղաթմա», *Արեւելեան մամուլ*, 23 դեկտեմբերի 1921:

113 Լիպարիտ Ազատեան, *Հայ որբերը Մեծ եղեռնի* (Լոս Անճելըս, 2002), հ. 3, 128:

114 Նույն տեղում, 132:

դախմբին պատկանող տիրոջ դաշույնի հարվածից փրկվում է Շամմար ցեղախմբից մի ձիավորի միջամտությամբ: Ավետյանը, 13 տարի ապրած լինելով Շամմար ցեղախմբում¹¹⁵, նրանց մասին գրում է. «Կ'ըսէին որ ոչ մէկ Հայո քիջ արինտտեցին»¹¹⁶:

Ուսս ուլ Այնից Աբդուլ Ղաֆուրը պատմել է, որ բազմաթիվ հայ աղջիկներ ամուսնացել են շեյխերի, գյուղապետերի հետ կամ աշխատել նրանց մոտ. նրանց թվում է եղել նաև իր հարազատներին կորցրած մայրը, ով ամուսնացել է Շամմար ցեղախմբի շեյխի հետ¹¹⁷:

Վերապրած Հակոբ Սերոբյանը պատմում է, որ Հաշիմի, Վիչիեմի, Անագե, Բակկարա մեծ և հարուստ ցեղերում ևս եղել են հայերին խղճնտանքով վերաբերողներ. «միսքին էրմէն»՝ խեղճ հայեր ասելով՝ օգտակար էին լինում: Դրան զուգահեռ՝ գրում է, որ եղել են նաև անգույթ գող-ավազակներ¹¹⁸:

Վերապրող Հարություն Գալայճյանն իր արաբ պաշտպանի հետ երկար ճանապարհ է անցել մինչև նրա բնակավայր հասնելը: Ճանապարհին ականատես է եղել հայերի նկատմամբ լավ տրամադրված շեյխի ընտանիքի, վրանաբնակների¹¹⁹, ինչպես նաև արաբ շեյխի, որ տղայի պաշտպանին խորհուրդ է տվել հրաժարվել անհավատի ու անկրոնի գավակին որդեգրելու մտքից¹²⁰:

Ականատեսները պատմում են, որ արաբ կանայք մոտենում էին քարավաններին ու հետաքրքրվում, թե կան երեխա կամ փոքր աղջիկ վաճառողներ¹²¹: Երբեմն արաբները, քրդերը, չերքեզները վրանների ծածկոցի ծայրը բարձրացնում էին ու հարցնում՝ հագուստ կամ որևէ այլ բան ունե՞ն վաճառելու, մինչդեռ իրականում զննում էին, թե հարս, աղջիկ, կին թաքցնո՞ւմ են վրանում, որ գիշերն առևանգեն¹²²:

115 Հայ որբերին պահելու և որպես աշխատուժ օգտագործելու բազմաթիվ օրինակներ կան Հայոց ցեղասպանությունից տարիներ անց Հայեպի Փրկության տանն ապաստանած վերապրածների վկայություններում: Ստորև բերված բոլոր օրինակները տե՛ս *Հայեպի փրկության տուն* աշխատության համապատասխան էջերում:

Շամմար ցեղախմբում Մալաթիայից Հարությունը 11 տարի ծայրահեղ աղքատության մեջ ապրել է ցեղախմբում, 514: Ուրֆայից Կիրակոսը հովվություն է արել, 515: Այնթափից Գրիգորը որպես նախարապան 11 տարի ծառայել է, 566: Պետրոսը գրեթե 10 տարի հովիվ է եղել, Ադանայից Կարապետը, Կոնիայից Վարդիվառ Ավագյանը, Ուրֆայից Արմենը նույնպես հովիվ են եղել, 651, 665, 735: Միսից Միհրանը որպես հովիվ ու ծառա է աշխատել, 670: Միսից Երվանդին Շամմար ցեղից մի արաբ պաշտպանել է արաբների ու քրդերի հարձակումից, ինչը նրա համար արժեցել է 12-13 տարվա ծանր աշխատանք, 671: Մսից Գառնիկը մի ցեղախմբից փախուստի է դիմել ու ապաստանել Շամմար ցեղի մոտ, 701: Այնթափից Հարությունը փախուստի է դիմել Շամմար ցեղից, 622:

Անագե ցեղախմբում են ապաստանել ու հովվություն արել Բուրսայից Մարգարը՝ 8 տարի, Թոմզարայից Հաջեմը՝ 5 տարի, Կոնիայից Հարությունը՝ 9 տարի, Կեսարիայից Բարսեղը՝ 11 տարի, 220, 213, 267, 554: Մարաշի Հարությունն Անեզե ցեղախմբում մի արաբի օգնական է եղել այլ ցեղերի դեմ մղվող պայքարում, 604: Կեսարիայից Արամը, Ջեյթունից Մանուկը որոշ ժամանակ հովիվ աշխատելուց հետո փախուստի են դիմել Անագե ցեղից, 78, 132:

116 Մանճիկեան, *Դէմքեր, դէպքեր*, 140:

117 Սվազյան, *Հայոց ցեղասպանություն*, 517:

118 Յակոբ Սերոբեան, *Եղեռնի յուշերս* (Պէյրոյթ, Բագլայեան, 2005), 115:

119 Գալայճեան, *Միլիոնէն մէկը*, 57, 58, 61, 64:

120 Նույն տեղում, 30-31:

121 Մանուկ Ղազարյան, *Կենսագրություն. հիշողություններ անցյալից*, 19:

122 Սերոբեան, *Եղեռնի յուշերս*, 133, 137:

Վերապրած Վահրամ Տատրյանը, քաղաքում և անապատում բնակվող արաբների տարբերությունների առնչությամբ նշում է, որ բեդվին և ֆելլահ (գյուղացի) արաբը թշնամի է, քանի որ կողոպտում է հային, իսկ, օրինակ, դամասկոսցի արաբը հայի թշնամին է, քանի որ վերջինս քրիստոնյա է ու իրեն մրցակից առևտրական¹²³: Հուշերում հայ տարագիրների նկատմամբ ճերեշցի արաբների ունեցած սկզբնական վերաբերմունքի մասին գրում է. «Ամէն Հայու հետ, որ կը տեսնուիմք, կ'իմանաք նոյն գանգատը՝ տեղացի ժողովուրդին Հայոց հանդէպ ցոյց տուած թշնամական վերաբերմունքի մասին, վերաբերմունք մը, որ արդարանայի են ոչ մէկ հիմք ունի»¹²⁴: Արդեն 1916 թ. սեպտեմբերի համար հեղինակն արձանագրում է. «Նրանք, որ ամիս մը առաջ մեր գիւղէն մեր հեռացումը կը պահանջէին, մինչդեռ այժմ երբ կը զգան թէ վտանգը կը սպառնայ իրենց ինչքին ու կենսաքին, կ'ընդունին թէ հայերն ալ կարևոր են՝ ընդհանուր ազգաբնակչութեան պաշտպանութեան տեսակէտէն»¹²⁵: Այնուհետև նշում է՝ ճերեշը, որ «պատիկ գիտող մըն էր ցածր ու փլուած տներով», հայ տարագիրների գալուց հետո վերածվում է վաճառաշահ գյուղաքաղաքի. հայերն այստեղ կառուցում են ջրաղացներ, ստեղծում բանջարանոցներ, բացում տասնյակ խանութներ ու արհեստանոցներ: Հեռավոր գյուղերից այստեղ էին գալիս հարյուրավոր գյուղացիներ ու բեդվիններ հայերի ստեղծած բարիքներից ու բերած նորամուծություններից օգտվելու համար¹²⁶:

Արաբների նման վերաբերմունքը կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ երիտթուրքական իշխանությունները փորձել են արաբ բնակչության որոշակի հատվածի շրջանում հակահայկական տրամադրություններ առաջացնել՝ շահարկելով կրոնական զգացմունքները, իսկ այս պարագայում վկայակոչելով նաև աշխարհամարտի սկզբին հայտարարված ջիհադը, ինչը որոշակի ազդեցություն էր ունեցել մուսուլման արաբների մի հատվածի վրա¹²⁷:

Հարկ է նշել, որ հայ-արաբական փոխհարաբերություններն այդ տարիներին հարթ չեն եղել. երկու ժողովուրդների միջև փոխադարձ անվստահությունն օբյեկտիվ պատճառներ է ունեցել: Երիտթուրքերի իրագործած ցեղասպանությունից հետո հայերն անապատաբնակ մուսուլման արաբների՝ իրենց համար անձանոթ միջավայրում զգուշավորություն էին ցուցաբերում:

Արաբների տեսանկյունից հիմնավոր է թվում այն մտահոգությունը, որ աղքատության եզրին կանգնած հայերը տեղի արաբ աշխատավորների աշխատավարձը «անազնիվ» մրցակցության պայմաններում էլ ավելի էին նվազեցնում: Տարագիր

123 Վահրամ Տատրեան, *Դէպի անսպաստ (փրցուած էջեր օրագրէս)* (Նիւ Եորք, Կոչնակ, 1945), 163:

124 Նույն տեղում, 164:

125 Նույն տեղում, 224:

126 Նույն տեղում, 165:

127 Մանրամասների համար տե՛ս Նարինե Մարգարյան, «Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում իսլամի գործոնի հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 2, no. 2 (2014), 55-66, Շուշան Իսաչատրյան, «Երիտթուրքերի գաղափարախոսական ուղեհիշները: Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մեջ», *Ցեղասպանագիտական հանդես* 4, no. 1 (2016), 121-139:

հայերը հիմնականում անցանկալի էին համարվում՝ «ծովը թափուելիք» ապրանք: Տեղական մամուլը երբեմն հայերին որակում էր «վնասակար մրցակիցներ» և «անհաւատարիմ հիւրեր»¹²⁸, «մէլուն էրմէն»՝ անիծյալ հայեր¹²⁹: Կար նաև այն կարծիքը, որ «Հայերը եկած եւ իրենց երկրին պէրէքէքը փախցուցած են»¹³⁰: Հայերը բարդացնում էին արաբների կյանքը. իրենց հմտությունների ու արհեստների շնորհիվ բազմաթիվ իրեր էին նորոգում, չէին թողնում, որ նորը առնեն: Արաբ առևտրականները դժվար էին համակերպվում այն փաստին, որ հայերը կարող էին հաջողությունների հասնել այդ բնագավառում՝ համարելով դա իրենց մենաշնորհը: Նրանք վարժվել էին տեղացիների արտադրությունը էժան գնելու և տարբեր խարդախություններով տասնապատիկ ավելին վաճառելու և առևտրականները հաճախ արհեստական լարվածություն էին ստեղծում բեդվին արաբների ու տարագիրների միջև՝ հետագա համագործակցությունը խաթարելու համար:

Ցեղապետերի և առհասարակ անապատաբնակ արաբների աջակցությունը հայ տարագիրներին պետք է դիտարկել երկու կողմից: Առաջինը, ինչպես նշվեց, անմիջական օգնությունն է՝ ցեղապետի հրամանով կամ սեփական նախաձեռնությամբ օգնել են հայերին, ապաստան ու սնունդ տվել, աշխատանք, որ հիմնականում իրենց շահերին են ծառայեցրել, դրան զուգահեռ՝ բռնությամբ կամ «ինքնակամ» կնության վերցրել: Երկրորդը միջնորդավորված տարբերակն է: Արաբ բեդվինները, քաջածանոթ լինելով տեղանքին և իմանալով հայ տարագիրների գտնվելու վայրերը, օգնում էին նրանց փախուստի դիմել քարավաններից, ցույց տալիս՝ որ ուղղությամբ գնան վտանգից ազատվելու համար. հետագայում նրանք զբաղվում են հայ տարագիրներին հայտնաբերելու ու հայկական միջավայր վերադարձնելու գործով: Նույնը կարելի է նշել բացասական վերաբերմունքի պարագայում՝ անմիջական կամ միջնորդավորված մասնակցել են հայերի սպանություններին, թալանին, առևանգումներին, կանանց ու աղջիկների հետ բռնի ամուսնություններին, շահագործմանը, վաճառքին ու վերավաճառքին:

Փաստորեն, հայ տարագիրները, մասնավորապես՝ կանայք, երեխաները, արաբական աշիրաթներում էին հայտնվում ճարահատյալ, թվում է, թե իրենց իսկ կամքով և քանի որ այլընտրանք չունեին, ժամանակի ընթացքում համակերպվում էին: Հատկանշական է, որ նրանց մեծ մասն «առանց բռնական միջոցներու»¹³¹ ինտեգրվում էր արաբական կենցաղին և արաբանում, ինչը դժվարացնում է հետագայում նրանց այդ միջավայրից դուրս բերելու գործընթացները¹³²:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ հայ տարագիրների մի խումբ ուծացել է արա-

128 Սիսակ Վարժապետեան, *Հայերը Լիբանանի մէջ*, Բ. հատոր (Պէլրոթ, Սեւան, 1981), 68:

129 Տատրեան, *Դէպի անապատ*, 166:

130 Նույն տեղում, 165:

131 Սիւրմէեան, *Պատմութիւն Հալէպի Հայոց. Սուրիա*, 507:

132 Մանրամասն տե՛ս Vahe Tachjian, “Gender, Nationalism, Exclusion: The Reintegration Process of Female Survivors of the Armenian Genocide,” *Nations and Nationalism* 15, 1 (2009), 60-80: Նարինե Մարգարյան, Միջագետքի անապատի հայ որբախույզները (1918-1923 թթ.), *Հայագիտության հարցեր* 1(13), 2018, 39-57:

բական միջավայրում: Եղել են դեպքեր, երբ Սիրիայի կառավարությունը, հայկական, ֆրանսիական կողմերը պահանջել են հայերին հանձնել, սակայն հայերը չեն ուզել գնալ, անգամ փախչելու փորձեր են կատարել: Մնալով անապատներում՝ ոմանք կրոնափոխ են լինում, ժամանակի ընթացքում համակերպվում իրենց ներկային և, ապագայի անորոշությունից վախենալով, մնում՝ գնահատելով ունեցածը: Մանա հայ կանաչք բազմիցս ասել են. «Չենք կրնար ուրանալ, մենք հայուհիներս որ մեծա մասամբ վայելեցինք արաբներու վեհանձնութիւնը եւ բարիքները... իբր գործունեայ տանտիկիններ արժանացանք իրենց գնահատականին»¹³³:

Բնականաբար, ցանկալի կլիներ, որ արաբները, փրկելով հայերին վերահաս մահվանից, որպես պարտադիր պայման, վերադարձնեին հայությանը կամ գոնե թե խոչընդոտներ չստեղծեին վերադարձի համար: Այսպիսով, հայության այդ շերտը կորցրել է ազգային ինքնությունը՝ դադարելով կապ ունենալ իր էթնիկ խմբի հետ, ինչը ցեղասպանության իրագործման բաղադրիչներից է:

Հայ աղջիկները, բեդվիհների հետ ամուսնանալով, ավելի հեշտ էին հարմարվում արաբական կենցաղին: Մուշեղ եպիսկոպոս Սերոբյանը հուշերում անդրադառնում է Անագե ցեղախմբի շելյա Ֆեհեդի հետ ունեցած հանդիպմանը, որի նպատակը եղել է հայ կանանց ու աղջիկներին վերադարձնելը: Հնգօրյա բանակցություններից հետո շելյը ներկայացրել է միայն հինգ կնոջ, ընդ որում՝ միայն նրանց, որոնց նկատմամբ բացարձակ վստահություն է ունեցել, որ կմերժեն հայրենակիցների առաջարկը: Հայկական կողմին աջակցող անգլիացի զինվորներն արաբների հետ հարաբերությունները չարելու համար չեն խուզարկել վրասները: Հեղինակը գրում է. «Կը տեսակցիմք անոնց հետ, բայց կ'ուրանան հայ ըլլալին... պահ մը կը համոզուին, յետոյ կը դրժեն»¹³⁴:

Խարբերոցի Փայլածու Ֆաբրիկատորյանը, քրոջ ազատագրման բարդություններին անդրադառնալով, գրում է. «... անօգուտ եղաւ, որովհետեւ արաբներու կողմը գացողներուն անկարելի կ'ըլլար ազատուիլ, եթէ տեղէ մը վախի կամ դրամի յոյսը չունենային, ամէն ձեռք ձգածին 10 տարեկանէն վեր կ'ամուսնացնէին, քանի մը օր գործածելէ յետոյ, իրենց սովորութեան համեմատ, ուրիշի մը կը ծախէին, անտղն ալ նորէն այնպէս ուրիշի մը կը ծախէր: Այսպէս կ'անցնէր հայ անմեղուկներուն կեանքը: Շատերու շրթները ասեղով կը ծեծէին կապոյտ շինելու, որ չ'ըլլայ, թէ իրենցմէ գատուի»¹³⁵: Մանաատիպ դեպքերը բազմաթիվ են: Այդ տարիներին տարբեր պատճառներով շատերը չեն վերադառնում բեդվիհների վրաններից, և նրանց հստակ թիվը հնարավոր չէ ճշտել: Չնայած Թ-աութելը վկայում էր, որ տարագիրները չէին կարող երկար մնալ Դ-եր Չոր քաղաքի իսլամ բնակիչների տներում թուրքական իշխանությունների խիստ հսկողության պատճառով, որի հետևանքով «կլինեում

133 Աղէտէն վերապրողներ, *Տէր-Զօր*, 146:

134 Մուշեղ եպիսկ. Սերոբեան, *Դիտումներ եւ դատումներ (էջեր օրագրէս)* (Պէյրոս, Ազդակ, 1932), 115:

135 *Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թ-ուրքիայում. վերապրածների վկայություններ*, փաստաթղթերի ժողովածու, հ. 3, գլխ. խմբ.՝ Ա. Վիրաբյան (Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2012), 304:

մօտ 4 հազարը փախուստ տուա եւ ապաստանեցաւ պետեիներու աշիրէթներուն»¹³⁶, բայց ցեղասպանությունը վերապրած Փառանձեմ Պալյանը, որ աջակցել է Լևոն-Մեսրոպին Դեր Զորի անապատաբնակ վայրերում բեդվին-հայերին հայտնաբերելու, նրանց հուշերը գրի առնելու գործում, գրում է. «Միայն Տէր Զօր քաղաքին մէջ կան արաբներու հետ ամուսնացած մօտ հազար հայ կիներ»¹³⁷: Իսկ Դեր Զորի արաբ մի ոստիկան, որի մայրը հայ էր, հավաստիացրել է. «Մեր նման 750 ընտանիք հաշուած ենք»¹³⁸: Այդպէս հայերը իրենց «մասնակցությունն» են ունեցել անապատաբնակների ժողովրդագրական ինժեներիային:

Փաստորեն, մարդկային ռեսուրսների տեսանկյունից արաբները կրկնակի շահեկան վիճակում են եղել: Հայ կանայք ու աղջիկները հայտնվում էին արաբների, հաճախ նաև քրդերի տներում, հարեմներում: Տղա երեխաները նույնպես օգտագործվում էին աշխատուժի պակասը լրացնելու համար: Հայ երեխաների որդեգրումները, որպես հոգեզավակ իրենց մոտ պահելը, ինչպես նաև ստրկաբար աշխատացնելը սովորական էին, իսկ նրանց վաճառելը կամ փոխանակելը լրացուցիչ ֆինանսական աղբյուրներ էին ապահովում: 1921 թ. սկզբներին կազմված վիճակացույցի համաձայն՝ Դեր Զորի արաբական ցեղերի մէջ ապրած հայ որբերի ու աղջիկների մոտավոր թվերն են՝ Զիբար, Էլետար, Վրաքորա՝ 500, Ջարուր 600, Շամմար՝ 700, Անագե՝ 2 000, Ռաս ուլ Այն՝ 2 000, ընդհանուր՝ 5 800 որբեր ու աղջիկներ¹³⁹:

Ինչ վերաբերում է տնտեսական ոլորտին, ապա պետք է ընդձեռնել, որ հայ տարագիրների դերակատարությունն արաբ հասարակության վրա նույնպես դրական ազդեցություն է ունենում. հայ գաղթականների կյութական ողջ հարստությունը, որ կարողացել էին անցկացնել, կողոպուտից հետո հիմնականում Սիրիայում է մնում և շրջանառվում: Բացի դրանից՝ հայերը զարգացնում են արհեստագործությունը, ինչը բարելավում է արաբների կյանքի պայմանները, մեծացնում թե՛ ներքին, թե՛ արտաքին ապրանքաշրջանառությունը:

Հայ տարագիրներն օրվա ապրուստի համար աստիճանաբար իրենց պահուստից հագուստ, թանկարժեք զգեստներ, կահկարասի, գարդեղեն, կարպետ, վերմակ, անկողին և այլ ապրանքներ էին վաճառում ցածր գներով: Դրանք գնում էին ոչ միայն աղքատները, այլև հարուստ վաճառականները, որոնք հետո վերավաճառում էին, անգամ Հալեպից էին հարուստ վաճառականներ գալիս այդ առիթից օգտվելու համար. «Հայ արտրեալ մարդը՝ երկրին անձանօթ, լեզուին անտեղեակ, ժանտարմայէն խուսափող ձերբակալուելուց վախցող, գաղտագողի իր ունեցածը զեղչեալ գիներով կը ծախէր»¹⁴⁰:

136 «Տէր-Զորի դէպքերը պատերազմի ժամանակ», 54:

137 Ադէտէն վերապրողներ, *Տէր-Զօր*, 29:

138 Նույն տեղում:

139 «Թուրքիոյ Հայոց վիճակացոյցը», *Ազգ* (Պոսթոն), 7 ապրիլի 1921: Թերթի խմբագրությունը նշում է, որ տեղեկագրերը կազմվել են վստահելի աղբյուրների հիմամբ՝ հավելելով, որ մոտ 20 000 պետք է ավելացնել՝ հաշվի առնելով իսլամացած և ծալոված հայերի թիվը, ինչպես նաև նրանց, ովքեր շարունակում են ապաստանել լեռներում՝ վախենալով հավանական հալածանքներից:

140 Սերոբեան, *Եղեռնի յուշերս*, 114:

Գաղթականները՝ նաև որպես սպառող տարր, նպաստում էին տեղական գյուղատնտեսական մթերքի գնաճին. նախորդ տարիների համեմատությամբ մթերքն ավելի թանկ էր վաճառվում, ինչի հետևանքով արաբներն ավելի շահեկան վիճակում էին հայտնվում:

Արաբներն իրենց տները, փոքր-ինչ բարեկարգ տարածքներն ու վրանները բարձր վարձավճարով կամ ծառայության դիմաց տրամադրում են հայերին:

Ոսկու գինը նվազում է. հայերը ստիպված են լինում ցածր գնով վաճառել իրենց ոսկեղենը, իսկ արաբներն օգտվում են իրավիճակից. «Ուլունքն ու մարգարիտը չտարբերող, գոհարն ու խամքարը չգանազանող, աղամանդն ու ապակին... իրարմէ չկրցող տարորոշող արաբը նրբացաւ, ճաշակի տէր եղաւ, պերճանքի համը առաւ... Պերճանքի մէջ այնքան յառաջ գնացած էին, որ գանազանութիւն դնելն չէին գիտեր կանացի գգեստեղէններու եւ էրիկմարդու յատուկինին մէջ...»¹⁴¹:

Աստիճանաբար հայերը սկսում են կապ հաստատել արտասահմանում կամ համեմատաբար անվտանգ վայրերում ապրող նյութապես ավելի լավ վիճակում գտնվող իրենց ազգականների հետ. որպես օգնություն նրանց ուղարկված գումարները նույնպես տարածաշրջանում մեծացնում են շրջանառությունը: Նշենք նաև, որ կառավարությունը գաղթականներին որոշակի նպաստ է բաշխել, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն արաբների ձեռքում է հայտնվել:

Արաբները, հայ գաղթականների հետ անմիջական շփումների մեջ մտնելով, հասկանում են, որ «Հայը թուրքին ներկայացուցածին պէս վնասակար տարր մը, խըյանէթ միլլէթ չէ»¹⁴², այլ քաղաքակիրթ, ժիր, աշխույժ, գործունյա, ձեռներեց, ստեղծագործ, աշխարհաշեն, վաստակող, վաստակեցնող ժողովուրդ է, որով կարեկցության, գթության, աջակցութեան է արժանի¹⁴³:

Այսպիսով, հայ-արաբական, ի մասնավորի՝ հայ տարագիրների ու անապատաբնակ բեդվինների փոխհարաբերություններն ըստ էության որոշակիորեն շրջանցում են երիտթուրքական կառավարության՝ հայերին բնաջնջելու ծրագրերը: Արաբ բեդվինների դրական և բացասական վերաբերմունքը հայերի նկատմամբ եղել է միաժամանակ և զուգահեռ, բայց, այնուամենայնիվ, դրականը փոքր-ինչ գերակշռել է. այդ մասին է փաստում անապատներում վերապրած հայ տարագիրների թվաքանակը: Յեղասպանությունը վերապրած Բուռնազ Ջամբազյանի բնորոշումը արաբների վերաբերմունքի մասին բավականին ընդհանրացնող է. «Արաբները թուրքի նման գազան ըլլային, մէկ հայ չէր կրնար վերադառնալ անապատէն»¹⁴⁴: Այսպիսով, եթե 1915-1916 թթ. անապատաբնակ արաբների ու տարագիրների փոխհարաբերություններին անդրադառնալիս արձանագրում ենք նրանց ընդունելության, աջակցության կամ հակառակը՝ կողոպուտի, առևանգման, շահագործման և, առհասարակ, բացասական վերաբերմունքի իրողությունը, ապա դրանից մի քանի տարի անց եղած իրավիճակի

141 Գաբրիելեան, *Եղեռնասպանում*, 433:

142 Նույն տեղում, 433:

143 Նույն տեղում, 433-434:

144 Աղէտէն վերապրողներ, *Տէր-Զոր*, 363:

մասին խոսելիս հարցը պետք է դիտարկենք հայ-արաբական համագործակցության և փոխօգնության համատեքստում: Սիրիայի կարճատև անկախության տարիներին՝ 1918-1920 թթ., հայ տարագիրների դերակատարությունը կարևորվում է, իսկ 1920-ականներից վերաձևավորվող հայկական մոտ 150 000-անոց¹⁴⁵ համայնքը կարևոր հենարան է դառնում երկրի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի զարգացման համար:

THE ATTITUDE OF BEDOUIN ARABS TOWARDS THE ARMENIAN REFUGEES IN THE CONCENTRATION CAMPS

Narine V. Margaryan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

During the Armenian Genocide, Armenian refugees were deported to the Syrian deserts, periodically facing violence along the road from police accompanying the caravans, Kurds, and Turks. During the entire deportation, local Arabs, especially Bedouins, played a significant role, as their attitude could affect the fate of the Armenian Genocide.

Arabs' attitude towards the Armenian refugees was changing based on different political and economic circumstances – from quite positive to negative. The paper analyses the attitude towards Armenian refugees among Arab tribes, taking into account the political situation, the mood among tribes, and the perceptions both at the leadership and personal levels. The paper discusses circumstances contributing to or hindering support from the Arab tribes, its reasons, and implications.

Based on survivors' published and unpublished memoirs, articles in the press, published volumes, and testimonies of foreigners and diplomats, it could be concluded that Arabs living in the deserts both supported the refugees and were involved in the killings and robberies.

Simulatenauly, the developments in Armenian–Arab relations were analyzed. It was concluded that the formation of the 150,000 strong Armenian community was proof of the tolerant attitude towards the Armenian refugees.

Key Words: Armenian Genocide, Syrian deserts, bedouins, Arab tribes, Sheikh, Shammar, Anaze, Bakkara, Armenian refugees, orphans, women, witness, attitude, identity, integration.

145 1916 թ. համեմատությամբ Սիրիա տեղահանված 486 000 հայ տարագիրների թիվը զգալիորեն նվազում է՝ 1918 թ. հոկտեմբերի դրությամբ հասնելով մոտավորապես 142 000-ի, ընդ որում՝ Հալեպում ու հյուսիսային Սիրիայում՝ 75 000-ի, Դամասկոսում ու Հաուրանի շրջանում՝ 50 000-ի, Համա-Հոմսում, կենտրոնական Սիրիայում՝ 10 000-ի, Լաթաքիա-Քեսաբի շրջանում՝ 4 500-ի, Ալեքսանդրետում և Բեյլանում՝ 2 500-ի: Տե՛ս Բիզանդ Եղիայեան, *Ժամանակակից պատմություն կաթողիկոսության Հայոց Կիլիկիոյ 1914-1972* (Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայոց, 1975), 245:

ОТНОШЕНИЕ АРАБОВ-БЕДУИНОВ К ДЕПОРТИРОВАННЫМ АРМЯНАМ В КОНЦЕНТРАЦИОННЫХ ЛАГЕРЯХ

Нарине В. Маргарян

Фонд “Музей-институт Геноцида армян,” Армения

Во время Геноцида армян армянские беженцы были депортированы в сирийские пустыни, периодически сталкиваясь по дороге с насилием со стороны жандармов, сопровождавших караваны, курдов и турок. В ходе депортации значительную роль играли местные арабы, особенно бедуины, поскольку их отношение могло повлиять на судьбу армян.

Отношение арабов к армянским беженцам менялось в зависимости от различных политических и экономических обстоятельств – от довольно положительного до отрицательного. В статье анализируется отношение к армянским беженцам среди арабских племён с учётом политической ситуации, настроений среди племён, а также восприятий как на уровне вождей, так и на личном уровне. В статье обсуждаются обстоятельства, способствующие или препятствующие поддержке армян со стороны арабских племён, их причины и последствия.

Основываясь на опубликованных и неопубликованных мемуарах выживших, статьях в прессе, свидетельствах иностранных дипломатов, можно сделать вывод, что арабы, живущие в пустынях, как помогали беженцам, так и были причастны к убийствам и грабежам.

Одновременно было проанализировано развитие армяно-арабских отношений, приходя к выводу, что формирование 150-тысячной армянской общины в арабских странах стало доказательством в целом толерантного отношения к армянским беженцам.

Ключевые слова: Геноцид армян, сирийские пустыни, бедуины, арабские племена, Шейх, Шаммар, Аназе, Баккара, армянские беженцы, сироты, женщины, свидетель, отношение, идентичность, интеграция.

REFERENCES

Abelian, Gevorg. *Յկեանի նահապետութիւն* [Martyrdom for Life]. Anjar: Hamazgayin. Vahe' Se'tean, 2005;

Aganin, Aydar. *Племена сирийской пустыни и долины Евфрата* [Tribes of the Syrian Desert and Euphrates Valley]. Moscow: Institut Blizhnego Vostoka, 2018;

Aghazarian, Mihran. *Մտորակների յուշեր* [Memories of an Exile]. Adana: Hay dzayn, 2019;

- Al-Ghusseyn, Fayez. *Āl-Madhābih fi Ārmiṅyā* [Massacres in Armenia]. Aleppo: Arevelq, 1991;
- Al-Yafi, Naim. *Jemāl bāshā As-Safāh* [Bloody Jemal Pasha]. Aleppo, Latakia: Dār Al-Ḥiūar, 1992;
- Al-Yafi, Naim. *Majāzir Al-Armān wa Mauqif Ar-R'ayī Al-'ām Al-'Arabī minha* [The Massacres of Armenians and the Arab Public Opinion]. Latakia: Dār Al-Ḥiūar, 1992;
- Antonyan, Aram. *Մեծ ճգիրը* [The Great Crime]. Yerevan: Arevik, 1990;
- Arisian, Nora. *Տէր Զոր. Մարտիրոսաց քաղաք* [Der Zor: City of Martyrs]: Ayg Book-series-14. Aleppo: Vosketar, 2010;
- Arisian, Nora. *Ghauā'il Al-Ārmān fi Al-Fikr As-Sūriya*² [Armenian Horrors in the Syrian Mind]. Damascus: Al-Fūrat, 2002;
- Atanasian, Harutyun. «Տէր Զորի Ջարդարարները» [Perpetrators of Der Zor], *Zhoghovurd* (K.Polis), 6/19 November 1918;
- Avagyan, Arsen. Ներածական. Հասան Ամջա, *Տեղահանություն և ոչնչացում (տեղահանության իրական պատկերը)* [Introduction: Hasan Amja, Deportation and Annihilation. The actual situation of deportation]. Yerevan: AGMI, 2007;
- Azatian, Liparit. *Հայ որբերը Մեծ եղեռնի* [The Orphans of the Armenian Genocide], book 3. Los Angeles, 2002;
- Brens, Musa. *Ասպատիժ ցեղասպանությունն մը հայասպանությունը* [An Unpunished Genocide. Armenocide]. Beirut: Hamazgayin, 1969;
- Chepechian, Ropert. Սէլմիէի [To Salamieh]. *Zart'onq*, Beirut, 5 June 1987;
- Dadrian, Vahram. *Դէպի անսպաս (փրցուած էջեր օրագրէս)* [To the Desert (Saved Pages from my Diary)]. New York: Koch'nak, 1945;
- Dishdishyan, Hovakim. *Դեր-Զորի անսպասներում* [In the Deserts of Der-Zor]. Yerevan: Gitut'yun, 2006;
- Grigoryan, Harutyun. *Իմ կենսագրությունը* [My biography]. AGMI Collection, section 8, folder. 8, no. 31;
- Gabikian, Karapet (Guzhkan Sebast'io). *Եղեռնասպանում Փոքրն Հայոց և նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* [A History of Eghern, of the Poqr Hayq and the New Big Capital Sebastia]. Boston: Hairenik, 1924;
- Galaychian, Harutyun. *Միլիոնէն մէկը, ցեղասպանութեան սկանստես զեյթունցի պատանիի մը յուշերը* [One in a Million, Memoirs a Youth from Zeitun who Witnessed the Genocide]. Beirut: Zart'onq, 2018;
- Khachatryan, Shushan. «Երիտթուրքերի գաղափարախոսական ուղենիշները: Կրոնը՝ քաղաքականության, քաղաքականությունը կրոնի մէջ» [The Young Turks' Ideological Guidelines: Religion in Politics and Politics in Religion]. *Ts'eghaspanagitakan handes* 4, no. 1 (2016);
- Khalil, Hana. *Sūsīlūchiya Al-'Alāā t Al-'Arabīya As Sūriya - Āl-Ārmaniya* [The Sociology of Arab-Syrian-Armenian Relations]. *Ararat special issue*, Beirut: Māsis, 1995;
- Kurd 'Ali, Muḥammad. *Khutāṭ Āsh-Shām* [Description of Sham], vol. 3. Damascus: Nauābigh Al-Fikr, 1983;

Manchikian, Qnar. *Դէմքեր, դէպքեր, դէպի արմատներ* [Faces, Events, to the Roots] Los Angeles: Y ev Q Manchikian, 2006;

Margaryan, Narine. «Հայոց ցեղասպանության իրականացման գործընթացում իսլամի գործոնի հարցի շուրջ» [On the Factor of Islam in the Perpetration of the Armenian Genocide]. *Ts'eghaspanagitakan handes* 2, no. 2 (2014), 55-66;

Marutyan, Harutyun. «Հայոց ցեղասպանության տարիներին հայերի իրական և կեղծ փրկության խնդրի շուրջ» [On the Issue of the True and False Rescue of Armenians during the Armenian Genocide]. *Patmabanasirakan handes*, no. 2 (2018), 37-60;

Marutyan, Harutyun. ««Փրկություն» եզրույթի մեկնարանության շուրջ» [About the Interpretation of the Term “Rescue”] Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ., միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, խմբ.՝ Հարություն Մարության, Նարինե Մարգարյան [The Rescue of Armenians in the Middle East in 1915-1923. International Conference Proceedings, November 8–9, 2019, eds. Harutyun Marutyan, Narine Margaryan]. Yerevan: AGMI, 2020;

Minassian, Mihran. «Արամ Անտոնյանի անտիպ գրառումները Տէր Զօրի կոտորածներին մասին» [Aram Antonian's unpublished Notes about the Der Zor Massacres] *Haykazean Hayagitakan handes*, no. 35 (2015), 685-724;

Misqchian, Stepan. *Ես Տէր Զօրի դժոխքէն փախած եմ* [I Escaped from Der Zor's Hell]. vol. A, Paris, 1965;

Misqchian, Stepan. *Ես Տէր Զօրի դժոխքէն փախած եմ* [I Escaped from Der Zor's Hell]. vol. B, Paris, 1966;

Otyan, Ervand. *Անիծեալ տարիներ 1914-1915 (անձնական յիշատակներ)* [Accursed Years 1914-1915 (Personal Memoirs)]. Yerevan: Nairi, 2004;

Sarafyan, Gevorg. *Եփրատից Ռիո Դե Լա Պլատա* [From the Euphrates to the Rio De La Plata]. Yerevan: Gitut'yun, 2002;

Serobian, bishop Mushegh. *Դիտումներ եւ դատումներ (էջեր օրագրէս)* [Views and Judgments (Pages of my Diary)]. Beirut: Azdak, 1935;

Serobian, Hakob. *Եղանի յուշերս* [My Memoirs of the Eghern]. Beirut: Baglayian, 2005;

Shāhid 'Aīan. *Āl-Quṣārā fī Nakabāt An-Naṣārā* [The Final Purposes of the Christian Disasters 1914-1919, Eyewitness Testimonies], 1919;

Surmeian, archbishop Artavazd. *Պատմութիւն Հալէպի Հայոց Սուրիա* [History of Aleppo Armenians. Syria]. Book A, Aleppo: Kilikia, 2002;

Svazlyan, Verzhine. *Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ* [The Armenian Genocide. Testimonies of the Eyewitness Survivors]. Yerevan: Gitut'yun, 2011;

Tatulian, Grigor. *Անթղոյած գաղտնիքներ* [Buried Secrets]. Beirut: Atlas, 1967;

Tautel, Zhozef. Տէր-Զօրի դէպքերը պատերազմի ժամանակ [Events of Ter-Zor during the War] *Azduk*, Beirut, 24 April 2004;

Toronian, Toros. *Փայտէ դգային պատմութիւնը* [The History of the Wooden Spoon]. Beirut: Technopresse moderne, 1984;

Tashchian, Vahe. *Օրագիր եղեռնի ու պայքարի. Շոդակաթին մահը Սալամիայի մէջ* [Diary of Eghern and Struggle: The Death of Shoghakat in Salamiya]. Aleppo: Vosketar, 2019;

Terents, Yervand. *Ես տեսայ Տէր-Զորի դժոխքը* [I saw Der-Zor's hell]. Beirut: Sevan, 1966;

Tonikian, Karapet. *Կեսնքիս Յուշերը 1900 -1972* [Memories of my Life 1900- 1972]. Beirut: K. Tonikian ev vordiq, 2004;

Varzhapetian, Sisak. *Հայերը Լիբանանի մէջ* [Armenians in Lebanon]. book 2, Beirut: Sevan, 1981;

Yeghiaian, Buzand. *Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972* [Contemporary History of the Armenian Catholicosate of Cilicia, 1914-1972]. Antelias: Metsi Tann Kilikio kat'oghikosut'ean Hayots', 1975;

Zaqariya, Ahmad Uasfi. *'Ashā'ir Āsh-Shām* [Tribes of Sham]. Damascus: Dar Al Fiqr, 1983;

1915. Աղէտ և վերածնունդ [1915. Disaster and Rebirth] Paris: Araqs, 1952;

Աղէտէն վերապրողներ. *Տէր-Զոր* [Der Zor]. Paris: E'le' kean, 1955;

Արեւելեան մամուլ [Arevelyan mamul] (Izmir), 1920-1921;

Արձագանգ Փարիզի [Ardzaganq Parisi] (Paris) June 10 1916;

Հայեպի փրկութեան տուն: Հայոց ցեղասպանությունը վերապրածների 1464 վկայություն [The Aleppo Rescue Home: 1464 Accounts of Armenian Genocide Survivors]. Compiler, editor and author of introduction and references Edita Gzoyan]. Yerevan; AGMI, 2021;

Հայոց ցեղասպանությունը օսմանյան Թուրքիայում. վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու [The Armenian Genocide in the Ottoman Empire. Survivors' Testimonies. The collection of Documents]. vol. 3, Yerevan: National Archives of Armenia, 2012.

Հեղինակի մասին
About the Autor
Об авторе

Նարինե Վ. Մարգարյան, պատմական գիտությունների թեկնածու, արևելագետ, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի գիտական քարտուղար.

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանությունից հետո Մերձավոր Արևելքի արաբական երկրներում հայտնված հայ գաղթականների վիճակը, նրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական ինտեգրման գործընթացներն այդ երկրներում, նրանց հարաբերությունները տեղի արաբ ժողովրդի հետ, ինչպես նաև տարածաշրջանի հայկական որբանոցների գործունեությունը, հայ որբերի ուծացման գործընթացը և նրանց ինքնության պահպանման հետ կապված հարցեր:

Էլ. հասցե՝ narine.margaryan@genocide-museum.am

Narine V. Margaryan, PhD in history, Orientalist, Academic-secretary, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields – the plight of Armenian refugees in the Arabic countries of the Middle East after the Armenian Genocide, the process of their social-economic and political integration as well as their relations with local Arab population, the activities of the Armenian orphanages in the Middle East, the assimilation process of Armenian orphans, and issues related to the preservation of their identity.

E- mail: narine.margaryan@genocide-museum.am

Нарине В. Маргарян, кандидат исторических наук, востоковед, ученый-секретарь Фонда «Музей-институт Геноцида армян».

Область исследований – положение армянских беженцев в арабских странах Ближнего Востока после Геноцида армян, процесс их социально-экономической и политической интеграции, а также их отношения с местным арабским населением, деятельность армянских детских домов на Ближнем Востоке, процесс ассимиляции армянских детей-сирот и вопросы, связанные с сохранением их идентичности.

Эл. почта: narine.margaryan@genocide-museum.am

**ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ԱՂԵՏԻՑ ՀԵՏՈ ՀՈՒՆԱՍԱՆՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ՀԱՅ
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ. ԹՎԱՔԱՆԱԿ, ԲԱՇԽՈՒՄ, ՆԵՐՔԻՆ ՈՒ
ԱՐՏԱՔԻՆ ՄԻԳՐԱՑԻԱՆԵՐ (1922–1928 ԹԹ.)**

Ռոբերտ Ա. Թաթոյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հոդվածում ուսումնասիրվում են Զմյուռնիայի աղետից հետո Հունաստանում ապաստանած հայ փախստականների ընդհանուր թվաքանակի, գաղթի ալիքների, խոշոր ենթախմբերի և դրանց թվաքանակի, ըստ Հունաստանի շրջանների բաշխման, 1922–1928 թթ. ներքին և արտաքին միգրացիաների հարցերը:

Հունաստանում հանգրվանած հայ փախստականների առավելագույն թիվը գրանցվել է 1923 թ. սկզբներին՝ հասնելով 80-85 հազարի (1921–1923 թթ. ընթացքում այդ երկիր մուտք գործած հայերի թիվը հաշվվել է մոտ 100 000): Սակայն, հայ փախստականների ներհոսքին զուգահեռ, շատ ավելի մեծ ծավալներով է ընթացել նրանց արտահոսքը՝ տարբեր, հիմնականում տնտեսական պատճառներով պայմանավորված. հայերը մեկնել են Ֆրանսիա ու եվրոպական երկրներ, Ամերիկա մայրցամաքի (ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Բրազիլիա) և Մերձավոր Արևելքի (Եգիպտոս, Սիրիա) պետություններ և այլուր: 1924–1925 թթ. կազմակերպվել է նաև հունահայ փախստականների զանգվածային ներգաղթ Խորհրդային Հայաստան: Վերոնշյալ գործընթացների հետևանքով 1920-ական թթ. վերջերին հայերի թիվը երկրում նվազել է մինչև 35 000:

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Զմյուռնիայի աղետ, հայ փախստականներ, Հունաստան, Ազգերի լիգա, ժողովրդագրություն, վիճակագրություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 28.02.2023: Ընդունվել է տպագրության՝ 18.06.2023:

The article was submitted on 28.02.2023 and accepted for publication on 18.06.2023.

Статья поступила 28.02.2023 и была принята к публикации 18.06.2023.

Ինչպես հղել՝ Ռոբերտ Ա. Թաթոյան, «Զմյուռնիայի աղետից հետո Հունաստանում ապաստանած հայ փախստականները. թվաքանակ, բաշխում, ներքին ու արտաքին միգրացիաներ (1922–1928 թթ.)», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 40-69:

How to cite: Robert A. Tatoyan, “Armenian Refugees Found Asylum in Greece after Smyrna Catastrophe: Numbers, Distribution, Internal and External Migrations (1922–1928),” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 40-69.

Как ссылаться: Роберт А. Татоян, “Армянские беженцы, нашедшие приют в Греции после Смирнской катастрофы: численность, распределение, внутренние и внешние миграции (1922–1928 гг.),” *Цехаспанagitakan андес* 11, no. 2 (2023): 40-69.

Մուտք

1922 թ. սեպտեմբերին քեմալականները գրավում են Չմյուռնիան: Դրան հաջորդում են հայերի և հույների զանգվածային կոտորածն ու քաղաքի քրիստոնեաբնակ թաղամասերի հրդեհումը: Այդ ամենը հանգեցնում է Չմյուռնիայից և շրջակայքից հույն և հայ ազգաբնակչության դեպի Հունաստան տարհանմանը: Հետագա ամիսներին իրենց հայրենի բնակավայրերը զանգվածաբար թողնում և Հունաստան ու այլ բալկանյան երկրներ են տեղափոխվում նաև Փոքր Ասիայի կենտրոնական և արևմտյան շրջաններում, ինչպես նաև Եվրոպական Թուրքիայում բնակվող գրեթե բոլոր հայերը:

Հունաստանում հանգրվանած հայ փախստականների առավելագույն թիվը գրանցվում է 1923 թ. սկզբներին՝ հասնելով, ըստ որոշ հաշվարկների, 80-85 000-ի (1921–1923 թթ. ընթացքում այդ երկիր մուտք գործած հայերի թիվը հաշվվել է մոտ 100 000): Սակայն, հայ փախստականների ներհոսքին զուգահեռ, շատ ավելի մեծ ծավալներով է ընթանում նրանց արտահոսքը՝ տարբեր, հիմնականում տնտեսական պատճառներով պայմանավորված. հայերը մեկնում էին Ֆրանսիա ու եվրոպական այլ երկրներ, Ամերիկա մայրցամաքի (ԱՄՆ, Կանադա, Արգենտինա, Բրազիլիա) և Մերձավոր Արևելքի (Եգիպտոս, Սիրիա) պետություններ և այլուր: 1924–1925 թթ. կազմակերպվում է նաև հունահայ փախստականների զանգվածային ներգաղթ Խորհրդային Հայաստան: Վերոնշյալ գործընթացների հետևանքով 1920-ական թթ. վերջերին հայերի թիվը երկրում նվազում է մինչև 35 000 (համաձայն 1928 թ. ընդհանուր մարդահամարի տվյալների):

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել Չմյուռնիայի աղետի հետևանքով Հունաստանում հանգրվանած հայ փախստականների ընդհանուր թվաքանակի, գաղթի ալիքների, խոշոր խմբերի և դրանց թվաքանակի, ըստ Հունաստանի շրջանների բաշխման, 1923–1928 թթ. ներքին և արտաքին միգրացիաների հարցերը¹:

Ուսումնասիրության համար աղբյուրագիտական հենք են ծառայել Ազգերի Լիգայի փաստաթղթերը, փախստականներին օգնություն տրամադրող կազմակերպությունների և անձանց հաղորդած տեղեկությունները, հայկական և եվրոպական մամուլի հրապարակումները ևն:

Հայ և օտարերկրացի հետազոտողներից նշված հարցերի շրջանակին անդրա-

1 Ուսումնասիրության շրջանակից դուրս է Հունաստանում հայ փախստականների սոցիալ-տնտեսական վիճակին և տարբեր բնույթի (բժշկական, սննդի, դրամական ևն) մարդասիրական օգնության տրամադրման ուղղությամբ հունական կառավարության, հայկական և միջազգային մարդասիրական կազմակերպությունների գործունեությանն առնչվող հարցերը (դրանց մասին տե՛ս, օրինակ, Harry J. Psomiades, “The American Near East Relief (NER) and the Megali Catastrophe in 1922,” *Journal of Modern Hellenism* 19 (2001); Michelle Tusan, *Smyrna’s Ashes: Humanitarianism, Genocide, and the Birth of the Middle East* (Berkeley: University of California Press, 2012); Joceline Chabot and Sylvia Kasparian, “On the High Seas with no Place to Land”: the Smyrnaean Inferno and Humanitarian Aid to Armenian and Greek Refugees from Turkey (1922-1923),” *International Journal of Armenian Genocide Studies* 6, no. 1 (2021): 81-91):

դարձել են հատկապես Պետրոս Կոկինտը (Իսաչիկ Կոկայան)², Աշոտ Աբրահամյանը³, Իոանիս Հասիոտիսը⁴, Վահե Թաշճյանը⁵, Պալ Պետեր Կրանիցը⁶, Թեոֆանիս Մակիդիսը⁷, Մարիամ Հակոբյանը⁸, Մերիհ Էրոլը⁹:

I. Հունաստանում հայ փախստականների ալիքները, փախստականների խոշոր խմբերը և դրանց թվաքանակը

Զմյուռնիայի աղետից անմիջապես հետո Օսմանյան կայսրության տարածքից դեպի Հունաստան Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ փախստականների զանգվածային արտահոսքի գործընթացը կարելի է տեղակայել ժամանակագրական հետևյալ սահմաններում՝ 1922 թ. սեպտեմբերից առ 1922 թ. դեկտեմբերի վերջ, սակայն արևմտահայերի առանձին խմբերի գաղթը Հունաստան, հիմնականում՝ Կ.Պոլսով, շարունակվել է նաև հետագա ամիսներին, ըստ երևույթին՝ ընդհուպ մինչև 1923 թ. աշուն¹⁰: Նշված ժամանակաշրջանում Հունաստանը դառնում է արևմտահայերի գաղթի հիմնական ուղղությունը. այնտեղ հանգրվանած արևմտահայերի քանակով այդ երկիրը զիջել է միայն Խորհրդային Հայաստանին:

Սկզբնաղբյուրներում և պատմագիտական գրականության մեջ շրջանառվում են

2 Տե՛ս Պ. Կոկինտս, *Հունահայ գաղութի պատմությունից* (Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1965), 266 (տե՛ս հատկապես «Գաղութի կազմավորումը և հայ աշխատավորության տնտեսական վիճակը» բաժինը (նույն տեղում, 23-69)):

3 Ա. Գ. Աբրահամյանի «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» Բ հատորի «Հունաստանի հայ գաղթավայրը» գլուխը (տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության Բ* (Երևան, Հայաստան հրատարակչություն, 1967), 100-114):

4 Տե՛ս մասնավորապես I. K. Hassiotis, "Armenians," in *Minorities in Greece: Aspects of a Plural Society*. Editor: Richard Clogg (London: Hurst & Company, 2002), 94-111, տե՛ս նաև I. K. Hassiotis, G. Kassapian, "The Armenian Colony in Thessaloniki," *Balkan Studies*, Vol. 31 No. 2 (1990), 213-237:

5 Տե՛ս Vahe Tachjian, "Greece: Land of Refuge for Tens of Thousands of Armenians," in *The Armenian General Benevolent Union: One Hundred Years of History. Vol. I: 1906-1940*, edited by Raymond H. Kevorkian & Vahe Tachjian (Cairo-Paris-New York: Central Board of Directors, 2006), 211-224:

6 Տե՛ս Péter Pál Kránitz, "Some Remarks on the History of Armenian Refugees in Southeast and East-Central Europe with a Special Regard to Hungary," *Ցեղասպանագիտական հանդես* 3, թիվ 1-2 (2015), 204-217:

7 Տե՛ս Theofanis Malkidis, "The Armenians in Greece," *Armenological Issues* 2, no. 17 (2019): 12-19:

8 Տե՛ս Մարիամ Հակոբյան, «Հայաստանյաց առաքելական եկեղեցու հունահայոց թեմերի ձևավորումը և նրանց վարչաժողովրդագրական նկարագիրը 1920-1930-ական թթ.», *Պատմություն և մշակույթ* 15, թիվ 1 (2020), 226-231:

9 Տե՛ս Merih Erol, "Between Memories of Persecution and Refugee Experience: The Armenians in Greece in the Aftermath of the Greek-Turkish War" in *Salvation and Catastrophe: The Greek-Turkish War, 1919-1922*, ed. by Konstantinos Travlos (Lanham: Lexington Books, 2020), 341-368:

10 1923 թ. հոկտեմբերի 2-ին տեղի է ունենում Կ.Պոլսից Անտանտի (հիմնականում՝ բրիտանական) զորքերը դուրս բերելու և քաղաքը քեմալականներին փոխանցելու արարողությունը (S. J. Shaw, E. K. Shaw, *History of the Ottoman Empire and Modern Turkey. Vol. 2. Reform, Revolution, and Republic: The Rise of Modern Turkey, 1808-1975* (Cambridge: Cambridge University Press, 1977), 368), որը, մեր կարծիքով, կարելի է նշել որպես գործընթացի ավարտի պայմանական կետ (հասկանալի է, որ Թուրքիայից հայերի արտագաղթը դեպի Հունաստան ու այլ երկրներ շարունակվել է նաև հետագա տարիներին):

Հունաստանում հանգրվանած արևմտահայ փախստականների թվաքանակի վերաբերյալ հաճախ իրարից էականորեն տարբերվող տվյալներ, ինչը հիմնականում պայմանավորված է հետևյալ երկու առարկայական հանգամանքներով: Նախ՝ հայերի թիվը Հունաստանում 1923–1924 թթ. կայուն չի եղել. շատերը հանգրվանել են Հունաստանում խիստ կարճատև՝ օգտագործելով այդ երկիրը որպես տարանցիկ ցատկահարթակ այլ՝ տնտեսապես ավելի բարվոք պայմաններում գտնվող պետություններ տեղափոխվելու համար: Երկրորդ՝ ոչ բոլոր աղբյուրներն են ներառում հայ փախստականների բոլոր խմբերի, մասնավորապես Հունաստան տարհանված հայ որբերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ¹¹:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ նախքան Զմյուռնիայի աղետը Հունաստանում արդեն իսկ քիչ թե շատ կայուն հայ համայնք է եղել, որը գոյացել էր 1894–1896 թթ. Համիդյան կոտորածների, 1909 թ. Ադանայի ջարդի և Բալկանյան ու Առաջին համաշխարհային պատերազմների տարիներին արձանագրված գաղթի ալիքների հետևանքով¹². համաձայն որոշ տվյալների՝ Առաջին աշխարհամարտի ավարտին Հունաստանում կայուն հայ բնակչության թիվը մոտ 1 500 է եղել¹³:

1918–1922 թթ. Օսմանյան Թուրքիայից հայ փախստականների նոր հոսք է լինում, որի հիմնական զանգվածը՝ մոտ 5 00¹⁴–7 000¹⁵ մարդ, կազմել են ֆրանսիացիների՝ 1921 թ. Կիլիկիայի պարպումից հետո երկրամասը թողած հայերը: Դրա հետևանքով՝ Զմյուռնիայի աղետի նախօրյակին հայերի թիվը բուն Հունաստանում (առանց Արևելյան Թրակիայի տարածքի, որը մինչև 1922 թ. հոկտեմբեր հունական զորքերի վերահսկողության տակ է եղել), ըստ առավել արժանահավատ հաշվարկների, 9–10 հազարի սահմաններում է եղել¹⁶:

11 Ինչպես պատկերավոր նկարագրում է ուսումնասիրող Հովիկ Մելիքսեթյանը, 1920-ական թթ. սկզբներին Հունաստանում հայերի թիվը խիստ հարափոփոխ ու անկայուն է եղել. «... օրվա հացի կարոտ, ցնցոտիների մեջ ծայր թշվառության մատնված, տեղի ունեցած սարսափների արհավիրքները վերապրող ու վաղվա անստույգ վիճակի մղձավանջից տանջվող անտուն պանդուխտները խիստ անկայուն վիճակի մեջ էին Հունաստանում, ուստի այնտեղ երկար չէին մնում: Մինչ մի կողմից գաղթականների նորանոր խմբեր էին ապաստանում Հունաստան, նույն ժամանակ նախկիններից հագարավորները այնտեղից մեկնում էին դեպի Ամերիկա, Ֆրանսիա և այլ երկրներ, հուսալով գտնել ավելի բարվոք պայմաններ» (տե՛ս Հ. Ու. Մելիքսեթյան, *Հայրենիք-Սփյուռք ասոչությունները և հայրենաստործությունը (1920–1980)* (Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1985), 52):

12 Նախքան Զմյուռնիայի աղետը Օսմանյան Թուրքիայից Հունաստան հայ գաղթականության հոսանքների մասին տե՛ս մասնավորապես Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ*, 103–104:

13 Hassiotis, “Armenians,” 96: Հունական պաշտոնական վիճակագրությունը երկրում 1920 թ. դրությամբ հայերի թիվը հաշվում է 1 000-ի սահմաններում (A. A. Pallis, “The Greek Census of 1928,” *The Geographical Journal* 73, No. 6 (June, 1929), 546):

14 Տե՛ս Կարո Գեորգեան, «Տասնետթը տարի յունահայ գաղութին հետ, 1922–1939», *Ամէսուն Տարեգիրքը*, 1957 (Պէլրոթ, 1956), 224:

15 Ըստ հույն ուսումնասիրող Անտոնիս Կլասպիսի, որը, հղում կատարելով Հունաստանի կառավարության տվյալներին, հաղորդում է, որ 1920–1922 թթ. Կիլիկիայից Հունաստան է տեղափոխվել մոտ 10 000 մարդ, որից երկու երրորդը՝ հայեր (տե՛ս Antonis Klapsis, “Violent Uprooting and Forced Migration: A Demographic Analysis of the Greek Populations of Asia Minor, Pontus and Eastern Thrace,” *Middle Eastern Studies* 50, no. 4 (2014), 627):

16 Տե՛ս Հակոբյան, «Հայաստանյազ առաքելական եկեղեցու հունահայոց թեմերի ձևավորումը», 226:

Վերոնշյալ տվյալները հաստատվում են նաև Հայ ազգային պատվիրակության «Յունաստանի հայ գաղթականները» տեղեկագրում¹⁷ առկա վիճակագրությամբ, որի համաձայն՝ 1922 թ. սեպտեմբերին բուն Հունաստանի տարածքում գտնվել են 9 040 բնիկ և գաղթական հայեր, որոնք բաշխվել են հետևյալ կերպ՝ 1. «Հին Հունաստան»¹⁸ 240 բնիկ, 4 850՝ Կիլիկիայից գաղթական, 2 050՝ Զմյուռնիայից գաղթական, 2. Արևմտյան Թրակիա՝ 1 500 բնիկ, Մակեդոնիա՝ 150 բնիկ, 250՝ Կիլիկիայից գաղթած հայ¹⁹:

1922–1923 թթ. հայ փախստականների դեպի Հունաստան հոսքերի ուսումնասիրությունը թույլ է տալիս նշմարել ուրույն ժամանակագրական և ծագման հատկանիշներով առանձնացող երեք հիմնական խմբեր: Դրանք են.

1. Զմյուռնիայից և Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից տարհանվածներ,
2. Արևելյան Թրակիայից և Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան շրջաններից գաղթածներ,
3. Կիլիկիահայ փախստականներ:

Վերոնշյալ երեք խմբերին անհրաժեշտ է ավելացնել Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության՝ Հունաստան տարհանած հայ որբերին²⁰:

Ստորև առանձին կներկայացնենք վերոնշյալ խմբերից յուրաքանչյուրի՝ Հունաստան գաղթի ժամանակագրության, թվաքանակի և Հունաստանում բաշխման վերաբերյալ տվյալները:

ա. Զմյուռնիայից և շրջակայքից տարհանված հայերը

Համաձայն աղբյուրների միահամուռ վկայության՝ անմիջապես Զմյուռնիայի աղետի նախօրյակին, բացի Զմյուռնիա քաղաքի բուն հայ բնակչությունից (12–15 հազ.), Հունաստանում էին կենտրոնացել մոտ 20–25 հազ. հայ փախստականներ՝ նահանջող հույն բանակին հետևած՝ Զմյուռնիայի նահանգի հայաբնակ այլ բնակավայրերի և

17 Պատրաստվել է 1924 թ. մարտին:

18 Աթենք և նրա արվարձաններ, Պելոպոնես, կենտրոնական Հունաստան, կղզիներ՝ մոտավորապես համապատասխանում է նախքան 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմները Հունաստանի տարածքին:

19 Տե՛ս «Դիանատուն Ազգային Պատուիրակության: Յունաստանի հայ գաղթականները: Ամփոփում եւ դասաւորում Պ. Մեդրակ Քարեանի տեղեկագիրներուն», Նուբարյան գրադարանի արխիվ, DNA/Microfilm/08:

20 Դեպի Հունաստան հայ փախստականների հոսքերի դասակարգման փորձեր կատարվել են դեռևս 1920-ական թթ.՝ նրանց ներհոսքին զուգընթաց: Այսպես, հունական կառավարության 1924 թ. հունիսի 12-ին Ազգերի լիգա ներկայացրած տեղեկագրում Հունաստանում ապաստանած հայ փախստականներն ըստ ծագման բաժանվում էին հետևյալ խմբերի. ա) Փոքր Ասիայի այն մասից, որը ժամանակավորապես գրավել էր հունական բանակը 1919–1922 թթ. թուրք–հունական պատերազմի ընթացքում, բ) Սևծովյան առափնյա շրջաններից, գ) Կիլիկիայից (տե՛ս United Nations Library & Archives Geneva, R1756/48/36414/23548, թերթեր 119–120, անցանց՝ <https://archives.ungeneva.org/situation-des-refugies-du-proche-orient-secretariat-soumet-au-conseil-le-rapport-du-dr-fridtof-nansen-a-ce-sujet>, դիտվել է՝ 04.01.2023): Հայ հեղինակ Կարո Գևորգյանը որպես առանձին խմբեր առանձնացնում է՝ 1. Զմյուռնիայի, Փոքր Ասիայի այլ շրջանների և Արևելյան Թրակիայի հայ փախստականներին, 2. հայ որբերին, 3. կիլիկիահայերին (տե՛ս Գեորգեան, «Տասնեւթօթը տարի յունահայ գաղութին հետ», 224):

Փոքր Ասիայի արևմտյան շրջանների հայ բնակչության խլյակները, ինչպես նաև ֆրանսիական գործերի նահանջից հետո Կիլիկիայից տեղափոխված հայերը: Այսինքն, տարբեր հաշվարկներով, 1922 թ. սեպտեմբերին քաղաքում և շրջակայքում կենտրոնացած հայերի ընդհանուր թիվը 30–40 հազ. էր²¹: Վերոնշյալից մոտ 4–5 հազարը գոհ են գնացել քաղաքի գրավումից հետո քեմալականների իրագործած կոտորածին և հրդեհին²², մյուսները՝ տարհանվել Հունաստան և Էգեյան ծովի կղզիներ:

Քեմալական իշխանությունները Չմյուռնիայից և շրջակայքից հույների և հայերի տարհանման գործընթացի կազմակերպման համար սկզբնապես հատկացրել էին մոտ երկու շաբաթ՝ 1922 թ. սեպտեմբերի 16-ից առ հոկտեմբերի 1²³: Չմյուռնիան քրիստոնյաներից ազատելու ծրագիրն արագացնելու ակնհայտ նպատակով հայտարարվել է, որ նրանք, ովքեր մինչև նշված ժամկետը չեն հասցնի թողնել քաղաքը, տեղահանվելու են Փոքր Ասիայի ներքին շրջաններ²⁴: Քանի որ նշված ժամկետում չէր հաջողվել տարհանման գործընթացն ավարտին հասցնել (սեպտեմբերի 29-ի դրությամբ Չմյուռնիայում դեռևս տարհանման է սպասել մոտ 50 000 մարդ²⁵), Անտանտի տերությունների միջնորդությամբ՝ ժամկետը երկարաձգվել է ևս մեկ շաբաթով²⁶:

Համաձայն 1922 թ. դեկտեմբերի սկզբին Աթենքի հայկական թեմական իշխանությունների կազմած վիճակագրության՝ Հունաստանի տարածքում (ներառյալ՝ Էգեյ-

21 Գրիգոր Գալուստյան՝ 30 000-ից ավելի՝ «նկատի առնելով 1921ին Հելլեն կառավարության Կիլիկիայէն Իզմիր եւ շրջակաները փոխադրած հայ գաղթականներուն թիւը» (տե՛ս Տօրթ. Գ. Օ. Գալուստեան, «Չմիւռնիա եւ Չմիւռնիոյ հայ գաղութը», *Յունահայ տարեգիրք: Բ. տարի*, (Աթէնք, հրատարակութիւն «Նոր օր»ի, 1928), 299), Պետրոս Սիմոնյան (հղելով Գ. Օ. Գալուստյանին)՝ ավելի քան 30 000 (Պետրոս Սիմոնեան, *Յուշամատեն: Հայկական Չմիւռնիան* (Փարիզ, տպարան Արաքս, 1936), 12-13), Թեոդիկ (Թեոդորոս Լափչինճյան)՝ 35 000 հայ, որից 20 000-ը՝ փախստականներ (տե՛ս Թեոդիկ, *Ամէնուն տարեցոյցը, 1924* (Փարիզ, տպ. Յ. Բ. Թիւրապեան, 1923), 148-149), տե՛ս նաև Գուժկան, «Իզմիրի ջարդը և հրդեհը», *Հայաստանի կոչնակ* (Նիւ Եորք), ԻԲ. տարի, թիւ 47, 25 նոյեմբեր 1922, 1525, տե՛ս նաև «Իզմիրի ողբերգութիւնը I», *Հայրենիք, օրաթերթ ազգային, գրական, քաղաքական, հասարակագիտական* (Պոսթըն), 24-րդ տարի, թիւ 3 (232), 16 դեկտեմբեր 1922, 1: Որոշ հեղինակներ Չմյուռնիայի աղետի նախօրյակին քաղաքում կենտրոնացած հայերի թիվը հասցնում են մինչև 50 000-ի (տե՛ս «Իզմիրի աղէտը», *Հայաստանի կոչնակ*, ԻԲ. տարի, թիւ 38, 23 սեպտեմբեր 1922, 1228): Վերջին թիվը, մեր կարծիքով, գուցե, ներառում է ամբողջ գավառի հայ ազգաբնակչությունը:

22 Տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Չմյուռնիայի աղետին գոհ գնացած հայերի թվաքանակի հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 10, թիվ 2 (2022), 49-73:

23 Տե՛ս Marjorie Housepian Dobkin, *Smyrna 1922: The Destruction of a City* (New York: Newmark Press, 1998), 183:

24 Տե՛ս Esther Pohl Lovejoy, *Certain Samaritans* (New York: The MacMillan Company, 1927), 145:

25 Նույն տեղում, 167:

26 Տե՛ս “Smyrna Victims Get Extension Of Time: Evacuation Permitted Till Sunday,” *New York Times*, October 5 1922, հայկական մամուլում՝ «180,000 հոգի փրկուած Իզմիրէն», *Ճակատամարտ* (Կ.Պոլիս), թիւ 2007, 6 հոկտեմբեր 1922) (տարհանման գործողությունները շարունակվել են անգամ հոկտեմբերի 8-ից հետո՝ մինչև հոկտեմբերի 10-ը (տե՛ս Benny Morris, Dror Ze’evi, *The Thirty-Year Genocide: Turkey’s Destruction of Its Christian Minorities, 1894–1924* (Cambridge, Mass, Harvard University Press, 2019), 453):

յան ծովի կղզիները) ապաստան են ստացել Իզմիրից տարհանված մոտ 40 000 իզմիրցի և «անասուլուցի» (այսինքն՝ Փոքր Ասիայի այլ՝ հիմնականում արևմտյան և կենտրոնական շրջաններից) հայ գաղթականներ²⁷: Նրանց մեծ մասը՝ մոտ 25 000-ը, հանգրվանել է Աթենքում և Պիրեայում, մոտ 6 000-ը՝ Ատիկեի տարբեր բնակավայրերում (Քիֆիսիա, Կոկինա, Ֆիքս (Դուրդուրի)), մնացածը՝ Կրետեում, Էգեյան ծովի կղզիներում և այլուր²⁸:

բ. Արևելյան Թրակիայից և Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան շրջաններից հայ գաղթականները

Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան առափնյա շրջաններից (օսմանյան վարչական բաժանմամբ՝ Իզմիրի (Նիկոմիդիա) սանջակ, Կալե-ի Սուլթանիե կամ Դարդանելի սանջակ և Բուրսայի նահանգի հյուսիսարևելյան շրջաններ (Բուրսայի, Կարասիի և Բիլեջիկի սանջակներ)) հայ բնակչության գաղթի առաջին ալիքը գրանցվում է 1921 թ. ամռանը՝ թուրք-հունական պատերազմում ռազմական գործողությունների ակտիվացումից հետո: Ադաբազարի, Նիկոմիդիայի, Արմաշի, Պարտիզակի և Իզմիրի սանջակի այլ բնակավայրերի՝ 1915 թ. եղեռնը վերապրած և հայրենադարձված մոտ 20 000 հայության²⁹ նոր գաղթի հիմնական ուղղություններն են դառնում Կ.Պոլիսն ու Արևելյան Թրակիան (օսմանյան վարչական բաժանմամբ՝ Օսմանյան կայսրության Էդիրնեի (Ադրիանապոլիս) վիլայեթի, Չաթալջա և Կալե-ի Սուլթանիե (Չանակկալե) անկախ գավառների տարածքը)³⁰, որտեղ Փոքր Ասիայի գաղթականները գալիս

27 Տե՛ս «Գաղթականները Յունաստանի մեջ», *Ապագայ, քաղաքական և հասարակական շարժաթերթ* (Բարիզ), 23 դեկտեմբեր, 1922, 3 (վիճակագրության մեջ հատուկ շեշտվում է, որ այդ թիվը չի ներառում Նիկոմիդիայից և Կիլիկիայից հայ գաղթականներին): Նույն՝ 40 000 թիվն առկա է նաև Հայոց ազգային պատվիրակության փաստաթղթերում (տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թվականներին կազմած վիճակագրությունները», *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ.*, միջազգային գիտաժողովի կյուրերի ժողովածու, խմբագիրներ՝ Հ. Տ. Մարության, Ն. Վ. Մարգարյան (Երևան, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, 2020), 331-332):

28 «Գաղթականները Յունաստանի մեջ», 3: Միայն 1922 թ. հոկտեմբերի 12-ի դրությամբ Հունաստանում հանգրվանած հայ գաղթականների թիվը հաշվվում է մոտ 50 000-ի սահմաններում (ըստ Ազգերի լիգայի տվյալների՝ United Nations Library & Archives Geneva, R1755/48/24190/23548 - Refugees From Asia Minor - Mr. Philip British - Various Notes on the Present Situation of These Refugees, անցանց՝ <https://archives.ungeneva.org/refugees-from-asia-minor-mr-philip-british-various-notes-on-the-present-situation-of-these-refugees>, դիտվել է՝ 11.01.2023):

29 1915 թ. տեղահանությունն ու ջարդը վերապրածների թիվը՝ ըստ «Բաղդատական վիճակագրության հայ բնակչության Օսմ. Կայսրության մեջ տեղահանությունից առաջ և վերջ (Պատրաստուած 1 ապրիլ 1921ին)», *Թեոդիկ, Ամենուն տարեցոյցը, ԺԶ. Տարի, 1922* (Կ.Պոլիս, տպագրություն Մ. Յովակիմեան, 1922), 262: Համեմատության համար՝ Իզմիրի սանջակի հայ բնակչության թիվը 1914 թ., ըստ օսմանյան պաշտոնական վիճակագրության, 57 789 է (Kemal Karpat, *Ottoman population 1830-1914: Demographic and Social Characteristics* (Wisconsin: The University of Wisconsin Press, 1985), 184 (կաթոլիկներն ու բողոքականները ներառյալ)), այսինքն՝ եղեռնը վերապրել և իրենց հայրենի բնակավայրեր էր վերադարձել նշված վարչական միավորի հայ բնակչության մոտ մեկ երրորդը:

30 1921 թ. հուլիսին նավերով Ռոդոսթո (Թեքիրդաղ) է տեղափոխվում մոտ 4 000 հայ Նիկոմիդիայից (Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին 1915 արևտայի տարին* (Նի-

են համարելու տեղի հայ բնակչության մոտ 12–13 հազ. խլյակներին³¹: Արևելյան Թրակիայի տարածքից նույնպես որոշակի հոսք է լինում դեպի Հունաստան (Արևմտյան Թրակիա)³²:

Միկոմիդիացի հայերի գաղթն առավել մեծ ծավալներ է ընդունում 1922 թ. աշնանը՝ քենավական գորքերի առաջխաղացմանը զուգահեռ և հատկապես Ջմյունիայի աղետից հետո: Արդեն 1922 թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին հաղորդվում է Ռոդոսթյում կենտրոնացած 10 000-ից ավելի հայ գաղթականների մասին³³ (առավել մանրամասն վիճակագրությամբ՝ Ռոդոսթյում ապաստանել են 8 400, Մալգարայում՝ 1 000, Չոռլուում՝ 900, Սիլիվրիայում՝ 500 հայ գաղթականներ, ընդհանուր՝ 10 800 հայ³⁴): Այսպիսով, Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան շրջաններից քենավականների հարձակումից մազապուրծ եղած փախստական հայերի թիվն Արևելյան Թրակիայում 1922 թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին, մոտավոր հաշվարկով, հասել է 12–13 հազարի, այսինքն՝ հավասարվել և նույնիսկ գերազանցել է Արևելյան Թրակիայի բնիկ հայ բնակչությանը:

Բացի վերոնշյալ գանգվածից՝ 1922 թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբին Արևելյան Թրակիա են շարժվում նաև քենավական գորքերի առաջխաղացումից մազապուրծ եղած հայ փախստականներ՝ Բուրսայի վիլայեթի հյուսիսարևմտյան

Եոքք, 1985), 338):

31 Ըստ 1919 թ. Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի «վիճակացոյց»-ի կամ հաշվառման տվյալների (տե՛ս Ռոբերտ Թաթոյան, «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության կրած մարդկային և նյութական կորուստները վիճակագրելու Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի փորձերը 1919–1920 թվականներին (ըստ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվի նյութերի) (Մաս 2)» *Էջմիածին, պաշտօնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի*, Ե (2019), 54–55): Համեմատության համար, ըստ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի 1912 թ. տվյալների, Արևելյան Թրակիայի տարածքի հայ բնակչության թիվը 27 500 է եղել, որից 7 500-ը՝ Ադրիանապոլսում (ներառյալ՝ Արևմտյան Թրակիայի՝ հետագայում Հունաստանին անցած բնակավայրերը), 20 000-ը՝ Ռոդոսթյոյի (Թեքիրդաղ) և Դարդանելի հայաբնակ բնակավայրերում («Բաղդատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. Կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ», 262): Համաձայն 1914 թ. օսմանյան վիճակագրության՝ Ադրիանապոլսում բնակվել է 4 856, Թեքիրդաղում (Ռոդոսթյո)՝ 9 256, Չոռլուում՝ 1 678, Մալգարայում՝ 2 658, Հայրաբոլոսում՝ 193, Գալիպոլիում՝ 1 246, Սիլիվրիում (Չատալջա)՝ 842, Չանակ-Կալեում (Չանակ-Կալե, Էզինե, Բիդա)՝ 2 483 հայ, ընդհանուր՝ 23 212 հայ (Karpac, *Ottoman population 1830-1914*, 170, 184, 186): Վերոնշյալ թվերը վկայում են, որ Մեծ եղեռնը վերապրել և Առաջին աշխարհամարտի ավարտից հետո հայրենի բնակավայրեր է վերադարձել Արևելյան Թրակիայի հայ ազգաբնակչության մոտ 40%-ը:

32 1921 թ. հունիս–հուլիս ամիսներին նիկոմիդիացի հայեր են տեղափոխվել Արևմտյան Թրակիայի Դրամա, Կավալա և այլ բնակավայրեր (Ասատուր Յ. Մակարեան, Յուշագիրք Թրակիոյ եւ Մակեդոնիոյ հայ գաղութներու (Մելանիկ, 1929), 325–326, 344), 1921 թ. հուլիսին Միտիլինի կղզի է տեղափոխվել մոտ 1 000 հայ Ադաբազարից (Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականութեան*, 338):

33 «Փոքր Ասիոյ գաղթականութիւնը», *Երկունք, պարբերաթերթ* (Աթէնք), թիւ 2, 13 (26) հոկտեմբեր, 1922, 1):

34 *Հայաստան, օրաթերթ* (Պոլովդիվ), 25 սեպտեմբերի, 1922, մեջբերվում է ըստ՝ Զ. Մ. Ղասաբյան, «Հայ գաղթականների ընդունումը և բնակեցումը Բուդաբիայում (1922–1923)», *Լրաբեր հասարակական գիտությունների* 1 (1974), 21), տե՛ս նաև «Հայ գաղթականները Ռոստոսթոյի մէջ եւ շրջակայքը», *Հայաստանի կոչնակ*, թիւ 42, 21 հոկտեմբեր 1922, 1372):

առափնյա շրջանների³⁵: Տարբեր անուղղակի տվյալների համադրումն ու վերլուծությունը ցույց են տալիս, որ նրանց թիվը հասել է 10 000-ի³⁶:

Արևելյան Թրակիայի տարածքից բնիկ և գաղթական հայերի զանգվածային գաղթը տեղի է ունենում 1922 թ. հոկտեմբերի 11-ի Մուդանիայի զինադադարի կնքումից անմիջապես հետո՝ խիստ շտապ պայմաններում՝ տևելով մոտ երկու շաբաթ (ըստ զինադադարի պայմանների՝ այդ ժամկետն էր սահմանված հունական զինված ուժերի՝ տարածքից դուրս գալու համար)³⁷: Գաղթն ընդգրկում է մոտավորապես 38 000 հայի³⁸. նրանցից մոտ 20 000-ը հանգրվանում է Հունաստանում, 18 000-ը (8 300-ը՝ բնիկ թրակիահայեր)՝ Բուլղարիայում³⁹: Փոքր Ասիայի արևմտյան և կենտրոնական շրջաններից գաղթը շարունակվում է նաև հետագա ամիսներին արդեն հիմնականում Կ.Պոլսի և Թուրքիայի նավահանգիստներով: Այսպես, ըստ մամուլի տեղեկությունների՝ 1922 թ. նոյեմբերից մինչև 1923 թ. հունվար՝ երեք ամսվա ընթացքում, Կ.Պոլսից Հունաստան է մեկնել 170 000 մարդ, որից 15 000-ը՝ հայ⁴⁰:

35 Տե՛ս Զ. Մ. Ղասաբյան, *Նիկոմիդիայի և Արևելյան Թրակիայի հայաթափումը (1921-1922)* (Երևան, ՀՀ ԳԱԱ, 1998), 16, տե՛ս նաև Անահիտ Աստղյան, *Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին* (Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն հրատ., 2017), 260:

36 Միայն Սիլվիոն (Չատալջա) և շրջակա բնակավայրերում 1922 թ. հոկտեմբերի սկզբին կենտրոնացել է մոտ 4 000 հայ՝ փոխադրված Բրուսայից, Քիրմասթից, Միխալընից, Եսիճեից, Կեմեկեից և այլ բնակավայրերից (տե՛ս «Գաղթականները Սիլվիոյի մէջ», *Հայաստանի կոչնակ*, թիւ 42, 21 հոկտեմբեր 1922, 1372): Ըստ առավել ամբողջական վիճակագրության՝ 1922 թ. հոկտեմբերի սկզբին Արևելյան Թրակիայում հայ գաղթականների ընդհանուր թիվը հասել է մոտ 20 000-ի, որից 9-10 հազարը՝ Ռոդոսթոյում, 4 000-ը՝ Սիլվիոնում, 1 500-ը՝ Չոռլուում, 500-ը՝ Ուզուն Քոչիքում, 2 000-ը՝ Մալկարայում (տե՛ս «Գաղթականներու վիճակը Թրակիոյ մէջ», *Հայաստանի կոչնակ*, թիւ 43, 28 հոկտեմբեր 1922, 1 403):

37 1922 թ. նոյեմբերի սկզբի դրությամբ Արևելյան Թրակիայից հայերի գաղթը հիմնականում ավարտված է եղել: Հաղորդվել է միայն Մալկարայում և Ռոդոսթոյում մնացած մոտ 1 600 հայի մասին, որ ցանկանում էին տեղափոխվել Բուլղարիա և սպասում էին համապատասխան թույլտվության (տե՛ս «Թրակիոյ հայերու գաղթը վերջացած է», *Երկունք, պարբերաթերթ* (Աթէնք), թիւ 5, 5 նոյեմբեր, 1922, 2):

38 Ըստ Հայ առաքելական եկեղեցու Թրակիո թեմի առաջնորդ Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանի տվյալի՝ (տե՛ս «38000 հայեր գաղթած Թրակիայէն», *Երկունք, պարբերաթերթ* (Աթէնք), թիւ 12, 17 (30) նոյեմբեր, 1922, 2, հմմտ. «Ինչ կ'ընես Թրակիոյ առաջնորդը», *Հայաստանի կոչնակ*, թիւ 48, 2 դեկտեմբեր 1922, 1564):

39 Տե՛ս «Գաղթականները Պոլկարիոյ մէջ», *Հայաստանի կոչնակ*, թիւ 50, 17 դեկտեմբեր 1922, 1626: Ռոդոստոյի բնիկ հայ բնակչության՝ Բուլղարիա գաղթի նկարագրությունը ականատեսից, տե՛ս Սարգիս Գ. Փաշաճեան, *Յուշամատենան Ռոդոսթոյի հայերուն 1606-1922* (2րդ եւ լրացելալ հրատարակություն, Պէյրոս, տպ. Տօսիկեան, 1971), 75-79: Նշված աշխատանքում բերվում է նաև 1922 թ. տարբեր երկրներում հաստատված՝ Ռոդոսթոյի հայերի վիճակագրությունը, որի համաձայն՝ Բուլղարիայում է ապաստանել 601 տուն, 2 729 անձ, Հունաստանում՝ 97 տուն, 360 անձ, Ռումինիայում՝ 201 տուն, 707 անձ, Եգիպտոսում՝ 46 տուն, 220 անձ, Լիբանանում՝ 7 տուն, 28 անձ: Բացի դրանցից՝ Ռոդոսթոյում որոշել էր մնալ 263 անձ (նույն տեղում, 249):

40 «170 000 հոգի Պոլսէն մեկնած», *Երկունք, պարբերաթերթ* (Աթէնք), թիւ 23, 25 յունուար, 1923, 1: 1923 թ. հոկտեմբերին Ազգերի Լիգայի համար պատրաստված «Հունաստանում փախստականների վիճակը» վերտառությամբ տեղեկագրի տվյալներով՝ 1923 թ. մայիսի 26-ի դրությամբ Թուրքիայի նավահանգիստներից (Կ.Պոլիս, սևծովյան նավահանգիստներ, Մերսին, Սիրիա) Հունաստան տարհանման է սպասել մոտ 64 000 փախստական: Նշվում է նաև, որ Փոքր Ասիայի ներքին շրջաններում դեռևս մնում են մոտ 150 000 հույն և հայ, որոնք պատրաստ են թողնելու երկիրը (տե՛ս

Վերոնշյալ ակիբի միջոցով Հունաստան գաղթած հայերի մեծ մասը հանգրվանում է Սալոնիկ քաղաքում, ինչպես նաև Արևմտյան Թրակիայում և Մակեդոնիայում: 1922 թ. նոյեմբերի տվյալներով՝ Արևմտյան Թրակիայում և Մակեդոնիայում ապաստանած փախստական հայերի թիվը հասել է 30 000-ի, Սալոնիկում՝ 5 000-ի, ընդհանուր՝ 35 000-ի⁴¹:

գ. Կիլիկիահայ փախստականները

Կիլիկիահայերը Հունաստան են սկսել գաղթել դեռևս 1921 թ. երկրորդ կեսից՝ Կիլիկիայից ֆրանսիական զորքերի դուրսբերմանը զուգընթաց: Արդեն իսկ հիշատակված Հայ ազգային պատվիրակության «Յունաստանի հայ գաղթականները» տեղեկագրի տվյալների համաձայն՝ 1922 թ. սեպտեմբերին բուն Հունաստանի տարածքում հանգրվանել է մոտ 5 100 կիլիկիահայ փախստական, որից 4 850-ը՝ «Հին Հունաստանի» տարածքում, 250-ը՝ Մակեդոնիայում: Բացի դրանից՝ մոտ 4 000 կիլիկիահայ գաղթական գտնվել է Արևելյան Թրակիայում, որն այդ ժամանակ հունական վերահսկողության տակ է եղել⁴²: 1922 թ. հոկտեմբերին Արևելյան Թրակիայի տարհանման ժամանակ այս 4 000 կիլիկիահայերը հիմնականում տեղափոխվում են Արևմտյան Թրակիա և Մակեդոնիա:

Բազմաթիվ կիլիկիահայեր գտնվել են նաև Զմյուռնիայում՝ 1922 թ. սեպտեմբերին դիմավորելով աղետը, որպես անօթևան փախստականներ՝ առավել խոցելի խումբ, թիրախավորվել ջարդի ժամանակ⁴³ և վերապրած զմյուռնահայերի հետ տարհանվել Հունաստան⁴⁴:

United Nations Library & Archives Geneva, R1757/48/40543/23735, թերթ 7, անցանց՝ <https://archives.ungeneva.org/asia-minor-refugees-collaboration-of-the-european-student-relief-worlds-student-christian-federation-geneva>, դիտվել է՝ 20.12.2022):

Փոքր Ասիայի տարբեր շրջաններից հայ և հույն ազգաբնակչության խմբերի՝ Հունաստան գաղթի մասին վկայություններն առատ են 1923 թ. հայ մամուլում: Այսպես, Աթենքում հրատարակվող «Երկունք» պարբերաթերթի 1923 թ. հունվարի 7-ի համարում նշվում է, որ Պոստոսի շրջանից մոտ 7 000 հույն և հայ գաղթականներ, «կազմ ու պատրաստ», Հունաստան մեկնելու համար թույլտվության են սպասում (Երկունք, պարբերաթերթ (Աթենք), թիվ 19, 7 յունուար 1923, 1): Նույն թերթում նաև հաղորդվում է, որ Կիլիկիայի Մերսինի նավահանգստում է կենտրոնացել մոտ 10 000 հայ գաղթական, մեծ մասը՝ կանայք և երեխաներ, որոնք սպասում են կարգադրության «նև է կողմ գաղթելու համար» (սույն տեղում):

41 Տե՛ս Déléation de la République arménienne, *L'Arménie et la question arménienne, avant, pendant et depuis la guerre* (Paris: H. Turabian, editeur, 1922), 70: Նույն փաստաթղթի համաձայն՝ 1922 թ. նոյեմբերի 1-ի դրությամբ Հունաստանում հայերի թիվը 79 000 է (սույն տեղում, 72): Նշված ակիբի միջոցով Բուլղարիայում հանգրվանած հայ գաղթականների թիվը հաշվվում է 20 000 (ըստ 1922 թ. հոկտեմբերի 30-ին բուլղարական կառավարության ներքին գործերի նախարար Ռայկո Դասկալովի տեղեկության (Ղասաբյան, «Հայ գաղթականների ընդունումը և բնակեցումը Բուլղարիայում», 25), տե՛ս նաև. «Հայ գաղթականները Պոլկարիոյ մէջ», *Հայաստանի կոչնակ*, թիվ 51, 24 դեկտեմբեր 1922, 1656) – 25000 (James L. Barton, *Story of Near East relief (1915-1930)* (New York: Macmillan, 1930), 157):

42 Տե՛ս «Դիանաստուն Ազգային Պատուիրակութեան: Յունաստանի հայ գաղթականները»:

43 Ըստ որոշ վկայությունների՝ զոհված կիլիկիահայերի թիվը կարող է հասնել 2 000-ի (տե՛ս « Les réfugiés de Smyrne à Marseille. Émouvants récits de l'incendie », *Le Petit Parisien*, 21 septembre 1922, 3 (զմյուռնիահայ ականատես-վերապրած Օսիկ Զաքյանի տվյալը), տե՛ս նաև Թաթոյան, «Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցի շուրջ», 66):

44 Զմյուռնիայի աղետը վերապրած և տարհանված կիլիկիահայերի թվի վերաբերյալ մեզ հասու

Տարբեր վիճակագրությունների համադրությունը վկայում է, որ Հունաստանում հանգրվանած կիլիկիահայերի թիվը 1923 թ. սկզբին կայունացել է մոտ 10 000-ի սահմաններում⁴⁵: Վերոնշյալ թվից մոտ կեսը հանգրվանել է «Հին Հունաստանի» տարածքում (հիմնականում՝ Աթենք և շրջակա բնակավայրեր), իսկ մյուս կեսը՝ Սալոնիկում, Մակեդոնիայում և Արևմտյան Թրակիայում⁴⁶: Կիլիկիահայերը հատկապես հակված են եղել Հունաստանից շտապօգնություն արտագաղթի՝ հիմնականում տեղափոխվելով Ֆրանսիա:

դ. Որբերը

Օսմանյան Թուրքիայի տարածքից հայ և հույն որբերի տարհանման գործընթացը ստանձնում է Մերձավոր Արևելքի նպաստամատուց կազմակերպությունը (Near East Relief)⁴⁷: Տարհանման գործողությունները սկսվում են 1922 թ. ամռանը (օգոստոսին Մերձավոր Արևելքի նպաստամատուցի՝ Խարբերդի որբանոցի 4 000 սաները տեղափոխվում են Սիրիա, հետագայում նրանց կեսը՝ Կ.Պոլիս⁴⁸), սակայն տեղափոխման հիմնական գործընթացը տեղի է ունենում 1922 թ. նոյեմբերից⁴⁹ մինչև

աղբյուրները տվյալներ չեն պարունակում, սակայն տարբեր անուղղակի վկայությունները փաստում են, որ այն եղել է 2-3 հազարի սահմաններում:

45 10 000 թվի համար հիմք է ծառայել ժամանակագրական առումով իրար մոտ՝ 1922 թ. դեկտեմբերի վերջից առ 1923 թ. հունվարի կեսն Աթենքում հայկական եկեղեցական թեմական իշխանությունների կազմած երկու վիճակագրությունների համադրությունը, որից մեկի համաձայն՝ առանց կիլիկիահայերի՝ Հունաստանում ապաստան գտած «իզմիրցի եւ անատոլոցի» գաղթականների թիվը մոտ 40 000 է («Գաղթականները Յունաստանի մէջ», 3), իսկ մյուսի տվյալներով՝ «Իզմիրցի, Կիլիկեցի և Անատոլոցի» գաղթականների թիվը 50 000 է («Հայ գաղթականներու վիճակացոյց», *Երկունք, պարբերաթերթ* (Աթենք), թիւ 21, 18 յունուար, 1923, 2):

46 1923 թ. սկզբների դրությամբ միայն Կիլիկիայի Ադանա քաղաքից Աթենքում հանգրվանածների թիվը մոտ 250-300 ընտանիք է եղել (1 200-1 500 շունչ՝ մեկ ընտանիքին՝ հինգ շունչ հաշվարկով) (տե՛ս Բիզանդ Եղիայեան, *Ատանայի Հայոց պատմութիւն: Պատմագրական, եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, փոքրագրական, ժամանակագրական* (Արթիլիսա, տպարան Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ, 1970), 913): Կիլիկիահայերից հատկապես մարաշցիների ու զեյթունցիների՝ Հունաստանում բնակության մասին մանրամասն տե՛ս Գրիգոր Գալուստյանի «Մարաշ» աշխատասիրության «Մարաշցիները Յունաստանի մէջ» ենթագլուխը (Գր. Հ. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զեյթուն (Նիւ Եորք, Կոչնակ տպարան, 1934), 855-860):

47 Հայ որբերի տարհանմանը մասնակցել է նաև Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանին կից գործող Ազգային խնամատարություն կառույցը (այդ կառույցի մասին մանրամասն տե՛ս Թաթոյան, «Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թվականներին կազմած վիճակագրությունները», 324-326):

48 Տե՛ս Near East Relief (Organization), *Near East Relief: a review for 1922 (annual report to Congress)*, by Charles V. Vickrey (New York: National Headquarters, 1923), 19:

49 1922 թ. նոյեմբերի 20-ին Կ.Պոլսից Հունաստան ճամփան է բռնում հայ որբերի առաջին քարավանը (Կոկինոս, *Հունահայ գաղութի պատմությունից*, 42): Հունաստան մեկնող հայ որբերի վերաբերյալ վկայությունները հատկապես առատ են 1922 թ. նոյեմբերի երկրորդ կեսի - 1922 թ. դեկտեմբերի հայկական մամուլում (տե՛ս, օրինակ, «Որբերու փոխադրութիւնը», *Շակատամարտ*, թիւ 3054, 30 նոյեմբեր 1922, 3; «Ռ-ըլիֆի որբերը Յունաստան կը փոխադրուին», *Շակատամարտ*, թիւ 3059, 6 դեկտեմբեր 1922, 2; «Գաղթականներու օգնութիւն», *Բողոքարարի ձայնը - Ժամանակ* (Կ.Պոլիս), թիւ 1255, 3): 1922 թ. դեկտեմբերի կեսի դրությամբ Կ.Պոլսում պահվող հայ որբերի՝

1923 թ. հունվար (նշենք, որ ինչպես հայ և հույն գաղթականների, այնպես էլ որբերի առանձին խմբերի տարհանումը շարունակվում է մինչև 1923 թ. աշուն՝ Կ.Պոլսից Անտանտի զորքերի վերջնական դուրսբերումը⁵⁰): 1922 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Մերձավոր Արևելքի նպաստամատույցի միջոցով Հունաստանում ապաստան ստացած որբերի թիվը 14 420 է եղել⁵¹: Ընդամենը Օսմանյան կայսրությունից տարհանվել և Հունաստանի տարածքում է հանգրվանել Մերձավոր Արևելքի նպաստամատույցի խնամակալության տակ գտնվող 16 788 որբ⁵², այդ թվում՝ 6 295-ը՝ Կ.Պոլսից, 4 200-ը՝ Սեբաստիայից, 1 471-ը՝ Խարբերդից, 1 460-ը՝ Սամսունից, 1 311 Մարզվանից, 900-ը՝ Կեսարիայից, 800-ը՝ Մալաթիայից ևն⁵³:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Հունաստան են տեղափոխվել նաև մարդասիրական այլ կազմակերպությունների, մասնավորապես բրիտանական Լորդ քաղաքապետի հիմնադրամի (Lord Mayor's Fund) խնամակալության տակ գտնվող որբերը⁵⁴, ապա Հունաստան տարհանված որբերի ընդհանուր թիվն ավելի մեծ է եղել՝ հասնելով 18 000-ի⁵⁵, որից մոտ 8 000-9 000-ը՝ հայ⁵⁶:

Հունաստան փոխադրման աշխատանքների հիմնական մասն արդեն պատրաստ է եղել (տե՛ս «Որբուհիներն ալ պիտի փոխադրուին», *Ճակատամարտ*, թիվ 3065, 13 դեկտեմբեր 1922, 2; «Որբերու դաստիարակութեան խնդիրը», *Ճակատամարտ*, թիվ 3070, 19 դեկտեմբեր 1922, 2), իսկ դեկտեմբերի վերջին՝ արդեն ավարտված («Ռումինիա որբեր դրկելու խնդիրը», *Ճակատամարտ*, թիվ 3078, 28 դեկտեմբեր 1922, 3):

50 St' u Near East Relief (Organization), *Near East Relief: Report of the Near East Relief for the Year Ending December 1923* (Washington: Government Printing Office, 1924), 8:

51 St' u Near East Relief (Organization), *Near East Relief: a review for 1922 (annual report to Congress)*, by Charles V. Vickrey (New York: National Headquarters, 1923), 22:

52 St' u Near East Relief (Organization), *Near East Relief: Report of the Near East Relief for the Year Ending December 1923* (Washington: Government Printing Office, 1924), 8: Ջեյմս Բարթոնը հաղորդում է կլորացված թիվ՝ 17 000 (Barton, *Story of Near East Relief*, 162):

53 St' u Davide Rodogno, *Night on Earth: A History of International Humanitarianism in the Near East, 1918-1930* (Cambridge: Cambridge University Press, 2021), 97:

54 1922 թ. նոյեմբերի կեսերին Կ.Պոլսից Հունաստան են տեղափոխվել նաև բրիտանական Լորդ քաղաքապետի հիմնադրամի հայկական որբանոցի սաները («Որբերը կը փոխադրուին», *Ճակատամարտ*, թիվ 3048, 23 նոյեմբեր 1922, 2):

55 St' u Rodogno, *Night on Earth*, 97:

56 Այս թիվն արտացոլված է Մերձավոր Արևելքի նպաստամատույցի՝ ԱՄՆ կոնգրեսին ներկայացված 1922 թ. զեկույցում և, ըստ էության, ներկայացնում է Կ.Պոլսից և Օսմանյան Թուրքիայի այլ որբանոցներից տարհանված, Սիրա կղզում և այլ ժամանակավոր կայաններում առժամանակ կենտրոնացված, վերաբաշխմանը սպասող հայ որբերի սկզբնական թիվը (Near East Relief (Organization), *Near East Relief: a Review for 1922*, 23): Հունաստան տարհանված հայ որբերի թիվը 7-8 հազարի սահմաններում է հաշվում քաջատեղյակ Կարո Գևորգյանը (Գեորգեան, «Տասնետթըր տարի յունահայ գաղութին հետ», 224):

Ամերիկյան նպաստամատույցի քարտուղար Չարլզ Վիքրիի՝ ԱՄՆ պետքարտուղարի օգնականին հասցեագրված 1923 թ. մարտի 8-ով թվագրվող նամակի համաձայն՝ Հունաստանում կազմակերպության խնամքի տակ գտնվող որբերի ընդհանուր թիվը 25 000 է, որից հայազգի որբերը՝ 10 000 (United Nations Library & Archives Geneva, R1757/48/40543/23735 - Asia Minor Refugees - Collaboration of the European Student Relief (World's Student Christian Federation, Geneva), անցանց՝ <https://archives.unige.ch/asia-minor-refugees-collaboration-of-the-european-student-relief-worlds-student-christian-federation-geneva>, դիտվել է՝ 14.01.2023):

Ըստ Մերձավոր Արևելքի նպաստամատույցի տեղեկագրի տվյալների՝ այդ կառույցի Հունաստանի որբանոցներում 1923 թ. ընթացքում խնամվել է մոտ 6 000 հայազգի որբ⁵⁷, Լորդ քաղաքապետի հիմնադրամի բացած որբանոցում հայ որբերի թիվը մոտ 1 000 է եղել (1923 թ. գարնան տվյալները. հետագայում, ինչպես կտեսնենք, խնամվող երեխաների թիվը նվազել է)⁵⁸:

Հայ որբերի խնամքի հարցերով ակտիվորեն զբաղվել է Հայ ազգային պատվիրակությունը, որի պատրաստած վիճակագրություններից առավել մանրամասն և ստույգի՝ 1923 թ. հուլիսի 1-ով թվագրվող «Հայ որբեր: Տեղեկագիր հայ որբերու կացութեան, որբանոցներու հոգատար մարմիններու մասին և վիճակագրական ցուցակներ» վերատառությամբ ձեռագիր տեղեկագրի տվյալների համաձայն՝ Հունաստանում հանգրվանած հայ որբերի թիվը 8 414 է եղել: Ըստ աշխարհագրական տեղակայման նրանք բաշխվել են հետևյալ կերպ. մայրցամաքային Հունաստան և կղզիներ՝ 5 000, Կորֆու՝ 880, Մակեդոնիայի շրջան (Սալոնիկը ներառյալ)՝ 1 038, Արևմտյան Թրակիայի շրջան՝ 1 496⁵⁹: Ազգային հոգատարության խնամքի տակ է գտնվել 228 (այդ թվում՝ 203-ը՝ Մերձավոր Արևելքի նպաստամատույցի աջակցությամբ), Մերձավոր Արևելքի նպաստամատույցի ուղղակի հոգատարության ներքո՝ 5 000, Լորդ քաղաքապետի հիմնադրամի հոգատարության ներքո՝ 750, ամերիկացի միսիոներների հոգատարության ներքո՝ 17, հելլենական կառավարության հոգատարության ներքո՝ 11, օտար անհատական հոգատարության ներքո՝ 130: Որբանոցային հոգատարության տակ չի գտնվել 2 278 որբ⁶⁰:

Հայ որբերի՝ Հունաստան տարիանումից գրեթե անմիջապես հետո սկսվում

Հայկական մամուլի որոշ հրապարակումներում Օսմանյան կայսրության տարածքից տարհանված հայ և հույն որբերի ընդհանուր թիվը սխալմամբ վերագրվել է միայն հայազգի որբերին (տե՛ս, օրինակ, Բենսո, «Որբերը Յունաստանի մէջ», *Երկունք, օրաթերթ* (Աթէնք), թիւ 27, 8 փետրուար 1923, 1; Ա. Երէց, «Ամերիկեան Բըլիֆը եւ Հայ որբերը», *Երկունք, օրաթերթ* (Աթէնք), թիւ 47, 25 ապրիլ 1923, 1): Նման հրապարակումներից ելնելով՝ հարցին անդրադարձած որոշ ուսումնասիրողներ հաշվել են Հունաստանում հայ որբերի թիվը 17 520 (Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, 106), 20 (Կոկինոս, *Հունահայ գաղութի պատմությունից*, 43) և նույնիսկ 25 000 (Լիպարիտ Ազատեան, *Հայ որբերը Մեծ եղեռնի*, հատոր առաջին (Լոս Անճելըս, 1995), 105):

57 *St' u Near East Relief (Organization), Near East Relief: Report of the Near East Relief for the Year Ending December 1923*, 19 (եթե հաշվի առնենք շարժը, տարվա վերջին որբանոցներում խնամվող որբերի թիվն ավելի ցածր է եղել): Համաձայն Մերձավոր Արևելքի նպաստամատույցի տեղեկագրի տվյալների՝ 1923 թ. դեկտեմբերի դրությամբ Թուրքիայից Հունաստան տեղափոխված 16 500 երեխայից միայն 10 500-ն է պահվել որբանոցներում, իսկ 6 000-ը տեղավորվել են մասնավոր տներում ու ազարակներում՝ ապահովվելով աշխատանքով ևն: Մերձավոր Արևելքի նպաստամատույցի հաստատություններում մնացածները հիմնականում մինչև 12 տարեկան են եղել (“Near East News Letter,” *The New Near East* 8, no. 12 (December, 1923), 9): Պահպանելով համաչափությունը՝ կարելի է ենթադրել, որ որբանոցներից դուրս տեղավորված հայ որբերի թիվը մոտ 3 000 է:

58 *Դիանաստուն Ազգային Պատուիրակութեան: Յուցակ Յունաստան, Պուլկարիա, Ռումանիա, Զուիցերիա, Բուալիա, Սուրիա, Երուսաղէմ, Երեւան գտնուող հայ որբերու: Պատրաստուած 1923 ապրիլ 26-ին* (Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվ):

59 *Դիանաստուն Ազգ. Պատուիրակութեան: Հայ որբեր: Տեղեկագիր հայ որբերու կացութեան, որբանոցներու հոգատար մարմիններու մասին եւ վիճակագրական ցուցակներ: Պատրաստուած Ազգ. Պատուիրակութեան կողմէ 1923 յուլիս 1-ին* (Փարիզի Նուբարյան գրադարանի արխիվ):

60 Նույն տեղում:

է նրանցից չափահասության հասածների՝ որբանոցներից դուրսգրման, արտասահմանյան տարբեր հաստատություններ խնամքի տեղափոխման, ինչպես նաև վճարի դիմաց Հունաստանի ներսում տարբեր ընտանիքներում տեղավորման գործընթացը: 1923 թ. օգոստոսի դրությամբ Հունաստանում Մերձավոր Արևելքի նպաստամատույցի որբանոցներից նշված եղանակներով դուրս գրված չափահաս հայ որբերի թիվը հաշվվում է 2 100, որից 400-ը դուրս էին գրվել 1923 թ. հունվարի 8-ին, 300-ը՝ մարտի 8-ին, 350-ը՝ մայիսի 26-ին, և 200-ը՝ օգոստոսի 6-ին⁶¹: Դուրս գրված որբերից 1 217-ը տեղափոխվել են Արևմտյան Թրակիայի Կավալայի շրջան, մյուսները՝ Սալոնիկ և Մակեդոնիա⁶²: Դուրս գրվածներից 130 երիտասարդ արտագաղթել է Ֆրանսիա⁶³: Հետագա տարիներին գործընթացը շարունակվել է. երեխաներ են տեղափոխվել Խորհրդային Հայաստան, Եգիպտոս⁶⁴, Ֆրանսիա⁶⁵, Կանադա⁶⁶ և այլ երկրներ⁶⁷:

II. Հունաստանում հայ փախստականների թիվը, բաշխումը և ներքին ու արտաքին տեղաշարժերը 1920-ական թթ.

Վերը ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 1922 թ. վերջերին և 1923 թ. սկզբներին Օսմանյան Թուրքիայի տարածքից Հունաստան տեղափոխված հայ գաղթականների առավել իրատեսական թիվը կարելի է տեղակայել 85 հազարի սահմաններում, որից մոտ 40 000-ը՝ 1922 թ. սեպտեմբեր–հոկտեմբեր ամիսներին Զմյուռնիայից տարհանվածներ են, 10 000-ը՝ տարբեր հոսքերով (սակնա՝ նախքան Զմյուռնիայի աղետը) Հունաստան տեղափոխված կիլիկիահայեր, 25–30 հազարը՝ 1922 թ. հոկտեմբեր–

61 St'u Delegation Nationale Arménienne. Dénombrement des orphelins Arméniens (état de Juillet - Aout 1923) (Archive Andonian, Bibliothèque Nubar/Paris):

62 Նույն տեղում:

63 Նույն տեղում

64 Միայն 1925 թ. Եգիպտոս են տեղափոխվել Մերձավոր Արևելքի նպաստամատույցի՝ Հունաստանի որբանոցներից մոտ 670 աղջիկ և 120 տղա (Near East Relief. Report to Congress for 1925 (New York: National Headquarters, 1926), 26): Ըստ Ջ. Բարթոնի գրքում բերվող տվյալի՝ Հունաստանից այդ երկիր է տեղափոխվել մոտ 2 500 երեխա (Barton, *Story of Near East Relief*, 291):

65 Barton, *Story of Near East relief*, 171. Այդ երկիր է տեղափոխվել Մերձավոր Արևելքի նպաստամատույցի խնամակալության ներքո գտնվող մոտ 1 500 երեխա (նույն տեղում, 276):

66 Մանրամասն տե՛ս Daniel Ohanian, “Sympathy and Exclusion: The Migration of Child and Women Survivors of the Armenian Genocide from the Eastern Mediterranean to Canada, 1923–1930.” *Genocide Studies International* 11, no. 2 (2017): 197–215:

67 Հայ հեղինակներից Ասատուր Մակարյանը բավականին մանրամասն տվյալներ է տալիս Թրակիայի և Մակեդոնիայի տարածաշրջանի որբանոցներում խնամվող 2 550 հայ որբերի և 750 որբուհիների շարժի վերաբերյալ, որոնց միջոցով կարելի է պատկերացում կազմել ընդհանուր պատկերի մասին: Այսպես, ըստ հեղինակի, 1929 թ. դրությամբ որբերից 400-ը տեղափոխվել են Հունաստանի այլ որբանոցներ, 250-ը՝ Խորհրդային Հայաստան, 200-ը՝ Ֆրանսիա, 120-ը՝ Եգիպտոս, 60-ը՝ Սիրիա, 650 որբեր Հունաստանում և արտասահմանում (ԱՄՆ, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա, Եգիպտոս, Սիրիա ևն) գտել և միացել են իրենց ազգականներին, 20-ը մահացել են տարբեր հիվանդություններից: 750 որբուհիներից 300-ն ուղարկվել են Եգիպտոս և Բուլղարիա, 250-ը միացել են Հունաստանում և արտասահմանում գտնվող ազգականներին, 50 որբուհի տեղափոխվել է Հայաստան, իսկ տեղում մնացած 150 որբուհիներից ամուսնացել են 125-ը, ազգականներին են միացել 7-ը (Մակարեան, *Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու*, 317):

ղեկուները ամիսներին Արևելյան Թրակիայի տարածքից տարահանվածներ (բնիկներ և Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան շրջաններից փախստականներ), ինչպես նաև Կ.Պոլսից և Թուրքիայի նավահանգիստներից գաղթածներ, և 8 000 - 9 000-ը՝ 1922 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Մերձավոր Արևելքի նպաստամատույց կազմակերպության և այլ մարդասիրական կազմակերպությունների՝ Կ.Պոլսից և Օսմանյան Թուրքիայի որբանոցներից տարահանված երեխաներ:

Վերոնշյալ հոսքերից Չմյոտնիայից տարահանվածները հիմնականում ապաստանել էին «Հին Հունաստանի» տարածքում, Արևելյան Թրակիայից բնիկ հայերը և Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան շրջաններից հայ փախստականները հիմնականում կենտրոնացել էին Արևմտյան Թրակիայի և Մակեդոնիայի տարածքում, իսկ որբ և խնամքի կարոտ երեխաները հավասարապես բաշխվել էին Հունաստանի տարբեր շրջաններում ստեղծված որբանոցներում:

Ընդհանուր առմամբ, ինչպես նախքան 1922 թ., այնպես էլ 1922-1923 թթ. դեպի Հունաստան հայերի գաղթի բոլոր հոսքերի հետևանքով առ 1923 թ. կեսեր Հունաստան մուտք գործած հայերի թիվն ընդունված է հաշվել է 100 000-ի սահմաններում⁶⁸, սակայն

68 Ըստ 1923 թ. հոկտեմբերին Ազգերի լիգայի համար պատրաստված «Հունաստանում փախստականների վիճակը» վերտառությամբ տեղեկագրի տվյալների (տե՛ս United Nations Library & Archives Geneva, R1757/48/40543/23735 - Asia Minor Refugees - Collaboration of the European Student Relief (World's Student Christian Federation, Geneva), անցանց՝ <https://archives.unige.ch/asia-minor-refugees-collaboration-of-the-european-student-relief-worlds-student-christian-federation-geneva>, դիտվել է՝ 20.12.2022): Այս տվյալը հիմնվում է Մերձավոր Արևելքի նպատամատույցի գնահատականի վրա, որը ներկայացված է կազմակերպության քարտուղար Չարլզ Վիլքոքի՝ ԱՄՆ պետքարտուղարի օգնականին հասցեագրված նամակում (1923 թ. մարտի 8): Ըստ Ազգերի լիգայի արխիվում պահվող մեկ այլ տեղեկագրի տվյալների՝ համաձայն Ազգերի լիգայում Հունաստանի ներկայացուցիչ Արգիլոպոլոսի՝ Հունաստանում ապաստանած արևմտահայ փախստականների թիվը 1924 թ. սկզբների դրությամբ նույնիսկ հասել է մոտ 120 000-ի (Տե՛ս United Nations Library & Archives Geneva, R1756/48/36414/23548 - Situation of refugees from the Middle East - Secretariat - Submits to the Council the report by Dr. Fridtjof Nansen on this subject, անցանց՝ <https://archives.unige.ch/situation-des-refugies-du-proche-orient-secretariat-soumet-le-rapport-du-dr-fridtjof-nansen-a-ce-sujet>: Հունգարացի ուսումնասիրող Պիտեր Պալ Կրանիցը բացատրում է վերջին թիվը հայ փախստականների խնդրին առավել մեծ ուշադրություն հրավիրելու հույն իշխանությունների ձգտումով (Péter Pál Kránitz, "Some Remarks on the History of Armenian Refugees in Southeast and East-Central Europe with a Special Regard to Hungary," *Ցեղասպանագիտական հանդես* 3, թիվ 1-2 (2015): 205-206): Հետևելով վերոնշյալ աղբյուրներին՝ 1923-1924 թթ. Հունաստանում հայ գաղթականների՝ 100-120 հազ. թիվը նշում են նաև բազմաթիվ այլ աղբյուրներ, որոնցից մի քանիսը տե՛ս Կոկինոս, Հունահայ գաղութի պատմությունից, էջ 26-27: Որոշ աղբյուրներում հաղորդվում է 1920-ական թթ. առաջին կեսերին Հունաստանի տարածքում ապաստանած 150, անգամ՝ 200 հազ. հայ փախստականների մասին, ինչն ակնհայտ չափազանցություն է (տե՛ս Աբրահամյան, *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության* Բ, 105, հմմտ. Կոկինոս, *Հունահայ գաղութի պատմությունից*, 28):

Լոզանի խորհրդածոդովի համար Հայկական ազգային պատվիրակության վիճակագրությամբ՝ 1922 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հունաստան է գաղթել մոտ 60 000 հայ, որոնք բաշխվել են հետևյալ կերպ՝ Արևմտյան Թրակիա և Մակեդոնիա՝ 30 000, Սալոնիկ՝ 5 000, Քիոս և Միտիլինի կղզիներ՝ 7 000, Կրետե՝ 2 000, Սամոս կղզի՝ 1 000, Աթենք և Պիրեոն՝ 15 000. 1922 թ. նոյեմբերի 1-ի տվյալներով Հունաստանում հանգրվանած հայերի թիվը 79 000 է (բոլոր նախորդ հոսքերը ներառյալ): Եթե այս թվին ավելացնենք 1922 թ. նոյեմբեր-դեկտեմբերին տարահանված որբերի թիվը, ինչպես նաև 1922 թ. նոյեմբերից հետո Հունաստան գաղթած հայերի թիվը, ապա Հունաստան մուտք գործած հայերի թիվն այս տվյալներով ևս կարելի է հաշվել 90-100 հազարի սահմաններում (Délégation de la République arménienne, *L'Arménie et la question arménienne, avant, pendant et depuis la guerre* (Paris:

պետք է նկատի ունենալ, որ նշված թվով հայեր Հունաստանում միաժամանակ երբևէ չեն գտնվել: Հունաստանում հանգրվանած հայ փախստականների առավելագույն թիվը գրանցվել է 1923 թ. սկզբներին՝ հասնելով 80-85 հազարի, իսկ արդեն 1923 թ. կեսերին Հունաստանում գտնվող հայ գաղթականների թիվը հաշվվում է մոտ 60-65 հազարի սահմաններում⁶⁹, որից 30 000-ը՝ «Հին Հունաստանում» և կղզիներում, 20 000-ը՝ Մակեդոնիայում, 15 000-ը՝ Արևմտյան Թրակիայում⁷⁰:

Հայ փախստականների թվի նվազումն առաջին հերթին պայմանավորված է եղել զանգվածային արտագաղթով, որը Հունաստանի իշխանությունները բոլոր միջոցներով խրախուսել են⁷¹: Արդեն 1923 թ. առաջին մի քանի ամիսների ընթացքում մոտ 15-20 հազ. մարդ, որի մեծ մասը՝ կիլիկիահայեր, տեղափոխվում է այլ երկրներ, ճնշող մեծամասնությունը՝ Ֆրանսիա⁷²: Հայ փախստականների թիվը նվազել է նաև թերսնուցումից և դրանով պայմանավորված տարբեր հիվանդություններից առաջացած մահերի հետևանքով:

H. Turabian, editeur, 1922), 70-72):

69 Որբանոցներում խնամվող որբերը ներառյալ:

70 Տե՛ս օրինակ Հայ ազգային պատվիրակության՝ Ազգերի լիգային ներկայացված տվյալները՝ United Nations Library & Archives Geneva, C1427/323/Ra.412/1/26/1/Jacket1 անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-evacuation-from-greece>, դիտվել է՝ 14.01.2023:

71 Ինչպես նշում է բրիտանական Լորդ քաղաքապետի (Հայկական) հիմնադրամի պատվավոր քարտուղար Հարոլդ Բաքստոնը, «Հունական կառավարության քաղաքականությունը հայերի նկատմամբ կարելի է ամփոփել մեկ բառով՝ «արտագաղթ»՝ ձերբագատվել նրանցից, որքան հնարավոր է մեծ թվից, որքան հնարավոր է նվազագույն ուշացումով: Հայերին երկու բան է մեղաազրվում. մեկն այն է, եթե նրանց թույլ տան մնալ, նրանք կարող են անհանգստություն պատճառող փոքրամասնություն դառնալ: Մյուսն այն է, որ նրանց համար ավելին է արվել, նրանք ուտում են հույն փախստականների հացը» (United Nations Library & Archives Geneva, C1424/320/Ra.404/1/25/1 - International Labour Office Refugees Service - Armenian Refugees - Relation with the Armenian Lord Mayor's Fund - London, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-relation-with-the-armenian-lord-mayors-fund-london>, դիտվել է՝ 14.01.2023):

Հունաստանի իշխանությունների քաղաքականությունը հայ փախստականների նկատմամբ ուղղված է եղել նրանց՝ այլ երկրներ տեղափոխվել խրախուսելուն: Որպես սեփական այս դիրքորոշման հիմնավորում նշվում են հետևյալ երեք նկատառումները՝ ազատ հողի բացակայությունը, համապատասխան կացարանների բացակայությունը և, ամենազլխավորը, ազգային փոքրամասնություն ունենալու խնդրից խուսափելու ցանկությունը: Նման վերաբերմունքի պայմաններում հայ փախստականները կորցնում էին Հունաստանում հաստատվելու ցանկությունը՝ ձգտելով գաղթել հատկապես Խորհրդային Հայաստան (United Nations Library & Archives Geneva, C1424/320/Ra.404/1/25/1 - International Labour Office Refugees Service - Armenian Refugees - Relation with the Armenian Lord Mayor's Fund - London, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-relation-with-the-armenian-lord-mayors-fund-london>, դիտվել է 17.01.2023)

72 Թրակիայի և Մակեդոնիայի թեմի առաջնորդ Երվանդ Եպիսկոպոս Փերտահճյանի տվյալները, որոնք նա փոխանցել է Ազգերի լիգայի Փախստականների գերագույն հանձնակատարության՝ Սալոնիկի գրասենյակի պաշտոնյա բարոն Քահմա Քաուֆմանին 1924 թ. հունվարի 3-ին տեղի ունեցած հանդիպման ժամանակ (United Nations Library & Archives Geneva, C1427/323/Ra.412/1/26/1/Jacket1, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-evacuation-from-greece>, դիտվել է՝ 17.01.2023):

Ցավոք, մեր տրամադրության տակ չկա մեկ մարմնի կազմած 1920-ական թթ. Հունաստանում հայ փախստականների թվաքանակի ներքին և արտաքին շարժման արտացոլող շարունակական տվյալներ ներկայացնող աղբյուր, ուստի ստիպված ենք համադրելու տարբեր աղբյուրների վիճակագրություններ: Այսպես, 1923–1924 թթ. Հունաստանում հայ փախստականների շարժի մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել Հայ առաքելական եկեղեցու՝ Թրակիայի և Մակեդոնիայի թեմի առաջնորդ Երվանդ Եպիսկոպոս Փերտահճյանի՝ Ազգերի լիգայի Փախստականների գերագույն հանձնակատարության Սալոնիկի գրասենյակի պաշտոնյա բարոն Քահմա Քաուֆմանին ներկայացված տվյալներից, որոնց համաձայն՝ 1923 թ. սեպտեմբերից առ 1924 թ. հուլիս Հունաստան է մուտք գործել մոտ 2 800 և Հունաստանից մեկնել է մոտ 5 000 հայ: Նշված ժամանակամիջոցում մահացածների⁷³ թիվը կազմել է մոտ 1 000, նորածինների թիվը՝ մոտ 700⁷⁴: Եթե հաշվի առնենք, որ, ըստ Փերտահճյանի, 1923 թ. սեպտեմբերի դրությամբ Հունաստանում հայ փախստականների թիվը 55 000 է եղել⁷⁵, ապա վերոնշյալ տվյալներից հետևում է, որ տասը ամսվա ընթացքում հայ փախստականների թիվը նվազել է մոտ 2 500-ով (4,5%)⁷⁶:

Հունաստանում հայ փախստականների թվաքանակի նվազման դինամիկան պահպանվել է նաև հետագա տարիներին: 1920-ական թթ. առաջին կեսին հունահայ փախստականների ներքին տեղաշարժի հիմնական միտումներից կարելի է առանձնացնել նրանց հատկապես Թրակիայից և Մակեդոնիայից երկրի ներքին շրջաններ՝ կենտրոնական Հունաստան (Թեսալիա) և Պելոպոնես հարկադիր վերաբնակեցումը: Շարունակվել է հայ փախստականների ինչպես կազմակերպված՝ Ազգերի լիգայի՝ Աթենքում և Սալոնիկում հիմնադրված գրասենյակների միջոցով, այնպես էլ տարերային արտագաղթը Հունաստանից: Արտագաղթի հիմնական ուղղությանը՝ Ֆրանսիային, ավելանում են Ամերիկա մայրցամաքի, հատկապես Հարավային Ամերիկայի երկրները՝ Արգենտինան, Բրազիլիան, Մերձավոր Արևելքի երկրներից Եգիպտոսն ու Սիրիան: Դրանով մեկտեղ՝ 1924–1926 թթ. կազմակերպվում է դեպի Խորհրդային Հայաստան հունահայ փախստականների ներգաղթի առաջին գործողությունը⁷⁷:

73 Որպես պատճառ նշվում է թերսնուցումը և դեղորայքի պակասը:

74 Փերտահճյանի նամակը տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1132/28/N1 - Nansen Office for Refugees - Delegation in Greece, անցանց՝ <https://archives.ungeneva.org/nansen-office-for-refugees-delegation-in-greece-82>, դիտվել է՝ 17.01.2023:

75 Ըստ երևույթին՝ այս թիվը չի ներառում որբանոցներում պահվող հայ երեխաներին:

76 Ըստ երևույթին՝ հայկական եկեղեցական կառույցները Հունաստանում հայ փախստականների շարունակական հաշվառում են կատարել, սակայն այդ կառույցների արխիվները (եթե պահպանվել են) մեզ հասու չեն, և մենք ստիպված ենք բավարարվել նշված պատահական տեղեկություններով:

77 Ազգերի լիգայի՝ Հունաստանից այլ երկրներ հայերի տեղափոխման կազմակերպման գործընթացը բավականին լավ լուսաբանված է պատմագիտական գրականության մեջ (տե՛ս օրինակ L. W. Holborn, “The League of Nations and the Refugee Problem,” *The Annals of the American Academy of Political and Social Science* 203 (1) (1939); 127–128, Davide Rodogno, Shaloma Gauthier, Francesca Piana, “The League of Nations Mission in Western Thrace: Relief and Rehabilitation Operations (1922–1924),” in *Dilemmas of Humanitarian Aid in the Twentieth Century*, ed. Johannes Paulmann (Oxford: Oxford University Press, 2016), 147–169; Edita Gzoyan, “The League of Nations and Armenian Refugees. The Formation of the Armenian Diaspora in Syria,” *Central and Eastern European Review* 8 (2014), 84–102; Կոկիխուս, Հունահայ

Թրակիայից և Մակեդոնիայից փախստական հայերի տեղահանությունը նախաձեռնում է 1924 թ. մարտին իշխանության եկած Ալեքսանդրոս Պապանաստասիոսի կառավարությունը. այդ ծրագիրը շարունակվում է նաև հաջորդ իշխանությունների օրոք՝ 1924–1926 թթ.: Հայ հեղինակները մատնանշում են տեղահանության հետևյալ չորս հիմնական պատճառները՝ Թուրքիային սահմանամերձ շրջաններից հայերին հեռացնելու քեմալական կառավարության պահանջը, հունական իշխանությունների՝ հայերին որպես ոչ վստահելի տարր՝ բուլղարական քարոզչության գործիք ընկալումը, հայ գաղթականների զբաղեցրած հողերի վրա հույն գաղթականների տեղավորումը և հայերի անհանդուրժողական վերաբերմունքն իրենց հունականացնելուն ուղղված քայլերի նկատմամբ⁷⁸:

Ըստ «Յուզագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու» գրքի հեղինակ Ասատուր Մակարյանի տվյալների՝ վերաբնակեցման գործողությունն ընդգրկել է 5 968 հայ փախստականի, այդ թվում՝ Քսանթիից՝ 900, Գյումրիքից՝ 1 060, Դրամայից՝ 800, Կավալայից՝ 500, Դեդե-Աղաճից՝ 200, Գարաճա-Օվայից՝ 2 000, Կոզանայից՝ 500, Դեմոտիկայից՝ 8⁷⁹: Վերոնշյալ տվյալներից բխում է, որ 1924–1926 թթ. տեղահանության է ենթարկվել Թրակիայի և Մակեդոնիայի տարածքում սկզբնապես հանգրվանած հայ փախստականների մոտ մեկ հինգերորդը:

Տեղահանության գործընթացը կասեցնելու՝ հայ համայնքային կառույցների բոլոր ջանքերը շոշափելի արդյունք չեն տալիս, սակայն հաջողվում է տեղահանության ենթակաների ցուցակներից հանել քաղաքային բնակավայրերի այն հայերին, որ կարող էին հոգալ իրենց կարիքները: Ազգերի լիգայի՝ Մալոնիկի գրասենյակը փորձում է կանգնեցնել տեղահանության որոշման իրագործումը՝ Սիրիա և Խորհրդային Հայաստան հայերի տեղափոխումը կազմակերպելու միջոցով⁸⁰: Կազմակերպությունը մասնավորապես այդ նպատակով առաջարկում է առժամանակ տեղավորել տեղահանման ենթակա հայերին ոչ թե Պելոպոնեսում, այլ առափնյա քաղաքներում (Մալոնիկ, Կավալա, Դեդեաղաջ), որտեղից Հայաստան ներգաղթը կազմակերպելը ավելի հեշտ կլիներ, սակայն, մերժում է ստանում, քանի որ հնարավոր չի լինում ապահովել այդ գործընթացը հունական կառավարության սահմանած սեղմ ժամկետներում⁸¹:

գաղութի պատմությունից, 63-68), 1924–1925 թթ. Հունաստանից և այլ երկրներից Խորհրդային Հայաստան հայերի ներգաղթի կազմակերպման գործընթացի մանրամասնությունների համար տե՛ս Մելիքսեթյան, *Հայրենիք-Սփյուռք ստնչությունները և հայրենադարձությունը*, 95-109:

78 Մակարեան, *Յուզագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու*, 528-529: 1924–1925 թթ. Թրակիայից և Մակեդոնիայից հայ գաղթականների տեղահանության մանրամասնությունների համար տե՛ս նաև Կոկինոս, *Հունահայ գաղութի պատմությունից*, 49-63:

79 Մակարեան, *Յուզագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ հայ գաղութներու*, 527-528:

80 Տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1427/323/Ra.412/126/70/1 - International Labour Office Refugees Service - Transfer of Armenian Refugees from Greece to Syria, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-transfer-of-armenian-refugees-from-greece-to-syria>, դիտվել է՝ 18.01.2023:

81 Տե՛ս United Nations Library & Archives Geneva, R1763/48/36901/25899 - Transfer of Armenian Refugees From Thrace to the Caucasus, անցանց՝ <https://archives.ungeneva.org/transfer-of-armenian-refugees-from-thrace-to-the-caucasus>

Հունաստանում հանգրվանած հայ փախստականներից շատերը կառավարության այդպիսի վերաբերմունքի, ինչպես նաև երկրի սոցիալ-տնտեսական առարկայական ծանր պայմանների պատճառով ցանկություն էին հայտնում տեղափոխվել այլ երկրներ: Այսպես, 1925 թ. ամռանը Սալոնիկում և Աթենքում Ազգերի լիգայի գրասենյակների կազմակերպած հայ փախստականների հաշվառման տվյալներով՝ Հունաստանում գործազուրկ կամ մասնակի զբաղվածություն ունեցող 22 689 հայ փախստականներից 13 736-ը պատրաստակամ են եղել տեղափոխվելու Խորհրդային Հայաստան, 1 532-ը՝ այլ երկրներ. միայն 7 421-ն է ցանկացել մնալ Հունաստանում⁸²:

Հայ փախստականները Հունաստանից արտագաղթել են ինչպես կազմակերպված խմբերով՝ Ազգերի լիգայի ու Հունաստանում հայկական եկեղեցական-թեմական կառույցների աջակցությամբ, այնպես էլ տարերային, ինքնակազմակերպված հոսքերով⁸³: Այսպես, համաձայն Ազգերի լիգայի տվյալների, 1924 թ. սեպտեմբերի 1-ից առ 1925 թ. դեկտեմբերի 15-ը Ազգերի լիգայի աջակցությամբ Հունաստանից արտագաղթել է 8 236 հայ (1925 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին՝ 6 670): Հայերի արտագաղթի հիմնական ուղղություններն են եղել Խորհրդային Հայաստանը՝ 4 089 (1 060-ը՝ 1924 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, 3 020-ը՝ 1925 թ. նոյեմբերին), Ֆրանսիան՝ 2 950, Սիրիան՝ 228, Եգիպտոսը՝ 160, Բրազիլիան՝ 123, Արգենտինան՝ 112 ևն⁸⁴:

1926 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Հունաստանից Ազգերի լիգայի աջակցությամբ տարհանվել է 2 119 հայ, որից 1 385-ը՝ Ֆրանսիա, 532-ը՝ Եգիպտոս, 150-ը՝ Սիրիա, 48-ը՝ Հարավային Ամերիկայի երկրներ ևն⁸⁵: 1927 թ. մայիսից առ 1928 թ. դեկտեմբեր, ըստ Աթենքի առաջնորդարանի վկայագրերի, Հունաստանից մեկնել է շուրջ

refugees-from-thrace-to-the-caucasus, դիտվել է՝ 19.01.2023:

82 St'u League of Nations. International Labour Office, Report on the Work for the Refugees 1925, 3 (տե՛ս United Nations Library & Archives Geneva, R1601/40/46395/41465 – The Work for Refugees – International Labour Office – Communicates, for Distribution to the Delegates to the Assembly and to the Members of the League of Nations, the Report drawn up by the International Labour Office concerning the Activity of the Service of Refugees, անցանց՝ <https://archives.ungeneva.org/oeuvre-en-faveur-des-refugies-bureau-international-du-travail-communique-pour-distribution-aux-delegates-a-lassemblee-et-aux-membres-de-la-societe-des-nations-le-rapport-etabli-par-le-bureau-international-du-travail-au-sujet-de-lactivi>, դիտվել է՝ 19.01.2023):

83 Ցավոք, միայն առաջին եղանակով գաղթի հոսքերն են քիչ թե շատ ստույգ հաշվառման ենթարկվել. տարերային արտագաղթի հոսքերի վերաբերյալ գոյություն ունեն միայն գնահատականներ, որոնք թեև հիմնավոր են և մոտ են իրականությանը, սակայն խիստ ընդհանուր են:

84 St'u United Nations Library & Archives Geneva, C1427/323/Ra.412/1/26/1/Jacket3 - International Labour Office Refugees Service - Armenian Refugees - Evacuation from Greece, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-evacuation-from-greece-3>, դիտվել է՝ 17.01.2023: Հունաստանից Բրազիլիա հայ գաղթական 25 ընտանիքների տեղափոխման ուղղությամբ Ազգերի լիգայի՝ Սալոնիկի գրասենյակի աշխատանքների մասին տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1427/323/Ra.412/126/9/1 - International Labour Office Refugees Service - Transfer of Armenian Refugees from Greece to Brazil, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-transfer-of-armenian-refugees-from-greece-to-brazil>, դիտվել է՝ 19.01.2023:

85 United Nations Library & Archives Geneva, C1400/296/R.402/10/0 - International Labour Office Refugees Service - Statistics on the Census, Evacuation and the Establishment of the Russian and Armenian Refugees, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-statistics-on-the-census-evacuation-and-the-establishment-of-the-russian-and-armenian-refugees>, դիտվել է՝ 19.01.2023:

1 470 հայ⁸⁶: 1929 թ. հունվարի 1-ից հոկտեմբերի 31-ը Հունաստանից մեկնել է 1 417 հայ փախստական, որից Ֆրանսիա՝ 846, Արգենտինիա՝ 426, Եգիպտոս՝ 25, Սիրիա՝ 48, Հյուսիսային Ամերիկա՝ 33, Եվրոպա՝ 19, Կիպրոս՝ 11, Խորհրդային Հայաստան՝ 9 հայ⁸⁷:

Միայն 1920-ական թթ. ընթացքում Հունաստանից Խորհրդային Հայաստան է տեղափոխվել մոտ 5 000 հայ⁸⁸: Ազգերի լիգայի սկզբնական առաջարկով («Նանսենի ծրագիր») նախատեսվում էր ներգաղթի գործընթաց ընդգրկել մոտ 10 000 հայ փախստականի⁸⁹, իսկ տեսական վերջնականատակը Հունաստանում գտնվող բոլոր հայ փախստականների ներգաղթի կազմակերպումն էր⁹⁰, սակայն նշված ծրագրերը խափանվում են ֆինանսավորման բացակայության պատճառով, իսկ Հունաստանից փոքր խմբերով հայերի տեղափոխումը⁹¹ Խորհրդային Հայաստան առժամանակ կասեցվում է 1926 թ. հոկտեմբերի 22-ի Լենինականի երկրաշարժի հետևանքով:

Հունաստանից հայերի տարերային, ինքնակազմակերպված խմբերով արտագաղթի ծավալները շատ ավելի մեծ են եղել: 1920-ական թթ. տարերային գաղթի ավանդական ուղղությանը՝ Ֆրանսիային, ավելանում են Ամերիկա մայրցամաքի, հատկապես Հարավային Ամերիկայի երկրները (Արգենտինա, Բրազիլիա), որոնք այդ ժամանակ գտնվում էին տնտեսական բուռն զարգացման շրջանում: Այսպես, ըստ «Յունահայ տարեգրքի» տվյալների, միայն 1925–1926 թթ. ընթացքում Հունաստանից Ֆրանսիա և Հարավային Ամերիկայի երկրներ է տեղափոխվել մոտ 6 000 հայ⁹²: Հայկական մամուլում ներկայացված հրապարակումներից մեկի տվյալներով, որոնք, մեր կարծիքով, բավականին մոտ են իրականությանը, 1923–1928 թթ. Հունաստանից

86 Հակոբյան, «Հայաստանյազ առաքելական եկեղեցու հունահայոց թեմերի ձևավորումը», 228:

87 Նույն տեղում:

88 Ըստ երևույթին՝ որբերը ներառյալ, United Nations Library & Archives Geneva, C1425/321/Ra.406/1/26/1 - International Labour Office Refugees Service - Situation of Armenian Refugees in Greece, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-situation-of-armenian-refugees-in-greece>, դիտվել է՝ 19.01.2023:

89 St'u Report by Dr. Fridtjof Nansen, president of the commission appointed to study the question of the settlement of Armenian refugees (28 July 1925). United Nations Library & Archives Geneva, C1428/324/Ra.413/1/4 - International Labour Office Refugees Service - Armenian Refugees - Mission to South Russia [U.S.S.R.] and Erivan - Dr. Nansen's Report and Reports of Mr. Dupuis, Mr. Carle, Mr. Lo Savio, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-mission-to-south-russia-u-s-s-r-and-erivan-dr-nansens-report-and-reports-of-mr-dupuis-mr-carle-mr-lo-savio>, դիտվել է՝ 20.01.2023; տե՛ս նաև Commander F. C. Corbyn R.N., “The Present Position of the Armenian Nation,” *Journal of The Royal Central Asian Society* 19:4 (1932): 600:

90 Հունաստանից ներգաղթած հայերին նախատեսվում էր բնակեցնել Երևանից մոտ 30 կմ հարավարևմուտք գտնվող Արաքս գետին մերձակա Սարդարապատի շրջանում, և այդ նպատակով անգամ շրջանառության մեջ էր դրվել դաշտավայրի ոռոգման ծրագիրը (տե՛ս United Nations Library & Archives Geneva, S155/10/13 - Armenian Refugees - Settlement scheme, անցանց՝ <https://archives.ungeneva.org/armenian-refugees-settlement-scheme-10>, դիտվել է՝ 20.01.2023):

91 1927 թ. նախատեսվում էր կազմակերպել մոտ 1 000 հայի տեղափոխում Խորհրդային Հայաստան (տե՛ս Արմենակ Տեր Յակոբեան, «Յունահայ գաղութ: Ազգային կեանք», *Յունահայ տարեգիրք 1927: Ա. տարի* (Աթենք, հրատարակություն «Նոր օր»-ի, 1927), 290):

92 Նույն տեղում:

Արգենտինա է մեկնել մոտ 5 000 հայ, իսկ Ամերիկա մայրցամաքի այլ երկրներ՝ մոտ 10 000⁹³:

Մեծ է եղել նաև դեպի Մերձավոր Արևելքի երկրներ հայերի հոսքը: Նույն աղբյուրի հաղորդմամբ՝ 1923–1928 թթ. Եգիպտոս (այդ ժամանակ գտնվում էր Մեծ Բրիտանիայի վերահսկողության տակ) տեղափոխվածների թիվը 7–8 հազարի սահմաններում է եղել (ներառյալ՝ 2 500 որբ), նույնքան հայ տեղափոխվել է Սիրիա (գտնվում էր ֆրանսիական մանդատի ներքո)⁹⁴:

Այսպիսով, ամփոփենք 1923–1928 թթ. Հունաստանից հայ փախստականների գաղթի հիմնական ուղղությունները.

1. Ֆրանսիա՝ 17 000 - 18 000,
2. Խորհրդային Հայաստան՝ 5 000,
3. Եգիպտոս՝ 7 000 - 8 000,
4. Սիրիա՝ 7 000 - 8 000,
5. Ամերիկա մայրցամաքի երկրներ՝ 15 000,
6. Բալկանյան երկրներ և այլ ուղղություններ՝ 10 000:

Վերոնշյալ շարժերի հետևանքով Հունաստանում հայ փախստականների թվաքանակը 1920-ական թթ. շարունակաբար նվազել է: Ցավոք, ինչպես արդեն նշել ենք, մեր տրամադրության տակ չկան Հունաստանում հայ փախստականների շարունակական հաշվառման ամբողջական տվյալներ, որոնց միջոցով հնարավորություն ունենանք հետևելու հայերի թվաքանակի շարժին: Դրա փոխարեն կան տարբեր մարմինների և անհատների՝ Հունաստանում հայ փախստականների թվի հաշվարկներ և գնահատականներ: Դրանցից մի քանիսը բավականին մանրամասն են, պարունակում են ըստ բնակավայրերի հայերի բաշխման տվյալներ, մյուսները՝ ընդհանուր: Խնդիրը բարդանում է նաև այն հանգամանքի բերումով, որ հաճախ տվյալներն արտացոլում են տարբեր տեսակի նպաստներ և օգնություն ստացող հաշվառված հայ փախստականների թիվը, որն անպայման չէ՝ արտացոլի բոլոր հայ փախստականներին⁹⁵: Շատ դեպքերում հաշվառումն արվել է կամավորության սկզբունքով, և բազմաթիվ փախստականներ խուսափել են հաշվառումից՝ աշխատանքը կորցնելու, արտաքսվելու և այլ նկատառումներից ելնելով⁹⁶:

93 Թ-դթակից «Արտագաղթ դեպի Արժանթին», *Հայրենիք*, թիվ 5070, 5 յունուար 1929, 1:

94 Նույն տեղում, 1-2:

95 Ասվածը հատկապես վերաբերում է 1923–1924 թթ. տվյալներին, երբ հաշվառվել են հիմնականում նպաստառուները:

96 Այս հանգամանքը մատնանշվում է Ազգերի լիգայի՝ տարբեր երկրներում, այդ թվում՝ Հունաստանում, 1925 թ. առաջին ամիսներին անցկացրած հայ և ռուս փախստականների հաշվառման արդյունքների ամփոփման մեջ: Դրանով մեկտեղ՝ արձանագրվում է, որ հաշվառմամբ ստացված և իրական թվերի միջև տարբերությունը հավանաբար մեծ չէ (տե՛ս United Nations Library & Archives Geneva, R1601/40/46395/41465 - The Work for Refugees - International Labour Office - Communicates, for Distribution to the Delegates to the Assembly and to the Members of the League of Nations, the Report drawn up by the International Labour Office concerning the Activity of the Service of Refugees, անցանց՝ <https://archives.ungeneva.org/oeuvre-en-faveur-des-refugies-bureau-international-du-travail-communique-pour-distribution-aux-delegates-a-lassemblee-et-aux-membres-de-la-societe-des-nations-le>

Ստորև աղյուսակով (Աղյուսակ 1) ներկայացնում ենք 1923–1928 թթ. Հունաստանում հայ փախստականների թվաքանակի վերաբերյալ մեր առանձնացրած մի քանի վիճակագրություն: Տվյալները դասավորված են ըստ ժամանակագրական կարգի: Առանձին տալիս ենք հայ փախստականների բաշխումն ըստ երկու հիմնական տարածաշրջանների՝ 1. «Հին Հունաստան» և կղզիներ, 2. Արևմտյան Թրակիա և Մակեդոնիա (բաժանումը մերը չէ. այն արտացոլված է մի շարք աղբյուրներում և ընդունված է պատմագիտական գրականության մեջ): Այն դեպքում, երբ վիճակագրությունը պարունակում է մանրամասն տվյալներ ըստ բնակավայրերի, ծանոթագրության մեջ դա նշվում է: Հատկապես 1923 թ.՝ ժամանակագրական առումով իրար մոտ կանգնած տարբեր աղբյուրների հաղորդած տվյալների միջև տարբերությունը պայմանավորված է ոչ միայն հայերի արտագաղթի բարձր տեմպերի գործոնով, այլև տվյալ վիճակագրության մեջ որբանոցներում պահվող որբերի թվաքանակի արտացոլման հանգամանքով:

Աղյուսակ 1. Հունաստանում հայ փախստականների թվաքանակն ու բաշխումը 1923–1928 թթ.՝ ըստ տարբեր վիճակագրությունների

Թվական	Աղբյուր	«Հին Հունաստան» և կղզիներ	Արևմտյան Թրակիա և Մակեդոնիա	Ընդհանուր
1923 թ. ամառ	Հայ ազգային պատվիրակություն	35 000	30 000	65 000 ⁹⁷
1923 թ. առաջին կես	Թեոդիկ	36 586	28 295	64 881 ⁹⁸

rapport-etabli-par-le-bureau-international-du-travail-au-sujet-de-lactivi, դիտվել է՝ 20.01.2023): Մասնավորապես՝ Հունաստանում տարածված 7 866 հաշվառման հարցաթերթերից լրացված հետ է ստացվել 7 564-ը, ինչը կազմակերպիչները գնահատում են որպես բարձր արդյունք (սույն տեղում): Մեկ այլ քաջատեղյակ հեղինակ, խոսելով 1925 թ. հաշվառման մասին, նշում է, որ «հազարատը հայեր... մարդահամարի թուղթերը լեցուցած չեն: Շատ մը հայեր կարծած են, թե այս կերպով կառավարությունը կ'ուզէ իմանալ հայերու տեղն ու գործը, որպէսզի տեղահանումը դիրիս ըլլայ» (տե՛ս Թոթակից «Արտագաղթ դէպի Արժանթին», *Հայրենիք*, թիւ 5070, 5 յունուար 1929, 2):

97 Տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1427/323/Ra.412/1/26/1/Jacket1, online: <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-evacuation-from-greece>, դիտվել է՝ 20.01.2023:

98 Թեոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը 1924* (Փարիզ, տպ. Յ. Բ. Թիրապեան, 1923), 228-229 (Հայկական եկեղեցական-թեմական կառույցների (Աթենքի և Մակեդոնիայի ու Թրակիայի թեմերի առաջնորդարաններ) տվյալների հիման վրա: Որբերի թիվը ներառյալ: Հեղինակը տալիս է ըստ բնակավայրերի հայ փախստականների բաշխումը):

1923 թ. սեպտեմբեր	Թրակիայի և Մակեդոնիայի թեմի առաջնորդ Երվանդ Եպիսկոպոս Փերտահճյան	-	-	55 000 (առանց որբերի թվի) ⁹⁹
1924 թ. փետրվար	Ազգերի լիգա, Փախստականների խնդրի կարգավորման հանձնաժողով	-	-	60 000 ¹⁰⁰
1924 թ. նոյեմբեր	Թեոդիկ	29 712	25 197	54 909 ¹⁰¹
1924 թ. նոյեմբեր	Հարոլդ Բաքստոն, Լորդ քաղաքապետի (Հայկական) հիմնադրամ	-	-	50 000 ¹⁰²
1925 թ. առաջին կես	Ազգերի լիգա			45 300 (11 400 ընտանիք) ¹⁰³

99 Տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1427/323/Ra.412/1/26/1/Jacket1, online: <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-evacuation-from-greece>, դիտվել է՝ 20.01.2023:

100 Տե՛ս “League of Nations. Greek Refugees. Report on the Operations of the Refugees Settlement Commission for the First Three Months” at United Nations Library & Archives Geneva, R1765/48/34422/29451 - Relief of the Refugees from Asia Minor: Report on the Work of the Refugees Settlement Commission, աղբյուր՝ <https://archives.ungeneva.org/relief-of-the-refugees-from-asia-minor-report-on-the-work-of-the-refugees-settlement-commission>, դիտվել է՝ 20.01.2023:

101 Թեոդիկ, *Ամենուն Տարեցույցը, 1926* (Վենետիկ, Ս. Ղազար տպ. Մյնիխբադեն, 1925), 578-579 (Հայկական եկեղեցական-թեմական կառույցների (Աթենքի և Մակեդոնիայի ու Թրակիայի թեմերի առաջնորդարաններ) և հունական կառավարության տվյալների հիման վրա հեղինակը տալիս է միայն ըստ բնակավայրերի հայ փախստականների բաշխումը և համագումար թիվը, ըստ շրջանների բաշխումը մերն է):

102 Լորդ քաղաքապետի հիմնադրամի պատվավոր քարտուղար Հարոլդ Բաքստոնի տվյալներով (1924 թ. նոյեմբերի 26) (տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1424/320/Ra.404/1/25/1 - International Labour Office Refugees Service - Armenian Refugees - Relation with the Armenian Lord Mayor's Fund – London, աղբյուր՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-relation-with-the-armenian-lord-mayors-fund-london>, դիտվել է՝ 20.01.2023):

103 Տե՛ս League of Nations. International Labour Office, Report on the Work for the Refugees 1925, 42 (United Nations Library & Archives Geneva, R1601/40/46395/41465 - The Work for Refugees - International Labour Office - Communicates, for Distribution to the Delegates to the Assembly and to the Members of the League of Nations, the Report drawn up by the International Labour Office concerning the Activity of the Service of Refugees, online: <https://archives.ungeneva.org/loeuvre-en-faveur-des-refugies-bureau-international-du-travail-communique-pour-distribution-aux-delegues-a-lassemblee-et-aux-membres-de-la-societe-des-nations-le-rapport-etabli-par-le-bureau-international-du-travail-au-sujet-de-lactivi>, դիտվել է՝ 02.02.2023:

1925 թ. երկրորդ կես	Ջոզեֆ Բարթ, Ընկերների ընկերակցության Հայկական կոմիտե	30 000	15 000	45 000 ¹⁰⁴
1927 թ. մայիս	Ազգերի լիգայի Փախստականների կոմիտեի՝ Աթենքի և Սալոնիկի գրասենյակներ	-	-	42 000 ¹⁰⁵
1928 թ. մայիսի 15-16	Հունական կառավարության մարդահամար	18 531	15 103	33 634 ¹⁰⁶

Ինչպես կարելի է եզրակացնել վերոնշյալ տվյալներից՝ 1923–1928 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում Հունաստանում հայ փախստականների թիվը նվազել է մոտ երկու անգամ՝ 65 000-ից հասնելով 34–35 հազարի (եթե հաշվի առնենք Հունաստան մուտք գործած բոլոր հայ փախստականների թիվը՝ 100 հազ., ապա նվազումը երեք անգամ է): Փոփոխվել է նաև հայ փախստականների՝ գյուղական և քաղաքային բնակավայրերի միջև բաշխման հարաբերակցությունը: Այսպես, եթե 1923 թ. կեսերին Արևմտյան Թրակիայում և Մակեդոնիայում հանգրվանած մոտ 30 000 հայ փախստականներից Սալոնիկ քաղաքում և նրա արվարձաններում էր հաստատվել մոտ 10 000-ը, այսինքն՝ մեկ երրորդը, ապա 1928 թ. նույն տարածքի 12 000 հայ փախստականներից մոտ

104 Տե՛ս Armenian Refugees (Sent out by the Armenian Committee of the Society of Friends). Preliminary Report on the Armenian Question in the Near East.- by Joseph Burt, F.R.G.S. (United Nations Library & Archives Geneva, C1425/321/Ra.404/4/25/1 - International Labour Office Refugees Service - Armenian Refugees - Relations with the Society of Friends, London, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-armenian-refugees-relations-with-the-society-of-friends-london>), դիտվել է՝ 03.02.2023, տե՛ս նաև *The Problem of Armenian Settlement (Still Urgent)*. October, 1925 (London: The Armenian (Lord Mayor's) Fund, 1925), 3 United Nations Library & Archives Geneva, R696/12/47318/46805 - Settlement of Armenian Refugees in Erivan - Correspondence with the Armenian (Lord Mayor's) Fund, անցանց՝ <https://archives.ungeneva.org/settlement-of-armenian-refugees-in-erivan-correspondence-with-the-armenian-lord-mayors-fund>, դիտվել է՝ 03.02.2023:

105 Տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1400/296/R.402/10/0 - International Labour Office Refugees Service - Statistics on the Census, Evacuation and the Establishment of the Russian and Armenian Refugees, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-statistics-on-the-census-evacuation-and-the-establishment-of-the-russian-and-armenian-refugees>, դիտվել է՝ 03.02.2023:

106 *Résultats statistiques du recensement de la population de Grèce les 1516 mai 1928, IV. Lieu de naissance - Religion et Langue Nationalité* (Athènes: Imprimerie Nationale, 1935), See also: Ath. Angelopoulos, "Population distribution of Greece today according to language national consciousness and religion (On the basis of official statistics and census returns)," *Balkan Studies* 20, No. 1 (1979): 130. Որոշ ուսումնասիրողներ, ըստ երևույթին, հաշվի առնելով թերհաշվառման գործոնը, կլորացնում են 1928 թ. մարդահամարի տվյալները մինչև 35 000 (տե՛ս Pallis, "The Greek Census of 1928," *The Geographical Journal* 73, No. 6 (June, 1929): 546):

8 000-ը Սալոնիկի հայ բնակիչներն են եղել՝ այսինքն՝ երկու երրորդը¹⁰⁷: Համաձայն Ազգերի լիգայի տվյալների՝ 1928 թ. 35 000 հունահայ փախստականներից 25 000-ը գործազուրկ են եղել, կարիքավոր և (կամ) տառապել տարբեր հիվանդություններից (հիմնականում՝ թոքախտ)¹⁰⁸:

Հետագա տարիներին Հունաստանի հայ բնակչության թիվը շարունակել է նվազել, թեև պակաս տեմպերով: 1931-1932 թթ. Հունաստանից Խորհրդային Հայաստան հայ փախստականների ներգաղթի նոր ալիքն ընդգրկվել է մոտ 7 400 մարդ¹⁰⁹: Դրանից հետո՝ մինչև 1946-47 թթ., Հունաստանից հայերի զանգվածային արտահոսք տեղի չի ունեցել, և 1930-ական թթ. կեսերին Հունաստանում հայ բնակչության թիվը կայունացել է շուրջ 26-27 հազարի սահմաններում¹¹⁰:

ARMENIAN REFUGEES FOUND ASYLUM IN GREECE AFTER SMYRNA CATASTROPHE: NUMBERS, DISTRIBUTION, INTERNAL AND EXTERNAL MIGRATIONS (1922-1928)

Robert A. Tatoyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

This article examines the issues related to the numbers, migration patterns and the distinct subgroups of the Armenians who sought refuge in Greece after Smyrna catastrophe, the

107 1923 թ. ըստ բնակավայրերի բաշխման տվյալները՝ Թեոդիկ, *Ամենուն Տարեցույցը 1924*, 228-229, 1928 թ.՝ ըստ բնակավայրերի բաշխման տվյալները՝ Թեոդիկից, «Արտագաղթը դեպի Արժանթին», 2:

108 Տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1425/321/Ra.406/1/26/1 - International Labour Office Refugees Service - Situation of Armenian Refugees in Greece, անցանց՝ <https://archives.ungeneva.org/international-labour-office-refugees-service-situation-of-armenian-refugees-in-greece>, դիտվել է՝ 22.02.2023:

109 Տե՛ս United Nations Library & Archives Geneva, R5638/20C/16431/716 - Settlement of Armenian Refugees in the Erivan Republic, online: <https://archives.ungeneva.org/etablissement-de-refugies-armeniens-sur-le-territoire-de-la-republique-derivan>, դիտվել է՝ 22.02.2023): Այս գործընթացը տեղի է ունեցել Հունաստանի և Խորհրդային Միության ձեռք բերված պայմանավորվածության շտրիկով, որով հունական կառավարությունը ստանձնում էր անվճար փոխադրամիջոցներ տրամադրել մինչև 10 000 հայ փախստականի՝ Բաթում տեղափոխումը կազմակերպելու համար (տե՛ս United Nations Library & Archives Geneva, C1553/449/20A/80385/80385/Jacket2 - Nansen International Office for Refugees - Preparation of the Report to the 13th Assembly, 1932 - Documents Only, online: <https://archives.ungeneva.org/nansen-international-office-for-refugees-preparation-of-the-report-to-the-13th-assembly-1932-documents-only>, դիտվել է՝ 22.02.2023): Հույն ուսումնասիրող Հասիոթիսը հասցնում է Հունաստանից Խորհրդային Հայաստան տեղափոխված հայերի թիվը մինչև 8-10 հազարի (տե՛ս Hassiotis, "Armenians," 96-97). այն ներառում է ոչ միայն հունահայերին, այլև բալկանյան այլ երկրներից Հունաստանի միջոցով Խորհրդային Հայաստան տեղափոխվածներին:

110 Համաձայն 1940 թ. ընդհանուր մարդահամարի տվյալների (այն 1928 թ. մարդահամարից հետո հաջորդն է եղել)՝ Հունաստանում բնակվել է 26 827 հայ (տե՛ս Ath. Angelopoulos, "Population Distribution of Greece Today According to Language National Consciousness and Religion (On the Basis of Official Statistics and Census Returns)," *Balkan Studies* 20 No. 1 (1979): 130):

distribution of Armenian refugees in Greece, and their internal and external migration dynamics through the late 1920s.

The number of Armenian refugees in Greece swelled to its largest number at the beginning of 1923, when it reached up to 80,000 - 85,000; the total number of Armenians who entered Greece between 1921-1923 was estimated at around 100,000. However, following this inflow of Armenian refugees to Greece, the ensuing outflow of emigrants from Greece commenced in much larger volumes. For various reasons (mainly economic), Armenians left for France and other European countries, the American continent (Argentina, Brazil, the USA, Canada) and the Middle East (Egypt, Syria) countries, among other final destinations. Mass relocations of Armenian refugees to Soviet Armenia were also organized between 1924 and 1925. As a result of these aforementioned processes the number of Armenians in the Greece stabilized at around 35,000 during the late 1920s.

Key words: Armenian Genocide, Smyrna catastrophe, Armenian refugees, Greece, The League of Nations, demography, statistics.

АРМЯНСКИЕ БЕЖЕНЦЫ, НАШЕДШИЕ ПРИЮТ В ГРЕЦИИ ПОСЛЕ СМИРНСКОЙ КАТАСТРОФЫ: ЧИСЛЕННОСТЬ, РАСПРЕДЕЛЕНИЕ, ВНУТРЕННИЕ И ВНЕШНИЕ МИГРАЦИИ (1922–1928 ГГ.)

Роберт А. Татоян

Фонд «Музей-институт Геноцида армян», Армения

В данной статье рассматриваются вопросы, связанные с численностью, волнами и группами миграций армянских беженцев в Греции после Смирнской катастрофы, а также с их распределением, внутренними и внешними миграциями в 1922-28 гг.

Численность армянских беженцев в Греции достигла своего максимального значения 80,000 - 85,000 человек в начале 1923 года, а общее число армян, въехавших в Грецию в период с 1921 по 1923 год оценивалось примерно в 100,000 человек. Однако параллельно притоку армянских беженцев в Грецию, начался гораздо более мощный процесс их оттока. По разным, в основном, экономическим причинам армяне стали эмигрировать во Францию и другие страны Европы, страны американского континента (Аргентина, Бразилия, США, Канада) и Ближнего Востока (Египет, Сирия) и т.д. В 1924 по 1925 годам была организована также массовая репатриация армянских беженцев из Греции в Советскую Армению. В результате вышеупомянутых процессов в конце 1920-х годов численность армян в Греции стабилизировалась на уровне 35,000.

Ключевые слова: Геноцид армян, Смирнская катастрофа, армянские беженцы, Греция, Лига Наций, демография, статистика.

REFERENCES

- «38 000 հայեր գաղթած Թրակիայէն» [38,000 Armenians Moved from Thrace], *Erkunj* (Athens), 17 (30) November, 1922;
- «170 000 հոգի Պոլսէն մեկնած» [170,000 Left from Constantinople], *Erkunj* (Athens), 25 January 1923;
- «Բաղդաատական վիճակագրութիւն հայ բնակչութեան Օսմ. Կայսրութեան մէջ տեղահանութենէ առաջ եւ վերջ (Պատրաստուած 1 ապրիլ 1921ին)» [Comparative Statistics of the Armenian Population in the Ottoman Empire Before and After Deportation (Prepared on 1 April 1921)], Դեօտիկ, *Ամենուն տարեցոյցը, ԺԶ. Տարի, 1922* [Almanac for Everyone, year XVI, 1922]. Constantinople: Hovakimean publishing, 1922;
- «Գաղթականները Յունաստանի մէջ» [Refugees in Greece]. *Apaga* (Paris), 23 December 1922;
- «Գաղթականները Պուլկարիոյ մէջ» [Refugees in Bulgaria], *Hayastani koch'nak* (New York), 17 December 1922;
- «Գաղթականներու վիճակը Թրակիոյ մէջ» [Condition of Refugees in Thrace], *Hayastani koch'nak* (New York), 28 October 1922;
- «Թրակիոյ հայերու գաղթը վերջացած է» [Exodus of the Armenians from Thrace is Over], *Erkunj* (Athens), 5 (18) November 1922;
- «Իզմիրի աղէտը» [Izmir Disaster]. *Hayastani koch'nak* (New York), 23 September 1922;
- «Իզմիրի ողբերգութիւնը I» [The Tragedy of Izmir I]. *Hairenik* (Boston), 15 December 1922;
- «Հայ գաղթականները Ռոստոսի մէջ եւ շրջակայքը» [Armenian Refugees in Rodosto and its Environments], *Hayastani koch'nak* (New York), 21 October 1922;
- «Հայ գաղթականներու վիճակացոյց» [Census of the Armenian Refugees], *Erkunj* (Athens), 18 January 1923;
- «Որբերու դաստիարակութեան խնդիրը» [Problem of Education of Orphans], *Chakatamart* (Constantinople), 19 December 1922;
- «Որբերու փոխադրութիւնը» [Transfer of Orphans], *Chakatamart* (Constantinople), 30 November 1922;
- «Որբուհիներն ալ պիտի փոխադրուին» [Girl Orphans Will Also Be Transferred], *Chakatamart* (Constantinople), 13 December 1922;
- «Ռումինիա որբեր դրկելու խնդիրը» [Problem of Transfer of Orphans to Romania], *Chakatamart* (Constantinople), 28 December 1922;
- Abrahamyan, Ashot. *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, հատոր Բ* [A Brief Outline of the History of the Armenian Settlements. Volume II]. Yerevan: Armenia publishing, 1967;
- Astoyan, Anahit. *Բուրասյի նահանգի հայութեան տնտեսական վիճակը և նյութական կորուստները Հայոց ցեղասպանութեան տարիներին* [Economic Condition and Material

Losses of the Armenians in Bursa Province during the Armenian Genocide]. Yerevan: “Gitutyun” Publishing of National Academy of Sciences, Republic of Armenia, 2017;

Azatian, Liparit. *Հայ որբերը Մեծ եղեռնի*, հասոր առաջին [Armenian Genocide Orphans. Vol. I]. Los Angeles, 1995;

Bento. «Որբերը Յունաստանի մէջ» [Orphans in Greece]. *Erkunyq* (Athens), 8 February 1923;

Eghiaian, Byuzand. *Ատանայի Հայոց պատմութիւն: Պատմագրական, եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական* [History of Adana Armenians. Historical, Genocidal, Liberational, Cultural, Ethnographical, Documental, Chronological]. Antelias: Cilicia Catholicosate Publishing, 1970;

Erets’ A. «Ամերիկեան Բըլիֆը և Հայ որբերը» [American Relief and the Armenian Orphans]. *Erkunyq* (Athens), 25 April 1923;

Galustian, G. «Զմիռնիա և Զմիռնիոյ հայ գաղութը» [Smyrna and the Armenian Community of Smyrna]. *Greek Armenian Almanac. 2nd Year*. Athens: “Nor Or” Publishing, 1928;

Galustian, Grigor. *Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն* [Marash or Germanik and Heroic Zeytun]. New York: Koch’nak Publishing, 1934;

Georgian, Karo. «Տասնեւօթը տարի յունահայ գաղութին հետ, 1922-1939» [Seventeen Years with Armenian Community in Greece, 1922–1939]. *Almanac for Everyone, 1957*. Beirut, 1956;

Ghasabyan, Zohrab. «Հայ գաղթականների ընդունումը և բնակեցումը Բուլղարիայում (1922-1923)» [Acceptance and Settlement of the Armenian Refugees in Bulgaria (1922-1923)]. *Lraber hasarakakan gitutyunneri* 1 (1974): 21-27;

Ghasabyan, Zohrab. *Նիկոմիդիայի և Արևելյան Թրակիայի հայաթափումը (1921-1922)* [Ethnic Cleansing of the Armenians of Nycomaedia and Eastern Thrace]. Yerevan: National Academy of Sciences, Republic of Armenia, 1998;

Guzhkan. «Իզմիրի ջարդը և հարդեիը» [Izmir Massacre and Fire]. *Hayastani Koch’nak* (New York), 25 November 1922;

Hakobyan, Mariam. «Հայաստանյազ առաքելական եկեղեցու հունահայոց թեմերի ձևավորումը և նրանց վարչաժողովրդագրական նկարագիրը 1920-1930-ական թթ.» [The Establishment of the Greece Prelacy of the Armenian Apostolic Church and its Administrative-Demographic Description in 1920-1930], *History and Culture. Journal of Armenian Studies* 15, no. 1 (2020), 226-231;

Kokinos, P. *Հունահայ գաղութի պատմությունից (1918-1927)* [From the History of the Armenian Community in Greece (1918-1927)]. Yerevan: Institute of History, Academy of Sciences of Armenian SSR, 1965;

Makarian, Asatur. *Յուշագիրք Թրակիոյ և Մակեդոնիոյ հայ գաղութներու* [Memorial Book of the Armenian Communities of Thrace and Macedonia]. Selanik, 1929;

Meliqsetyan, Hovik. *Հայրենիք-Սիյոսք անկախութիւնները և հայրենասարձութիւնը*

(1920-1980) [Homeland-Diaspora Relations and Repatriation (1920-1980)]. Yerevan: Yerevan University, 1985;

P'ach'achian, Sargis. *Յուշամատենան Ռոստոսթոյի հայերուն 1606-1922* [Memorial Book of the Rodosto Armenians 1606-1922]. 2nd edition. Beirut: Tonikian Publishing, 1971;

Simonian, Petros. *Յուշամատենան: Հայկական Զմիռնիան* [Memorial Book. The Armenian Smyrna]. Paris: "Araks" Publishing, 1936;

Tatoyan, Robert. «Զմյուռնիայի աղետին զոհ գնացած հայերի թվաքանակի հարցի շուրջ» [On the Question of the Armenian Death Toll as a Result of Smyrna Catastrophe]. *Ts'eghaspanagitakan handes* 10, no. 2 (2022), 49-73;

Tatoyan, Robert. «Մեծ եղեռնի որբերի թվաքանակի վերաբերյալ Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի՝ 1919-1922 թթ. կազմած վիճակագրությունները», *Հայերի փրկության գործը Մերձավոր Արևելքում 1915-1923 թթ., միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու*, խմբ.՝ Հարություն Մարության, Նարինե Մարգարյան [“Statistics on the Armenian Genocide Orphans Compiled by the Armenian Patriarchate of Constantinople in 1919-1922,” in *The Rescue of Armenians in the Middle East in 1915-1923. International Conference Proceedings, November 8-9, 2019*, eds. Harutyun Marutyan, Narine Margaryan]. Yerevan: Armenian Genocide Museum-Institute Foundation, 2020, 323-348;

Tatoyan, Robert. «Մեծ եղեռնի ընթացքում արևմտահայության կրած մարդկային և նյութական կորուստները վիճակագրելու Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի փորձերը 1919-1920 թվականներին (ըստ Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի արխիվի նյութերի) (Մաս 2)» [Efforts (Made in 1919-1920) of the Armenian Patriarchate of Constantinople to Gather Statistics of Human and Material Losses Suffered by the Western Armenians during the Armenian Genocide (According to the Archives of the Armenian Patriarchate of Jerusalem) (Part 2)]. *Etchmiadzin* 76, no. 5 (2019), 53-86;

T'eodik. *Ամէնուն տարեցոյցը, ԺԸ. տարի, 1924* [Almanac for Everyone, 1924]. Paris: T'yurapian Publishing, 1923;

T'eodik. *Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին 1915 աղետալի տարին* [Calvary of the Armenian Clergy and its Flock in Catastrophic 1915]. New York, 1985;

Ter-Hakobian, Armenak. «Յունահայ գաղութ: Ազգային կեանք» [Armenian Community in Greece. National Life]. *Hunahay Taregirq 1927*. Athens: "Nor Or" Publishing, 1927;

T'ght'akits'. «Արտագաղթ դէպի Արժանթին» [Emigration to Argentina]. *Hairenik* (Boston), 5 January 1929.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Ռոբերտ Ա. Թատոյան, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Հայոց ցեղասպանության աղբյուրագիտական ուսումնասիրությունների բաժնի ավագ գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակագրություն և ժողովրդագրություն, արևմտահայ հասարակական, կրթական, մշակութային և կրոնական կյանք:

Էլ. փոստի հասցե՝ r.tatoyan@genocide-museum.am

Robert A. Tatoyan, PhD in History, Senior Researcher at the Department of the Armenian Genocide Source Studies, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: Western Armenian population statistics and demography on the eve of the Armenian Genocide, Western Armenian public, educational, cultural and religious life.

E-mail: r.tatoyan@genocide-museum.am

Роберт А. Татоян, кандидат исторических наук, старший научный сотрудник Отдела источниковедческих исследований Геноцида армян Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – статистика и демография западных армян накануне геноцида, общественная, образовательная, культурная и религиозная жизнь западных армян.

Эл. почта: r.tatoyan@genocide-museum.am

**ԶՄՅՈՒՌՆԻԱՅԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿՆ ԱՌԱՋԻՆ
ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՑ ԱՌԱՋ ԵՎ 1922 Թ. ՈՒՆԵԶՐԿՈՒՄԸ**

Ասահիտ Խ. Աստոյան

Մատենադարանի Արխիվի և արխիվագիտության բաժնի գիտաշխատող, Հայաստան

Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայության տնտեսական գործունեության մասին ուսումնասիրությունները հարուստ նյութ են տրամադրում ազգային ինքնաճանաչողության համար, քանզի վեր են հանում հայ նկարագրի շատ կարևոր հատկանիշներ: Զնյունիահայությունն իր աշխատասիրության, ստեղծագործ մտքի, մեծ կարողությունների և ձեռներեցության շտրիիվ կարողանում է ազդեցիկ դիրք գրավել քաղաքի տնտեսական կյանքում: Հայ ժողովրդի բարեգործ ոգու փայլուն դրսևորումն է եղել Զնյունիայում ազգօգուտ գործունեություն ծավալած մեծաթիվ բարեգործական հաստատությունների գոյությունը: Զնյունիահայության քաղաքակրթական բարձր մակարդակի մասին են վկայում քաղաքի մեծաթիվ տպարանները, վարժարանները, ընթերցասրահները և մշակութային այլ հաստատություններ, որոնք Զնյունիան դարձնում են արևմտահայ մշակույթի և կրթության կարևորագույն կենտրոն: Այս ամենի շարժիչ ուժը թե՛ գնյունիահայության տնտեսական բարգավաճ վիճակն էր և թե՛ քաղաքակրթության և առաջընթացի նկատմամբ հայ ժողովրդի բնական ձգտումը:

Բանալի բառեր՝ բռնագրավում, ունեցվածքի կողոպուտ, տնտեսության թուրքացում, նյութական կորուստներ, քենականներ, հրդեհ, հրկիզումներ, Զնյունիայի աղետ, քրիստոնեական քաղաքակրթություն:

Հոդվածը ներկայացվել է՝ 28.11.2022: Ընդունվել է տպագրության՝ 18.05.2023:

The article was submitted on 28.11.2022 and accepted for publication on 18.05.2023.

Статья поступила 28.11.2022 и была принята к публикации 18.05.2023.

Ինչպես հղել՝ Ասահիտ Խ. Աստոյան, «Զնյունիայի հայության տնտեսական վիճակն Առաջին աշխարհամարտից առաջ և 1922 թ. ունեզրկումը», *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 70-89:

How to cite: Anahit Kh. Astoyan, “The Economic Situation of the Armenians of Smyrna before the First World War and Deprivation of Property in 1922,” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 70-89.

Как ссылаться: Анаит Х. Астоян, “Экономическое состояние армян Смирны перед Первой мировой войной и их экспроприация в 1922 году,” *Цехаспаназитакан андес* 11, no. 2 (2023): 70-89.



Երիտթուրքերի քաղաքական գծի հետևորդներ քեմալականները կատարելագործում են հայերի և հույների ցեղասպանություններն իրագործելու համար հաջորդաբար կիրառվող մեթոդները՝ տեղահանությունները, կոտորածները, ունեցվածքի կողոպուտը և ցեղասպանության եզրափակիչ տարր համարվող՝ քրիստոնյաների բնակավայրերի հրկիզումները:

Զմյուռնիայի աղետի պատմության մեջ ցնցող ազդեցություն են գործում ոչ միայն հայերի և հույների՝ հայրյուրամյակների և տասնամյակների ընթացքում մեծ տընությամբ ստեղծած ահռելի նյութական կորուստների, այլև հայկական ու հունական քաղաքակրթությունների անգնահատելի արժեքների ոչնչացման մասին փաստերը:

Էզգեյան ծովի ափին գտնվող Զմյուռնիան (Իզմիր) Փոքր Ասիայի ամենահին քաղաքներից է, Կ.Պոլսից հետո Օսմանյան կայսրության տնտեսական ամենամեծ ու ամենակարևոր կենտրոնը և երկրի առևտրական գլխավոր նավահանգիստը¹: Այն Այդըն նահանգի կուսակալանիստ քաղաքն է եղել: Հայերն այստեղ են գաղթել 1380 և 1610 թթ. և մի քանի անգամ՝ 19-րդ դարի ընթացքում: 1918 թ. տվյալներով՝ Զմյուռնիայի բնակչության ընդհանուր թիվը կազմել է 350 000, որից 18 000-ը հայեր են եղել²: Այդըն նահանգն ունեցել է բարեխառն կլիմա, բարեբեր և լավ մշակված հողեր: Այստեղ ստանում էին բամբակ, ձիթապտուղ, նարինջ, կիտրոն, խաղող, թուզ, հացահատիկ, աֆիոն ևն: Մահանգը հարուստ է եղել անտառներով ու հանքերով, արտադրել է գորգեր, մետաքսյա և բամբակյա կտորեղեն, հագուստ, գինի, ձեթ, կաշի ևն³: Տեղի հայերը զբաղվել են առևտրով, արհեստներով և արդյունաբերությամբ, սակայն նրանց նախընտրած ասպարեզը առևտուրն է եղել: Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայկական առևտրական տներն անմրցելի են համարվել: 19-րդ դարակեսից շատ հայ առևտրականներ, հաստատվելով եվրոպական քաղաքներում, մասնավորապես՝ Լոնդոնում, Մանչեստրում, Ամստերդամում, Փարիզում, Վիեննայում, իրենց գրասենյակներն են բացում և մասնաճյուղեր հիմնում, Օսմանյան կայսրության շուկան նեղ համարելով՝ դիրքեր են գրավում միջազգային առևտրական շուկայում⁴: Պաքրճյան եղբայրները միջազգային համբավ վայելող գմյուռնիացի վաճառականներից էին: Նրանց առևտրական տունը մասնաճյուղեր է ունեցել Ավստրալիայում, Պերուում, Արգենտինայում, Ուրուգվայում, Մարրոկոյում, Եգիպտոսում, Անգլիայում, Բալկանյան երկրներում և այլուր⁵:

Մախապատերազմական շրջանում Զմյուռնիայի տնտեսության մեջ հայերը և

1 «Իզմիր», *Աշխատանք* լրագիր (Իզմիր), 13/26 հուլիսի 1913, 7:

2 Պետրոս Սիմոնեան, *Յուզամատենան: Հայկական Զմյուռնիան* (Փարիզ, Արաքս, 1936), 7, 9:

3 Հ. Ս. Խանճեան, *Պատկերագրող նոր աշխարհագրութիւն, Բ մաս, Աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան* (Կ.Պոլիս, Նշան-Պապիկեան, 1902), 52-53:

4 Լեւոն Չորմիսեան, *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան*, հ. Ա (Պէյրուօ, Կ. Տօնիկեան եւ որդիք, 1972), 187-188:

5 Գ. Օ. Գալուստեան, «Զմյուռնիա եւ Զմիւռնիոյ Հայ գաղութը», *Յունահայ տարեգիրք* 1928, Բ տարի (Աթէնք, Նոր օր, 1928), 285:

հույները տիրական դիրք են գրավել: Այդ մասին է վկայում թուրք պատմաբան Նեդիմ Քարայելին: Ըստ նրա հայտնած տեղեկության՝ 1915 թ. Օսմանյան կայսրության տնտեսության ոլորտում անցկացված վիճակագրությունը պարզել է, որ Կ.Պոլսի, Էգեյան, Սևծովյան և Միջերկրական տարածաշրջաններում գործարարների և արհեստավորների 95-96 տոկոսը հայեր և հույներ էին⁶:

Զմյուռնիայի և շրջակա բնակավայրերում ապրող հայերի տնտեսական վիճակի մասին պատկերացում է տալիս Կ.Պոլսում հրատարակված «Ժողովուրդ» օրաթերթի 1919 թ. մի հրապարակում, ըստ որի՝ այս տարածաշրջանի հայերին են պատկանել 12 պանդոկ, 14 իջևանատուն, 2 փոքր իջևանատուն, 321 խանութ, 912 խանութ-կրպակ, 66 սրճարան, 8 ռեստորան, 25 գինետուն, 1 խաղատուն, 22 կապելանոց, 9 ամբար, 32 պահեստ, 22 գրասենյակ, 12 քարվանսարա, 3 բաղնիք, 710 արոտավայր, 35 բանջարանոց, հարդի 8 մթերանոց, 4 դեղատուն, անասնակերի 9 պահեստ, 130 ախոռ, 2 ջրաղաց, օճառի 4 ֆաբրիկա, երկաթագործական 1 գործարան, 1 մանարան, հրուշակեղենի 1 գործարան, մակարոնի 2 գործարան, ալյուրի 2 ֆաբրիկա, 62 փուռ, 4 կաշեգործարան, 50 սենյակից բաղկացած իջևանատներ (եկվորների համար նախատեսված), 1 հիվանդանոց, 161 ամառանոց, 4 825 բնակարան⁷:

Պետք է նշել, որ վերոհիշյալ ցուցակն ամբողջական չէ: Ահա այն համալրող տեղեկությունները, որոնք վերցված են Կ.Պոլսի և Զմյուռնիայի հայ մամուլում տեղ գտած գովազդներից, հրապարակումներից, թուրքական և այլ աղբյուրներից: Սպարտալյան ընտանիքին են պատկանել գորգի երկու գործարան⁸: Զմյուռնիայում հաստատված Միլկիճյան, Իսպենճյան և Քեհեայան ընտանիքներին պատկանող արևելյան գորգերի ֆաբրիկաներն ու մթերանոցները մասնաճյուղեր են ունեցել Սալոնիկում, Կեսարիայում, Սեբաստիայում և Կ.Պոլսում⁹: Ճանիկ Էլմայանին է պատկանել թզի մշակման մեծ գործարանը¹⁰: Թզի մշակման գործարանատեր էր նաև Արամ Համբարձումյանը¹¹, որին, ի դեպ, «թզի արքա» են կոչել¹²: Դավիթ Ռեիզյանին է պատկանել օդու¹³, իսկ Հակոբ Պոսթանճյանին՝ «Էքլեր» կոչված հովանոցի մեծ գործարանը¹⁴: Նրա տնօրինությամբ է աշխատել Հերեքեի պետական գործարանի՝

6 Նեդիմ Քարայել, «Թուրք ժամանակակից կապիտալի աղբյուրը հայկական և հունական գույքն է», <https://akunq.net/am/?p=42354>, դիտվել է՝ 25.07.2022:

7 «Շահեկան վիճակագրություն մը Իզմիրի նահանգի Հայերու սեփական կալուածները», *Ժողովուրդ օրաթերթ* (Կ.Պոլիս), 11 սեպտեմբերի 1919, 37:

8 Խաչատուր Դադայան, «Զմյուռնիայի վախճանը», <http://www.irates.am/hy/1438070607>, դիտվել է՝ 08.10.2022:

9 Թեոդիկ, *Ամլնուն տարեցույցը*, 1914, տարեգիրք (Կ.Պոլիս, Մ. Յովակիմեան, 1914), 420:

10 Osman Köker, *100 Yil Önce Türkiye’de Ermeniler* (Istanbul, Birzamanlar Yayıncılık, 2005), 121.

11 *Bir zamanlar İzmir*, editör Osman Köker (Istanbul, Birzamanlar Yayıncılık, 2009), 26.

12 Ս. Մ. Շոցիկեան, *Արևելասիայ աշխարհ* (Նյու Եորք, Ա. Յ. Լէյլեկեան, 1947), 209:

13 «Ամսթցելին, օդու մեծ գործարան», *Արևելեան մամուլ* օրաթերթ (Իզմիր), 20 դեկտեմբերի 1921, 2736:

14 «Հովանոցի մեծ գործարան Էքլեր», *Արշալոյս* օրաթերթ (Իզմիր), 16/29 օգոստոսի, 1908, 144:

Զմյուռնիայի մասնաճյուղը¹⁵: Այստեղ գործել է հայապատկան ծխախոտի գործարան¹⁶: Օհան Բագլավաճյանը, Գասպարյան եղբայրները և Մուրատյան-Գրմաճյան ընկերությունը զբաղվել են շղարշի և այլ նուրբ կերպասների վրա տպածոների արտադրությամբ¹⁷: Քաղաքում գործում էին «Թաթիկյան», «Մամուրյան», «Քեշիշյան», «Թելլալյան», «Շաքարյան» տպարանները¹⁸ և «Զարթոնք»¹⁹, «Արշալույս»²⁰, «Արարատ»²¹, «Մամուրյան»²², Գ. Ճարտարապետյանի²³ և Թոքաճյանի²⁴ գրատները:

Զմյուռնիայի Ազգային առաջնորդարանը հարուստ է եղել ազգապատկան շահութաբեր կալվածքներով: Դրանցից 25 տները, 9 խանութները, 5 մթերանոցները, 2 սրճարանները և 1 կառանատեղին զմյուռնիահայ բարերարների նվերն են եղել ազգին²⁵: 1919 թ. դրությամբ Զմյուռնիայի ազգապատկան հաստատությունների արժեքը կազմել է 250 000, իսկ շահութաբեր կալվածքներինը՝ 250 000 օսմանյան ոսկեդրամ²⁶: Հայերն անհամեմատ ավելի հարուստ են եղել, քան քաղաքում բնակվող մյուս ազգերի ներկայացուցիչները: Քաղաքի ամենաշքեղ շենքերը գտնվում էին առափնյակում՝ Ֆրանկների փողոցում: Այստեղ կառուցված ամենաշքեղ մարմարաշեն շենքը պատկանում էր Սպարտալյաններին²⁷:

Զմյուռնիայի հայերի տնտեսապես բարգավաճ վիճակը նրանց բարեկեցիկ կյանք է ապահովել, հնարավորություն տվել հիմնելու մեծ թվով կրթական, մշակութային և մարմնամարզական հաստատություններ, նպաստել գործող եկեղեցիների պայծառակերպությանը: Այս հաստատություններին անդրադարձները վկայությունն են ոչ միայն նրանց նյութական մեծ կարողությունների, այլև քաղաքակրթական բարձր մակարդակի:

Զմյուռնիայում գործել են Հայաստանյայց առաքելական եկեղեցու Սբ Ստեփանոս,

15 «Կայսերգործարան Հերեթի մասնաճիւղ Զմիւռնիայ: Յակոբ Պօսթանճեան», *Արշալույս*, 2/15 օգոստոսի, 1908, 140:

16 Խաչատուր Դադայան, *Հայոց տնտեսական ջեղասպանություն: Հայերի տնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում մինչև 1915 թ.* (Երևան, Էդիթ Պրինտ, 2016), 163:

17 «Իզմիրի կարեւորագոյն ճարտարարուեստը», *Բիւրակն* շաբաթաթերթ (Կ.Պոլիս), 3 մարտի 1907, 19/20, 465:

18 Պատասխանք Պատրիարքարանի հարցարանին, Մատենադարան, Արշակ Ալպոյաճյանի ֆոնդ, թղթ. 8, վավ. 21/3:

19 «Զարթօնք հայկական գրատան կաղանդի նուէրները», *Արեւելեան մամուլ*, 26 դեկտեմբերի 1920, 2436:

20 «Կարեւոր», *Աշխատանք*, 30 նոյեմբեր/13 դեկտեմբերի 1913, 46:

21 «Արարատ գրատուն», *Արեւելեան մամուլ*, 9 փետրվարի 1922, 2772:

22 «Մամուրեան գրատուն», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 11 հոկտեմբերի 1908, 42, 1008:

23 «Գ. Ճարտարապետեան գրատուն», *Արեւելեան մամուլ*, 5 դեկտեմբերի 1920, 2418:

24 «Գրասէր Հայերուն», *Աշխատանք*, 11/24 Յունուարի 1914, 52:

25 Սիմոնեան, *Յուշամատեն: Հայկական Զմիւռնիան*, 38-39:

26 Պատասխանք Պատրիարքարանի հարցարանին:

27 Խաչատուր Դադայան, *Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում XV դ. – 1915 թ.* (Երևան, Գասպրինտ, 2012), 63:

Սբ Լուսավորիչ, Սբ Հարություն եկեղեցիները²⁸, իսկ քաղաքի արվարձաններում՝ Գարաթաշի Սբ Կարապետ, Կյոզ Թեփեի Սբ Հոգեգալուստ, Գորտելիոյի Սբ Աստվածածին եկեղեցիները²⁹: Քաղաքի կաթոլիկ հայերը եկեղեցի են ունեցել, իսկ ավետարանականները՝ աղոթատեղի³⁰:

Զմյուռնիայի Սբ Ստեփանոսն իր վեհաշուք տեսքով, ճարտարապետական փայլուն մտահղացմամբ քաղաքի ամենագեղեցիկ եկեղեցին էր: Եվրոպացի զբոսաշրջիկները պարտադիր այցելում էին Սբ Ստեփանոս. այն ունեցել է յոթ դուռ, որոնցից գլխավորը զարդարված է եղել Անգլիայից բերված Սբ Պողոս և Սբ Պետրոս առաքյալների արձաններով: Եկեղեցու կառուցման համար հսկա գումարներ են ծախսվել: Միայն ներքին հարդարման համար օգտագործվել է «մարմարյա» կոչված հատուկ ծեփ, որի արժեքը կազմել է 6 000, իսկ եկեղեցու խաչկալները՝ գնահատվել 7 000 օսմանյան ոսկեդրամ: Դրանց վարպետը Անգլիայի թագաժառանգ Էդուարդի (հետագայում՝ Էդուարդ 7-րդ) շինարարական կառույցներում պաշտոնավարող Սեփոնիկ Պեզիրճյանն է եղել: Եկեղեցու ավանդատանը պահվում էին արծաթյա խաչեր, ճաճանչներ, 24 զույգ ոսկեզօծ սկիհներ, ոսկյա մեծ խաչ, բուրվառ, Կենաց փայտի ոսկեծույլ մասնատուփը, մարգարտաշատ թագեր, վակասներ, ոսկեթել ասեղնագործությամբ թանկարժեք հողաթափեր, շուրջատներ, անգին գորգեր, արծաթյա աղամանդակուռ մեծարժեք քահանայական սաղավարտներ և արժեքավոր ծխական այլ առարկաներ: Սբ Ստեփանոսում պահվող եկեղեցական թանկարժեք առարկաներից է եղել 250 տարի առաջ Ամստերդամի հայ ոսկերիչների՝ եկեղեցուն նվիրած 36 մոմակալներով արծաթյա 6 աշտանակները և 6 ջահերը, որոնց վրա նրբակերտ զարդեր էին պատկերված: Տաճարը զարդարել է աստվածաշնչյան Դատաստանի տեսարանը պատկերող 17-րդ դարի հայ նկարչի յուղաներկ մեծ կտավը³¹: Զմյուռնիայի մյուս հայկական եկեղեցիները նույնպես հարուստ են եղել ծխական թանկարժեք առարկաներով, տերունական տարբեր պատկերներով, ձեռագրերով և սրբերի մատուցներով:

Զմյուռնիան եղել է գրչության կենտրոն: Քաղաքում և շրջակայքում գրչագրվել և պահպանվել են 110 ձեռագրեր³²: Սբ Ստեփանոս եկեղեցու բակում է գտնվել Զմյուռնիայի հայերի գերեզմանատունը, որտեղ ամենահինը 1555 և 1567 թթ. տապանաքարերն են եղել: Մարմարակերտ արձաններ, քանդակներ, խաչքարեր, տապանաքարեր, մահարձաններ, զմյուռնիահայության պատմության մասին կարևոր քարակերտ արձանագրություններ են եղել: Այստեղ կանգնեցված է եղել Անիի

28 Ա. Խ. Մաֆրաստյան, «Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության կողմից Թուրքիայի Արդարադատության և դավանանքների մինիստրության ներկայացված հայկական եկեղեցիների և վանքերի ցուցակները և թաքրիքները», *Էջմիածին ամսագիր* (Էջմիածին), 1966, է, 58:

29 Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հօտին աղէտայի 1915 տարիին*, խմբ.՝ Արայ Գալպանեան (Նի Շորք, St. Vartan Press, 1985), 337:

30 Ծոցիկեան, *Արեւմտահայ աշխարհ*, 211:

31 Գալուստեան, *Զմյուռնիա եւ Զմյուռնիոյ հայ գաղութը*, 317, 319-321:

32 Անահիտ Ասատրյան, «Հայկական Զմյուռնիա. ձեռագրական ժառանգությունը», *Բանբեր Մատենադարանի, տարեգիրք* 22 (2015), 517-536:

ավերակներից 1853 թ. բերված հրաշակերտ մի խաչքար³³: Սբ Ստեփանոս եկեղեցու պարտեզի գերեզմանատնից բացի՝ հայերն ունեցել են նոր գերեզմանատուն, որտեղ եղել են թանկարժեք շիրմաքարեր, բարձրարվեստ մարմարյա մահարձաններ³⁴: Գերեզմանատան կարգուկանոնը պահպանելու համար գործել է հատուկ հանձնաժողով³⁵:

Կ.Պոլսի Ազգային կեդրոնական վարչության Ոսումնական խորհրդի 1901 թ. հրատարակած վիճակացույցի համաձայն՝ Չմյուռնիայում գործել են ազգային 10 և Մխիթարյան միաբանության 2 կրթական հաստատություններ³⁶: Հետագայում հայ մեծահարուստների և բարեգործական ընկերությունների սախաձեռնությամբ և նրանց նյութական միջոցներով բացվել են կրթական նոր հաստատություններ՝ Չաքրյան, Պաքրճյան և Աշխատասիրաց ընկերության մանկապարտեզներ³⁷, «Արդի դպրոց» հայ աղջկանց գիշերօթիկ և ցերեկային վարժարան³⁸, Պոյաճյան վարժարանը, որն իր աշակերտներին տարբեր լեզուներ և առևտրական գիտելիքներ է ուսուցանել³⁹, Լեզվագիտական վարժարանը, որտեղ ֆրանսերեն, անգլերեն, գերմաներեն, իտալերեն, հունարեն են դասավանդել լեզվակիրները⁴⁰: Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցության միջոցներով գործել են երեկոյան և կիրակնօրյա վարժարանները⁴¹: Քաղաքում հաստատված են եղել Հոգատար որբախնամ ընկերության⁴², Ազգային աղջկանց⁴³ և Ազգային կեդրոնական⁴⁴ որբանոցները: Չմյուռնիայի վարժարաններն ունեցել են հարուստ գրադարաններ և ուսումնական գույք: Մեսրոպյան վարժարանի թանգարանում պահվել են տարբեր քանդակներ, գեղանկարներ, բնագիտական հավաքածուներ, հայերեն և օտար լեզուներով 2 000 հազվագյուտ գրքեր, հնագույն դրամներ, հնագիտական իրեր և թանգարանային այլ առարկաներ⁴⁵:

Չմյուռնիահայությունն առանձնակի հոգատարությամբ է վերաբերվել կրթական

33 Հ. Յակոբ վ. Քոսեան, *Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս*, հատոր Ա., Զմիռնիա եւ Հայք (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1899), 58-78:

34 Սիմոնեան, *Յուշամատենան: Հայկական Զմիռնիան*, 22:

35 «Պաշտօնական ազդ գերեզմանատան հոգաբարձութեան», *Արեւելեան մամուլ*, 20 դեկտեմբերի 1921, 2736:

36 «Վիճակացոյց Ազգային վարժարանաց Թ-ուրքիոյ», տետր Ա (Կ.Պոլիս, Յ. Մատթէոսեան, 1901), 6-րդ աղյուսակ:

37 Սուրեն Պարթեւեան, «Զմիռնիահայ կրթական հարկեր, Պաքրճեան Ազգ. մանկապատեզը», *Զմիռնիահայ տարեցոյցը* տարեգիրք, Ա տարի (Իզմիր, 1920), 72-73:

38 «Արդի դպրոց» Հայ վարժարան աղջկանց գիշերօթիկ եւ ցերեկային», *Աշխատանք*, 13/26 սեպտեմբերի 1914, 87:

39 «Պոյաճեան վարժարան», *Աշխատանք*, 12/25 հունիսի 1914, 78:

40 «Լեզուագիտական վարժարան», *Դաշինք* օրաթերթ (Իզմիր), 8/21 հոկտեմբերի 1913, 1276:

41 «Գիշերային վարժարան Երիտաս. Քրիստ. ընկերակցութեան», *Դաշինք*, 6/19 հոկտեմբերի 1913, 1275:

42 «Ազգային անցուդարձ», *Արեւելեան մամուլ*, 26 հուլիսի 1920, 2287:

43 «Ազգային որբանոց», *Արեւելեան մամուլ*, 30 դեկտեմբերի 1920, 2439:

44 «Նուիրտությունը Ազգ. Կեդր. որբանոցի», *Արեւելեան մամուլ*, 30 ապրիլի 1921, 2538:

45 Քոսեան, *Հայք ի Զմիռնիա եւ ի շրջակայս*, 130-134:

հաստատություններին՝ մեծ գումարներ տրամադրելով կրթական մակարդակի բարձրացման գործին: Պետրոս Պագրճյանը նոր մանկապարտեզի շինարարության համար տրամադրել է 1 000 օսմանյան ոսկեդրամ⁴⁶, իսկ Նազարեթ Պագրճյանի՝ ազգին նվիրած 6 շահութաբեր կավածքներն ազգային գանձանակին տարեկան 140 օսմանյան ոսկեդրամ հատույթ են ապահովել: Ըստ կտակի՝ այդ գումարները պետք է ուղղվեին կրթական նպատակներին⁴⁷: 1909 թ. օգոստոսին Ջմյունիայի Քաղաքական ժողովի և Ոսումնական խորհրդի համատեղ ժողովում որոշում է կայացվում ամեն տարի լավագույն սանուհուն ուղարկել եվրոպական համալսարաններից մեկում մանկավարժություն ուսանելու⁴⁸: Քաղաքի ոսումնական հաստատությունների տիկնանց խնամակալությունները ջանում էին իրենց նպաստը բերել նոր սերնդի կրթական մակարդակի բարձրացման գործին⁴⁹: Վարժարանների բարեկարգիչ հանձնաժողովները զբաղվում էին կրթական հաստատությունների բարեկարգման աշխատանքներով⁵⁰:

Սբ Լուսավորչյան հիվանդանոցը Ջմյունիայի հայության բարեգործ ոգու մարմնացումն էր⁵¹: 1879 թ. Հակոբ և Հովհաննես Սպարտալյանների նյութական միջոցներով կառուցվում է մեծ պարտեզով շրջապատված Սբ Լուսավորչյան հիվանդանոցի քարաշեն, եռահարկ, 40 լուսավոր սենյակներ ունեցող շենքը: Կառուցվում են նաև հարակից շինություններ՝ սեղանատան, վիրաբուժարանի, բաղնիքի, մառանի, խոհանոցի, տեսչարանի, հոգեբուժարանի ու անկելանոցի առանձին շենքերը և սպասավորների համար հատուկ սենյակներ: Հիվանդանոցի մուտքի մոտ կանգնեցված են եղել ազգային բարերարներ Հակոբ և Հովհաննես Սպարտալյանների արձանները⁵²: Հիվանդանոցը գտնվել է զմյունիահայության հոգածության ներքո: Քաղաքի հայկական թերթերը մշտապես տեղեկացրել են Սբ Լուսավորչյան հիվանդանոցին բարեպաշտ ժողովրդի նվիրատվությունների մասին:

19-րդ դարակեսից Ջմյունիայում գործել են բարեսիրական և կրթամշակութային բազմաթիվ ընկերություններ և միություններ, որոնք հավաքական ուժերով նպաստել են ազգային տարբեր նպատակների իրագործմանը. հիմնել են կրթական հաստատություններ, լսարաններ, ընթերցասրահներ, հոգացել տարբեր ծախսեր, խնամել աղքատներին, որբերին և կարոտյալներին: 1908 թվականից հետո այդ ընկերությունների թիվը զգալիորեն ավելանում է (Ռրբախնամ տիկնանց հանձնախումբը, «Արտավազդ» թատերական, «Վարագ» երաժշտական, Ազգանվեր հայուհյաց,

46 Միմոնեան, *Յուշամատենան: Հայկական Ջմյունիան*, 21-22:

47 «Եօթենկի լուրեր», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 24 փետրվարի 1909, 9, 216:

48 «Եօթենկի լուրեր», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 11 օգոստոսի 1909, 33, 792:

49 «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 3/21 հունվարի 1914, 1363: Տե՛ս նաև «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 11-29 հունվարի 1914, 1370:

50 «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 10-28 հունվարի 1914, 1369:

51 Ա. Տիվրիկեան, «Տեղեկագիր յանձնաժողովոյ», *Արեւելեան մամուլ* կիսամսեայ հանդէս (Իզմիր), 15 ապրիլ 1902, 8, 379:

52 Միմոնեան, *Յուշամատենան: Հայկական Ջմյունիան*, 20-21:

Դպրոցասիրաց ընկերությունները⁵³: Արևմտահայ ամենախոշոր բարեգործական հաստատությունները՝ Հայոց միացյալ ընկերությունը⁵⁴ և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը⁵⁵ մասնաճյուղ են հիմնում Չմյուռնիայում: Քաղաքում գործել են «Վասպուրական», «Վարդանյան», «Սահակյան» մարմնամարզական և Օսմանյան հայ որսորդաց ակումբները⁵⁶: «Հայ կարմիր խաչ»-ն ունեցել է երկու մասնաճյուղ⁵⁷: Քաղաքի ազգային կյանքին գործուն մասնակցություն են բերում Կրթասիրաց⁵⁸, Հռիփսիմյան ընկերասիրական⁵⁹, Մեսրոպյան ընկերասիրաց⁶⁰, Ուսումնասիրաց⁶¹ ընկերությունները, Երիտասարդաց քրիստոնեական ընկերակցությունը⁶², Հայ սպայից միությունը⁶³ և Հայկական միությունը⁶⁴: Արհեստակից անդամների շահերի պաշտպանության նպատակով ստեղծվում են Պաշտոնեից⁶⁵, Կոշկակար գործավորների⁶⁶ և Հայ արհեստավորների⁶⁷ ընկերությունները: Քաղաքի «Զարթոնք» լսարանական ընկերության⁶⁸, «Կիլիկիա»⁶⁹ «Հայ ժողովրդի տան»⁷⁰, Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության⁷¹, Օսմանյան հայ որսորդաց⁷², Մեսրոպյան վարժարանին կից

53 Այսպ Գրիգորյան, Վաչիկ Բրուտյան, *Չմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* (Երևան, Իրավունք, 2007), 44-53:

54 Ս. Ամատեան, «Միացեալ ընկերութիւնը Իզմիրի մէջ», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ (Իզմիր), 16 սեպտեմբերի 1908, 38, 895:

55 «Լրաքաղ», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 9 սեպտեմբերի 1909, 37, 887-888:

56 Հայկ Դեմոյան, *Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2009), 55:

57 «Հ. Կ. Խաչ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 1 դեկտեմբերի 1920, 2414:

58 «Ազգային անցուղարձ», *Դաշինք*, 6/19 փետրվարի 1914, 1377:

59 «Նուագահանդես եւ ցերեկոյթ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 31 դեկտեմբերի, 1920, 2440:

60 «Մեսր. ընկերասիրացի հանդէսը», *Աշխատանք*, 8/21 փետրվարի 1914, 56:

61 «Եօթնեկի լուրեր», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 6 հունվարի 1909, 2, 47:

62 «Ե. Բ. Ընկերակցութիւն», *Դաշինք*, 11/24 հունվարի 1914, 1355:

63 «Նուիրտութիւնը Ազգ. Կեդր. որբանոցի», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 30 ապրիլի 1921, 2538:

64 Սուրէն Պարթեւեան, «Չմիտնիահայ դիմաստուները Արամ Թ-ահտաճեան», *Չմիտնիահայ տարեցոյցը*, Ա տարի, տարեգիրք (Իզմիր, Մամուրեան, 1920), 103:

65 Գրիգորյան, Բրուտյան, *Չմյուռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր*, 44-53:

66 «Տեղական լուրեր», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 8 սեպտեմբերի 1921, 2648:

67 «Հրաւեր Հայ արհեստատրներուն», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 10 դեկտեմբերի 1920, 2422:

68 «Զարթոնք լւ. միութեան դասախօսութեան մէջ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 20 դեկտեմբերի 1921, 2736:

69 «Դասախօսութիւն Կիլիկ. ակումբի մէջ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 11 օգոստոսի 1921, 2624:

70 «Յայտարարութիւն», *Աշխատանք*, 22 հունիսի /5 հուլիսի, 1913, 1:

71 «Հայ Սահմ.-Ռամկավար կուսակցութեան ակումբ», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 13 հունվարի 1909, 3, 72:

72 «Ազդ», *Աշխատանք*, 6/19 սեպտեմբերի 1914, 86:

գործող Մեսրոպյան ընկերասիրաց, Մեսրոպյան մարմնամարզական⁷³ ակումբներում պարբերաբար տեղի էին ունենում տարբեր թեմաներով բանախոսություններ:

Եղեռնը վերապրած հայ տարագիրները 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո վերադառնում են իրենց բնակավայրերը: Զմյուռնիայում հիմնված Տարագրելոց հանձնաժողովի նպատակն է եղել լուծել տարագրյալների բազմաթիվ խնդիրները⁷⁴: Աղքատախնամ ընկերությունը մեծ ջանքեր է գործադրել գավառներից Զմյուռնիա հասած գաղթականության բազում կարիքները հոգալու համար: Զմյուռնիայի աղետից առաջ գաղթականության հաշվին քաղաքի հայ բնակչության թիվը հասել էր 30 000-ի⁷⁵: 1918 թվականից հետո Զմյուռնիայում գործում են Հայ մարմնակրթական ընդհանուր միությունը և Հայ բոյ-սկաուտների միությունը, որոնք 1922 թ. միավորվում են⁷⁶: Հայ սկաուտները 1921⁷⁷ և 1922⁷⁸ թթ. Զմյուռնիայում օլիմպիական խաղեր են կազմակերպում: Կ.Պոլսում տեղի ունեցած հայկական օլիմպիական խաղերին մասնակցել են նաև զմյուռնիահայ մարզիկներ⁷⁹:

1861 թ. հիմնվում է Զմյուռնիայի Վասպուրական միության «Վասպուրական» թատրոնը, որ ներկայանալի թատերասրահ և բեմական հարմարություններ է ունեցել: Ներկայացումներով հանդես են եկել Կ.Պոլսի հայկական և արտասահմանից ժամանած տարբեր թատերախմբեր և երաժշտախմբեր⁸⁰: «Աստղ» կինոթատրոնի դահլիճում պարբերաբար ներկայացումներ են տեղի ունեցել⁸¹: Հայ ակումբն ունեցել է նվագախումբ⁸² և թատերախումբ⁸³, Քնար երաժշտասիրաց ընկերությունը՝ փողային նվագախումբ⁸⁴, Վարդանյան ուսումնասիրաց միությունը՝ երաժշտախումբ⁸⁵ և թատերախումբ⁸⁶, Հռիփսիմյան վարժարանը՝ 100 հոգուց բաղկացած երգչախումբ և թատերախումբ⁸⁷:

73 «Իզմիրի Հայոց երախտագիտական աննման ցոյցը ի պատիւ Սահմանադրութեան», *Արեւելեան մամուլ* շաբաթաթերթ, 29 հուլիսի 1908, 31, 735:

74 «Ազդ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 2 դեկտեմբերի 1920, 2415:

75 «Աղքատախնամին», *Արշալոյս* շաբաթաթերթ (Իզմիր), 5/18 հունուարի 1911, 624:

76 «Իզմիրի Հայ Պոյ-Սկաուտներու միացումը Հ. Մ. Ը. Մ. հետ», *Հայ սկաուտ* կիսամսեայ հանդէս (Կ.Պոլիս), 1 փետրվարի 1922, 13, 206:

77 «Սկաուտիզմը Իզմիրի մէջ: Հայ սկաուտական Ա. ողիմպիականը», *Պատրաստ* կիսամսեայ հանդէս, (Իզմիր), 13 նոյեմբերի, 1921, 2:

78 «Իզմիրի Ողիմպիականները (1922 շրջան)», *Պատրաստ*, 20 օգոստոսի, 1922, 22:

79 «Կ.Պոլսոյ Ընդ. Ողիմպիականին Իզմիրի ներկայացուցիչը», *Պատրաստ*, 23 հուլիսի, 1922, 20:

80 Յ. Ճ. Սիրունի, *Պոլիս եւ իր դերը*, հ.Գ (Անթիլիաս, Կաթողիկոսութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ, 1987), 387-388:

81 «Սինեմա «Աստղ»», *Աշխատանք*, 21 դեկտեմբերի /3 հունվարի 1914, 49:

82 «Նուագահանդէս-պարահանդէս», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 5 փետրվարի 1922, 2775:

83 «Թատերական շքեղ ներկայացում», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 5 փետրվարի 1921, 2538:

84 «Սինեմա «Աստղ» (Գետեզերք)», *Աշխատանք*, 14/27 դեկտեմբերի 1913, 48:

85 «Գարաթաշի դաշտահանդէսը», *Աշխատանք*, 4/17 սեպտեմբերի 1913, 22:

86 «Ազգային», *Աշխատանք*, 14/27 դեկտեմբերի 1914, 48:

87 «Ազգային անցուդարձ», *Դաշինք*, 15/28 փետրվարի 1914, 1384:

1880 թ. հայտնի մանկավարժ Հ. Աբազյանի ստեղծած գրադարանն ունեցել է 15 000 գիրք և թերթերի մեծ հավաքածու⁸⁸: «Հայ ժողովրդի տուն»⁸⁹, Հայ ուսանողական⁹⁰ և Հայ ընթերցասիրաց⁹¹ միությունների և ՀՅԴ կուսակցության⁹² ընթերցասրահները հարուստ են եղել բազմալեզու գրքերով: Զմյուռնիայի ազգային առաջնորդարանում գործել են ազգային վարչական մարմիններ՝ գավառական, երեսփոխանական, քաղաքական, կրոնական ժողովներ, տնտեսական, ուսումնական, դատաստանական, թաղական խորհուրդներ⁹³: Այս վարչական մարմինները, ինչպես նաև քաղաքում գործող միություններն ու ընկերություններն ունեցել են իրենց դրամազույլը, շենքերը, գույքը, շահութաբեր կալվածքները: Այսպես, օրինակ, «Հայ ժողովրդի տուն»-ն ունեցել է իր սեփական շենքն ու կարասիները⁹⁴: Հոգատար որբախնամ ընկերությունն իր նյութական միջոցներով որբանոց է պահել⁹⁵, իսկ Երիտասարդաց օրիորդաց քրիստոնեական միությունը՝ կարի արհեստանոց⁹⁶: Վերը հիշատակված հաստատությունների ողջ ունեցվածքը 1922 թ. դառնում է թուրքերի ավարը:

Թուրքական իշխանություններին անհանգստացնում էր հայերի տնտեսական հզորացումը: Նրանց նյութապես և տնտեսապես թուլացնելու թուրքական իշխանությունների միջոցներից մեկը տնտեսական բոյկոտն է լինում, իսկ մյուսը՝ հրդեհները, որոնք համակարգված կերպով են տեղի ունենում⁹⁷: 1914 թ. առաջին ամիսներին երկրով մեկ քրիստոնյաների դեմ տնտեսական բոյկոտ է սկսվում⁹⁸: Մարտ ամսին Այդընի նահանգի հայ և հույն առևտրականների և երկրագործների դեմ բոյկոտն էլ ավելի է սաստկանում⁹⁹: Այն ծանր հետևանքներ է ունենում քրիստոնյա տնտեսավարողների համար և դառնում բախումների, ձեռքակալությունների և սպանությունների պատճառ¹⁰⁰, որոնք նահանգի փոխկառավարիչն էր գլխավորում: Նա տեղի պաշտոնյաների հետ գաղտնի հանձնաժողով է կազմում, որն ավելի քան

88 Զաքարիա Միրզանօղլու, «Գյավուր Զմյուռնիայի հայերը», <https://akunq.net/am/?p=26948>, դիտվել է՝ 12.09.2022:

89 «Ընթերցարան», *Աշխատանք*, 8/21 փետրվարի 1914, 60:

90 «Ազգային», *Աշխատանք*, 1/14 փետրվարի 1914, 55:

91 «Ազգային», *Աշխատանք*, 4/17 հունվարի 1914, 51:

92 «Հ. Յ. Դաշնակցության խմբատեղոյն բացման առթիւ Թ. Պոյաճեանի արտասանած ճառը, *Արեւելեան մամուլ շաբաթաթերթ*, 4 նոյեմբերի 1908, 45, 1072:

93 Նույն տեղում, 791:

94 «Ազգային», *Աշխատանք*, 5/23 սեպտեմբերի 1914, 84:

95 «Ազգային», *Աշխատանք*, 2/19 մայիսի 1914, 66:

96 «Ազդ», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 1 ապրիլի 1920, 2207:

97 Գուժկան Սեբաստիոյ (Կ. Գաբրիկեան), *Եղեռնասպանում Փոքրոն Հայոց եւ Նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* (Պոսթըն, Հայրենիք, 1924), 23:

98 «Առևտրական պայքարը Հայերու դեմ», *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 16 փետրվարի / 1 մարտի 1914, 1440:

99 Թ-դթակից, «Թ-դթակցութիւններ», *Աշխատանք*, 7/22 մարտի 1914, 58:

100 «Տեղական լուրեր», *Դաշինք*, 10/25 փետրվարի 1914, 1391:

70 վարձկաններով համակարգում է բոլոսը¹⁰¹: Թե՛ մայրաքաղաքի, թե՛ Չմյուռնիայի և թե՛ գավառական թուրքական թերթերը միաբերան պնդում էին, որ տեղի ունեցողը բնավ քրիստոնյաների դեմ տնտեսական բոլոս չէ, այլ մահմեդականների տնտեսական զարգացման համար ձեռք առնված միջոց¹⁰²: Այս միջոցառումները 1910 թ. կեսերից Փոքր Ասիայում երիտթուրքական իշխանությունների սկսած թուրքացման քաղաքականության դրսևորումներից են¹⁰³: Մահմեդական առևտրականներին աջակցելու, երկրի հարստությունը և առևտուրը թուրքերի ձեռքը կենտրոնացնելու երիտթուրքական իշխանությունների այս միջոցառումներն արդյունք չէին կարող տալ, քանի որ քրիստոնյա և մահմեդական առևտրականներին, արհեստավորներին ու արդյունաբերողներին հսկա անդունդ էր բաժանում: Գրիգոր Զոհրապը 1913 թ. կարծիք է հայտնում, որ թուրքական կառավարության ոչ մի աջակցություն չի կարող մահմեդականների համար կյանքի մակարդակի բարձրացում ապահովել, որին քրիստոնյաներն անդուլ աշխատանքի շնորհիվ էին հասել, ուստի քրիստոնյա տարրի տնտեսական գործունեությունը կասեցնելու համար թուրքական իշխանությունները զանգվածային կոտորածների կոչվեցին և/կամ ունեցվածքը բռնագավթելու համար կստիպեն լքել երկիրը¹⁰⁴:

Առաջին աշխարհամարտը երկրի տնտեսությունը թուրքացնելու, Փոքր Ասիան ոչ մահմեդական տարրից, հատկապես արևելյան նահանգներում մեծամասնություն կազմող հայերից ձեռքազատվելու հնարավորություն է տալիս¹⁰⁵:

1915 թ. Չմյուռնիայի հայերը գերծ են մնում զանգվածային տեղահանությունից և կոտորածներից, քանի որ հույների հետ մեծ կաշառքներ էին տալիս նահանգի կառավարիչ Ռահմի բեյին¹⁰⁶: Չմյուռնիայի Ազգային առաջնորդարանը, 1919 թ. Կ.Պոլսի հայոց պատրիարքության հարցարանին ի պատասխան, տեղեկացնում է, որ 1915-1916 թթ. մասնակի տեղահանություններ են տեղի ունեցել Չմյուռնիայում և Այդընի նահանգի մյուս հայաբնակ վայրերում՝ Գըրքադաճում, Էռդեմիշում, Դենիզլիում, Պերգամայի շրջանում, իսկ Գուշ-Ատայի հայ բնակչությունն ամբողջովին տեղահանվել է: Տեղահանվածների մեծ մասն արքայազն էր Դեր Զոր, իսկ «լքյալ» գույքը՝ վաճառվել և տրվել մահմեդականներին: Պատերազմի շրջանում կառավարությունը բռնագրավում է Չմյուռնիայի Շահին խանի ախոռը, Սբ Լուսավորչյան հիվանդանոցը և Կրթասիրաց ընկերության մանկապարտեզը: Վերջին երկուսը զինադադարից հետո վերադարձվում են Չմյուռնիահայությանը, սակայն ավերակ վիճակում: Թուրքերը

101 Մեղրունի, «Չազրեղի ոճիր մը ես (Արդինք ապուշ պոյթթի)», *Աշխատանք*, 2/19 մայիսի 1914, 66:

102 Աւօ, «Պօթթթթթ», *Դաշինք*, 14 մարտի 1914, 1395:

103 Նևգաթ Օզյուն, «Թուրք ազգայնականության «արյունոտ» տնտեսական քաղաքականությունը» (Նևգաթ Օսարանի “Emval-i metruke olayi, Osmanli’da ve Cumhuriyette Ermeni ve Rum Mallarinin Türkleştirilmesi” գրքի գրախոսականը), <http://akunq.net/am/?p=3874>, դիտվել է՝ 06.08.2022:

104 Գրիգոր Զոհրապ, *Հայկական հարցը փաստաթղթերու լղյախն տակ*, Երկերի ժողովածու, հ. Գ, (Երեւան, Գրականության և արվեստի թանգարան, 2002), 531-532:

105 Արմէն Քիրքճեան, «Թուրքերուն՝ Թուրքիան թրքացնելու քաղաքականութիւնը», <https://akunq.net/am/?p=15644>, դիտվել է՝ 25.06.2022:

106 Արշակ Ալպոյաճեան, *Յուշամասուն Կուտինահայերու* (Պէյրոս, Տօսիկեան, 1961), 228:

Գուշ-Ատայի Սբ Աստվածածին եկեղեցին կողոպտելուց հետո այրում են. միայն շենքի արժեքը կազմում էր 5 000 օսմանյան ոսկեդրամ: Զինվորական իշխանությունները Մանիսայի Լուսավորչյան-Գայանյան վարժարանը և Մենեշմեի Սբ Սարգիս եկեղեցին որպես զորանոց ծառայեցնելուց հետո այրում են¹⁰⁷:

Մուստաֆա Քեմալի ղեկավարած ազգայնական շարժման տարիներին շարունակվում է վերապրած հայության դեմ երիտթուրքերի վարած բռնի տեղահանության, կոտորածի և կողոպուտի քաղաքականությունը¹⁰⁸: Ինչպես 1915 թ., այնպես էլ քեմալական շարժման տարիներին վերապրած 20-50 տարեկան հայ տղամարդիկ բռնությամբ գորակոչվում էին բանակ և բանվորական վաշտերում տաժանակիր աշխատանքներ կատարելուց հետո սպանվում: 20 տարեկանից ցածր և 50-ից բարձր տարիքի տղամարդիկ բռնի տեղահանվում են¹⁰⁹: Քեմալականները, հետևելով երիտթուրքերի գործելակերպին, քրիստոնյաներին տեղահանելուց և կոտորելուց հետո հրկիզում էին նրանց բնակավայրերը¹¹⁰: Ըստ թուրք հեղինակներ Թայան Էսինի և Չելիհա Էթոզի՝ հրդեհները հայերին և հույներին երկրից վտարելու, նրանց վերադարձը խոչընդոտելու, կողոպուտի հետքերը վերացնելու ծրագրի մի մասն են կազմել և եղել են Հայոց ցեղասպանությունն ամբողջացնող տարր¹¹¹: Եվրոպական թերթերը մշտապես տեղեկացնում էին Փոքր Ասիայում քեմալականների կատարած եղեռնագործությունների մասին: «Daily Telegraph» պարբերականը, հենվելով ամերիկացի միսիոներների և չեզոք, անկողմնակալ անձանց վկայությունների վրա, հայտնում է, որ քեմալականների կատարած եղեռնագործությունները գերազանցում են 1915 թ. կոտորածները: Դրանք տեղի էին ունենում համակարգված կերպով, իսկ տարագրությունները շարունակվում և ընդարձակվում էին քեմալականների ենթակայության տակ գտնվող ողջ տարածքում: Իսկ այդ ամենի նպատակը երկրի քրիստոնյա ազգերի բնաջնջումն էր¹¹²:

1922 թ. ամռանը քեմալականներն ավարտին են հասցնում 1915 թ. տեղահանություններից և կոտորածներից զերծ մնացած, տնտեսական կարևորություն ունեցող Քյութահիայի գավառի հայաթափման գործը և յուրացնում տարածաշրջանի տնտեսությունն իրենց ձեռքում պահող հայերի ողջ ունեցվածքը¹¹³:

Զմյուռնիան և Կ.Պոլիսը 1915 թ. արհավիրքներից զերծ էին մնացել: Թեև քե-

107 Պատասխանք Պատրիարքարանի հարցարանին:

108 Անահիտ Աստոյան, *Դարի կողոպուտը. հայերի ունեզրկումը Օսմանյան կայսրությունում 1914-1923 թթ.* (Երևան, Մատենադարան, 2013), 114:

109 Արշակ Ալայոյաճեան, «Հայ ազգը 1921ին», *Վերջին լուր* օրաթերթ (Կ.Պոլիս), 17 հունուար 1922, 2077:

110 «Երկու հայ գյուղեր հրկիզուած», *Երկիր* օրաթերթ (Կ.Պոլիս), 7 հոկտեմբերի 1920, 321: Տե՛ս նաև «Զենկիլեր հրկիզուած», *Հայաստանի կոչնակ* շաբաթաթերթ (Նիո Եորք), 21 մայիսի 1921, 21:

111 Ֆերդա Բալանջար, ««Հրդեհը» որպես ցեղասպանությունն ամբողջացնող տարր», <http://akunq.net/am/?p=43523>, դիտվել է՝ 30.08.2022:

112 «Սարսափելի յայտնություններ քեմալական նոր խժոժութեանց մասին», *Արեւելեան մամուլ* օրաթերթ, 17 մայիսի 1922, 2857:

113 Անահիտ Աստոյան, *Բուրսայի նահանգի հայության տնտեսական վիճակը և կյուրական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին* (Երևան, Գիտություն, 2017), 255, 259, 270-271:

մալականները Կ.Պոլսի հայերին չեն տեղահանում, սակայն 1922-1923 թթ. նրանց ունեգրկելու գործընթաց են սկսում¹¹⁴, որն իր ավարտին պետք է հասներ 1942 թ. նոյեմբերի 11-ին Թուրքիայի Հանրապետության Ազգային մեծ ժողովի «Ունևորության տուրքի մասին» օրենքի ընդունմամբ: Դրա կիրարկումը հանրապետական իշխանություններին հնարավորություն է տալիս տիրանալու պոլսահայերի՝ աչքի զարնող հարստությանը¹¹⁵:

1922 թ. սեպտեմբերի 9-ին քեմալական զորքերը մտնում են Զմյուռնիա, գրավում ռազմական նշանակություն ունեցող օբյեկտները, քարափները և քաղաք տանող բոլոր ճանապարհները. այդ ամենին հաջորդում է Քեմալի մուտքը քաղաք¹¹⁶: Քեմալականների՝ քաղաք մտնելուց քառորդ ժամ անց խուժանը, կանոնավոր զորքի առաջնորդությամբ, կողոպտում է շուկան՝ ողջ հարստությունը թուրքական թաղամասեր տեղափոխելով: Այնուհետև սկսվում է հայ և հույն խաղաղ բնակչության կոտորածն ու ունեցվածքի կողոպուտը¹¹⁷: «Լամարթին» և «Սերոս» շոգենավերով Զմյուռնիայից մեկնող ուղևորների պատմածների համաձայն՝ թուրքերն իրենց մոլեգնությունն առաջին հերթին թափում են հայկական թաղի վրա. քաղաքի հրդեհն այստեղից է ծայր առնում և ամենասարսափելի բռնություններն այստեղ են կատարվում: «Daily Telegraph» և «Chicago Tribune» թերթերի թղթակիցների վկայության համաձայն՝ թուրքերը հայկական բոլոր տները և խանութները կողոպտելուց հետո թաղը կրակի են տալիս¹¹⁸: 1922 թ. սեպտեմբերի 20-ին Աթենքի «Christian Science Monitor» լրատվական գործակալությունը հայտնում է, որ Քեմալը Զմյուռնիան հրդեհելուց առաջ կողոպտել է տվել քաղաքի պահեստները, խանութներն ու տները: Նրա հրամանով՝ 200 000 000 անգլիական ոսկի արժողությամբ ավարն Անկարա է տեղափոխվել¹¹⁹: Անգլիական պաշտոնական տեղեկագրերի համաձայն՝ թուրքական գրավումից հինգ օր անց, բացի թուրքական թաղերից, քաղաքի մնացած թաղերը մոխրի են վերածվում¹²⁰: Ըստ ԱՄՆ և դաշնակից պետությունների հյուպատոսների հայտնած տեղեկությունների՝ առավել մեծ կորուստներ կրել է հայկական թաղը¹²¹: Մի քանի օրվա ընթացքում Զմյուռնիայում ընդհանուր առմամբ մոխրակույտի են վերածվել ավելի քան 50 000 տուն, 21 եկեղեցի, 28 վարժարան, 5 հյուպատոսարան, 7 ակումբ, 5 դրամատուն¹²²:

114 Աստոյան, *Դարի կողոպուտը*, 122-126:

115 Ռուբեն Մելքոնյան, «Ունեցվածքի հարկը» կամ տնտեսության թուրքացման քաղաքականությունը հանրապետական Թուրքիայում», *Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ* հանդես (Երևան, 2008), 127-143:

116 «Ինչպե՞ս մտան թուրքերը Իզմիր: Քրիստոնեայ բնակչությունը փախած է: Մուստաֆա Քեմալի Իզմիր ժամանումը», *Վերջին լուր*, 11 սեպտեմբերի 1922, 2590:

117 «Նոր մանրամասնություններ Իզմիրի աղետին շուրջ», *Երկիր*, 19 սեպտեմբերի 1922, 835:

118 «Իզմիրի ահաոր եղեռնը: Նախ կողոպուտ եւ յետոյ ջարդ եւ հրդեհ: Թուրքեր յարձակուած են Հայոց թաղի վրայ», *Վերջին լուր*, 19 սեպտեմբերի, 1922, 2597:

119 «Թուրքեր՝ հրդեհել է առաջ թալանած են Իզմիրը», *Հայաստանի կոչնակ* (1922), 39, 1282:

120 «20 000 տուն այրեր է Իզմիրը», *Վերջին լուր*, 18 սեպտեմբերի, 1922, 2596:

121 «Օգնութեան գործը Իզմիրի մէջ», *Ճակատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 24 սեպտեմբերի 1922, 2997:

122 «Զմիւռնիահայ կեանքը զինաղաղարէն յետոյ: Ահաոր փլուզումը», *Նոր օր* (Աթէնք), 1924, 38:

Կ.Պոլսում հրատարակվող թուրքական «Իլերի» պարբերականի խմբագրապետը, Զմյուռնիայի աղետից հետո լինելով քաղաքում, ընթերցողներին տեղեկացնում է, որ որոշում է կայացվել Զմյուռնիայից մեկնող հայերից և հույներից մնացած ապրանքները ցուցակագրել և փոխանցել բանակին: Իսկ Զմյուռնիայի մաքսատանը կատարված քննության համաձայն՝ քաղաքում 500 000 ոսկեդրամի արժողությամբ անտեր ապրանք է մնացած եղել¹²³: Թուրքական «Վաթան» թերթի 1923 թ. հուլիսյան համարներից մեկը տեղեկացնում է, որ մեծ հարստության տիրանալու հույսով թուրքերը շտապով գնում էին Զմյուռնիա: Շատ այգիներ, որոնք պատկանում էին քրիստոնյաներին, անցնում են թուրքերին և անմշակ մնում: Երկրագործության նախարարը հանդիմանական գրություն է հրատարակում, որտեղ սպառնում է հետ վերցնել այգիները, եթե չմշակվեն: Խաղողի և թզի բերքը ողբալի վիճակում է եղել: Երկու հայ վաճառականներ, որ թզի և խաղողի արտահանմամբ էին զբաղվում՝ փախել էին երկրից: Թուրքերը փորձում են համոզել, որ վերադառնան, սակայն այն թուրք վաճառականները, որոնք ցանկանում էին առանց մրցակցության տեր դառնալ առևտրական շուկային, արգելք են լինում նրանց վերադարձին¹²⁴:

Զմյուռնիայի հայերի նյութական կորուստների մասին մտավոր պատկերացում կազմելու համար ներկայացնենք մեկ անձի և մեկ առևտրական հաստատության մասին տվյալներ: Նշանավոր բանասեր և մատենագետ Տրդատ եպիսկոպոս Պալյանը Զմյուռնիայի աղետի օրերին եղել է քաղաքում և ապրածի մասին իր սան Վահան Իսպերջյանին ուղղած նամակում գրել հետևյալը. «Ես 1922 Մեպտեմբեր ամսոյ սկիզբները, Մաղնիսայէն Իզմիր իջած էի եղբօրս մէկ տունը բնակելու համար, կարծելով թէ Մուսթաֆա Քէմալը հոն գալու իսկ ըլլայ, Իզմիրի մէջ որեւէ դէպք չը պատահիր ու հանգիստ ժամանակ կ'անցընենք, բայց դժբախտաբար մեր մտածումը պարապի ելաւ. Մուստաֆա Քէմալի եւ իր անօրէն զօրքերու վայրագութեան միջոցաւ ամենամեծ հալածումի, կողոպուտի ենթարկուեցայ, ինչպէս նաեւ բոլոր Հայերը. Իզմիրի մէջ տատապանքը մեծ էր, ամբողջ Հայոց թաղը կրակի տուին Քէմալի զօրքերը, կարգը երբ մեր թաղին եկաւ, ինչպէս ուրիշ տուներու կ'ընէին, երեք չորս օթոմոպիլ բերին տունիս առջեւ, եւ իմ ամբողջ գոյքերս զորս բերած էի Մաղնիսայէն, դրամներս, նամակադրոշմի մեծ հաւաքածոյս, 30 տարիներէ ի վեր աշխատած ու ժողոված ազգագրական հաւաքածոներս ու ուսումնասիրութիւններս, պարսկական երկու թանկագին գորգերս, վեղարներս, փիլոններս, փակեղներս, եպիսկոպոսական պնակէս, խաչ եւ ամբողջ հագուստներս ու զգեստեղէններս, թղթեայ եւ մագաղաթեայ հին ձեռագիր եւ 600 հատ գրադարանիս տպագիր գիրքերս, եղբօրս 40 պարկ չամիչը եւ տանը գոյքերը եւն. այդ օթոմոպիլներու մէջ լեցնելով առին տարին, եւ անմիջապէս ալ տունին մէկ ծայրէն կրակ տուին, ինչպէս ըսի՝ կ'ընէին ուրիշ հայ տուններու ալ, որուն վրայ ստիպուեցայ առանց տեսնուելու տունէն փախչիլ աղտոտ միակ վերարկուով մը. այսպէս փողոցէ փողոց քանի մը օրեր ասդին անդին միայն հաց ուտելով թափառելէ յետոյ, վերջապէս քարափի վրայ տուն մը մտանք հանգստանալու համար. տասը

123 «Կեանքը Իզմիրի մէջ», *Ճակատամարտ*, 4 հոկտեմբերի, 1922, 3005:

124 «Զմյուռնիոյ վիճակը», *Հայաստանի կոչնակ*, 1923, 30, 954:

տասնեւհինգ օր վերջը շատ դժուարութեամբ յունական շոգենաւ մը մտանք եւ հասանք Աթէնք, թէեւ օր մըն ալ զիս բանտարկեցին Իզմիր»¹²⁵:

Ալեքսանդր Շիրվանզադեն, Մուդրոսի զինադադարից հետո լինելով Զմյուռնիայում և այցելելով Սիվրիհիսարյան-Ազնավորյան առևտրական ընկերության վաճառատները և մթերանոցները, այն տպավորությունն է ստացել, որ ընկերության մեջ ամբարված ապրանքները Կովկասի ողջ բնակչության մեկ տարվա կարիքները կարող էին բավարարել¹²⁶:

Զմյուռնիայի աղետը Հայոց և Հունաց ցեղասպանություններն ամբողջացնող մի գործողություն է: Երկու ժողովուրդների տեղահանությամբ և բնաջնջմով թուրքերն ազատվում են տնտեսություն մեջ իրենց հզոր մրցակիցներից և տիրանում նրանց ունեցվածքին: Ըստ թուրք պատմաբան Նեդիմ Քարայելիի՝ Թուրքիայի Հանրապետության առկա կապիտալի աղբյուրը բռնագրավված հայկական և հունական գույքն է¹²⁷:

Քեմալական արշավանքը ջնջում է Զմյուռնիայի հունական և հայկական մշակույթի բազմաթիվ մեծարժեք կոթողներ: Միայն Սբ Ստեփանոս եկեղեցում պահվել են 9 ձեռագրի մատյաններ¹²⁸, որոնք կորստյան են մատնվում, կողոպտվում է եկեղեցու գույքը¹²⁹: Նույն բախտին են արժանանում նաև Զմյուռնիայի մյուս եկեղեցիները: Քեմալականները Սբ Ստեփանոս և Այա Ֆոթինի եկեղեցիները կողոպտելուց հետո ուժանակներով պայթեցնում են, իսկ մարմարե գեղակերտ սյուները տեղափոխում Անկարա՝ զարդարելու նոր մայրաքաղաքը¹³⁰: Կողոպտվում և ոչնչացվում է Զմյուռնիայի հունական թանգարանը, որտեղ ցուցադրված էին Ալեքսանդրյան, հռոմեական, բյուզանդական շրջանների և միջին դարերի հնագիտական բացառիկ և մեծարժեք նմուշներ: Այստեղ էր պահվում հայոց Լևոն արքայի գահի հենարանը, որի վրա քանդակված էին արքայի գլուխը, թագը, ձեռքը: Թանգարանի մատենադարանն ունեցել է 32 000 տպագիր և 2 000 ձեռագիր գիրք¹³¹: Քանդվում են քաղաքի հունական, ֆրանսիական, անգլիական, ամերիկյան, գերմանական եկեղեցիներն ու կրթական հաստատությունները¹³²:

Հոմերոսի ծննդավայր, 3 000 տարվա պատմություն ունեցող Զմյուռնիան, որ

125 Տրդատ Պալեան, *Յուզակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիռնիայ եւ ի շրջակայս նոցին* (Երեւան, Քննասէր, 2002), 231-232:

126 Գալուստեան, *Զմիռնիա եւ Զմիռնիոյ հայ գաղութը*, 285:

127 «Թուրք ժամանակակից կապիտալի աղբյուրը հայկական և հունական գույքն է», <https://akunq.net/am/?p=42354>, դիտվել է՝ 30.07.2022:

128 Ասատրյան, *Հայկական Զմյուռնիա. ձեռագրական ժառանգությունը*, 523-524:

129 Գալուստեան, *Զմիռնիա եւ Զմիռնիոյ հայ գաղութը*, 319-321:

130 Գրիգորյան, Բրուտյան, *Զմյուռնիայի կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր*, 8:

131 Ս. Ամատեան, «Իզմիրի Հայ գաղութը», *Թէոդիկ Ամէնուն տարեցոյցը*, 1913, 7-րդ տարի, տարեգիրք (Կ.Պոլիս, Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1913), 181:

132 Յ. Կ. Պէշկէթօթիբեան, «Իզմիրի արհիւոնտոս ճակատագիրը», *Հայաստանի կոչնակ* (1922), 46, 1494:

Ֆրանսիացի բանաստեղծ Ալֆոնս դը Լամարթինը «Արևելքի աստղ» է անվանել, մի քանի օրվա ընթացքում հողակույտի է վերածվում: Քեմալականները, շարունակելով երիտթուրքերի կիսատ թողած գործը, արմատախիլ են անում Փոքր Ասիայի քրիստոնյա բնիկ ժողովուրդներին՝ հույներին և հայերին, և այս տարածաշրջանից ջնջում նրանց ստեղծած մշակութային մեծարժեք հուշարձանները: Զմյուռնիայի աղետալի փլուզումը վերջին կործանարար հարվածն է հասցնում Փոքր Ասիայի քրիստոնեությանը և քրիստոնեական քաղաքակրթության ստեղծած արժեքներին, ինչը մեծ կորուստ է ոչ միայն հայ և հույն ժողովուրդների, այլև համաշխարհային քաղաքակրթության համար:

THE ECONOMIC SITUATION OF THE ARMENIANS OF SMYRNA BEFORE THE FIRST WORLD WAR AND DEPRIVATION OF PROPERTY IN 1922

Anahit Kh. Astoyan

Researcher at the Mesrop Mashtots Matenadaran, Armenia

SUMMARY

On the eve of the First World War, the trade, crafts and industry of Smyrna, which were of great economic importance for the Ottoman Empire, were almost entirely concentrated in the hands of Armenians and Greeks. During the First World War, the Turkification of the country's economy began with the appropriation of the property of Armenians and Greeks who were subjected to genocide by the Young Turks. Mustafa Kemal, heir to the political practice of the Young Turks, continued their unfinished business. The massacre of the Armenians and Greeks of Smyrna by the Kemalists in September 1922 gave the Turks the opportunity to finally get rid of their powerful rivals in the economy and seize their property. Thus, the property of Armenians and Greeks became the basis of the national capital of today's Republic of Turkey.

Key words: Armenians of Smyrna, Kemalists, confiscate property, Turkification of the economy.

ЭКОНОМИЧЕСКОЕ СОСТОЯНИЕ АРМЯН СМИРНЫ ПЕРЕД ПЕРВОЙ МИРОВОЙ ВОЙНОЙ И ИХ ЭКСПРОПРИАЦИЯ В 1922 ГОДУ

Անահիտ Խ. Աստոյան

Научный сотрудник Матенадарана имени Месропа Маштоца, Армения

РЕЗЮМЕ

Накануне Первой мировой войны торговля, ремесла и промышленность Смирны, имевшие большое экономическое значение для Османской империи, почти целиком были сосредоточены в руках армян и греков. В годы Первой мировой войны тюркизация экономики страны началась с присвоения имущества армян и греков, подвергшихся геноциду младотурками. Мустафа Кемаль, наследник политической практики младотурок, продолжил их незаконченное дело. Резня кемалистами армян и греков Смирны в сентябре 1922 г. дала туркам возможность окончательно избавиться от своих могущественных соперников в экономике и завладеть их имуществом. Таким образом, собственность армян и греков стала основой национального капитала сегодняшней Турецкой Республики.

Ключевые слова: имущества армян, кемалисты, резня армян и греков, тюркизация экономики.

REFERENCES

Alpoyachyan, Arshak. *Յուշամատենան Կուտահյան հայերու* [Memory-Book of Kutahya Armenians]. Beirut: Tonikyan, 1961;

Astoyan, Anahit. *Դարի կողոպուտը. հայերի ունեւորկուսը Օսմանյան կայսրութիւնում 1914-1923 թթ.* [Robbery of the Century: Deprivation of Properties of Armenians in the Ottoman Empire in 1914-1923]. Yerevan: Matenadaran, 2013;

Chormisyan, Levon. *Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան* [A Panorama of a Century of History of Western Armenians]. V. A, Beirut: K. Tonikyan and Sons, 1972;

Dadayan, Khachatur. *Հայոց առևտրատնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում XV դ.-1915 թ.* [Armenian Commercial and Economic Activities in the Territory of Present-day Turkey in 15th century - 1915]. Yerevan: Gasprint, 2012;

Dadayan, Khachatur. *Հայոց տնտեսական ցեղասպանություն: Հայերի տնտեսական գործունեությունը ներկայիս Թուրքիայի տարածքում մինչև 1915 թվականը* [Armenian Economic Genocide. Economic activities of Armenians in the territory of present-day Turkey until 1915]. Yerevan: Edit Print, 2016;

Demoyan, Hayk. *Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան*

կայսրությունում [Armenian Sports and Physical Education in the Ottoman Empire]. Yerevan: AGMI, 2009;

Eprikyan, S. *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան* [Illustrated Natural Dictionary] V. 1, book 1, Venice: St. Lazarus, 1903;

Gabikian, Karapet. *Եղեռնապատում Փոքրն հայոց և նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* [The History of the Catastrophe of Armenia Minor and its Great Capital Sebastia]. Boston: Hairenik Publishing House, 1924;

Galustian, G. *Զմիռնիա և Զմիռնիոյ հայ գաղութը* [Smyrna and the Armenian Community of Smyrna]. Greek Armenian Almanac. 2nd Year. Athens: “Nor Or” Publishing, 1928;

Grigoryan, Asya and Brutyan, Vachik. *Զմիռնահայ կրթական-մշակութային կյանքի պատմության ուրվագծեր (19-րդ դարի սկզբից մինչև 1922 թ.)* [Outlines of the History of Smyrna-Armenian Educational and Cultural Life (from the Beginning of the 19th Century to 1922)]. Yerevan: Iravunq, 2007;

Levon, Vardan. *Ժամանակագրութիւն Հայկական տասնհինգի, 1915-1923* [The Chronology of the Armenian Fifteen, 1915-1923]. Beirut: Atlas, 1975;

Palyan, Trdat. *Յուզակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիռնիայ և ի շրջակայս նոցին* [List of Armenian Manuscripts from Caesarea, Smyrna and Surroundings]. Yerevan: Qnnaser, 2002;

Simonyan, Petros. *Յուշամատեն: Հայկական Զմիռնիան* [Memory-Book. Armenian Smyrna]. Paris: Arax, 1936;

Siruni, Y. *Պոլիս և իր դերը* [Constantinople and its Role]. V. 3, Lebanon: *The Armenian Catholicosate of the Great House of Cilicia*, 1987;

Teodik, Գողգոթա հայ հոգևորականութեան և իր հօտին աղէտայի 1915 տարիին [Armenian Clergy's and its Congregation's Golgotha in the Horrible Year 1915]. New York: St. Vartan Press, 1985;

Tsotsikyan, S. *Արեւմտահայ աշխարհ* [Western-Armenian World]. New York: A. Y., Leylekyan, 1947;

Zohrap, Grigor. *Երկերի ժողովածու* [Collection of Works, v. 3]. Yerevan: Museum of Literature and Art, 2002;

Զմիռնիահայ կեանքը զինադադարէն յետոյ: Միտոր փլուզումը [Armenian Life in Smyrna after the Armistice. The Terrible Collapse]. Athens: Nor or, 1924;

Վիճակացոյց Ազգային վարժարանաց Թուրքիոյ [Status of National Schools of Turkey], book 1, Constantinople: Y. Matteosyan, 1901.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Անահիտ Խ. Աստոյան – Մաշտոցյան Մատենադարանի հայցորդ, գիտաշխատող: Ուսումնասիրության ոլորտները՝ Հայոց ցեղասպանություն, հայերի գործունեությունը Օսմանյան կայսրության զինված ուժերում, վարչական համակարգում, տնտեսական և մշակութային կյանքում:

Էլեկտրոնային փոստի հասցե՝ anahitas@mail.ru

Anahit Kh. Astoyan – PHD student at the Matenadaran (Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts), Researcher.

Research fields – Armenian Genocide, Armenians in the Ottoman Empire, economic, administrative, cultural, military activities of Armenians in the Ottoman Empire.

E-mail address: anahitas@mail.ru

Анаит Х. Астоян – соискатель Института древних рукописей Матенadaran имени Месропа Маштоца, научный сотрудник.

Сферы исследований: Геноцид армян, деятельность армян в вооруженных силах, в административной системе, в экономической и в культурной жизни Османской империи.

Адрес эл. почты: anahitas@mail.ru

**ԶՄՅՈՒՌՆԻԱՆ 1922-1923 ԹԹ.՝ ԸՍՏ ՀՈՒՆԱԿԱՆ «ԱՄԱԼԹԵԱ»
ԹԵՐԹԻ (1923 Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՕԳՈՍՏՈՍ)**

Մարիյա Ա. Բրուտյան

Վանաձորի պետական համալսարան, Հայաստան

Հունական ամենաին թերթերից մեկը Չմյունխայում լույս տեսնող «Ամալթեա»-ն էր (1838-1923): Թերթը 85-ամյա գործունեության ընթացքում դառնում է ոչ միայն հույների, այլև Փոքր Ասիայի ոչ մահմեդական բնակչության հոգևոր ուսուցիչը: Մեծ էր «Ամալթեա»-ի հետաքրքրությունը հունական սփյուռքի և առհասարակ հույն հասարակության մեջ ազգային բարձր ինքնագիտակցություն ձևավորելու նկատմամբ: Թերթը գրազետ հունարենի օգտագործմամբ և լեզվապահպանության ձգտումով կատարում էր իր առաքելությունը: «Ամալթեա»-ն մինչև Չմյունխայի աղետը գրեթե անխափան է գործել, ապա տեղափոխվել է Աթենք՝ դառնալով Փոքր Ասիայի արհավիրքների հիմնական տեղեկատուն:

Չմյունխայում լույս տեսնող և շրջանառվող թերթերից միակն «Ամալթեա»-ն էր, որին հաջողվել է գոյատևել մինչև 1923 թ.:

Բանալի բառեր՝ Չմյունխայի աղետ, Փոքր Ասիա, «Ամալթեա» թերթ, արքայ, Հայոց ցեղասպանություն, Միստաֆա Քեմալ, Հունաստան, Միհրան Սվազլյան:

Հոդվածը ներկայացվել է՝ 29.11.2022: Ընդունվել է տպագրության՝ 25.05.2023:

The article was submitted on 29.11.2022 and accepted for publication on 25.05.2023:

Статья поступила 29.11.2022 и была принята к публикации 25.05.2023:

Ինչպես հղել՝ Մարիյա Ա. Բրուտյան, «Չմյունխան 1922-1923 թթ.» ըստ հունական «Ամալթեա» թերթի (1923 թ. հունվար-օգոստոս), *Յեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 89-99:

How to cite: Mariya A. Brutyan, “Smyrna in 1922-1923 according to the Greek Newspaper “Amaltea” (January-August 1923),” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 89-99.

Как сослаться: Мария А. Брутян, “Смирна в 1922-1923 гг. по данным греческой газеты “Амальтея” (январь-август 1923 г.),” *Цехаспанagitакан андес* 11, no. 2 (2023): 89-99.

Ներածություն

Օսմանյան կայսրության խիստ գրաքննության, սահմանափակումների պայմաններում «Ամալթեա» թերթի հեղինակները հաճախ օգտագործում էին փոխաբերություններ կամ ուղղակի անցնում էին տիրող վարչակարգի հովանու ներքո, մինչդեռ Աթենքում տպագրված ամիսներին նրանք զերծ են մնում սման կապանքներից:

Նպատակ դնելով մերկացնելու թուրքերի վայրագությունները, Զմյուռնիայի աղետը ներկայացնելու որպես քրիստոնյաների դեմ թուրքական ցեղասպան քաղաքականության հերթական դրսևորում՝ «Ամալթեա»-ն իր համարները հեղեղում էր Զմյուռնիայի աղետից տուժած ականատեսների վկայություններով:

Անդրադառնալով «Ամալթեա»-ի՝ Զմյուռնիայի աղետից հետո տպագրված համարներին՝ կարելի է նկատել, որ շատ են Զմյուռնիայի հայ և հույն բնակչությանը վերաբերող հոդվածները: Թերթը հաճախ համեմատականներ է տանում Մեծ եղեռնի և Զմյուռնիայի աղետի միջև:

«Ամալթեա»-ն ջանք չի խնայում ներկայացնելու Զմյուռնիայի աղետը բոլոր մանրամասներով՝ ամենուր ցույց տալով, որ, քաղաքի հույներից բացի, տուժել են նաև հայերը: «Համաձայն տխուր ավանդույթի՝ ամեն ինչ սկսվել է հայերից», - գրում է թերթը¹:

Զմյուռնիայի աղետի մանրամասները ըստ «Ամալթեա»-ի

«Փոքրասիական աղետը» խորագրի ներքո «Ամալթեա»-ն ներկայացնում է ականատեսների հիշողությունները: Դրանցից մեկում ասվում է. «Իսկապես, դա Փոքր Ասիայի ամենամռայլ աղետներից է: Եվրոպական թաղամասերի արվարձաններում, ֆրանկների թաղամասում սահմանափակվում էին միայն կողոպուտով: Նրանք ինչպես մյուս դեպքերի, այնպես էլ սրա համար մեթոդապես պատրաստվել էին»²:

Թերթը պատմում է, որ Զմյուռնիայի աղետն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողով է ստեղծվել, որ առկա են հայերի դեմ հալածանքների վերաբերյալ հատուկ թղթապանակներ՝ կազմված ամերիկացի և եվրոպացի ականատեսների վկայությունների հիման վրա: Ըստ դրանց՝ սեպտեմբերի 9-ից 13-ն ընկած ժամանակահատվածում, երբ քաղաքում մոլեգնում է հրդեհը, ավերածություններից զերծ չի մնում ոչ մի հայի տուն. «Նրանք [թուրքերը] նախ կրակոցներով ներխուժում էին տները, բնակիչներին սպանելուց հետո թալանում: Սկսում էին ունևորների տներից, մի հանգամանք, որ ցույց էր տալիս, որ զինվորներին առաջնորդում էին քաղաքը ճանաչող մարդիկ: Ճանապարհները լի էին կողոպտիչներով ու նրանց սայլերով՝ թանկարժեք ավարով բեռնված: Դժվար էր ճշգրիտ հաշվարկել մահացածների թիվը: Սակայն անհնար էր անցնել թալանված տների կողքով և բաց դռներից ներս

1 Անդրեադու "Η εν Μικρασία Καταστροφή" [Փոքր Ասիայի աղետը], *Αμαλθεια* [Ամալթեա], 10 հունվարի, 1923, 33.

2 Նույն տեղում:

դիակներ չտեսնել: Դիակները, փողոցների տեսարանները ցույց էին տալիս, որ մահը չափազանց դաժան է եղել այստեղ»³: Ըստ ականատեսի՝ կոտորածները քողարկելու նպատակով հրկիզում էին հայերի թաղամասերը⁴: Նույն ճակատագրին է արժանանում նաև հունականը:

Զմյուռնիայի ավերածությունները և դրան հաջորդած տարագրությունն ապացույցն են այն բանի, որ Զմյուռնիայում բնակվող ոչ մահմեդական փոքրամասնության շրջանում Եվրոպան աջակցություն չի ցուցաբերել՝ սահմանափակվելով միայն հակաթուրքական կոչերով: Այդ մասին «Ամալթեա»-ն հետևյալ կարծիքն է արտահայտում. «Այստեղ՝ պաշտոնական շրջանակներում, կարծում են, որ Զմյուռնիայում թուրքական իշխանությունների և դաշնակիցների միջև տեղի ունեցած միջադեպերը կարող են լարվածություն առաջացնել, ինչը հավանական չէնք համարում: Այն տեսակետը, թե Զմյուռնիայում թուրքերն առաջինն են ռմբակոծելու դաշնակիցների նավերը, բացարձակապես անհավանական է: Թուրք զինվորականությունը հիմա մտահոգված է ապահով տեղափոխել իր ավարը դաշնակիցների դիտակետերից»⁵:

«Ամալթեա»-ն, որ ուշիուշով հետևում էր Լոզանում տեղի ունեցող իրադարձություններին և պարբերաբար տեղեկատվություն հաղորդում, անթաքույց սնահավատությամբ էր լցված միջազգային հարթակներում հույների օգտին որևէ հարցի դրական լուծման ուղղությամբ⁶: «Փոքրասիական հալածանքը» հողվածում կարդում ենք. «Լոզանից տեղեկություն կա, որ ավարտվել են Փոքր Ասիայում հույն բնակչության, այդ թվում՝ Պոնտոսի հույների դաժան կոտորածները: Ուղերձն ինքնին հուսադրող է թվում, բայց իսկապես այդպես կլինե՞ր, եթե դա արվեր երեք-չորս ամիս առաջ, երբ դեռևս Փոքր Ասիայում հույն բնակչություն կար: Զմյուռնիայից մինչև Իկոնիա և Կեսարիայից մինչև Տրապիզոն կասկածելի է, թե կա արդյոք բնակավայր, որտեղ դեռևս մի քանի հույն լինի, իսկ բանտարկված, գորակոչված երիտասարդների ճակատագրերն առայժմ անհայտ են»⁷:

Դաշնակիցների համատարած անտարբերությանն ավելանում է թուրքերի՝ հույներին և հայերին մեղադրելու հանգամանքը. «Հրդեհի պատասխանատվության մասին քննարկումը վերսկսելն անօգուտ են համարում: Թուրքական գործակալությունները պաշտոնապես մեղադրում էին Հունաստանին, ապա՝ հայերին»⁸,– գրում է «Ամալթեա»-ն:

Եվրոպացի ականատեսներից մեկը պատմում է, թե ինչպես էին թուրք զինվորներն

3 Անդրեադու, “Η εν Μικρασία Καταστροφή” [Փոքր Ասիայի աղետը], 33.

4 Michelle Tusan, *Smyrna's Ashes: Humanitarianism, Genocide and the Birth of the Middle East* (London: The University of California Press, Berkeley, Los Angeles, 2012), 147.

5 “Η Τουρκία επιδιώκει εφαρμογή τού Ασιατικό της προγράμματος” [Թուրքիան ձգտում է իրականացնել իր Ասիական ծրագիրը] *Αμαλθεια* [Ամալթեա], 28 հունվարի, 1923, 108.

6 “Πολύ αργά” [Զափազանց ուշ] *Αμαλθεια* [Ամալթեա], 13 հունվարի, 1923, 9.

7 “Η καταδίωξις εν Μικρασία” [Հավածանք Փոքր Ասիայում] *Αμαλθεια* [Ամալթեա], 21 հունվարի, 1923, 79.

8 Անդրեադու, “Η εν Μικρασία Καταστροφή” [Փոքր Ասիայի աղետը], *Αμαλθεια* [Ամալթեա], 13 հունվարի, 1923, 45.

ու քաղաքացիական անձինք բեռնավորված վագոններից դյուրավառ պայթուցիկ նյութեր տանում: Առևտրական պալատի ֆրանսիացի մի աշխատակից վկայում է. «Ես տեսա, թե ինչպես էին թուրք զինվորները քրիստոնյաների տների վրա նավթ լցնում և հրկիզող ռումբեր նետում: Կարող եմ վստահեցնել, որ Ջմյունիա վերադարձած Կորդելիոյի թուրքական ոստիկանության նախկին պետը առաջնորդում էր զինվորներին»⁹: Ականատեսներից մեկ ուրիշն իր տեսած բարբարոսությունները թվարկելուց հետո նշում է. «Մենք շտրիակալ ենք, որ հայ չենք ծնվել»¹⁰:

«Ամալթեա»-ն ֆրանսիացի պատմաբան և լրագրող Ռենե Պյոտի «Ջմյունիայի վերջին օրերը» գրքից հատվածներ է ներկայացնում¹¹: Նույն ժամանակաշրջանում ֆրանսիական թերթերը տպագրում էին կաթոլիկ միսիոներների վկայությունները մշակութային և հոգևոր ժառանգության ոչնչացման և հոգևորականների կրած հալածանքների մասին: «Ամալթեա»-ն գրում է. «Թուրքական բանակը կողոպտում է Ջմյունիայի անգլիկան եկեղեցիները, պղծում գերեզմանոցը»:

«Ամալթեա»-ն նշում է, որ թուրքերը կռվում են քրիստոնյաների, ոչ թե Հունաստանի դեմ, և հերթական անգամ զարմանք հայտնում, որ Եվրոպան շարունակում է անտարբեր մնալ¹²:

«Ամալթեա»-ն նկարագրում է ականատեսների վկայություններն այն վայրագությունների վերաբերյալ, որոնց զոհ են դառնում քաղաքի հոգևորականները. 1922 թվականից հետո Ջմյունիայի Եղիա Մարգարեի տաճարի տարածքը թուրքերը ռազմական գոտի են հայտարարում, իսկ տաճարը ծառայեցնում որպես զինամթերքի պահեստ: Այստեղ էին հավաքվում հարևան գյուղերի կողոպուտից վերադարձած, մինչև ատամները զինված թուրք զինվորականները, որոնք գերեվարում և տանջամահ էին անում քաղաքի քրիստոնյա բնակչության ներկայացուցիչներին: Քահանան քրիստոնյաների կյանքի դիմաց առաջարկում է վանքի հարստությունը՝ թանկարժեք զարդեր և 85 թուրքական ոսկի: «Հետո կողոպուտեցին գյուղացիներին, տարան հարակից տարածք, բլուրին, այդ թվում՝ հոգևորականին, տանջամահ արեցին: Դրանից հետո բաժանեցին կողոպտված գումարն ու երգելով հեռացան», - պատմում է ականատեսներից Ծատուրիսը, որը հրաշքով էր փրկվել կոտորածներից¹³:

18-րդ դարում Ջմյունիա տեղափոխված Մխիթարյան միաբանության հայրերը¹⁴ նույնպես տուժում են Ջմյունիայի աղետից: «Ամալթեա»-ն հրապարակում է Մխիթարյանների նամակները, որտեղ պատմվում է, թե ինչպես են հրդեհվել վանքն ու

9 “Πως επυροπολήθη από τα τουρκικά σθηφη η Σμύρνη” [Ինչպես Ջմյունիան այրվեց թուրքական ուժերի կողմից], *Αμαλθεια* [Ամալթեա], 10 փետրվարի, 1923, 153.

10 Tusan, *Smyrna's Ashes*, 153.

11 “Μια άγνωστη σελή ζης Σμυρναϊκής τραγωδίας” [Ջմյունիայի աղետի անհայտ էջը], *Αμαλθεια* [Ամալթեա], 7 մարտի, 1923, 201.

12 Աղբերադու, “Η εν Μικρασία Καταστροφή” [Փոքր Ասիայի աղետը], 33.

13 Դիմիտրիոս Նիկոլաիդիս, “Μαρτυρικός θάνατος ενός ιερέως εν Σμύρνη” [Քահանայի նահատակությունը Ջմյունիայում], *Αμαλθεια* [Ամալթեա], 30 հունվարի, 1923, 115.

14 Հ. Յակոբ վ. Քուեան, *Հայք ի Ջմիւնիա եւ ի շրջակայս*, հատոր Ա (Վիեննա, Մխիթարեան տպարան, 1899), 339:

կից 14 շինությունները: «Հենց որ սեպտեմբերին Չմյուռնիայի թուրքական հետևակային ուժեր հայտնվեցին, նախապես կազմակերպված թուրքական ավազակախմբերը թողեցին իրենց ապաստանը և խառնվեցին թուրք զինվորներին՝ նախ շարժվելով դեպի հայկական թաղամաս, կոտրելով տների դռները, ապա սպանելով ու սկսելով կոդոպուտը: Իսկ մեկ այլ թուրք հանցախումբ, որ թաքնված էր գլխավոր փողոցների անկյուններում, կոդոպուտում և սպանում էր անցորդներին: Հետո հարյուրավոր հայեր ապաստան գտան մեզ մոտ, մենք նրանց պատասպարեցինք ու կերակրեցինք մինչև վերջին օրը: Հայկական թաղամասը կոդոպուտից հետո թուրքերը սկսեցին շարժվել հունական թաղամաս, որը նույն ճակատագրին արժանացավ: Հայկական և հունական թաղամասերի բոլոր փողոցները լի էին դիերով: Զինվորների մեկ այլ խումբ կոդոպուտում է քրիստոնյաների խանութները: Ավարով բռնված թուրքական բանակի բռնատարները պտտվում էին խանութների և գլխավոր շտաբի շուրջը: Չորս օր կոդոպուտեցին և կոտորեցին...»¹⁵:

Այն, որ Մխիթարյան հայրերը կոտորածներից փրկվածներին աջակցություն են ցուցաբերում, Ֆրանսիայի հյուպատոսարան ուղղորդում, գրավում է թուրքերի ուշադրությունը. նրանք սկսում են հաշվեհարդար տեսնել. «Մխիթարյան հայրերի վրա հարձակվում է երեք զինվոր, մահվան սպառնալիքով պահանջում ունեցած ողջ գումարը»¹⁶:

Զմյուռնիան աղետից հետո

Զմյուռնիայի աղետի մանրամասների վերաբերյալ շատ են ականատեսների վկայությունները, որոնց մի մասին անդրադառնում է «Ամալթեա»-ն: Կարևոր է այն, որ թերթը չի բավարարվում միայն աղետի նկարագրություններով, այլ տալիս է նաև հետևյալ հարցերի պատասխանները. ինչպիսին էր Զմյուռնիան աղետից հետո, ինչ ճակատագրի են արժանանում կոտորածներից փրկված հայերն ու հույները:

Աղետից հետո թուրքերի առաջին գործն ավարը բաժանելն էր: Նախկին վեհաշուք ու գեղեցիկ տների ճակատների հայտնվում են թուրքերեն գրություններ, քաղաքի երբեմնի խոշոր գործարաններն օգտագործվում են գերիներին տեղավորելու համար¹⁷: Կոտորածներին և արքային հաջորդում են ձերբակալությունները՝ նախապես կազմած ցուցակների համաձայն: Չբավարարվելով այսքանով՝ թուրքական բանակի հրամանատար Նուրեդդին փաշան հայտարարություն է տարածում, ըստ որի՝ թուրքերը կարող են մեղադրանք ներկայացնել այն քրիստոնյայի դեմ, որից երբևէ տուժել են, իսկ հոկտեմբերի 1-ից հետո Զմյուռնիայում դեռևս ողջ մնացած քրիստոնյաները պետք է կոտորվեն¹⁸:

15 «Πως επυρολήθη από τα τουρκικά σθηφο η Σμύρνη» [Ինչպես Զմյուռնիան այրվեց թուրքական ուժերի կողմից], *Αμαλθεια* [Ամալթեա], 153.

16 Նույն տեղում:

17 «Παρά τα επεισόδια της Σμύρνης» [Չնայած Զմյուռնիայում տեղի ունեցած միջադեպերին], *Αμαλθεια* [Ամալթեա], 12 հունվարի, 1923, 41.

18 Tusan, *Smyrna's Ashes*, 150.

Ձերբակալվում են հարյուրավոր հայեր ու հույներ, որոնք դավադրության զոհ են դառնում: «Վկաների մեծ մասը նկարագրում էր սարսափելի հանցագործությունները, որ կատարում էին նախկին բանտարկյալները՝ իրենց հրեշավոր արարքով նույնիսկ միմյանց հետ մրցելով: Եվ ամենևին էլ դժվար չէ պատկերացնել, թե ինչպես են գրպարտությունները հաջորդում բռնություններին», – գրում է «Ամալթեա»-ն¹⁹:

Քաղաքում շարունակ դատավարություններ էին տեղի ունենում, և մեկը մյուսի հետևից մահապատժի էին ենթարկվում հույն և հայ զինվորականներ, մտավորականներ, հասարակական գործիչներ: 1923 թ. հունվարին Չմյուռնիայում կախաղան է բարձրացվում մի քանի հույն գործիչ. նրանք մեղադրվում են «սպանություններ հրահրելու համար»: Թոմաս Իոաննիդիսը, Սարգիս Կայսերլին և Հակոբ Թարաքյանը մահվան են դատապարտվում «հունական բանակի հետ համագործակցելու համար»: Նրանց մահապատժն ի կատար է ածվում դատավճռի հաջորդ օրը²⁰: Փետրվարին կախաղան են բարձրացվում Իսմայիլ օղլու Հասանը, Ռուբեն Դավիթը, Բագելիսը, Սարգիս Կարապետը, Ապոստոլ Իոաննիսը, Դիմիտրիս Յանակոսը, Ռուբեն Օտյանը և Կոստակի օղլու Օմիրոսը՝ մեղադրվելով հայրենիքին դավաճանելու համար²¹:

«Ամալթեա»-ն Չմյուռնիայից ստացված նամակներ է պարբերաբար հրատարակում, որոնք վկայում են քաղաքի անմխիթար վիճակի մասին. «Քրիստոնյաների արքորից հետո Չմյուռնիայում կյանքն անտանելի է դարձել», – գրում է անանուն մի հեղինակ, ապա շարունակում. «Քաղաքում անվտանգ չէ, սնունդը քիչ է, չկա աշխատանք: Թուրքերը շարունակ դաժանաբար են վարվում քաղաքում մնացած քրիստոնյաների հետ. քաղաքատարկյալների մեծ մասին ստիպում են շղթայակապ ծանր աշխատանք կատարել»: Հեղինակը համընդհանուր այս հուսահատ դրությունը ներկայացնելուց հետո գրում է, որ ստիպված է հեռանալ Չմյուռնիայից²²: Շատ են նմանատիպ դեպքերը, երբ օտարերկրացիները լքում են Չմյուռնիան: Նրանցից մեկը նշում է, որ համընդհանուր վախի և սարսափի պայմաններում անհնար էր մնալ քաղաքում²³:

Չմյուռնիայի շրջակա բնակավայրերը նույն ճակատագրին են արժանանում: Ունևոր օտարերկրյա բնակիչներով հայտնի արվարձանները կողոպուտի թիրախ են դառնում: Ֆրանսիայի հյուպատոսարանի աշխատակիցներից մեկը պատմում է, թե ինչպես են Չմյուռնիայում գտնվող եվրոպացիները հյուպատոսարանների միջոցով կարողանում ռազմանավեր բարձրանալ ու փրկվել, թեև «հույների ու հայերի

19 Անդրեադու, “Η εν Μικρασία Καταστροφή” [Փոքր Ասիայի աղետը], *Αμαλθεια* [Ամալթեա], 15 հունվարի, 1923, 53.

20 “Νέοι απαγχονισμοί Ελλήνων εν Σμύρνη,” [Հույների նոր կախաղանները Չմյուռնիայում], *Αμαλθεια*, [Ամալթեա] 7 հունվարի, 1923, 24.

21 “Νέοι απαγχονισμοί εν Σμύρνην” [Հույների նոր կախաղանները Չմյուռնիայում], *Αμαλθεια* [Ամալթեա], 1 փետրվարի, 1923, 124.

22 Անդրեադու “Η εν Μικρασία Καταστροφή” [Փոքր Ասիայի աղետը], 53.

23 “Ποια η εν Σμύρνη καταστασίς” [Ի՞նչ իրավիճակ է Չմյուռնիայում], *Αμαλθεια* [Ամալթեա], 29 հունվարի, 1923, 113.

արտաքսման, Չմյուռնիայի կործանման սարսափելի ու արյունոտ տեսարանները երկար կմնան բոլորի հիշողություններում»²⁴:

Կոտորածներին ու կողոպուտին հաջորդում է Չմյուռնիայի տնտեսական անկումը. երբեմնի հարուստ և վաճառաշահ քաղաքը վերածվում է մոխրի և ավերակների կույտի: «Ապահովագրական ընկերությունները, – գրում է «Ամալթեա»-ն, – հրաժարվում էին ոչ միայն «պատերազմի ռիսկերի դեմ» իրենց կնքած պայմանագրային պարտավորությունները կատարելուց, այլև Չմյուռնիայի՝ հրդեհից կրած վնասը փոխհատուցելուց: Ակնհայտ էր, որ թուրքերի համար հունական և հայկական թաղամասերի հրկիզումը քաղաքը տիրելու ամենաարագ միջոցն էր»²⁵:

«Ամալթեա»-ի «Իրավիճակը Չմյուռնիայում» վերնագրով հոդվածաշարը պարբերաբար ներկայացնում է քաղաքի օրավուր անկում ապրող վիճակը:

Թերթն անթաքույց բացասաբար է վերաբերվում Մուստաֆա Քեմալի՝ իրակա-նությունից կտրված հայտարարություններին ու դիտարկումներին: 1923 թ. Չմյուռնիա կատարած այցի ժամանակ Քեմալն ասել է. «Իզմիրը կրակի ու ծխի մեջ էր: Այս տխուր տեսարանից բոլորը մոռացել էին, նրանց աչքերում արցունքներ էին: Այնուամենայնիվ, կարճ հարցումից հասկացա, որ այս արցունքները կրակի և ավերածությունների պատճառով չէին: Այս կրակն ու այս ավերածությունները ոչ մի ազդեցություն չեն թողել նրանց վրա: Նրանց աչքերը երջանկության արցունքներով էին լցված մեր հաղթական բանակի [Չմյուռնիան՝ Մ. Բ.]՝ ազատագրելուն ականատես լինելու համար»²⁶: Թերթը հեզանքով գրում է. «Չմյուռնիայում Մուստաֆա Քեմալի յոթամանոց ելույթից թուրք խելացի հասարակությանը հայտնի դարձավ, որ Չմյուռնիան 45 դար պատկանել է իր նախնիներին՝ թուրքերին, որոնք այդ ժամանակից ի վեր համագործակցել են հույների հետ: Մեզ անհասկանալի է թվում, թե Քեմալի ունկնդիրների մեջ ինչպես չգտնվեց մեկը, որ կշեշտեր նրա անգրագիտությունը»²⁷:

Չմյուռնիայի հույն և հայ բնակչության գաղթը

Չմյուռնիայի աղետին հաջորդում է գաղթը: Հազարավոր հույներ և հայեր Չմյուռնիայից, Արևմտյան Թրակիայից և Մակեդոնիայից գաղթում են Հունաստան: Ընդհանուր առմամբ 1923 թ. նրանց թիվը 53 000 էր²⁸: Բավական անմխիթար էր գաղթականության վիճակը. ապրում էին վրաններում, սնունդն ու բժշկական օգնությունը բավարար չէր:

«Ամալթեա»-ն նոր առաքելություն է որդեգրում՝ դառնալ բազմահազար ցրված գաղթականների տեղեկատուն՝ միջոց, ընտանիքների վերամիավորման, հարազատ-

24 Նույն տեղում:

25 “Παρά τα επειρία της Σμύρνης” [Չնայած Չմյուռնիայում տեղի ունեցած միջադեպերին], *Αμαλθεια* [Ամալթեա], 41.

26 *Ataturk’un Soylev ve Demecleri*, 2 (Ankara, 1989), 82.

27 “Κεμαλική μετρισιάθεια” [Քեմալական չափավորություն], *Αμαλθεια* [Ամալթեա], 4 փետրվարի, 1923, 135.

28 Մարո Ավետիսյան, «Հունահայ գաղթականության խնդիրները Վահան Թեքեյանի նամակներում», *Բանբեր Հայաստանի արխիվների* 1 (2010), 88:

ների փնտրման համար: Շատ են «Ամալթեա»-ում Զմյուռնիայի հայ բնակիչների անուն-ազգանունները, որոնց փնտրում էին հարազատները, օրինակ՝ Հակոբ և Օնիկ Կյուրեղյանները փորձում էին իրենց եղբոր՝ ֆրանկների թաղամասում ապրող ժամագործ Տիգրան Կյուրեղյանի մասին տեղեկություն ստանալ²⁹, ԱՄՆ-ում գտնվող հարազատները փնտրում էին Բամբուկյան Ստեփանին, Փափազյան Թորոսին և ևս 23 հայի³⁰, Էրոնյան Սիլվերտին ու Հակոբին և 22 հայի փնտրում էին իրենց հարազատները³¹: «Ամալթեա»-ն մտահոգություն է հայտնում ոչ միայն փնտրվող հայերի, այլև հայության այն բեկորների համար, որոնք ապաստան էին գտել Աթենքում և հարակից շրջաններում, միաժամանակ զարմանք հայտնում, թե ֆիզիկապես և հոգեպես կոտրված այս ժողովուրդը ինչպիսի ամուր կամք և ոգի ունի: Թերթը «Ազգային օգնություններ» խորագրի ներքո շարունակաբար տեղեկություն է հաղորդում Աթենքում կազմակերպվող հանրահավաքների մասին, որտեղ ակտիվություն էին ցուցաբերում հայերը. «Հայ ցուցարարները դուրս են եկել «Հայ համայնք» գրությամբ պաստառներով: Հունական և հայկական երաժշտությունը միախառնվել էր, ամենահուզիչ տեսարանը, սակայն, կանանց և որբացած հայ մանուկների երթն էր, որոնք ոտաբորիկ ու հնամաշ շորերով մասնակցում էին ցույցերին և լալագին գոչում «Մենք մեր տներն ենք ուզում»: Այս կանանց ուղեկցում էին հրաշքով փրկված մի խումբ հայ տղամարդիկ, որ ապշեցնում էին իրենց հերոսական կեցվածքով»³²:

Թերթը համակրանքով է խոսում արևմտահայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբան, դիվանագետ, հրապարակախոս Միհրան Սվազլյանի մասին, որը դեռևս 1921 թ. սկզբից Զմյուռնիայում էր՝ Թուրքիայի և Հունաստանի ռազմական առճակատումներում հայ-հունական մերձեցմանը նպաստելու: Զմյուռնիայի աղետից հետո Միհրան Սվազլյանը ջանք չէր խնայում կարգավորելու գաղթական զմյուռնիահայերի անվտանգության հարցերը: «Ասիկա շատ լաւ է, խտրութիւն չկայ յոյն եւ հայ գաղթականին միջեւ: Այսօր նախարարապետը ընդունելով Կարապետ եպս-ի այցելութիւնը ընկերակցութեամբ պ[արոն] Սվազլից ըսած է, թէ մինչեւ անկախ Հայաստանի կազմութիւնը, հայերը կրնան Յունաստանն իրենց հայրենիքը նկատել, թէ այս երկիրը միշտ բաց պիտի ըլլայ անոնց առջեւ եւ իրենք անոնց համար ամէն բան ընելու պարտատր են, ելն, ելն», – գրում է Վահան Թեքեյանը³³:

Աթենքում կազմակերպված հանրահավաքներում հաճախ էին հնչում Սվազլյանի կոչերը: Դրանցից մեկը «Ամալթեա»-ն այսպես է ներկայացնում. «.....Իսկ երեկվա հանրահավաքի նպատակը Փոքր Ասիայի, Պոնտոսի, Թրակիայի հույների ցասման դրսևորում չէ: Այն նաև մեր մեկ այլ հայ բարեկամի՝ պարոն Սվազլյանի մտքերի, զգացմունքների, տպավորությունների մասին է, որի ցանկությունն է լսելի դարձնել հալածվածների պահանջները»³⁴:

29 “*Παρά τα επεισόδια της Σμύρνης*” [Չապած Զմյուռնիայում տեղի ունեցած միջադեպերին], 41.

30 “*Αμερικανική περίθαλψη*” [Ամերիկյան խնամք], *Αμαλθεια* [Ամալթեա], 14 հունվարի, 1923, 51.

31 Անդրեադու, “*Η εν Μικρασία Καταστροφή*” [Փոքր Ասիայի աղետը], 53.

32 “*Συγκινητικόν Θέμα*” [Հուզիչ տեսարան], *Αμαλθεια* [Ամալթեա], 9 հունվարի, 1923, 29.

33 Ավետիսյան, «Հունահայ գաղթականության խնդիրները Վահան Թեքեյանի նամակներում», 89:

34 “*Συγκινητικόν Θέμα*,” 29.

«Ամալթեա»-ն հետևում է, թե ինչպես է Մուստաֆա Քեմալի հրահանգով 1923 թ. ֆրանսիացի ճարտարապետների և տեղական իշխանությունների ջանքերով Չմյուռնիան վերակառուցվում. դրա նպատակն էր վերացնել հրաշագեղ քաղաքի և նրա տխուր վախճանի վերաբերյալ պատմական ապացույցները: Որքան ժամանակ էլ անցնի, Չմյուռնիայում ոչ մի նոր տարր չի կարող ջնջել հելլենիզմի և երբեմնի բարգավաճ քաղաքի վերաբերյալ հիշողությունները, ինչը Փոքրասիական աղետի թերևս ամենատրեղակալան առանցքն է:

SMYRNA IN 1922-1923 (ACCORDING TO THE GREEK NEWSPAPER “AMALTEYA” (JANUARY-AUGUST 1923))

Mariya A. Brutyan
Vanadzor State University, Armenia

SUMMARY

In this article, the Greek newspaper “Amalthea”, published in Smyrna, and its reaction to the Smyrna disaster are discussed.

One of the oldest Greek newspapers was “Amalthea”, published in Smyrna (1838-1923), which for 85 years of its activity became a spiritual source not only for Greeks, but also for the non-Muslim population of Asia Minor. It was the only Greek newspaper that reopened in Athens after 1922, becoming the main informant and analyst of the Smyrna disaster and horrors in Asia Minor.

Examining the issues of “Amalthea” published after the Smyrna disaster, one can notice that there are many articles devoted to the Armenian and Greek peoples of Smyrna. Striving to present the Smyrna disaster as another policy of genocide carried out by the Turks against Christians, “Amalthea” published the testimonies of eyewitnesses who suffered from the Smyrna disaster, articles exposing the actions of the Turks. The newspaper informs not only about the catastrophe of Smyrna, but also about the subsequent events; the economic decline of Smyrna, the execution of Armenian and Greek figures of Smyrna, migration after the catastrophe. “Amalthea” becomes an informant, a means of reuniting the families of many thousands of scattered Armenian and Greek emigrants. The newspaper “Amalthea” painfully observes how in 1923, under the instructions of Mustafa Kemal, the reconstruction of Smyrna was carried out, the purpose of which was to eliminate the historical evidence of the once majestic city and its sad end.

Key words: Smyrna disaster, Asia Minor disaster, “Amalthea”, exile, Armenian massacres, Mustafa Kemal, Greece, Mihran Svazlian.

**СМИРНА В 1922-1923 ГГ. (ПО ДАННЫМ ГРЕЧЕСКОЙ ГАЗЕТЫ
“АМАЛЬТЕЯ” (ЯНВАРЬ-АВГУСТ 1923 Г.))**

Мария А. Бртян

Ванадзорский государственный университет, Армения

РЕЗЮМЕ

В данной статье обсуждается греческая газета “Амальтея”, издававшаяся в Смирне, и ее реакция на смирнскую катастрофу. Статьи в газете имеют важное источниковедческое значение.

Одной из старейших греческих газет была “Амальтея”, издававшаяся в Смирне (1838-1923 гг.), которая за 85 лет своей деятельности стала духовным учителем не только для греков, но и для немусульманского населения Малой Азии. Она стала единственной греческой газетой, которая после 1922 года вновь открылась в Афинах, став главным информатором и аналитиком Смирнской катастрофы и ужасов в Малой Азии. Анализ реакций газеты “Амальтея”, касавшийся 1922-1923 гг. истории Смирны, позволяет углубить и сделать более полным изучение Смирнской катастрофы.

Исследуя выпуски “Амальтея”, опубликованные после Смирнской катастрофы, можно заметить, что в них много статей, которые посвящены армянскому и греческому населению Смирны. Стремясь представить смирнскую катастрофу как очередное проявление политики геноцида, проводимой турками против христиан, “Амальтея” публиковала свидетельства очевидцев, пострадавших от смирнской катастрофы, статьи, разоблачающие действия турок. Газета информирует не только про катастрофу Смирны, но и про последующие события: экономический упадок Смирны, казнь армянских и греческих деятелей Смирны, миграции после катастрофы. Здесь “Амальтея” становится информатором, средством воссоединения семей многих рассеянных армянских и греческих эмигрантов. В газете “Амальтея” с болью наблюдается, как в 1923 году по указанию Мустафы Кемаль проводится реконструкция Смирны, целью которой было устранение исторических свидетельств некогда величественного города и его печального конца.

Ключевые слова: Смирнская катастрофа, малоазийская катастрофа, “Амальтея”, изгнание, армянские погромы, Мустафа Кемаль, Греция, Мигран Связлян.

REFERENCES

- Avetisyan, Maro. «Հունահայ գաղթականության խնդիրները Վահան Թեքեյանի նամակներում» [The Problems of the Greek-Armenian Emigration in the Letters of Vahan Tekeyan]. *Banber Hayastani Arkhivneri* 1 (2010): 88-102;
- Qosyan, Hakob. *Հայք ի Ջմիւռնիս և ի շրջակայս* [The Armenians in Smyrna and its Surroundings], vol. 1, Vienna, 1899:

Հեղինակի մասին

About the Author

Об авторе

Մարիյա Ա. Բրուտյան, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, պատմաբան, Վանաձորի պետական համալսարանի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան, պատմության ամբիոնի դոցենտ:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց պատմություն, հայ պարբերական մամուլի պատմություն, հայ գաղթօջախների և ժամանակակից սփյուռքի պատմություն, հայ-հունական առնչությունների պատմություն (15-20-րդ դդ.), Հայոց ցեղասպանություն:

Էլ. փոստի հասցե՝ mariabrutyan2013@yandex.com

Mariya A. Brutyan, PhD in History, Associate professor, Historian, Dean of the Faculty of Humanities of Vanadzor State University, Associate Professor of the Department of History.

Research fields: History of Armenia, history of the Armenian periodical press, history of Armenian communities and modern diaspora, history of Armenian-Greek relations (15th-20th centuries), and the Armenian Genocide.

Email address. mariabrutyan2013@yandex.com

Мария А. Брутян, кандидат исторических наук, доцент, историк, декан Гуманитарного факультета Ванадзорского государственного университета, доцент кафедры истории.

Область исследований: история Армении, история армянской периодической печати, история армянских колоний и современной диаспоры, история армяно-греческих отношений (15-20-е вв.), Геноцид армян.

Эл. почта: mariabrutyan2013@yandex.com

ՕՐԱԳՐԱՅԻՆ ՄԵԹՈԴԸ՝ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՑՈՒՆՑ
ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՄԵԽԱՆԻԶՄ
(ԲԺԻՇԿ ԿԱՐԱՊԵՏ ԽԱԶԵՐՅԱՆԻ ՕՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Արմինե Վ. Վահանյան

Ներքին գործերի նախարարության Ճգնաժամային կառավարման
պետական ակադեմիա, Հայաստան

Հոդվածում ներկայացվում է բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի նյութի հոգեբանական վերլուծությունը՝ օրագրային մեթոդը դիտարկելով որպես հոգեցունց իրականության մեջ հայտնված անձի ինքնակարգավորման յուրօրինակ մեխանիզմ: Օրագրային մեթոդը թերևս լավագույնս համապատասխանում է սուրբյեկտի ներքին պահանջներին՝ արտացոլելով իրականությունը կոնկրետ և ամբողջական պատկերներով: Օրագիրը հիշողություն է. հեղինակը թղթին է հանձնում այն, ինչ կատարվում է՝ պատմության մեջ թողնելով այնպես, ինչպես ընկալել է հենց այդ պահին: Գրառումներ կատարելը՝ որպես հոգեբանական ինքնօգնության մեթոդ, դուրս է գալիս հոգեթերապիայի բժշկական մոդելից, վերածվում է անձնական և հոգևոր զարգացման պորտֆոլիոյի, արտացոլող մակերեսի. դրանց առանձնահատկությունն ու ուղղվածությունը տեսանելի են դառնում առաջին հերթին գրառողի համար: Օրագիրն այս իմաստով օգնում է Խաչերյանին ոչ միայն ապրել ներկա ժամանակը, այլև ցույց տալ հոգեկան ապրումների շարժընթացը, որը բնորոշ է գոյաբանական վակուումի մեջ հայտնված անհատին:

Բանալի բառեր՝ օրագրային մեթոդ, ինքնակարգավորման միջոցներ, հոգեկան լարվածություն, տագնապ, գոյաբանական վակուում, հոգեբանական նահանջ, ժամանակի լայնացում, դեպրեսիա, որակական ժամանակ, ցեղասպանություն, կյանքի իմաստ:

Հոդվածը ներկայացվել է՝ 27.01.2023: Ընդունվել է տպագրության՝ 26.05.2023:

The article was submitted on 27.01.2023 and accepted for publication on 26.05.2023.

Статья поступила 27.01.2023 и была принята к публикации 26.05.2023.

Ինչպես հղել՝ Արմինե Վ. Վահանյան, «Օրագրային մեթոդը՝ որպես ցեղասպանության հոգեցունց իրականության արտացոլման ներքին մեխանիզմ (բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի օրինակով)», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 100-113:

How to cite: Armine V. Vahanyan, “The Diary Method as an Internal Mechanism for the Expression of Spiritual Reality of Genocide (on the Materials of the Diary of Doctor Garabed Hatcherian),” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 100-113.

Как сослаться: Армине В. Ваганян, “Дневниковый метод как внутренний механизм выражения духовной реальности геноцида (по материалам дневника доктора Карапета Хачеряна),” *Цехаспанагитакан андес* 11, no. 2 (2023): 100-113.

Պատմությունները գրում են, երբ վեպերի ժամանակ չկա, հոդվածները գրում են, երբ պատմությունների ժամանակ չկա, իսկ երբ անգամ հոդվածների ժամանակ չի լինում, օրագիր են պահում:

Ֆրեդերիկ Բեգբեդեր

Ժամանակակից մշակույթում և բժշկական հոգեթերապևտիկ մոդելում անհատը հաճախ ներկայացվում է որպես մեկուսացված, ինքնավար «ես», որն ունի իր անկրկնելի հոգեդինամիկան, բնավորության գծերն ու գործունեության ոճը: Ըստ այս մոտեցման՝ մարդը հաճախ է հայտնվում գոյաբանական վակուումի մեջ, ինչի հետևանքով ինքնակարգավորման խոսքային միջոցներն ավելի են կարևորվում՝ դրսևորվելով որպես իրականության հոգեցունց ազդեցությունից պաշտպանվելու ներքին հոգեբանական մեխանիզմ: Նա լեզվի օգնությամբ պատկերներ է կառուցում, դրանք դարձնում շոշոփելի կամ էլ զգայական փորձը վերածում ինքնուրույն ճանաչողության՝ տեսնելով դրանց զարգացման տրամաբանական կառուցվածքն ու պատճառահետևանքային կապերը:

Մարդու համար ամենադժվար պահը կյանքի մի փուլից մյուսին անցնելն է. հին շրջանն ավարտված է, իսկ նորը՝ այնքան անորոշ, որ կարող է խիստ ծանր և նույնիսկ մահացու թվալ: Այդ պահին շատ կարևոր է մեթոդի առկայությունը, որը թույլ կտա նոր կյանքին ներդաշնակ լինել՝ հավատարիմ մնալով հոգու ներքին շարժումների ռիթմին և տոնայնությանը: Օրագրային մեթոդը լավագույնս համապատասխանում է սուբյեկտի ներքին պահանջներին՝ արտացոլելով իրականությունը՝ կոնկրետ և ամբողջական պատկերներով: Օրագիրը գրառողին օգնում է դիմակայել՝ արձանագրելով այն, ինչ կարող է խեղաթյուրվել, իսկ հետագոտողի համար ծառայում որպես սկզբնաղբյուր:

Օրագիրը ժանրային կանոններ կամ սահմանափակումներ չունի: Հեղինակի գրառումները կարող են կանոնավոր կամ էպիզոդիկ լինել՝ վերարտադրելով իրադարձությունների հաջորդականությունը (քրոնիկա), սպրումների կամ մտքի ընթացքը (գիտակցության հոսք): Հակառակ թվացյալ մենախոսությանը՝ օրագիրն ինքնահաղորդակցման կամ երկխոսության ուրույն ձև է¹:

Անձի համար դժվար է անկողմնակալ լինել: Ինչպե՞ս կարող է հասնել դրան. ոչ բոլորին է հաջողվում խորասուզվել գաղափարների և հասկացությունների մեջ, քանի որ դա պահանջում է ոչ միայն գիտելիք և հմտություն, այլև սեփական կենսագրությանն անդրադառնալու համարձակություն: Դա ո՞չ բացարձակ ապրում է, ո՞չ էլ փորձառնական վերաբերմունք ուսումնասիրվող առարկայի նկատմամբ²:

Ամերիկացի սոցիալական աշխատող և հոգեթերապևտ, Կառլ Յունգի աշակերտ Այրը Պրոզոֆն (1921-1998) առաջինն է բարձրաձայնել այն մասին, որ օրագիրը կարող

1 Алексеев, “Письмо, дневник, автобиография: многообразие форм и сопряжение смыслов (теоретико-методологические заметки),” *Телескоп: журнал социологических и маркетинговых исследований* 4 (2007), 46-56.

2 Наталья Козлова, “Опыт социологического чтения ‘человеческих документов’, или Размышления о значимости методологической рефлексии,” *Социологические исследования* 9 (2000), 22-32.

է հետաքրքիր լինել ոչ միայն ընթերցողի (եթե խոսքը նշանավոր մարդկանց օրագրերի մասին է), այլև օգտակար՝ վավերագրողի հոգեկան ներդաշնակության համար³:

Ըստ նրա՝ աշխատելով օրագրի հետ՝ անձն աստիճանաբար թուլացնում է իր ներքին հոգեկան լարվածությունը: Օրագրային վարժությունները ծառայում են որպես ինքնորոշման աջակցության համակարգ՝ միաժամանակ ամրապնդելով սեփական «ներքին գործընթացի» նկատմամբ զգայունությունը՝ հարմարեցնելով այն կյանքի երկխոսական հարթությանը: Այժմ Պրոգոֆի օրագրային ինտենսիվ թերապիան օգտագործվում է խմբային և անհատական աշխատանքում՝ կյանքի ճգնաժամ և անցումային փուլ ապրող մարդկանց հետ: Անձն ապահովության զգացում է ունենում, ձեռք բերում ազատ տեղաշարժելու կարողություն իր ներքին տարածության մեջ՝ ուսումնասիրելով հիշողությունները և ապրումները, անցնելով փորձառության այն «անկյուններով», որտեղ մուտք գործելու հնարավորություն չի ունեցել: Օրագիր հաճախ պահում են մարդիկ, որոնք ձգտում են հասնելու որոշակի նպատակի, հատկապես երբ այդ ճանապարհին պետք է դժվարություններ հաղթահարեն: Օրագրի հետ աշխատելիս կենտրոնում տեղադրվում է «ներկայի շրջանը»: Ժամանակի ընթացքում իրավիճակը փոխվում է, և նա կարողանում է առանձնացնել «ներկայի շրջանը» և, ըստ այդմ, վերաշարադրել հանգուցային կետերը: Սա մարդուն հնարավորություն է տալիս վերաշարադրելու սեփական կյանքի պատմությունը:

Օրագրի հետ աշխատանքը՝ որպես հոգեբանական ինքնօգնության մեթոդ, դուրս է գալիս հոգեթերապիայի բժշկական մոդելից, վերածվում անձնական և հոգևոր զարգացման պորտֆոլիոյի, արտացոլող մակերեսի: Դրանց առանձնահատկությունն ու ուղղվածությունը տեսանելի են դառնում առաջին հերթին գրառողի համար: Օրագրի աշխատանքին տիրապետելով՝ մարդը վերանայում է իր կյանքի պատմությունը, կապ հաստատում «կյանքի ներքին շարժման» հետ և հարմարվում դրա ներդաշնակությանը: Կյանքի իրադարձությունները կապված են մեր արժեքների, մտադրությունների, ցանկությունների և այլնի հետ՝ ըստ մեր նախընտրած պատմության ժամանակային հաջորդականության: Անձը վերանայում է անցյալի իրադարձությունները: Այս աշխատանքի ընթացքում կյանքի լրացուցիչ իմաստ է հայտնվում:

Մարդն օրագրային գրառումներով հասնում է երկու նպատակի. ներկայի պահը տեղավորում է անցյալի և ապագայի սահմաններում և, միևնույն ժամանակ, կապ հաստատում կյանքի արժեքների, իմաստների և առաջնորդող սկզբունքների հետ: Հասանելի է դառնում ավելի լայն, բազմաչափ հեռանկար՝ բացելով հնարավորությունների տարածություն: Սեփական կյանքին առերեսվելով՝ մարդը գրում է վերելքների և վայրէջքների մասին՝ հիմք ստեղծելով ինքնության և գոյության շարունակության համար: Օրագիրը մարդու կյանքը ներդաշնակ դարձնելու և նրա յուրահատուկ նոտան գտնելու գործիք է: Այդ գործիքը «սրված» է բոլոր նրանց համար, ովքեր օգտագործում են. դա սեփական ներքին ճշմարտության բացահայտումն է և դրան հետևելը: Օրագիրը կարող է դառնալ ուղեկից, շարժական «ալտեր էգո»:

3 *Depth Psychology and Modern Man: A New View of the Magnitude of Human Personality, its Dimensions & Resources* (New York: Julian Press, 1959).

Պրոգոֆի մշակած կառուցվածքային օրագրի մոդելում ամենակարևորը ոչ գծայնությունն է: Այն ներառում է չորս չափում.

1. *Կյանքի ժամանակը*. ընդգրկում է կառուցվածքային հետևյալ տարրերը՝ «Ներկայի շրջան», «Օրվա գրանցում», «Կյանքի պատմության իրադարձություններ», «Միջակետեր», «Իտալացիներ. ճանապարհներ՝ ընտրված և չընտրված», «Բաց լինել ապագայի առաջ»:
2. *Երկխոսություններ*. ներառում է հետևյալ բաժինները՝ «Երկխոսություն մարդկանց հետ», «Երկխոսություն նախագծերի հետ», «Երկխոսություն մարմնի հետ», «Երկխոսություն իրադարձությունների, իրավիճակների և հանգամանքների հետ»:
3. *Նիշերի հոսք*. ընդգրկում է «Երագների ձայնագրում», «Երագների ընդլայնում», «Մթնշաղի պատկերներ», «Պատկերների ընդլայնում» բաժինները:
4. *Անանձնական իմաստներ*. ընդգրկում է «Երկխոսություն հասարակության հետ» և «Երկխոսություն ներքին իմաստության հետ» բաժինները⁴:

Ներկա հոդվածը հիմնված է բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագրի բովանդակային նյութի վերլուծության վրա: Բնագիրը հրատարակվել է երկու անգամ՝ 1995 և 1997 թթ.⁵: Օրագրի և հավելվածի առաջին արևելահայերեն հրատարակությունը լույս է տեսել 2005 թ., իսկ երկրորդը՝ 2011 թ.⁶:

Որպես փաստական նյութ կիրառվել է Դորա Սաքայանի 2011 թ. Երևանում վերահրատարակած տարբերակը: Ըստ կառուցվածքի և բովանդակության օրագիրը կարելի է բաժանել երեք մասի՝ ներածական, բուն նյութ և վերջաբան: Սաքայանը Կարապետ Խաչերյանի օրագրի ներածականում գրում է. «Ո՞րն է Խաչերյանի օրագրի պատմական արժեքը, ինչո՞վ է այն տարբերվում հայ քրիստոնյայի դարավոր տառապանքները նկարագրող՝ ցայսօր հրապարակված նյութերից: Նախ՝ կարևոր է նկատել, որ այստեղ մեր ձեռքին ունենք ոչ թե հուշագրություն, այսինքն՝ տարիներ անց հուշերի վրա հիմնված մի պատմություն, այլ օրագրություն՝ դեպքերն ու իրադարձությունները խորապես վերապրող ակնաստեսի արձանագրած փաստացի նյութ: Եկատի ունենալով, որ Խաչերյանը հանդես է գալիս որպես նկարագրվող դեպքերի ժամանակակիցն ու մասնակիցը և դրանք անմիջականորեն վավերագրողը, օրագիրը պետք է դիտարկել որպես սկզբնաղբյուր»⁷:

Լիդյա Գինգբուրգը, նշելով փաստաթղթի գեղագիտական իմաստի տարբերությունները, առանձնացնում է օրագիրը հուշագրությունից: Նրա կարծիքով՝ նամակներն

4 Даря Кутузова, “Терапевтическое ведение дневника по методу Айры Прогоффа,” <http://hpsy.ru/public/x3633.htm/>, դիտվել է՝ 28.04.2023.

5 Տօթթ. Կարապետ Խաչերյան, *Զմյուռնիական արկածներս 1922-ին*: Գրքի արևմտահայերեն հրատարակությունը պատրաստել է Դորա Սաքայանը, 1-ին հրատ. (Մոսկվա, 1995), Տօթթ. Կարապետ Խաչերյան, *Զմյուռնիական արկածներս 1922-ին*, 2-րդ հրատ. (Մոսկվա, Արոդ, 1997):

6 Դորա Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, արևմտահայերեն տեքստերը արևելահայերենի փոխադրեց Լարիսա Գևորգյանը, 1-ին հրատ. (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005), 2-րդ հրատ. (Երևան, ԵՊՀ, 2011):

7 Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 23:

ու օրագրային գրառումները, ի տարբերություն հուշերի, ինքնակենսագրականների, խոստովանությունների, միշտ հեռու են ընթերցողին ուղղված լինելուց⁸:

Հիշատակարաններն ու օրագրերը կառուցվածքային առանձնահատկություններով են տարբերվում. օրագրերը իրադարձությունների անմիջական արձանագրմամբ և դեպի ներկա կողմնորոշմամբ տարբերվում են հուշագրային արձակից, որը բնութագրվում է հետահայացությամբ: Օրագիրը թերևս «ամենահեղինակային» ժանրն է:

Ըստ Օ. Գ. Եգորովի՝ օրագրերում ամեն ինչ թաքնված է, խմբավորված է այն ամենը, ինչ առավել բնորոշ է գրողի անձին⁹: Փաստորեն, գործ ունենք ոչ թե միջնորդների, այլ հենց հեղինակի անձի հետ: Օրագիրը չի արտացոլում, չի գծագրում մարդու կերպարը. դա նրա հոգու, արարքների, բնավորության մի մասն է: Օրագիրն իրադարձությունների պարբերական վավերագրությունն է բավական խիստ հաջորդականությամբ և սովորաբար գործողության ժամանակի և վայրի ճշգրիտ նշումով:

Օրագրում քրոնոտոպը իրական է և ոչ իդեալականացված ինչպես էպոսում կամ դրամայում: Օրվա իրադարձություններն անկանխատեսելի են և պայմանավորված են ոչ թե մտացածին պատճառահետևանքային կապերով, այլ կյանքի ինքնաբուխ հոսքով: Այս ժանրի արտաքին նշաններն են հիմնարար մասնատվածությունը, առաջին դեմքով շարադրանքը: Հեղինակը համոզված է, որ պայքարն անհրաժեշտ է, սակայն ոչ արյունալի պատերազմներով ու հեղափոխություններով, այլ իր ներսում չարի դեմ: Համաշխարհային մշակութային փոփոխություններն ապացուցում են, որ չարիքի խնդիրը համամարդկային է:

Համառոտ ներկայացնենք բժիշկ Կարապետ Խաչերյանի կենսագրությունը: Ծնվել է 1876 թ. Պարտիզակում, որի բնակչության գերակշռող մասը հայեր են եղել: Այստեղ ստանում է նախնական կրթությունը: 1907 թ. ամուսնանում է Էլիզա Կոստանյանի հետ և ունենում երեք որդի և երկու դուստր: Առաջին աշխարհամարտի տարիներին որպես բժիշկ ծառայում է թուրքական բանակում: 1918 Խաչերյանը զորացրվում է և ընտանիքի հետ բնակություն հաստատում Զմյուռնիայում: Շուտով բարձր դիրքի է հասնում և ստանձնում բարձրաստիճան մասնագիտական պաշտոններ: Մասնակցում է հայ գաղութի հասարակական կյանքին, սակայն 1922 թ. նրա գործունեությունն ընդհատվում է. թուրքերը ձերբակալում և բանտարկում են նրան: Բանտարկության ընթացքում ականատես է դառնում հայերի և հույների տանջանքներին: 1922 թ. սեպտեմբերի 24-ին Խաչերյանների ընտանիքին հաջողվում է շոգենավ նստել և փախչել Հունաստան՝ Միտիլինի: 1923 թ. Խաչերյանն ընտանիքով տեղափոխվում է Սալոնիկ և նշանակվում մանկական դարմանատան գլխավոր բժիշկ¹⁰:

Ամերիկացի հոգեբան Էրվին Ստորը ներմուծել է «դժվարին ժամանակներ» հասկացությունը. դրանք նախորդում են ցեղասպանությանը¹¹:

8 Лидия Гинзбург, “О психологической прозе,” <http://19v-euro-lit.niv.ru/19v-euro-lit/ginzburg-opsihologicheskoy-proze/index.htm/>, դիտվել է՝ 02.03.2023.

9 Օ. Г. Егоров, *Русский литературный дневник XIX века: История и теория жанра* (Москва: Флинта-Наука, 2003), 280.

10 Սաքայան, *Զմյուռնիա 1922. Բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 9-12:

11 Ervin Staub, *Overcoming Evil: Genocide, Violent Conflict, and Terrorism* (Oxford, Oxford University

Խաչերյանի օրագրում այնպիսի տեսարանների նկարագրություններ կան, որ հիմք են տալիս ենթադրելու ցեղասպանության վտանգի մասին. «...սեպտեմբեր 1, ուրբաթ.- ամբողջ քաղաքը խուճապի է մատնված. Կարահիսարից, Ուշաքից, Ալաշեհիրից (Alaşehir) և այլ վայրերից փախչող գաղթականներն անանցանելի են դարձրել փողոցները. պանդոկները լցված են: ...Մենք էլ տանը անհանգստանում ենք և մտածում, թե ինչ միջոցով կարող ենք ժամ առաջ մերոնց մեզ մոտ բերել»,¹² այնուհետև կարդում ենք. «Սեպտեմբեր 3, կիրակի.- ...Տեղական թերթերը սուտ ու պատիիր լուրեր են տպագրում...: ...Ժողովուրդը չի հավատում և վախենում է առավելապես հույն զինվորից, որոնք իրենց շարքերից դասալիք դարձած, խումբ-խումբ անցնում են փողոցներով և բացեփակ, չնչին գներով վաճառում են իրենց զենքերն ու հագուստները...: ...Սեպտեմբերի 4, երկուշաբթի.- Փողոցներում խիստ ակնառու է գավառացի քրիստոնյաների իրարանցումը...: ...Զինվորական պիտույքները և գույքերը այս ու այն կողմ են նետված: Աստեր են մնացել նույնիսկ ձիերը, կովերը, ոչխարները...»¹³:

Հետաքրքրական է, որ էթնիկական նահանջի և նոմադիզմի¹⁴ երևույթը ստվերի նման ուղեկցում է Խաչերյանին. «Սեպտեմբերի 9, շաբաթ.- ...Թուրք առաջապահները հասել են թուրքական թաղերը և տեղացի թուրքերի օգնությամբ փորձում են կտրել հելլենների նահանջի գիծը...: ...Ամբողջ ճանապարհը լցված է նահանջող զինվորներով...»¹⁵:

Պետք է նկատի ունենալ, որ էթնոհոգեբանական նահանջը ինքնապաշտպանական բնույթ ունի: Մարդկանց ֆրոստրացիայի և հոգեբանական ինքնապաշտպանության մեխանիզմների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ահագնացող և մշտական տագնապի պայմաններում մարդը, հոգեկան անդորր գտնելու ակնկալիքով, կարող է մի վայրից մյուսը տեղափոխվել: Նոր վայրում, սակայն, տագնապը կարող է խորանալ՝ ստիպելով մարդուն կրկին ճանապարհ ընկնել. նոր վայրը դիտարկվում է որպես փրկող հանգրվան: Էթնոպաշտպան այս մեխանիզմը, բավական վտանգավոր երևույթ է, մասնավորապես էթնիկ խմբերի համար, քանի որ անգամ ֆիզիկական բնաջնջումից փրկվելու դեպքում մեկ այլ վայրում էթնոսը կարող է ն՝ քանակապես, ն՝ որակապես տուժել՝ երբեմն անդառնալիորեն կորցնելով էթնիկ կարևոր առանձնահատկություններ: Տեղին է հիշատակել Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպում ներկայացվող հայ գաղթականի հոգեմիճակի բազմաշերտ փոփոխությունները, որոնք անձին այնպես են կտրում ինքնությունից, որ անգամ մեծ ցանկության դեպքում չի կարողանում վերագտնել: Հերոսը մոռանում է մայրենի լեզվով Տերունական աղոթքը. «Չեն յիշեր կոր, Կոստան, մեղքցի ինձի, ես իմ «Հայր մեր»-ս չեմ յիշեր կոր...»¹⁶:

Press, 2011).

12 Սաքայան, *Զմյուռնիա 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 31:

13 Նույն տեղում, 32-33:

14 Նոմադիզմ՝ քոչվորություն:

15 Սաքայան, *Զմյուռնիա 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 37-39:

16 Շահան Շահնուր, *Նահանջը առանց երգի* (Պէյրուք, Սեան, 1981), 182:

Անձնային-էթնիկ փոխակերպման հնոցով Խաչերյանը հաճախ է անցնում՝ փորձելով այդկերպ պարզապես ողջ մնալ. «Սեպտեմբեր 11, երկուշաբթի.-...Գնում եմ մսավաճառի խանութ. խանութպանը, դատելով գինվորական շքանշանիցս և ոսկե մահիկիցս, ինձ թուրք պաշտոնավորի տեղ է դնում... խնդրում է, որ փոքր-ինչ սպասեմ, որ լավ միս ստանամ: Թուրքը կրկին ի պատվի է: Նստում եմ իբրև թուրք և դիտում հրապարակը... Սեպտեմբեր 13, չորեքշաբթի.-...Հայնոցի հրդեհը ավելի ընդարձակ է, ավելի ծավալուն...հանդիպում եմ մի թուրքի, որ մտենում է ինձ և ասում. «Մենք ամենի ինչ արեցինք, դուք ետ դարձեք»: Թուրքը, որ անշուշտ, հրդեհի հարցում գործուն մասնակցություն էր ուներ, ինձ ևս իր ցեղակիցը և գործակիցներից մեկը կարծելով՝ թելադրում է, որ այլևս չառաջանամ, այլ ետ դառնամ: Իրողությունը հասկացողի նման պատասխանում եմ՝ «չատ լավ» և կանգ առնում մի պահ...»¹⁷:

Ահագնացող տագնապը հեղինակն արտահայտում է բավական զուսպ եղանակով, ինչը խոսում է Խաչերյանի՝ որպես բժշկի, ռեֆլեքսիայի բարձր մակարդակի և արտակարգ իրավիճակներում հուզական կայունությունը պահպանելու ներքին կարողության, ինքնակարգավորման մասին: «Ներկայի շրջանը» հեղինակը պատկերում է մանրամասնորեն՝ դրանով կարգավորելով իր իսկ հոգեբանական ժամանակը, որում զգայական ընկալումը փորձում է վերածել նկարագրական պատկերի՝ այդկերպ պահպանելով խելամտության սահմանը և սթափ բանականությունը. «...Սեպտեմբերի 9, շաբաթ.- Տաղտկալի գիշեր եմ անցկացնում: Կեսգիշերին դուրս եմ գալիս պատշգամբ և դիտում հույն հեծյալների խուճապահար փախուստը...Վերադառնում եմ անկողին՝ ուժասպառ մարմինս և փոթորկված ուղեղս փոքր-ինչ հանգստացնելու. անկարելի է քնել: Վաղ առավոտյան վեր եմ կենում և պատրաստվում Կոկար Յալը (Kokar Yali) գնալ, բժշկուհի տիկին Տեփանյանի տանը վիրահատություն կատարելու նպատակով...: ...Անցնելով գինվորների շարքերի միջով՝ հասնում եմ տիկին Տեփանյանի տունը, որտեղ տեղեկանում եմ, որ վիրահատության ենթարկված կինը չի եկել: Չեմ սպասում և անմիջապես վերադառնում եմ նավամատույց: ...Կրկին վերադառնում եմ տուն և կնոջս հետ խորհրդակցելով՝ վճռում փոխադրվել նավահանգիստ և մի քանի օրով բնակվել Պերճ Միվրիհիսարյանի տանը: Մի քանի ամիս ի վեր այնտեղ բնակություն են հաստատել պրն. Երվանդ Ադամյանն ու նրա կինը՝ տիկ. Վերգինեն, որ մի քանի օրից գավակ պիտի ունենա և ում ծննդաբերության գործողությունը, ըստ նախնական պայմանավորվածության ինձ էր հանձնվել: ...Սեպտեմբերի 10, կիրակի.-Առավոտ է.պատշգամբից տեսնում ենք տասնհինգամյա մի պատանու դիակ... թերևս հրացանազակ են արել...: ...Հասնում եմ մեր տուն և ջանում դուռը բացել. չեմ կարողանում... կողպեքը փչացել է... Օրիորդ Տ. Գասպարյանի տան դիմաց մեծ քանակությամբ չորացած արյուն եմ տեսնում: Սակայն առանց ընկրկելու հասնում եմ հայկական մեծ պողոտա... Առանց հուզումս և հոգեկան տագնապս մատնելու՝ հետ եմ դառնում և մտնում Չալգըջը Բաշը ու հասնում տուն: Կրկին փորձում եմ բանալ դուռը, սակայն անկարելի է»¹⁸:

17 Սաբայան, *Զմյուռնիս 1922. բժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը*, 43-45:

18 Նույն տեղում, 36-42:

Ժամանակի ձգման ընկալումները բնորոշ են այն մարդկանց, որ անցում են կատարում նոր փուլի: «Ժամանակի լայնացում» հասկացությունը հիմնված է ժամանակագրական և որակական ժամանակների հիմնարար տարբերության վրա: Առաջինը իրադարձությունների օբյեկտիվ հաջորդականությունն է, երբ դրանք բացվում են արտաքին դիտորդի առջև: Որակական ժամանակը, ընդհակառակը, իրադարձությունների սուբյեկտիվ փորձն է, դրանց նշանակությունն ու արժեքն այն անձի համար, որն ապրում է դրանք:

Օրագրային գրառումներ կատարելիս կենտրոնում տեղադրվում է «ներկայի ժամանակաշրջանը»․ ինչպես իրադարձությունը սահման դարձավ անցյալի և ներկայի միջև: Ո՞րն է կյանքի ներկա շրջանի բովանդակությունը: Ինչպիսի՞ն է դրա հոսքը:

Ներկա ժամանակաշրջանը դիտարկվում է ինչպես ռացիոնալ, այնպես էլ ոչ ռացիոնալ տեսանկյունից: Մեկ այլ բարդ իրավիճակ է, երբ մարդը կանգնած է խաչմերուկում և պետք է ընտրություն կատարի երկու կարևոր ոլորտների միջև, որոնք առկա են նրա կյանքում, արդեն կարևոր մաս կազմում և շատ բան պահանջում: Կարող է թվալ՝ մարդը քմծիծաղ է տալիս, բայց նման իրավիճակում մեծ սթրես է ապրում: Երբեմն խոսքը ոչ թե ընտրության կամ ուղղությունների բախման, այլ ուղղակի շեշտադրումների փոփոխության մասին է, երբ մարդու կյանքում փոխվում է առաջատար գործունեությունը: Որպես կանոն, կյանքի այսպես կոչված նոր ուղղությունը, ըստ էության, բոլորովին նոր չէ․ այն նախադրյալներ ունի մարդու անցյալի փորձառության մեջ, պարզապես այս ուղղությանը պատկանող իրադարձությունները դեռ կիրառելի են չեն եղել:

Նախկին բռնադատվածի պատմությունն առաջին պլան է մղվում և դառնում դոմինանտ: Երբեմն «նոր» գլխավոր հերոսը ցանկանում է հնարավորինս հակադրվել հինի: Ինչ-որ պահի մարդը կարող է սովորել ավելի շատ նույնանալ իր ավելի մեծ և բազմաչափ կողմի հետ. դա թույլ է տալիս ընդունել տարբեր, երբեմն հակասական, բայց և հավասարապես նախընտրելի հերոսների համակեցությունը: Իտալերյանի օրագրում հանդիպում ենք նման նկարագրության, մասնավորապես՝ երբ հեղինակը բանտարկյալ է և իր հոգեմաշ օրերն է անցկացնում թշնամու տարածքում. «Սեպտեմբերի 20, չորեքշաբթի.-Այս գիշերվա ժամերը բանտարկությանս ընթացքի, գուցե և ամբողջ կյանքիս ամենասարսափելի ժամերը եղան: Անկարելի է նկարագրել այն սարսափն ու հոգեկան սարսուռը, որ զգում էինք ամեն անգամ, երբ տեսնում էինք որևէ գինավորի մոտենալը: Մի բույս իսկ մեր աչքերը չփակեցինք, ու ժամերը ամիսների տևողություն ունեցան.... Սեպտեմբեր 21, հինգշաբթի.-...Մեզ համար շոգենալ, թե օդանավ՝ միննույնն է. բավական է, որ մի անգամ դուրս գանք այս դժոխքից, որտեղ տանջվեցինք չորս դարերի տևողություն ունեցող ամբողջ չորս օրեր»¹⁹:

Իտալերյանի օրագրում հանդիպում ենք նաև ինքնության պահպանման սիմվոլային ձևերի, մասնավորապես՝ սեփական տան ամբողջականության պահպանումը տարածության և ժամանակի մեջ դիտվում է որպես «ես»-ի և «մենք»-ի հոգեբանական համատեղում, որպես եզակի հնարավորություն անցյալին հավատարիմ մնալու

19 Նույն տեղում, 73-74:

և այդպես հուզական ծանր բեռին հոգեբանորեն դիմակայելու. «...Սեպտեմբեր 13, չորեքշաբթի.-Չալգրջը Բաշրի տունն աչքի անցկացնելու նպատակով՝ դուրս եմ գալիս.... հեռվից դիտում եմ մեր տան պատշգամբն ու պատուհանները, որոնք անվնաս են մնացել: Դռան վրա կողմնակի հայացք եմ գցում և տեսնում, որ դուռը փակ է և անեղծ է մնում: Տան հանդեպ ունեցած հետաքրքրությունս բավարարելուց հետո կատարյալ սառնասրտությամբ մտնում եմ հանդիպակաց անցուղին.... Ուրախ եմ՝ տեսնելով, որ հունական թաղերում հանդարտություն է իշխում, և որ մեր տունը անվնաս է մնացել.... »²⁰:

Օրագրում կյանքի ոչ մի փորձառություն չի անտեսվում: Այս հարթության վրա հատուկ ուշադրություն է դարձվում երազանքների և երևակայությունների հոսքին: «Դրոգոֆի համոզմամբ՝ պատկերների և սիմվոլների հոսքը մշտապես է, բայց արթնության ժամանակ այն թաքնված է ռացիոնալ մտածողության շերտի տակ: Սիմվոլիզացիայի օրինակ է հրդեհի կերպավորումը. «Սեպտեմբերի 13, չորեքշաբթի.-Հայոց թաղը կրակի է տված.... հրդեհը միտումնավոր է.... հրդեհի ծավալմանը գուցենթաց նավահանգստում բազմապատկվում է ահուդողի մատնված մարդկային էակների ալիքը.... բոցեղեն ամպերի վերածումից գոյանում է դժոխային պատկեր, որի նմանը երբեք մինչ օրս չեմ տեսել.... Երեք մահասարսուռ ազդակների՝ հրի, սրի ու ջրի միջև ենք գտնվում: Մեր վիճակը ամբողջովին հուսահատական է.... Կրակը, հրազենն ու թուրքի մտրակը երեք կողմից սեղմել են քրիստոնյա ամբոխին»²¹:

«Սև օրերը» հայի կյանքում դեռ պիտի շարունակվեին, ջրին ու սրին պիտի գումարվեր «հուր-կրակը», որի գործառույթը թերևս ամենադաժանն է. «Սեպտեմբերի 13, չորեքշաբթի.- Բոցերը հետզհետե մոտենում են մեր բնակարանին: Այրվող նյութերի ճարճատյունից ու պայթուցիկների՝ բոցեղեն ամպերի վերածումից գոյանում է մի դժոխային պատկեր, որի նմանը մինչ օրս չեմ տեսել: Դուլսում և այլ քաղաքներում լայնածավալ հրդեհներ տեսել էի: Դարդանելի և Ռումինիայի ռազմայրերում ականատես էի եղել քաղաքների և գյուղերի հրկիզման, բայց այդ հրդեհները ինձ վրա մեծ տպավորություն չէին թողել: Իզմիրի հրդեհը աննկարագրելի էր և անբացատրելի»²²:

Հետաքրքիր են Խաչերյանի՝ անհատի և էթնոկրի համաձույլ հուսահատությունն արձանագրող հետևյալ տողերը. «Այլևս հույս չի մնացել մեզ համար, մեր ոչնչացումը ժամերի հարց է»²³:

«Ես»-ի և «մենք»-ի հոգեբանական համատեղումը կրկին ակնհայտ է. «...մենք մահվան սարսուռ ենք զգում՝ ինքներս մեզ վերջին դատաստանի գոհերը համարելով»²⁴:

Մտքի շարունակությունը փաստում է հեղինակի հոգեբանական հասունությունը, ինչը թույլ է տալիս անգամ ամենաձանր իրավիճակում ելք տեսնել և կյանքը որպես

20 Նույն տեղում, 46:

21 Նույն տեղում, 47-50:

22 Նույն տեղում, 48:

23 Նույն տեղում:

24 Նույն տեղում:

բացարձակ արժեք ընդունել. «...Սակայն և այնպես կյանքը քաղցր է, և հուսահատական այս թույլներին անգամ ապրելու տենչանքը մեզ չի լքում»²⁵:

Ահա ևս մեկ պատկեր. «Մեպտեմբեր 14, հինգշաբթի.-Ծովափի մոտ խարսխված օտար փոխադրանավերի և զրահավորների մեջ դեպի մեզ ուղղված շարժանկարի գործիքներ՝ մեր թշվառությունը պատկերող ֆիլմեր նկարահանելու համար: Այդ լուսանկարիչները և նրանց գերերջանիկ ընկերները մեր տանջանքների պարզ հանդիսատեսն են: Նրանք մերժում են ապաստան տալ նույնիսկ լողալով կամ մակույկներով նրանց մոտեցողներին, որպեսզի պահպանված լինեն իրենց քաղաքական չեզոքությունը: Քաղաքակրթությունը, մարդասիրությունն ու քրիստոնեությունը սին բառեր են դարձել նրանց համար»²⁶:

Դժվար է հասկանալ՝ ինչն է ավելի շատ ցնցում հեղինակի հոգին՝ թուրքի անթաքույց բարբարոսությունը, թե՛ «օսլայած հոգիների և ձյունաճերմակ ձեռնոցակիրների» անբարո չեզոքությունը, որի պատճառով պատմությունը ոչ միայն չի ավարտվում, այլև կրկնվում է. «...Հենց այս դժոխային կրակը իր ավերիչ դերը կատարեց՝ թողնելով քրիստոնյա ամբողջ բնակչությանը անտուն և անօգնական, եվրոպացիները մտածեցին, թե ինչպես կարող են տարբեր ձևերով ցույց տալ իրենց մարդասիրությունն ու գթասրտությունը...»²⁷:

Խաչերյանի կյանքի հոգեմաշ իրողությունները սկսվում են նրա ձերբակալությունից հետո. «Մեպտեմբեր 15, ուրբաթ.- ...Ձերբակալված ենք ...Բանտարկված ենք որպես ռազմագերի: Հազար անգամ անիծում ենք այն վայրկյանը, երբ մեր մեջ հղացավ մեր տները տեսնելու գաղափարը. անխոհեմաբար, մեր իսկ ոտքով եկանք հասանք ոստիկանատուն և կամավոր կերպով գերի հանձնվեցինք: Բայց այլևս ամեն բան վերջացած է...»²⁸:

Այս հատվածը համընկնում է Պրոգոֆի առանձնացրած «Երկխոսություն իրադարձությունների, իրավիճակների և հանգամանքների հետ» ենթաբաժնի տիպային նկարագրությանը: Ներկան այնքան սարսափեցնող է, որ անձը, ինքն իր հետ երկխոսության մեջ մտնելով, փորձում է դրանք վերակառուցել, վերանայել կամ, անգործությունից դրդված, համակերպվել: Բազմաթիվ փորձությունների ենթարկվելով՝ Խաչերյանն անընդհատ հայտնվում է կյանքի և մահվան խաչմերուկում: Ֆիզիկական ոչնչացման զգացողությունն ուղեկցվում է ինքնության ճգնաժամով. «Մեպտեմբերի 17, կիրակի.-Մայրամուտից առաջ 45-ից բարձր տարիք ունեցող բանտարկյալներին կանգնեցնում են չորսական շարքերով ...Իրականում ես 46 տարեկան եմ, թեև փաստաթղթերիս մեջ երկու տարի պակաս է գրված: Ձեռքը մտրակ բռնած մի սպա սկսում է քննությունը ...Կողքովս անցնում է առանց դիտողության.... Քննությունը ինձ համար նպաստավոր է անցնում և եթե ուրիշ առիթով չպիտի ցանականայի ավելի տարեց երևալ, հիմա ուրախ եմ, որ հաստատվում է 45-ից բարձր լինելու.... մտածում

25 Նույն տեղում:

26 Նույն տեղում, 51:

27 Նույն տեղում, 53:

28 Նույն տեղում, 58:

եմ ընտանիքիս միանալու մասին... Մթնշաղին մեզ հրաման է տրվում, որ գնանք մեր տեղերը: Բայց ո՞րն է մեր տեղը... »²⁹:

Այս հարցադրումը հեղինակի համար առավել քան գոյաբանական, ինքնության պահպանման իմաստ ունի, քանի որ ուղղված է ոչ միայն անհատին, այլև ամբողջ քաղաքակիրթ աշխարհին:

Բանտում Խաչերյանն անցնում է կոշիկներից գրկվելու փորձության միջով. «Սեպտեմբերի 17, կիրակի.-Ծովափը լցված է սուկալի աղտեղությամբ, և ալիքների երեսին ծփում են մարդկային դիակներ. Մի քանի թուփեր ետ եմ դառնում: Մի գինվոր առաջարկում է ինձ կոշիկներս հանել և փոխել իր կոշիկների հետ: Առարկում եմ ասելով, թե իր կոշիկներն իմ ոտքերին հարմար չեն: «Ուրեմն ոտաբոքիկ կմնաս», - ասում է նա.... Այն ժամանակ ես էլ համարձակվում եմ ասել. «Արի գնանք հարյուրապետիդ մոտ և քեզ հասկացնեն, թե ով եմ ես»: Զինվորը շփոթվում է և ինձ թողնում-հեռանում.... Սեպտեմբեր 18, երկուշաբթի.-Քիչ հետո մի ուրիշ գինվոր է գալիս կոշիկներս համար, նրա հետ էլ նույն կերպ եմ վարվում և հեռացնում.... Սեպտեմբեր 21, հինգշաբթի.-Մի գինվոր էլ ինձ է մոտենում՝ ջրով լցված ամանը ձեռքին ու հրամայում է, որ կոշիկներս հանեմ: Առարկում եմ՝ ասելով, թե դրանք իր ոտքերին հարմար չեն լինի, և որ ներսում շատ զինվորներ դրանք աչքի անցկացրեցին և չհավանեցին: «Նրանց չհավանածը ես կհավանեմ, հանիր կոշիկներդ, թե չէ ջրամանը.... հիմա գլխիդ կուտես», - ավելացնում է նա: Դժվար կացության մեջ եմ: Ճիշտ այս մեկնելուս պահին ինչպես գրկվեմ կոշիկներիցս, որ ամեն բանից ավելի կարևոր են, մանավանդ եթե ստիպված լինենք հետիոտն դեպի հեռավոր վայրեր ուղղվել: ...Վերջապես ցույց եմ տալիս կոշիկս, որի ներբանը ծակ էր, քանի որ գորանցում դիտմամբ պատռել էի, և զինվորին ասում, որե այս կոշիկները մի օր անգամ չեն դիմանա: Զինվորը համոզվում է....»³⁰:

Յուրաքանչյուր պահի մանրամասն նկարագրությունը ցույց է տալիս, որ Խաչերյանը կերպավորում է կոշիկը: Փաստորեն գործ ունենք առարկայի ֆետիշացման երևույթի հետ, որ արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակներում կարող է անձի ինքնության կամ ինքնագիտակցության կարգավորման համար վճռորոշ նշանակություն ունենալ: Հեղինակի համար կոշիկներից բաժանումը կնշանակել «ես»-ի անդառնալի կորուստ տարածության և ժամանակի չափումներում:

Հրաշքով ազատվելով գերությունից և անասելի, մարդկային էությունն ու արժանապատվությունը ոտնահարող իրականությունից՝ Կարապետ Խաչերյանն ընտանիքի հետ բաց ծովում կրկին հայտնվում է գոյաբանական վակուումի ճիրաններում՝ փնտրելով բազմաթիվ հարցերի պատասխաններ, վերապրելով հոգեցունց տեսարաններ, որոնք հիշողությունը դարձնում են ծանր բեռ՝ անցյալը, ներկան և ապագան մեկտեղող հասուն անձի համար:

29 Նույն տեղում, 68:

30 Նույն տեղում, 68-75:

**THE DIARY METHOD AS AN INTERNAL MECHANISM FOR THE
EXPRESSION OF SPIRITUAL REALITY (ON THE MATERIALS OF
THE DIARY OF DOCTOR GARABED HATCHERIAN)**

Armine V. Vahanyan

State Academy of Crisis Management of the Ministry of Internal Affairs of Armenia

SUMMARY

The article presents a psychological analysis of Dora Sakayan's version of "Smyrna 1922: the Diary of Doctor Garabed Hatcherian," which considers the diary method as a unique mechanism of human self-regulation in a traumatic reality. The diary method, perhaps, best suits the internal needs of the subject, reflecting reality in specific and complete images. A diary is also a memory: it allows you to record on paper what is happening right now, to leave it in history exactly as it is perceived. Working with a diary, as a method of psychological self-help, goes beyond the medical model of psychotherapy, becomes a portfolio of personal and spiritual development, a reflective surface, and their specificity and focus become visible to the person himself. K. Hatcherian's diary in this sense helps the author not only live the present time but also indicates the movement of mental feelings characteristic of a person who finds himself in an existential vacuum.

Key words: diary method, means of self-regulation, mental stress, anxiety, existential vacuum, psychological retreat, time dilation, depression, quality of time, genocide, the meaning of life.

**ДНЕВНИКОВЫЙ МЕТОД КАК ВНУТРЕННИЙ МЕХАНИЗМ
ВЫРАЖЕНИЯ ДУХОВНОЙ РЕАЛЬНОСТИ
(По материалам дневника доктора Карапета Хачеряна)**

Армине В. Ваганян

Государственная академия кризисного управления

Министерства внутренних дел, Армения

РЕЗЮМЕ

В статье представлен психологический анализ версии Доры Сакаян "Смирна 1922: Дневник доктора Карапета Хачеряна," рассматривающий дневниковый метод как уникальный механизм саморегуляции человека в травмирующей реальности. Дневниковый метод, пожалуй, лучше всего соответствует внутренним потребностям

субъекта, отражая реальность в конкретных и полных образах. Дневник – это тоже память: оно позволяет зафиксировать на бумаге то, что происходит прямо сейчас, оставить это в истории именно таким, каким оно воспринимается в данный момент. Работа с дневником, как метод психологической самопомощи, выходит за рамки медицинской модели психотерапии, становится портфолио личностного и духовного развития, рефлексивной поверхностью, а их специфика и направленность становятся видимыми самому человеку. Дневник К. Хачеряна в этом смысле помогает автору не только прожить настоящее время, но и указывает на движение душевных чувств, характерное для личности, оказавшейся в экзистенциальном вакууме.

Ключевые слова: дневниковый метод, средства саморегуляции, психическое напряжение, тревога, экзистенциальный вакуум, психологическое отступление, кочевничество, замедление времени, депрессия, качество времени, геноцид, смысл жизни.

REFERENCES

Alekseev, Andrey. “Письмо, дневник, автобиография: многообразие форм и сопряжение смыслов (теоретико-методологические заметки)” [Letter, Diary, Autobiography: Variety of Forms and Connection of Meanings (Theoretical and Methodological Notes)], *Telescope: Journal of Sociological and Marketing Research* 4 (2007), 46-56;

Egorov, O. G. *Русский литературный дневник XIX века: История и теория жанра* [Russian Literary Diary of the 19th Century. History and Theory of the Genre]. Moscow: Flinta-Nauka, 2003;

Kozlova, Natalya. “Опыт социологического чтения ‘человеческих документов,’ или Размышления о значимости методологической рефлексии” [The Experience of Sociological Reading of ‘Human Documents,’ or Reflections on the Significance of Methodological Reflection], *Sociological Research* 9 (2000), 22-32;

Sakayan, Dora. *Զմյուռնիս 1922. քժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* [Smyrna 1922: Doctor Garabed Hatcherian’s Diary]. Yerevan: AGMI, 2005;

Sakayan, Dora. *Զմյուռնիս 1922. քժիշկ Կարապետ Խաչերյանի օրագիրը* [Smyrna 1922: Doctor Garabed Hatcherian’s Diary]. Yerevan: Yerevan State University, 2011;

Shahnour, Shahan. *Նստանքը առանց երգի* [Retreat Without Song]. Beirut: Sevan, 1981;

Տորթ. Կարապետ Խաչերյանի օրագիրը՝ *Զմյուռնիսական արկածներս 1922-ին* [Doctor Garabed Hatcherian’s Diary. My Smyrna Ordeal of 1922]. Montreal, 1995.

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Արմինե Վ. Վահանյան, ՀՀ ներքին գործերի նախարարության Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի դասախոս, «Դիալոգ» ՀԿ հոգեբան:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ էթնոհոգեբանություն և ցեղասպանության հոգեբանություն, քրիստոնեական հոգեբանություն, հոգեբանական օգնություն ճգնաժամային իրավիճակներում, հոգեբանական անվտանգություն, սոցիալական հոգեբանություն, ընտանիքի հոգեբանություն, զարգացման հոգեբանություն, անձի հոգեբանություն, հոգեբանական խորհրդատվություն:

Էլեկտրոնային հասցե՝ a.v.vahanyan@gmail.com

Armine V. Vahanyan, Lecturer at the State Academy of Crisis Management of the Ministry of Internal Affairs of Armenia, psychologist at “Dialog” NGO.

Research fields: ethnopsychology and psychology of genocide, Christian psychology, psychological assistance in crisis situations, psychological safety, social psychology, family psychology, developmental psychology, personality psychology, and psychological counseling.

E-mail: a.v.vahanyan@gmail.com

Армине В. Ваганян, преподаватель Государственной академии кризисного управления МВД Республики Армения, психолог НПО “Диалог”.

Область исследований – этнопсихология и психология геноцида, христианская психология, психологическая помощь в кризисных ситуациях, психологическая безопасность, социальная психология, психология семьи, психология развития, психология личности, психологическое консультирование.

Эл. почта: a.v.vahanyan@gmail.com

ԻՐԱՔԻ ՔՐԴԵՐԻ ԴԵՄ «ԱՆՖԱԼ» ԱՐՇԱՎԸ

Նարեկ Մ. Պողոսյան

«Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամ, Հայաստան

Հողվածում ներկայացվում է այն իրողությունը, որ տարածաշրջանային էթնոքաղաքական ակտիվ խմորումների հետևանքով քրդերը ժամանակի ընթացքում հայտնվել են ցեղասպանական տարբեր գործընթացներում՝ մի դեպքում հանդես գալով որպես ոճրագործներ, ականատեսներ, պատահական դիտորդներ (ինչպես եղել է Օսմանյան կայսրությունում հայ, հույն, ասորի և եզդի բնակչության կոտորածների ժամանակ), մեկ այլ ժամանակահատվածում՝ 1987-1989 թթ., հայտնվելով ցեղասպանական բռնությունների թիրախում, երբ Սադամ Հուսեյնի իշխանությունը Հյուսիսային Իրաքի քրդական բնակչության դեմ «Անֆալ» գործողությունն է սկսում, որն ընդհանուր առմամբ ընթանում է ութ փուլով՝ պատճառ դառնալով, որ հազարավոր քրդեր սպանվեն կամ տեղահանվեն:

«Անֆալ»-ի հիմնական տարրերից է եղել արաբացման գործընթացը: Քուրդ բնակչության դեմ հարձակումները հաճախ ուղեկցվել են քիմիական զենքի կիրառմամբ (հատկապես Հալաբջայի վրա հարձակման ընթացքում քաղաքացիական բնակչության շրջանում բազմաթիվ զոհեր են եղել):

Սակայն, 2003 թ.՝ Սադամ Հուսեյնի ռեժիմի տապալումից հետո, առերեսվելով նրա իշխանության իրագործած հանցագործություններին, Իրաքը ոչ միայն «Անֆալ»-ի հարցով դատական գործընթացներ է նախաձեռնել, այլև «Անֆալ» արշավը ճանաչել է որպես ցեղասպանություն: Իրաքի քրդերի շրջանում «Անֆալ»-ի հիշողությունը դարձել է քրդական ազգային ինքնության կարևոր բաղկացուցիչ տարրերից մեկը:

Բանալի բառեր՝ քրդեր, համիդիե զնդեր, Օսմանյան կայսրություն, Իրաքյան Քուրդիստան, ցեղասպանություն, մարդկության դեմ ուղղված հանցագործություններ, իրանա-իրաքյան պատերազմ, քիմիական զենք, Հալաբջա, արաբացում:

Հողվածը ներկայացվել է՝ 02. 02. 2023: Ընդունվել է տպագրության՝ 17. 08. 2023:

The article was submitted on 02. 02. 2023 and accepted for publication on 17. 08. 2023.

Статья поступила 02. 02. 2023 и была принята к публикации 17. 08. 2023.

Ինչպես հղել՝ Նարեկ Մ. Պողոսյան, «Իրաքի քրդերի դեմ «Անֆալ» արշավը», *Ցեղասպանագիտական հանդես* 11, no. 2 (2023), 114-154:

How to cite: Narek M. Poghosyan, “The ‘Anfal’ Campaign against the Kurds of Iraq,” *Ts’eghaspanagitakan handes* 11, no. 2 (2023): 114-154.

Как ссылаться: Нарек М. Погосян “Кампания ‘Анфаль’ против курдов Ирака,” *Цехаспанagitakan andes* 11, no. 2 (2023): 114-154.

Ներածություն

Յեղասպանությունները մարդկության պատմության ամենամութ էջերից են, որոնք մի կողմից ցույց են տալիս մարդկային դաժանության խորությունը և չարիքի կարողությունը, մյուս կողմից՝ անջնջելի հետք թողնում տուժած խմբի վրա: Էթնիկ, կրոնական և ռասայական որոշ խմբեր պատմականորեն ավելի խոցելի են եղել հետապնդումների և/կամ ցեղասպանության թիրախ դառնալու տեսանկյունից, սակայն դա չի նշանակում, որ մյուսներն ապահովագրված են այդ ամենից: Եթե հայերի դեմ Օսմանյան կայսրության իրագործած ցեղասպանության ժամանակ քրդերը մասնակցում էին հանցագործության կատարմանը, ապա մեկ այլ դեպքում հենց նրանք են հայտնվում ցեղասպանական գործողությունների թիրախում. պատմության ընթացքում տեղի ունեցած ցեղասպանական բազմաթիվ հանցագործությունների շարքում ողբերգական դրվագներից մեկը Իրաքի քուրդ բնակչության դեմ ուղղված «Անֆալ» անվանումը ստացած ցեղասպանական արշավն է:

Այլ ցեղասպանությունների հետ համեմատության մեջ դիտարկելու առումով կարևոր նշանակություն է ստանում այն հարցի պարզաբանումը, թե պատմական տարբեր փուլերում քրդերն ընդհանրապես ինչ առնչություն են ունեցել ցեղասպանություն երևույթի հետ:

Քրդերը՝ որպես «ցեղասպանությունների ազգ»

Քրդերն իրանալեզու ժողովուրդ են: Բնակվում են հիմնականում Արևմտյան Ասիայի լեռնային հատվածում, որը ներառում է հարավարևելյան Թուրքիան, հյուսիսարևմտյան Իրանը, հյուսիսային Իրաքը և հյուսիսային Սիրիան¹: Քրդական համայնքներ կան Եվրոպայում, ԱՄՆ-ում, Կանադայում և նախկին ԽՍՀՄ երկրներում:

Քրդերենը հնդեվրոպական լեզու է: Ունի մի շարք բարբառներ: Դրանցից ամենատարածվածը քուրմանջին է, որով խոսում է Թուրքիայի և Սիրիայի քրդերի մեծ մասը, ինչպես նաև Իրաքի և Իրանի քրդերի որոշ մասը: Մյուս բարբառը սորանին է, որով խոսում է Իրանի և Իրաքի քրդերի մեծ մասը²: Իրանի Քերմանշահ, Իլամ ու Կորդեստան նահանգների, ինչպես նաև Իրաքյան Քուրդիստանի հարավի (Հարավային Իսանաքին, Ջալավլա և Մանդալի) քրդերի շրջանում ամենատարածված բարբառը փեհլվանին (հարավային քրդերեն) է³: Լաքին և Կորդալին որոշ մասնագետներ հարավային քրդերենի ենթաբարբառներ են համարում⁴, սակայն դրանց

1 Mehrdad R. Izady, *The Kurds: A Concise Handbook* (Washington & London: Taylor & Francis, 1992), 3.

2 Washington Kurdish Institute, “What is Kurdistan?.”

3 Givi Tavazde, “Spreading of the Kurdish Language Dialects and Writing Systems Used in the Middle East,” *Bulletin of the Georgian National Academy of Sciences* 13, no. 1 (2019): 172.

4 “Dialects,” <https://kurdishpeople.org/dialects/>, դիտվել է՝ 09.05.2023:

և փեհլվանիի միջև ընդգծված տարբերություններ կան⁵: Չազա-Գորանին⁶ հյուսիսարևմտյան իրանական լեզուների ենթախումբ է. թեև դրա մեջ մտնող լեզուներն անկախ են քրդերենից, սակայն լեզվակիրների գերակշիռ մասն էթնիկ առումով նույնականանում է որպես քուրդ⁷:

Քրդերի մեծամասնությունը սուննի մահմեդական է. կան նաև այլ կրոնների և կրոնական ուղղությունների հետևորդներ: Մերձավոր և Միջին Արևելքում քրդերը թվաքանակով չորրորդն են արաբներից, պարսիկներից⁸ և թուրքերից⁹ հետո: Մոտավոր հաշվարկներով՝ քրդերի թվաքանակը տատանվում է 25-ից մինչև 30 միլիոնի սահմաններում¹⁰: Այնուամենայնիվ, կան նաև գնահատականներ, թե նրանց թիվը հասնում է մինչև 35 միլիոնի¹¹: Իսկ Փարիզի քրդական ինստիտուտն առավել ուռճացված տվյալներ է ներկայացնում՝ նրանց թվաքանակը հասցնելով մինչև 45 միլիոնի¹²: Փաստացիորեն քրդերը Մերձավոր Արևելքում սեփական պետություն չունեցող ամենամեծ ժողովուրդն են¹³:

Մերձավոր Արևելքի այն տարածքները, որտեղ քրդեր են բնակվում, գրեթե միշտ եղել են էթնոքաղաքական ակտիվ խմորումների կիզակետում: Երբեմն քրդերը հայտնվել են ցեղասպանական գործընթացներում՝ հանդես գալով որպես ոճրագործներ, ականատեսներ, պատահական դիտորդներ, փրկողներ, ինչպես եղել է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում՝ Օսմանյան կայսրությունում հայ, հույն, ասորի և եզդի բնակչության կոտորածների ժամանակ¹⁴. սուլթանական կառավարությունը փորձում էր թույլ չտալ հայ-քրդական հնարավոր համագործակցությունը, որը կարող էր վտանգ դառնալ կայսրության համար: Այդ

5 Erik Anonby, “Atlas of the Languages of Iran: A working classification,” <http://www.iranatlas.net/index.html?module=module.classification>, դիտվել է՝ 09.05.2023:

6 Այս ենթախմբի մեջ մտնում են զազա, գորանի և շաբակի լեզուները: Տե՛ս “Zaza-Gorani,” <https://www.ethnologue.com/subgroup/1700/>, դիտվել է՝ 09.05.2023:

7 David McDowall, *A Modern History of the Kurds* (London: I.B. Tauris, 2021), 11.

8 Պարսիկները կազմում են Իրանի բնակչության կեսը, իսկ առանձին տվյալների համաձայն՝ կեսից ավելին՝ մինչև 61%-ը: Տե՛ս Brenda Shaffer, *Iran is More Than Persia: Ethnic Politics in Iran* (De Gruyter, 2022) 13, 19: Իրանի բնակչությունը 2023 թ. դրությամբ կազմում է ավելի քան 87 մլն: Տե՛ս The World Factbook, “Iran,” <https://www.cia.gov/the-world-factbook/countries/iran/#people-and-society>, դիտվել է՝ 18.05.2023:

9 Թուրքերը Թուրքիայի՝ մոտ 83,5 մլն (2023 թ. տվյալներով) բնակչության 70-75%-ն են կազմում: Տե՛ս The World Factbook, “Turkey (Turkiye),” <https://www.cia.gov/the-world-factbook/countries/turkey-turkiye/#people-and-society>, դիտվել է՝ 18.05.2023:

10 Տվյալները՝ ըստ «Բրիտանիկա» հանրագիտականի: Տե՛ս Encyclopaedia Britannica, “Kurd people,” <https://www.britannica.com/topic/Kurd>, դիտվել է՝ 18.05.2023:

11 Washington Kurdish Institute, “What is Kurdistan?,” <https://dckurd.org/kurdistan/>, դիտվել է՝ 18.05.2023:

12 Kurdish Institute of Paris, “The Kurdish population,” <https://www.institutkurde.org/en/info/the-kurdish-population-1232551004>, դիտվել է՝ 18.05.2023:

13 Jennifer Holleis, “Kurds in the Middle East: Why are they under fire?,” *DW*, November 23, 2022, <https://www.dw.com/en/kurds-in-the-middle-east-why-are-they-under-fire/a-63850573>, դիտվել է՝ 18.05.2023:

14 Elisa von Joeden-Forgey, Thomas McGee, “Editors’ Introduction: Palimpsestic Genocide in Kurdistan,” *Genocide Studies International* 13, no. 1 (2019): 1.

նպատակին հասնելու համար օսմանյան իշխանությունները հպատակ ժողովուրդների միջև պատակտում սերմանելու քաղաքականություն էին վարում (ստացել է «շանր շան միջոցով խեղդելու քաղաքականություն» որակումը): Ուստի սուլթանական կառավարությունը, անընդհատ փոխելով իր դիրքորոշումը, մեկ հովանավորում էր հայերին, մեկ քուրդ ցեղապետերին՝ մտադրություն ունենալով գժտություն հրահրելու միջոցով թուլացնել նրանց¹⁵:

Օսմանյան կայսրության կառավարող վերնախավն այն կարծիքին էր, որ քրդերը կարող են իրեն օգնել Արևմտյան Հայաստանը կայսրության կազմում պահելու հարցում: Թուրքական քարոզչությունը նպատակ ուներ համոզելու քրդերին, թե հայերը նրանց թշնամիներն են, որովհետև ցանկանում են եվրոպական պետությունների աջակցությամբ ինքնուրույն պետություն ստեղծել ու քրդերին իրենց ենթարկեցնել¹⁶: Այդկերպ թուրքական իշխանությունները հատուկ պայմաններ էին ստեղծում, որ քրդերը ներթափանցեն հայաբնակ շրջաններ ու վերածվեն մեծամասնության, ինչի հետևանքով քուրդ բեկերի, ֆեոդալ շեյխերի, ցեղային ավագանու տիրապետության տակ է անցնում հայ գյուղացուն պատկանող գույքը¹⁷:

Օսմանյան իշխանությունները միաժամանակ փորձում էին կանխել քուրդ ժողովրդի հնարավոր ազատագրական պայքարի դրսևորումները. փորձ էր արվում քրդերի շրջանում ուժեղացնել մահմեդականության դերը և կրոնական թշնամանք բորբոքել հայերի դեմ¹⁸: Քրդերին, ինչպես նաև մյուս մահմեդականներին ներշնչում էին, որ եթե սպանեն անհավատ հայերին, դրախտ կընկնեն: Այսպիսի քաղաքականության հետևանքով քրդական ցեղապետերի ջոկատները մասնակցում էին հայերի ջարդերին ու տեղահանությանը:

Դեռևս 1878 թ. մարտի 3-ին Կ.Պոլսի արվարձան Սան Ստեֆանոյում Ռուսաստանի և Օսմանյան Թուրքիայի միջև կնքված հաշտության նախնական պայմանագրի 16-րդ հոդվածում նշված է. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հապաղելու, հայերով բնակեցված մարզերում տեղական պահանջներից բխող բարելավումներ և բարոփոխումներ իրականացնել և ապահովել վերջիններիս անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»¹⁹: Իսկ Սան Ստեֆանոյի պայմանագրի վերանայման նպատակով 1878 թ. հունիսի 13-ից հուլիսի 13-ը հրավիրված Բեռլինի վեհաժողովում

15 Հակոբ Հատիկյան, *Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878-1923 թթ.* (Երևան, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոն, 2016), 86-87:

16 Վահան Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին* (Երևան, Հայաստան, 1989), 158:

17 Նիկոլայ Հովհաննիսյան, *Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը. քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում* (Երևան, Տիգրան Մեծ, 2016), 52:

18 Գյուլիչեք Գյունել Թեքին, *Ինձ առանց լվանալու կթաղեք: Քրդերը Հայոց ցեղասպանության մասին* (Երևան, Վերնատուն, 2015), 35, 445-446; «Սպանե՛ք յոթ հայի և դրախտ կընկնեք. քրդերի վկայությունները Ցեղասպանության մասին», *Միվիլներթ*, 12 փետրվար 2015, <https://shorturl.at/glrHS>, դիտվել է՝ 18.05.2023:

19 Գևորգ Հարությունյան, «1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը Սան Ստեֆանոյի պայմանագրում», *Պատմաբանասիրական հանդես*, no. 2 (2006), 29-30:

ստորագրված դաշնագրի 61-րդ հոդվածում արդեն նշվում է. «Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից բխող բարելավումներ ու բարենորոգումներ, ապահովել հայերի անվտանգությունը չեքեզներից ու քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղորդի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռնարկել է այդ նպատակի համար, իսկ տերությունները կհետևեն դրանց կիրառմանը»²⁰:

Փաստորեն քրդերը դիտվում էին որպես հայերի անվտանգությանը սպառնացող գործոն: Այս տեսանկյունից հատկանշական է, որ 1894-1896 թթ. հայերի կոտորածների հարցում քրդերը և հատկապես նրանցից կազմված համիդիե գնդերը²¹ շատ մեծ դերակատարություն են ունեցել²²: 1890-ական թթ. ջարդերից հետո երկիրը լքած տասնյակ հազարավոր հայերի ունեցվածքը օսմանյան իշխանությունները հանձնում էին քուրդ ավատատերերին, ջարդերին մասնակից աշիրեթապետերին, համիդիե գնդերի հրամանատարներին: Դրա հետևանքով նվազում էր հայ բնակչության տեսակարար կշիռը, ուժեղանում հայերի կախվածությունը քրդերից²³: Քրդերի մասնակցությունը հայերի ջարդերին ուժեղ հարված էր նաև քրդական ազգային ազատագրական շարժմանը, քանի որ այդպես նրանք շեղվում են իրենց ազգային խնդրից՝ թուրքական լծի դեմ պայքարից²⁴:

Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ քրդերն Օսմանյան կայսրության իշխանությունների ձեռքում գործիք էին հայերի բնաջնջումն ի կատար ածելու հարցում: Եվ եթե քրդերը գործուն մասնակցություն չունենային Հայոց ցեղասպանության իրագործմանը, ապա երիտթուրքերը լուրջ դժվարություններ կունենային²⁵: Քրդական աշիրեթները աջակցում էին թուրքական գործերին հայերի ինքնապաշտպանությունը ջլատելու հարցում՝ օգնելով նրանց շրջապատել հայկական բնակավայրերը, կոտորել ու կողոպտել հայերին²⁶: Օսմանյան իշխանությունները

20 Լեո, *Հայկական հարցի վավերագրերը* (Երևան, ԵՊՀ հրատ., 2014), 91; “Treaty between Great Britain, Germany, Austria, France, Italy, Russia, and Turkey for the Settlement of Affairs in the East: Signed at Berlin, July 13, 1878,” *American Journal of International Law* 2, no. 4 (1908): 422.

21 1890 թ. նոյեմբերին հրապարակված հրամանագրի հիման վրա՝ Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ Համիդը 1891 թ. ստեղծում է բացառապես քրդերից կազմված հեծելազոր, որի գլխավոր նպատակը կայսրության ողջ տարածքում հայերին կոտորելն էր: Ավելի մանրամասն տե՛ս Ստեփան Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը* (Երևան, Հայաստան, 1991), 88-94: Henri J. Barkey, Graham E. Fuller, *Turkey’s Kurdish Question* (Lanham/New York: Rowman & Littlefield Publishers, 2000), 8; Joost Jongerden, “Elite Encounters of a Violent Kind: Milli İbrahim Paşa Ziya Gökalp and Political Struggle in Diyarbakir at the Turn of the 20th Century,” in *Social Relations in Ottoman Diyarbakir, 1870-1915*, eds. Jelle Verheij, Joost Jongerden, (Leiden/Boston: Brill 2012), 61, 62;

22 Ավելի մանրամասն տե՛ս Սուրեն Մանուկյան, «Հանցակցությունը որպես համախմբող գործոն. Օսմանյան կայսրությունում 1894-96 թթ. հայերի կոտորածների քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ», *Ցեղասպանագիտական հանդես* 6, no. 2 (2018), 24-52:

23 Վահան Բայբուրդյան, *Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության յույսի ներքո* (Երևան, հեղինակային հրատ., 2008), 167:

24 Բայբուրդյան, *Հայ-քրդական հարաբերությունները*, 227:

25 Բայբուրդյան, *Քրդերը, Հայկական հարցը*, 226-227:

26 Կարո Սասունի, *Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները: (ԺԵ. դարէն*

շատ շրջաններում անգամ բանտերից ազատ էին արձակում քուրդ հանցագործներին՝ պայմանով, որ նրանք մասնակցեն հայերի կոտորածներին²⁷: Պատահական չէ, որ 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի համատեղ հռչակագրում նշված է քրդերի գործողությունների մասին. «Գրեթե մեկ ամիս է, ինչ Հայաստանում քրդերը և թուրքերը օսմանյան իշխանությունների թողություններ և հաճախ օժանդակությամբ, զանգվածային ջարդերի են ենթարկում հայերին: Նման ջարդեր են տեղի ունեցել ապրիլին (սոր տոմարով) Էրզրումում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ջեյթունում և ողջ Կիլիկիայում: Վանին հարակից շուրջ հարյուր գյուղերի բնակիչներ սպանվել են: Այդ քաղաքում հայկական թաղամասերը շրջափակված են և հարձակումների են ենթարկվում քրդերի կողմից»²⁸:

Բազմաթիվ պատմաբաններ բավական մեծ տեղ են հատկացրել քրդերի հակահայկական գործունեությանը, կոտորածներին մասնակցությանը, 1915 թ. Հայոց ցեղասպանության իրագործման հարցում քրդական գործոնի լուսաբանմանը²⁹: Հայոց ցեղասպանությանը քրդերի մասնակցությունն ընդունում են անգամ քուրդ ժողովրդի ներկայացուցիչները: Քուրդ փաստաբան, գրող Ֆըրաթ Այդընբայան նշում է, որ քրդերը շատ վայրերում եղել են ցեղասպանության իրագործման տեղային բյուրոկրատիան³⁰: Այսինքն՝ ցեղասպանության կազմակերպիչներից շատերը քրդերն են եղել: Իրենց վկայություններում ցեղասպանությանը մասնակցած քրդերը նշում են, որ օսմանյան կառավարությունն իրենց հրամայել էր կոտորել հայերին³¹: Ընդ որում, որոշ հետազոտողներ ընդգծում են, որ երիտթուրքերն իրենց պակասությունների ծրագրերի կյանքի կոչման համար նպատակ են ունեցել սկզբից քրդերին օգտագործել որպես գործիք Հայոց ցեղասպանությունն իրագործելու հարցում, ապա ձուլել, իսկ եթե չհաջողվեր, նրանց ևս բնաջնջել³²:

Բազմաթիվ քուրդ առաջնորդներ հետագայում ներողություն են խնդրել հայերից Հայոց ցեղասպանության իրագործմանը քրդերի մասնակցության համար³³: Նույնկերպ

մինչև մեր օրերը) (Պեյրութ, Համազգային, 1969), 216-207:

27 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 215:

28 “France, Great Britain and Russia Joint Declaration,” https://www.armenian-genocide.org/Affirmation.160/current_category.7/affirmation_detail.html, դիտվել է՝ 02.05.2023:

29 Հովհաննիսյան, *Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը*, 25-45:

30 «Ֆըրաթ Այդընբայա. Քրդերը և Հայոց ցեղասպանությունը 8 հարցի միջոցով», <https://akunq.net/am/?p=74606>, դիտվել է՝ 02.05.2023:

31 Թեքին, *Բնձ ստանց լվանալու կթաղեք*, 443-444:

32 Dr. Hussein Tahiri, “The Role of the Kurds in the Armenian Genocide: were they Perpetrators or an Instrument?,”

E Kurd Daily, April 22, 2015, <https://ekurd.net/the-role-of-the-kurds-in-the-armenian-genocide-were-they-perpetrators-or-an-instrument-2015-04-22>, դիտվել է՝ 02.05.2023:

33 Gulisor Akkum, “Kurdish Leaders Apologize for 1915 During Monument Inauguration in Diyarbakir,” *The Armenian Weekly*, September 12, 2013, <https://armenianweekly.com/2013/09/12/kurdish-leaders-apologize-for-genocide-during-monument-inauguration-in-diyarbakir/> (դիտվել է՝ 02.05.2023); “Kurdish apologize for the Armenian genocide,” *Horizon*, May 05, 2015, <https://horizonweekly.ca/en/66924-2/>

և Քրդական վտարանդի խորհրդարանը, որը ստեղծվել է Հաագայում Թուրքիայի և Իրաքի քրդական ընդդիմության ներկայացուցիչների նախաձեռնությամբ՝ քրդական սփյուռքը մոբիլիզացնելու համար, ճանաչել է հայերի և ասորիների դեմ Օսմանյան կայսրության իրագործած ցեղասպանությունը, ընդունել դրանում քրդերի մեղսակցությունը³⁴:

Թաներ Աքչամը նշում է, թե թուրքական կառավարությունը քրդական ցեղերին հայերի դեմ է օգտագործել, քանի որ քրդերը հավակնություններ են ունեցել այն տարածքի նկատմամբ, որը հայերն իրենցն էին համարում: Միաժամանակ, ըստ Աքչամի, քրդական ցեղերը ցանկացել են տնտեսական առավելություններ ստանալ՝ սպանելով հայերին³⁵: Պատահական չէ նաև, որ հայերի դեմ իրագործված ցեղասպանության թեման «Միություն և առաջադիմություն» կուսակցության պատասխանատվության տիրույթից հեռացնելու համար Թալեաթն ամբողջը բարդել է քրդերի վրա՝ կոտորածները ներկայացնելով որպես հայերի և քրդերի հակամարտության հետևանք³⁶:

Ըստ քուրդ ակնաստեսների վկայությունների՝ առաջին հերթին հայերի ունեցվածքին տիրանալու մոլուցքն է վճռական դեր խաղացել, որպեսզի քրդերը մասնակցեն Հայոց ցեղասպանության իրագործմանը³⁷: Եվ դրանով է պայմանավորված, որ «E Kurd Daily» քրդական լրատվականի Մերձավոր Արևելքի հարցերով մեկնաբան դոկտոր Հուսեյն Թահիրին նշում է, որ քրդերը չեն ծրագրել Հայոց ցեղասպանությունը, բայց մեծ դեր են խաղացել դրա իրագործման հարցում, ուստի ապագա մեծ Քուրդիստանը ոչ միայն պարտավոր է պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը, այլև հանձնաժողով ձևավորել, որը կհետաքննի քրդերի՝ հայապատկան ունեցվածքի բռնագրավումը: Թահիրիի պնդմամբ՝ ապագա մեծ Քուրդիստանը պետք է մտածի Հայոց ցեղասպանության ժամանակ սպանվածների կամ փրկվածների ժառանգներին փոխհատուցում վճարելու մասին³⁸:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ քրդերը ոչ միայն հրաժարվել են հարձակվել հայերի վրա, այլև փրկել են նրանց³⁹: Որոշ հայեր փրկվել են ցեղասպանությունից քրդերի մոտ թաքնվելու արդյունքում: Քրդերի մի մասն էլ ուղղակի ձեռնպահ մնաց

(դիտվել է՝ 02.05.2023). «Մեր պապերը մասնակցել են հայերի ջարդերին. քուրդ քաղաքապետ», *Միլիլներթ*, 17 դեկտեմբեր 2014, <https://shorturl.at/cInAM>, դիտվել է՝ 02.05.2023:

34 “Parlamenta Kurdistanê Li Derveyi Welat,” April 24, 1996, <http://www.genocide-museum.am/eng/1996.php>, դիտվել է՝ 02.05.2023; “Kurdish Parliament in Exile Recognizes Genocide,” Asbarez, April 29, 1997, <https://asbarez.com/kurdish-parliament-in-exile-recognizes-genocide/>, դիտվել է՝ 02.05.2023:

35 Deniz Serinci, “Kurds and the Armenian Genocide,” *Rudaw*, April 23, 2014, <https://www.rudaw.net/english/middleeast/turkey/23042014>, դիտվել է՝ 02.05.2023:

36 Բայբորթյան, *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում*, 319:

37 Թեքին, *Ինձ ասուց լվանալու կթաղեք*, 448-449:

38 Tahiri, “The role of the Kurds in the Armenian Genocide.”

39 Burçin Gerçek, Taner Akcam, “Report on Turks who reached-out to Armenians in 1915,” https://www.raoulwallenberg.net/wp-content/files_mf/1435335304ReportTurkishrescuerscomplete.pdf, դիտվել է՝ 02.05.2023:

կոտորածներին մասնակցելուց, բայց նաև հայերին չօգնեց⁴⁰: Մինևույն ժամանակ, հատկանշական է, որ հարավային շրջաններում քրդերն ավելի քիչ են մասնակցել ցեղասպանությանը⁴¹: Ուորեխտի համալսարանի պրոֆեսոր, Թուրքիայից ծագումով քուրդ Ուդուր Ումիթ Ունգյորն ընդգծում է, որ Հայոց ցեղասպանության ժամանակ քրդերը ն ըմբոստացել են, ն մասնակցել, այդ պատճառով էլ ցեղասպանության ընթացքի վրա դա շատ խորն է ազդել⁴²:

Այլ խմբերի դեմ բռնության գործադրման հարցում քրդերի ներգրավվածության վրա երբեմն ազդել են պատմական հանգամանքները և ուժային հարաբերակցության փոփոխությունները: Քրդերի անգործության վերաբերյալ մեղադրանքներ կան նաև 2014 թ. եզդիների դեմ Իսլամական պետություն ահաբեկչական կազմակերպության իրագործած ցեղասպանության համատեքստում, թե քրդական ուժերը կարող էին այն թույլ չտալ⁴³: Եվ հատուկ ընդգծվում է այն հանգամանքը, որ եզդիների դեմ Իսլամական պետության հարձակմանը հետևել է քրդական փեշմերգա⁴⁴ ուժերի դուրս բերումը⁴⁵:

Իսլամական պետության հարձակումը վերապրած մարդկանց հարցազրույցները վկայում են, որ Իրաքյան Քուրդիստանի իշխանությունները և փեշմերգան իրենց մոլորեցրել են Իսլամական պետությունից եկող սպառնալիքի հարցում, քանի որ պաշտպանություն են խոստացել, սակայն լքել են ու թողել անպաշտպան՝ ահաբեկչական կազմակերպության զինյալների հարձակումներից դեմ հանդիման⁴⁶: Այդուհանդերձ, պետք է նկատի ունենալ նաև այն, որ ի վերջո հենց քրդական փեշմերգայի ուժերն են փրկել Մինջարի լեռներում արգելափակված 10 000 եզդիներին՝ նրանց համար ստեղծելով անվտանգ հեռանալու միջանցք⁴⁷:

40 Պողոսյան, *Քրդերը և Հայկական հարցը*, 232-233:

41 Սասունի, *Քիրստ ազգային շարժումները*, 218:

42 «1915 թ. հետքերով գնացող «Հարյուրամյա ցավը» վերակենդանացած հիշողության ռեժիմն ու այն ընդհատող հիշողության ջարդն է», <https://akunq.net/am/?p=60728>, դիտվել է՝ 02.05.2023:

43 Dana Taib Menmy, “Iraq government not doing enough to heal wounds of Yazidi genocide, says community leader,” *The New Arab*, August 3, 2022, <https://www.newarab.com/news/iraqs-government-not-doing-enough-heal-yazidi-genocide>, դիտվել է՝ 02.05.2023:

44 Փեշմերգան (քրդերենից թարգմանվում է «դեպի մահ գնացողներ», «մահի երեսին նայողներ») Իրաքյան Քուրդիստանի քրդական զինյալ զորամիավորումների ամբողջական անվանումն է:

45 Dave van Zoonen, Khogir Wirya, *The Yazidis Perceptions of Reconciliation and Conflict* (Erbil: Middle East Research Institute, 2017), 10. Rania Abouzeid, “When the weapons fall silent: Reconciliation in Sinjar after ISIS,” European Council on Foreign Relations, 2018, https://ecfr.eu/wp-content/uploads/when_the_weapons_fall_silent_reconciliation_in_sinjar_after_isisFINAL.pdf, դիտվել է՝ 02.05.2023:

46 Christine Van Den Toorn, “How the U.S.-favored Kurds Abandoned the Yazidis when ISIS Attacked,” *The Daily Beast*, April 14, 2017, <http://www.thedailybeast.com/how-the-us-favored-kurds-abandoned-the-yazidis-when-isis-attacked>, դիտվել է՝ 02.05.2023; Ewelina U. Ochab, “Can The Peshmerga Fighters Be Held Liable For Abandoning The Yazidis In Sinjar?,” *Forbes*, Jul 31, 2017, <https://www.forbes.com/sites/ewelinaochab/2017/07/31/can-the-peshmerga-fighters-be-held-liable-for-abandoning-the-yazidis-in-sinjar/?sh=1ce66dae78b1>, դիտվել է՝ 02.05.2023:

47 “Ten thousand Yazidis rescued from Iraq’s Mount Sinjar,” *Middle East Eye*, February 12, 2015, <https://www.middleeasteye.net/news/ten-thousand-yazidis-rescued-iraqs-mount-sinjar>, դիտվել է՝ 02.05.2023; Dexter Filkins, “An Early Success for the Kurds in Sinjar,” *The New Yorker*, December 19, 2014, <https://www.newyorker.com/news/news-desk/early-success-kurds-sinjar>, դիտվել է՝ 02.05.2023:

Ուշագրավ է, որ մեկ այլ ժամանակահատվածում քրդերն իրենք են հայտնվում ցեղասպան բռնությունների թիրախում, երբ Հյուսիսային Իրաքի քրդական բնակչության դեմ սկսվում է «Անֆալ» գործողությունը: Թերևս այսպիսի իրողություններով է այայմանավորված, որ քրդերին անվանել են «ցեղասպանությունների ազգ»⁴⁸:

Իրաքի քրդերի դեմ «Անֆալ» արշավը. ընդհանուր բնութագիր

Իրաքում ապրող քրդերն արյունահեղության են բախվում 1980-ական թթ. իրանա-իրաքյան պատերազմի ժամանակ, երբ Իրաքը քուրդ խաղաղ բնակիչների վրա հարձակում է սկսում՝ քիմիական զենք կիրառելով: Այդ հարձակումը կոչվել է «Անֆալ» արշավ կամ գործողություն (հայտնի է նաև որպես «Անֆալ»-ի ցեղասպանություն կամ քրդերի ցեղասպանություն): Անվանումը վերցված է Ղուրանի 8-րդ գլխի վերնագրից (Ալ Անֆալ)⁴⁹, որը 1986-1989 թթ. Իրաքի կառավարությունն օգտագործվել է որպես ծածկագիր Հյուսիսային Իրաքում քուրդ զինյալների դեմ համակարգված հարձակումների համար⁵⁰:

Իրաքի նախաձեռնած արշավի նպատակն է եղել ոչնչացնել քրդական ապստամբ խմբավորումներին, ինչպես նաև արաբացնել Քիրքուք նահանգի ռազմավարական հատվածների բնակչությանը⁵¹: Ըստ «Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպության տվյալների՝ ութ փուլից բաղկացած ռազմական արշավի հետևանքով սպանվել է 50 000-ից մինչև 100 000 քուրդ⁵²: Այլ գնահատականների համաձայն՝ զոհվել է մինչև 180 000 քուրդ⁵³: Հատկանշական է, որ Իրաքի կատարած գործողությունների ընթացքում (դրանք աչքի են ընկել բյուրոկրատական կազմակերպվածությամբ ու կենտրոնացված գործողություններով և գաղտնիության անսովոր աստիճանով) ավերվել են ավելի քան 1 000 քրդական գյուղեր, ինչպես նաև ոչնչացվել են անասուններն ու այգիները⁵⁴: Միայն 1,5 մլն քուրդ տեղահանվել է Հարավային Իրաք⁵⁵:

«Անֆալ»-ի հարձակումների ժամանակ թիրախավորվել են նաև Իրաքի այլ

48 Kristiina Koivunen, *The Kurds: A Nation of Genocides* (Spånga: Apec Förlag, 2013).

49 Արաբերենից «ալ անֆալ» (الافن آل اعمه) թարգմանաբար նշանակում է «ռազմավար» կամ «պատերազմի ավար»: Ղուրանի ութերորդ սուրահի կամ գլխի անունն է: Այն պատմում է, թե ինչպես են Մուհամեդի հետևորդները կողոպտում անհավատների հողերը: Կարծիքներ կան, որ իրաքյան կառավարությունն այս բառն ընտրել է Հյուսիսային Իրաքի քրդերի դեմ արշավի իրագործման համար, քանի որ դրանով իր գործողություններին կրոնական հիմնավորում է տվել:

50 Ofra Bengio, *Saddam's Word: Political Discourse in Iraq* (New York/Oxford: Oxford University Press, 1998), 190.

51 Sherko Kirmanj, Aram Razaat, “The Kurdish genocide in Iraq: The Security-Anfal and the Identity-Anfal,” *National Identities* 23, no. 2 (2021): 163–183.

52 “Q & A: The Anfal Trial,” <https://www.hrw.org/news/2007/06/22/q-anfal-trial>, դիտվել է՝ 02.05.2023:

53 Edward Wong, “Saddam charged with genocide of Kurds,” April 5, 2006, *The New York Times*, <https://www.nytimes.com/2006/04/05/world/05iht-saddam.html>, դիտվել է՝ 02.05.2023:

54 Michiel Leezenberg, “The Anfal Operations in Iraqi Kurdistan,” in *Centuries of Genocide Essays and Eyewitness Accounts*, ed. Samuel Totten, William S. Parsons (New York/London: Routledge, 2004), 375.

55 Paul R. Bartrop, *Encountering Genocide: Personal Accounts from Victims, Perpetrators, and Witnesses*, (Santa Barbara, Ca.: ABC-CLIO, 2014), 190.

վորքամասնությունների համայնքները, այդ թվում՝ ասորիների, շաբակների, իրաքցի թուրքմենների, եզդիների, հրեաների, մանդեների⁵⁶, իսկ այդ էթնիկ խմբերին պատկանող բազմաթիվ գյուղեր ավերվել են: Տվյալներ կան 2 000 ասորիների թունավոր գազերով սպանելու մասին: Ասորիները կորցրել են 15 պատմական և մշակութային հուշարձաններ ու շինություններ⁵⁷: Հյուսիսային Իրաքի տարածքում առնվազն 31 ասորական գյուղ է ավերվել⁵⁸:

1980-ական թթ. սկզբին Սադամ Հուսեյնն օգտագործում է Իրաքի արարների ու քրդերի միջև տարածայնությունները հակաքրդական տրամադրություններ բորբոքելու համար: Ընդ որում՝ Իրաքի իշխանությունները քրդերի նկատմամբ խտրականությունը հիմնավորում էին այն պնդմամբ, թե նրանք «դավաճանել» են երկրին, քանի որ իրանա-իրաքյան պատերազմի ընթացքում քրդական հիմնական քաղաքական կուսակցություններն օգնել են Իրանին⁵⁹:

Ուշագրավ է, որ Սադամ Հուսեյնի բաասական կառավարությունը նախքան «Անֆալ» գործողությունների ձեռնարկումը առաջին հերթին թիրախավորում է ֆեյլի քրդերին, որոնք շիադավան են և դարեր շարունակ բնակվել են Իրաքի ու Իրանի սահմանային տարածքում՝ Չագրոս լեռների երկու կողմերում: Տարբեր գնահատականների համաձայն՝ Իրաքում ֆեյլի քրդերի թվաքանակը կազմում է 1,5 մլն, սակայն նրանց մեծամասնությունն ապրում է քրդերի վերահսկողության տակ գտնվող տարածքներից դուրս՝ Դիլալա, Խանաքին և Բադդադ նահանգներում⁶⁰: Իրաքում նրանք տեղական ժամանակ խտրականության էին ենթարկվում, իսկ արդեն 1970-ական թթ. Սադամ Հուսեյնի իշխանությունը նրանց մեղադրում է իրանցի լինելու համար, որի հետևանքով էլ վտարվում են երկրից: 1970-ական թթ. կեսերին Իրաքն Իրան է արտաքսում մոտ 40 000 ֆեյլի քրդերի՝ պնդելով, որ նրանք Իրանի քաղաքացիներ են⁶¹: Բռնաճշումների թիրախ են դառնում հատկապես Բադդադի ֆեյլի քուրդ վաճառականները, քանի որ կարևոր դեր էին կատարում մայրաքաղաքի գործարար համայնքում և վերահսկում էին Իրաքից այլ երկրներ ապրանքների արտահանումը:

56 “KRG says Baghdad accountable for Kurdish “genocide,” *Rudaw*, April 14, 2015, <https://www.rudaw.net/english/kurdistan/140420151>.

57 Sargon Donobed, “Persistent perseverance: a trajectory of Assyrian history in the modern age,” in *Routledge Handbook of Minorities in the Middle East*, ed. Paul S. Rowe (London and New York: Taylor & Francis, 2019), 123.

58 “Anfal... The Brutal Crime against the People of Kurdistan,” <https://pukmedia.com/EN/Details/71954>, դիտվել է՝ 04.05.2023:

59 Madalyn Minnick, “The Anfal Genocide: a Criminally Unknown Genocide that Needs Our Attention, Now,” April 14, 2021, <https://togetherweremember.org/twr-blog/2021/4/14/the-anfal-genocide-a-criminally-unknown-genocide-that-needs-our-attention-now>, դիտվել է՝ 05.05.2023:

60 “In no man’s land; Faili Kurds rally for recognition in Erbil,” *Rudaw*, February 16, 2016, <https://www.rudaw.net/english/kurdistan/16022016>, դիտվել է՝ 02.05.2023:

61 Elizabeth Campbell, “The Faili Kurds of Iraq: Thirty Years Without Nationality,” *Refugees International*, <https://reliefweb.int/report/iraq/faili-kurds-iraq-thirty-years-without-nationality>, դիտվել է՝ 05.02.2022:

Եվ պատահական չէ, որ նրանց ունեցվածքը կառավարությունը բռնագրավում է⁶²:

1980 թ. Սադամ Հուսեյնը ստորագրում է թիվ 666 որոշումը, որն օրինականացնում է անհրաժեշտության պարագայում Իրաքի քաղաքացիության չեղարկումը և «օտարերկրյա» ծագումով իրաքցիների արտաքսումը: Ըստ այդմ՝ ֆեյլի քրդերը մեղադրվում են դավաճանության և իրաքյան պետությանն անհավատարիմ լինելու համար⁶³: Նույն թվականին Բաղդադում սկսվում է ֆեյլի քրդերի զանգվածային տեղահանությունը, և 220 000 – 300 000 ֆեյլի քրդեր⁶⁴ գրկվում են Իրաքի քաղաքացիությունից ու արտաքսվում Իրան, իսկ նրանց որոշ մասն էլ Իրաքում մնում է առանց քաղաքացիության⁶⁵: Ֆեյլի քրդերի ունեցվածքը բռնագրավվում է, չափահաս տղամարդկանցից շատերը կալանավորվում են և բանտեր ուղարկվում: Հազարավոր ֆեյլի քրդեր էլ խոշտանգվում կամ սպանվում են: Մոտ 10 000 – 20 000 ֆեյլի քրդերի գերեզմաններն այդպես էլ չեն գտնվել⁶⁶: Տեղափոխվելով Իրան՝ ֆեյլի քրդերից շատերը տասնամյակներ շարունակ ապրել են ճամբարներում որպես քաղաքացիություն չունեցող փախստականներ, առանց կրթության և աշխատանքի հասանելիության՝ հակառակ այն հանգամանքին, որ շատերն Իրաքում հարուստ և հաջողակ են եղել: Իրաքից վտարվելուց հետո փոքրաթիվ ֆեյլիներ Իրանի քաղաքացի են դառնում:⁶⁷

Ֆեյլի քրդերի հալածանքներին վերջ է տրվում 2003 թ.՝ ԱՄՆ գլխավորած կոալիցիայի՝ Իրաք ներխուժումից և «Բաաս»-ի գլխավորած ռեժիմի տապալումից հետո. բազմաթիվ փախստականներ վերադառնում են Իրանից Իրաք⁶⁸: Այնուամենայնիվ, Իրաք վերադարձած ֆեյլի քրդերը խնդիրներ են ունենում քաղաքացիություն ստանալու հետ կապված: Թեև 2008 թ. Իրաքի գերագույն դատարանը և 2010 թ. Իրաքի խորհրդարանը պաշտոնապես ճանաչել են ֆեյլի քրդերի ցեղասպանությունը, բայց նրանք դեռևս Իրաքի քաղաքացի չեն և փոխհատուցում չեն ստացել իրենց դեմ կատարված հանցագործությունների համար⁶⁹:

62 Mohammed Ihsan, *Nation Building in Kurdistan: Memory, Genocide and Human Rights* (London/New York: Routledge, 2017), 43, 44.

63 Hanan Jiyad, “The Ethnic Cleansing of Iraqi Fayli Kurds,” <https://irqnow.com/fayli-kurds/>, դիտվել է՝ 06.06.2023:

64 Երբեմն էլ տեղահանվածների ավելի մեծ թիվ է ներկայացվում՝ մինչև 500 000: Տե՛ս Ibrahim Sadiq, *Origins of the Kurdish Genocide: Nation Building and Genocide as a Civilizing and De-Civilizing Process* (Lanham: Lexington Books, 2021), 93:

65 Campbell, “The Faili Kurds of Iraq.”

66 Minority Groups International, “Faili kurds,” <https://minorityrights.org/minorities/faili-kurds/>, դիտվել է՝ 06.06.2023; “KRG ready to establish Feyli affairs center, says PM Barzani,” *Kurdistan24*, May 5, 2023, <https://www.kurdistan24.net/en/story/31367-KRG-ready-to-establish-Feyli-affairs-center,-says-PM-Barzani>, դիտվել է՝ 06.06.2023:

67 “KDP President Barzani proposes establishing a research center of Feyli Kurds,” *Kurdistan24*, May 2, 2023, <https://www.kurdistan24.net/en/story/31343-KDP-President-Barzani-proposes-establishing-a-research-center-of-Feyli-Kurds>, դիտվել է՝ 06.06.2023:

68 Minority Groups International, “Faili kurds.”

69 “PM Barzani condemns genocide of Feyli Kurds,” *Kurdistan24*, May 5, 2023, <https://www.kurdistan24.net/en/story/31349-PM-Barzani-condemns-genocide-of-Feyli-Kurds>, դիտվել է՝ 06.06.2023:

Որոշակի կրոնական ուղղության պատկանող քրդերի հավածանքների ենթարկելուց բացի, իրաքյան իշխանությունները թիրախավորում էին նաև քրդական առանձին ցեղերի ներկայացուցիչների: Օրինակ, 1983 թ. հուլիսի 31-ին իրաքյան գործերն առևանգում են քրդական Բարզանի ցեղի ավելի քան 8 000 ներկայացուցիչ՝ հիմնականում՝ տղամարդկանց և տղաների, տանում հարավային Իրաքի անապատներ, սպանում ու թաղում զանգվածային գերեզմաններում: Դա բարզանիների դեմ հավաքական պատժի գործողություն է եղել. նրանց առաջնորդներն ակտիվորեն մասնակցել էին Սադամ Հուսեյնի իշխանության դեմ քրդական ապստամբություններին: Իրաքի գերագույն դատարանը 2011 թ. մայիսի 3-ին 1980-ական թթ. «Բաաս» կուսակցության գլխավորած ռեժիմի կատարած Բարզանի ցեղի ներկայացուցիչների սպանությունները ճանաչում է ցեղասպանություն և մարդկության դեմ ուղղված հանցագործություն: Բարզանի ցեղի դեմ կատարված հանցագործությունները հաճախ դիտարկվում են որպես «Անֆալ» արշավի մաս: Մինչ այժմ բարզանիների երեք զանգվածային գերեզմաններ են հայտնաբերվել Իրաքի, Սաուդյան Արաբիայի և Քուվեյթի սահմանների մերձակայքում: Իրաքի հարավային անապատի շրջանից հայտնաբերել են հարյուրավոր բարզանիների դիերի մնացորդներ, որոնք թաղվել են հյուսիսային Էրբիլ նահանգի Բարզան շրջանում⁷⁰:

Շետաքրքրական է, որ երբ Իրանում իսլամական հեղափոխություն է տեղի ունենում և իշխանության է գալիս գերագույն հոգևոր առաջնորդ Խոմենեին, Իրաքի քրդերի ղեկավարությունն Իրանի հետ համագործակցում է ընդդեմ Բաղդադի կենտրոնական կառավարության: Իրանի հետ քրդերի դաշինքը Սադամ Հուսեյնը լուրջ վտանգ էր համարում, որի միջոցով Իրանը կարող էր առավելություն ստանալ Իրաքի սկստամբ⁷¹:

Մեծ նշանակություն է ունենում նաև այն հանգամանքը, որ 1987 թ. ընթացքում Իրաքի քրդական խոշոր կուսակցությունները՝ Քուրդիստանի դեմոկրատական կուսակցությունը՝ Մասուդ Բարզանիի գլխավորությամբ, և Քուրդիստանի հայրենասիրական միությունը՝ Ջալալ Թալաբանիի գլխավորությամբ, որոշում են միավորել ուժերը՝ վերջ տալով ներքին վեճերին ու տարածայնություններին: Իրաքյան իշխող ուժերը քրդերին որպես խնդիր էին ընկալում, քանի որ վերջիններս ցանկանում էին ինքնավարություն ստանալ⁷² և հաճախ մարտնչում էին Իրաքի հյուսիսում տեղակայված իրաքյան ուժերի դեմ: Եվ այս իրողությունը հաշվի առնելով՝ Սադամ Հուսեյնը,

70 “Iraqi tribunal rules Barzani killings in 1983 were genocide,” *E Kurd Daily*, May 11, 2011, <https://ekurd.net/mismas/articles/misc2011/5/state5086.htm>; Kurdistan Memory Programme, “The Tragedy of the Missing Barzanis,” <https://kurdistanmemoryprogramme.com/the-tragedy-of-the-missing-barzanis/>, դիտվել է՝ 15.05.2023; Bilind T. Abdullah, “39 years later, “Barzan genocide victims lay to rest,”” *Rudaw*, July 18, 2022, <https://www.rudaw.net/english/kurdistan/310720221>, դիտվել է՝ 15.05.2023; “Remains of Barzan genocide victims to return home,” *Rudaw*, July 18, 2022, <https://www.rudaw.net/english/kurdistan/180720221>, դիտվել է՝ 15.05.2023:

71 Kerim Yildiz, *The Kurds in Iraq: The Past, Present and Future* (London: Pluto Press, 2007), 25.

72 Իրաքյան Քուրդիստանի ինքնավարությունը ճանաչվեց 2005 թ.: Տե՛ս “Iraq’s Constitution of 2005,” https://www.constituteproject.org/constitution/Iraq_2005.pdf?lang=en, դիտվել է 15.01.2023:

որ 1979 թ. դարձել էր Իրաքի նախագահ, 1987 թ. իր գարմիկ Ալի Հասան ալ Մաջիդին նշանակում է «Բասա» կուսակցության «Հյուսիսային բյուրո» (Իրաքյան Քուրդիստան) կոչվող վարչական գոտու գլխավոր քարտուղար⁷³: 1987 թ. ապրիլի 6-ին վերջինս հրապարակում է 18/2396 որոշումը, որով հրամայվում էր Իրաքյան Քուրդիստանում գտնվող անվտանգության կոմիտեների ղեկավարներին մեկ ամսվա ընթացքում բռնագրավել բոլոր «դիվերսանտների» ունեցվածքը⁷⁴:

Միննույն ժամանակ, Մաջիդը խոստանում է «լուծել քրդական խնդիրը և կոտորել դիվերսանտներին»⁷⁵. սկսվում է քրդերի դեմ արշավը: Մաջիդը 1987 թ. առաջին անգամ հրամայում է քրդերի դեմ քիմիական զենք կիրառել՝ մանանեխի գազ (իպրիտ), գարին և VX նյարդապարալիտիկ գազ: Քիմիական զենքի կիրառումն իր գազաթնակետին է հասնում Հալաբջայի վրա հարձակման ժամանակ⁷⁶: Այդ է պատճառը, որ իրաքցի քրդերը Մաջիդին Քիմիական Ալի, ինչպես նաև Քուրդիստանի դահիճ էին անվանում⁷⁷:

«Անֆալ» գործողության իրագործումը

1988 թ. «Անֆալ» գործողությունն ընդհանուր առմամբ ունեցել է ութ փուլ («Անֆալ 1» - «Անֆալ 8»), որոնցից յոթը թիրախավորել են Քուրդիստանի հայրենասիրական միության վերահսկած տարածքները: Իսկ Իրաքյան Քուրդիստանի հյուսիս-արևմուտքում Քրդական դեմոկրատական կուսակցության վերահսկողության տակ գտնվող տարածքները, որոնք վարչակարգը համարում էր ավելի փոքր սպառնալիք, 1988 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին դառնում են «Անֆալ» գործողության վերջին փուլի հիմնական թիրախը:

Առաջին «Անֆալ»-ը

Առաջին «Անֆալ»-ը տևել է 1988 թ. փետրվարի 21-ից մինչև մարտի 18-ը: Իրաքյան առաջին կորպուսն առաջին հերթին գրոհում է Քուրդիստանի հայրենասիրական միության կենտրոնակայանի և դրա՝ Սերգելոու (Վերին հովիտ) և Բերգելոու (Ստորին Հովիտ) բնակավայրերի հրամանատարական կենտրոնների վրա: Իրաքյան զորամիավորումները մարտեր էին վարում հրետանու և օդուժի աջակցությամբ: Մար-

73 Ronen Zeidel, “The Anfal Campaigns against the Kurds (1987-1989): An Internationally Unrecognized Genocide,” *The First International Conference under Genocide, The First International Conference on Nations Under Genocide: Pázmány Péter Catholic University, Salahaddin University-Erbil, 19-21 April 2017, Budapest*, 157.

74 Kaziwa Salih, “Pillage as the Political Economy of the Kurdish Anfal Genocide,” *Genocide Studies and Prevention* 14, no. 3, (2023), 10.

75 Samuel Totten and Paul R. Bartrop, with contributions by Steven L. Jacobs, *Dictionary of Genocide* (Westport, Connecticut, London: Greenwood Press, 2008), vol. 1, 13.

76 Mark Tran, “Iraq executes Chemical Ali,” *The Guardian*, 25 January, 2010, <https://www.theguardian.com/world/2010/jan/25/chemical-ali-execution-iraq-kurd>.

77 Gus Martin, *Essentials of Terrorism: Concepts and Controversies* (London: SAGE, 2011), 93.

տական գործողություններն ընթանում էին 1 154 քառ. կմ տարածքի վրա. քրդական փեշմերգան դիմադրություն էր ցույց տալիս⁷⁸:

Փետրվարի 23-ի վաղ առավոտյան իրաքցիները հարձակվում են բոլոր կողմերից՝ ձերբակալելով Քուրդիստանի հայրենասիրական միության փեշմերգա մարտիկներին: Իսկ երբ իրաքյան ուժերը շարժվում են Բերգելոտում և Սերգելոտում գտնվող Քուրդիստանի հայրենասիրական միության ռազմաբազաներ, քիմիական զենք կրող տանկերն ու ինքնաթիռները հարվածներ են հասցնում Չալապա, Չոխմախ, Գվիզելա, Հալադին և Յախսամար գյուղերի և շրջակա լեռների ուղղությամբ⁷⁹:

Քանի դեռ քրդական փեշմերգան դիմադրում էր, գյուղացիների մեծ մասը թաքնվում էր մոտակա քարանձավներում: Բայց մարտի սկզբին, երբ իրաքյան ուժերը սկսում են մեկը մյուսի հետևից գրավել քրդական գյուղերը, բնակիչները փախչում են, մեծ մասը՝ Իրան: Երեք կողմից շրջապատելով Ջաֆաթիի հովիտը՝ իրաքյան բանակը փախուստի ուղի է թողնում միայն դեպի արևելք և Իրանի սահման⁸⁰:

Հարձակման թեժ պահին Քուրդիստանի հայրենասիրական միությունը որոշում է մեկ այլ ճակատ բացել Իրաքի կառավարության դեմ՝ ուշադրությունը Ջաֆաթիի հովտից շեղելու համար: Մարտի կեսերին Քուրդիստանի հայրենասիրական միության ուժերը, իրանական զորքերի աջակցությամբ, քրդական այլ կուսակցությունների ստորաբաժանումների հետ գրավում են Իրաքի հյուսիսում գտնվող Հալաբջա քաղաքը, որտեղ մոտ 70 000 քուրդ էր բնակվում⁸¹:

Դրան հետևում է Իրաքի կառավարության արձագանքը. 1988 թ. մարտի 16-ին թունավոր գազով հարձակում է սկսվում Հալաբջայի վրա: Իրաքյան գործողություններն ավելի քան 5 000 մարդու մահվան պատճառ են դառնում⁸². նրանց մեծ մասը քաղաքացիական անձինք էին: Գնդակոծման ժամանակ կիրառվում էին նապավն և թունավոր գազեր (VX նյարդապարալիտիկ գազ, զարին, տաբուն և մանանեխի գազ)⁸³: Թեհրանի հիվանդանոց տեղափոխված վիրավորների մեծ մասը տուժել է հատկապես մանանեխի գազի ազդեցությունից⁸⁴:

Ուշագրավ է, որ նախքան գազային հարձակումը Հալաբջան նախօրոք ռմբակոծության է ենթարկվել: Հասան Ալի ալ Մաջիդը ցանկանում էր ռմբակոծության միջոցով կտորել տների դռներն ու ապակիները, որպեսզի գազի տարածման համար

78 Mohammed Ihsan, *Nation Building in Kurdistan*, 85.

79 “Story of Anfal”, <https://kurdistanmemoryprogramme.com/story-of-anfal/>, դիտվել է՝ 03.02.2023:

80 Human Rights Watch, “First Anfal - The Siege of Sergalou and Bergalou, February 23 - March 19, 1988,” <https://www.hrw.org/reports/1993/iraqanfal/ANFAL3.htm>, դիտվել է՝ 10.05.2023:

81 Choman Hardi, *Gendered Experiences of Genocide: Anfal Survivors in Kurdistan-Iraq* (London: Ashgate, 2011), 19.

82 Scott Christianson, *Fatal Airs: The Deadly History and Apocalyptic Future of Lethal Gases that Threaten Our World* (Santa Barbara: ABC-CLIO, 2010), 161.

83 “The Unforgettable Massacre of Halabja,” <https://pukmedia.com/EN/Details/72364>, դիտվել է՝ 07.02.2023:

84 “BBC on This Day | 16 | 1988: Thousands die in Halabja gas attack,” *BBC News*, August 28, 2013, http://news.bbc.co.uk/onthisday/hi/dates/stories/march/16/newsid_4304000/4304853.stm, դիտվել է՝ 07.02.2023:

հնարավորինս քիչ դիմադրություն լիներ⁸⁵: Ընդ որում՝ Մաջիդի վերաբերմունքն այս սպանդին երևում է մի տեսագրության մեջ. նա մի շարք կուսակցական պաշտոնյաների ասում է. «Ես կսպանեմ բոլորին քիմիական զենքով: Ո՞վ է ինչ-որ բան ասելու: Միջազգային հանրությունը...»⁸⁶:

Հարձակման հետևանքով զոհվում են հազարավոր մարդիկ, շատերն էլ հետագայում տարբեր հիվանդություններից ու քաղցկեղից են մահանում: Մոտ 10 000 մարդ կուրանում է և հաշմվում⁸⁷: Բազմաթիվ մարդիկ նյարդաբանական և հոգեբանական խնդիրների առաջ են կանգնում: Քիմիական հարձակման հետևանքները զգացվել են անգամ տարիներ հետո: Եվ պատահական չէ, որ Հալաբջայում և շրջակա վայրերում բնածին արատների դեպքերի կտրուկ աճ է նկատվել⁸⁸:

Երկրորդ «Անֆալ»-ը

Երկրորդ «Անֆալ» գործողությունը տևեց մարտի 22-ից մինչև ապրիլի 1-ը⁸⁹: Նովրուզից հետո իրենց ուժերը վերակազմավորելով՝ իրաքյան ուժերը մարտի 22-ին հարձակման ենթարկեցին Սուլեյմանիայի նահանգում գտնվող Քարադաղը, Բազյանը և Դարբանդիխանը՝ անակնկալի բերելով փեշմերգային⁹⁰:

Քրդական բնակավայրերի թիրախավորումը սկսվում է Սևսենան գյուղի քիմիական գնդակոծմամբ, որը գտնվում է Սուլեյմանիայից 30 կմ հարավ և ծառայում էր որպես Քուրդիստանի հայրենասիրական միության բազա, իսկ հաջորդ օրն արդեն բանակը հարձակում է գործում ցամաքային զորքերի միջոցով⁹¹: Քիմիական գնդակոծման են ենթարկվում նաև Ջաֆարան, Բելեքջար, Մետոյի, Սերքո գյուղերը և Քարա Դաղ լեռը⁹²:

Հարձակման հետևանքով այդ բնակավայրերի բնակիչները փախչում են հյուսիսում գտնվող սարավանջերը՝ հույս ունենալով, որ ի վերջո ապաստան կգտնեն Սուլեյմանիայում: Տարածքի մնացած քրդերը Չերդա լեռից հարավ են փախչում՝ դեպի Գերմիան: Նրանցից ոմանք ձերբակալվում են Քարա Դաղ-Սուլեյմանիա

85 Hamish de Bretton-Gordon, “Remembering Halabja chemical attack,” *Al Jazeera*, March 16, 2016, <https://www.aljazeera.com/opinions/2016/3/16/remembering-halabja-chemical-attack>, դիտվել է՝ 07.02.2023:

86 Glenn Cross, *Dirty War: Rhodesia and Chemical Biological Warfare 1975-1980* (Solihul: Helion and Company, 2017), 2020.

87 Mea Sucato, “Enforcing the Ban on Chemical Weapons,” *Sustainable Development Law & Policy* 6, vol. 3 (2006): 57.

88 By Jim Muir, “Kurds look back with fear,” *BBC News*, July 22, 2002, <http://news.bbc.co.uk/2/hi/middle-east/2138447.stm>, դիտվել է՝ 01.05.2023:

89 Hiltermann Joost, “The 1988 Anfal Campaign in Iraqi Kurdistan,” February 3, 2008, <https://www.sciencespo.fr/mass-violence-war-massacre-resistance/en/document/1988-anfal-campaign-iraqi-kurdistan.html>, դիտվել է՝ 01.05.2023:

90 Ihsan, *Nation Building in Kurdistan*, 85.

91 Kerim Yildiz, *The Kurds in Iraq: The Past, Present and Future*, 28.

92 Choman Hardi, *Gendered Experiences of Genocide*, 19-20.

ճանապարհին: Սուլեյմանիայում և ծայրամասային բնակավայրերում հերթով խուզարկվում էին բոլոր տները: Քարա Դադի բնակիչներից շատերը, որ կարողացել էին փախչել, ձերբակալվում և անհետանում են⁹³:

Թեև այս հարձակումը համեմատաբար կարճ է տևում, սակայն փեշմերգան այս անգամ ավելի ծանր կորուստներ է ունենում, քան առաջին «Անֆալ»-ի ժամանակ: Քուրդիստանի հայրենասիրական միության փեշմերգա մարտիկները ջախջախվել էին լեռներում և փախչում էին խաղաղ բնակիչների հետևից: Այդ ընթացքում իրաքյան զորքերը սկսում են համակարգված կերպով քանդել Քարա Դադի շրջանի բոլոր գյուղերը՝ շարունակելով սարսափահար փախստականների հետապնդումը:⁹⁴ Ի տարբերություն առաջին «Անֆալ»-ի, որի ժամանակ անհետանում էին բազմաթիվ տղամարդիկ և պատանիներ, երկրորդ «Անֆալ»-ի ժամանակ անհետացողների շարքերը համալրվում են հարյուրավոր կանանցով ու երեխաներով⁹⁵:

Երրորդ «Անֆալ»-ը

Երրորդ «Անֆալ»-ի ժամանակ՝ ապրիլի 7-ից 20-ն ընկած ժամանակահատվածում, թիրախավորվել է Գարմիանի շրջանը, որ գտնվում է Սուլեյմանիայի արևելքում՝ Իրանի սահմանից հեռու: Գարմիանի շրջանի լայնատարած հարթավայրերը, ինչպես նաև իրաքյան զորքերի կենտրոնացումը թաքնվելու կամ փախչելու քիչ հնարավորություններ էին թողնում քրդերի համար⁹⁶: Փախչող քուրդ գյուղացիներին իրաքյան բանակն ուղղորդում էր հավաքագրման կետեր, որտեղից նրանք պետք է տեղափոխվեին ռազմագերիների ճամբարներ⁹⁷:

Գարմիանի հյուսիսում գյուղացիներն ավտոբուսներով տեղափոխվում էին Լեյլան, Ալիավա, Քադիբ Քարամ և Չամչամալ քաղաքների հավաքագրման կետեր: Հարավային Գարմիանում նրանց հավաքագրում էին Տուգ Խուրմատուի երիտասարդական կենտրոնում և Քորատուի ամրոցում: Հավաքագրման կետերում արական սեռի գյուղացիներին առանձնացնում էին, բեռնատարներով տեղափոխում անհայտ ուղղություններով ու մահապատժի ենթարկում:⁹⁸:

Իրաքի բանակը մինչև ապրիլի 20-ը գրավում է Իրաքյան Քուրդիստանի գյուղական տարածքների մեծ մասը: «Անֆալ» արշավի այս փուլն ամենակործանարարն է եղել՝ մարտադաշտերում քուրդ զոհերի թվի առումով⁹⁹: Թագաշարը քիմիական

93 Choman Hardi, “The Anfal Campaign Against the Kurds: Chemical Weapons in the Service of Mass Murder,” in *Forgotten Genocides: Oblivion, Denial, and Memory*, ed. René Lemarchand (Philadelphia: University of Pennsylvania Press, 2011), 14.

94 Michael J. Kelly, *Ghosts of Halabja Saddam Hussein and the Kurdish Genocide* (Westport, Conn.: Praeger Security International, 2008), 24-25.

95 Yildiz, *The Kurds in Iraq*, 28.

96 Choman Hardi, *Gendered Experiences of Genocide*, 20.

97 “Story of Anfal.”

98 Նույն տեղում:

99 Mohammed Ihsan, *Nation Building in Kurdistan*, 85.

զենքով ուժակոծված միակ գյուղն է եղել, քանի որ շրջանի հարթավայրային ռելիեֆն ու իրաքյան բանակի խիտ ներկայությունը թույլ չէին տվել թունավոր գազերի մասշտաբային կիրառում¹⁰⁰:

Բազմաթիվ քաղաքացիների անհետացումը և հատկապես ապրիլի 14-ին կանանց և երեխաների կորչելու իրողությունը առանձնահատուկ նշանակություն են ստանում երրորդ «Անֆալ»-ի ընթացքում: Չանգվածային անհետացումը դիտարկվում է տարածաշրջանի ժողովրդագրությունը փոխելու գլխավոր մեթոդներից մեկը: Սադան Հուսեյնի վարչակարգի գլխավոր նպատակներից մեկն էլ տարածաշրջանի բնակչության համամասնությունը փոխելն է եղել: Պատահական չէ, որ 1988 թ. Իրաքի ռազմական հետախուզության տնօրենի տեղակալ Վաֆիկ ալ Սամարային հայտարարում է. «Էրբիլում կարող ես սպանել կես մլն քրդի, բայց դա ոչինչ չի փոխի. այն դեռ քրդական կլինի: Իսկ Քիրքուքում 50 000 քրդի սպանությունն ընդմիջտ վերջ կտա քրդական գործին»¹⁰¹:

Չորրորդ «Անֆալ»-ը

Չորրորդ «Անֆալ»-ը տեղի է ունենում 1988 թ. մայիսի 3-ից 8-ը Փոքր Չաբ գետի հովտում, որը Էրբիլ և Քիրքուք նահանգների սահմանն է: Մայիսի 3-ին իրաքցի զինվորականները, Պարսից ծոցում գտնվող Ֆաու թերակղզում Իրանի նկատմամբ երկու շաբաթ առաջ իրենց վճռական հաղթանակով քաջալերված, քիմիական զենքով ավերիչ հարձակում են գործում Ասկար և Գոփթապա գյուղերի վրա¹⁰²: Հարձակումներից հետո մարդիկ սկսում են խուճապահար փախչել, սակայն երբ իրաքյան կողմը կեղծ համաներում է հայտարարում, դուրս են գալիս թաքստոցներից և հանձնվում են: Որոշ գյուղերում իրաքյան ուժերը տղամարդկանց գերեվարելիս բաժանում էին կանանցից, իսկ նրանց պատկանող տները կողոպտում¹⁰³:

1988 թ. մայիսի 4-ին քրդական դիմադրությունը դադարում է, և տարածքը հայտնվում է իրաքյան բանակի վերահսկողության տակ: Հետագա օրերին իրաքյան բանակն այրում է «արգելված գոտու» բոլոր գյուղերը: Չաբ գետի հյուսիսում նրանք ավերում են Բոգդը, Կանի Բին, Գոմաշինը, Կանի Հանջիրը, Քանիրաշը, Կոխան, Մելա Զիյադը, Սաթուկալան, Քզլուն և Խրաբան, իսկ հարավում՝ Գինաղաջ գետի հարավային մասը, Գըրդ Խաբարը, Ջալամորդը, Մամիշան և Քասրոքը¹⁰⁴:

Մայիսի 5-ին հարձակումն ուղղվում է արևմուտք՝ Շվան գյուղ, որտեղ իրաքյան ուժերը, ինչպես Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության և Քուրդիստանի հայրենասիրական միության փեշմերգաների ստորաբաժանումները, բազաներ ունեին: Որոշ գյուղացիների հաջողվում է փախչել, շատերը գերի են ընկնում. շրջանի

100 Choman Hardi, “The Anfal Campaign Against the Kurds,” 116.

101 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 20.

102 “Story of Anfal.”

103 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 21.

104 “Story of Anfal.”

մի շարք գյուղեր ավերվում են¹⁰⁵: Փոքր Չար գետի հովտում գտնվող գյուղերից անվազն 10 000 քուրդ է անհետանում¹⁰⁶:

Հինգերորդից յոթերորդ «Անֆալ»-ները

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ «Անֆալ»-ների ընթացքում թիրախավորվում են Էրբիլի շրջանի՝ Իրանի սահմանի մոտ գտնվող Շաքլավա և Ռավանդիզ հովիտները: Երեք հարձակում է լինում. դրանք սկսվում են մայիսի 15-ին և ավարտվում օգոստոսի 26-ին: Այդ հարձակումների ընթացքում գազով թունավորվում են հետևյալ գյուղերը՝ Ուեր, Սերան, Բալիսան, Հիրան, Սմակուլի, Մալական, Շեխ Վասան, Ռաշկի Բանեշան, Կանիբա, Նագանի¹⁰⁷:

Իրաքյան ուժերը գրոհում են մայիսի 15-ից մինչև հունիսի 7-ը: Կառավարությունը մորիլիզացնում է բոլոր գորամասերը: Փեշմերգան ակտիվ դիմադրություն է ցույց տալիս՝ ստիպելով իրաքյան ստորաբաժանումներին նահանջել¹⁰⁸: Հինգերորդ «Անֆալ»-ը հաջողություն չի ունենում, և իրաքյան ուժերի հարձակումը ժամանակավորապես դադարեցվում է. դրա հիմնական պատճառը թերևս Կորակ լեռան շրջակայքում Քուրդիստանի հայրենասիրական միության համառ դիմադրությունն է եղել: Ժամանակավոր զինադադարը պահպանվում է մինչև հուլիսի վերջ¹⁰⁹:

Հուլիսի 26-ին իրաքյան ուժերի հարձակումով սկսվում է վեցերորդ «Անֆալ»-ը, որի ժամանակ դաժան քիմիական ունրակոծության են ենթարկվում Բալիսանի, Մալականի, Վարտեի, Հիրանի և Սմաքուլի Գալի հովիտները¹¹⁰: Ռմբակոծություններն ու մարտերը շաբաթներ են տևում:

Հուլիսի 30-ին սկսվում է յոթերորդ «Անֆալ»-ը Բալիսանի, Բալոկավայի և Խաթեի քիմիական ունրակոծմամբ՝ նպատակ ունենալով հող նախապատրաստելու հաջորդ խոշոր գործողության համար՝ արդեն Բադիսան շրջանում¹¹¹:

Հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ «Անֆալ»-ներն իրաքյան զինված ուժերի համար ամենաբարդ գործողություններն են եղել քրդական գյուղերի դեմ՝ հիմնականում Քուրդիստանի հայրենասիրական միության փեշմերգաների կատաղի դիմադրության պատճառով:

105 “Story of Anfal.”

106 Human Rights Watch, “Fourth Anfal—The Valley of the Lesser Zab, May 3-8, 1988,” <https://www.hrw.org/reports/1993/iraqanfal/ANFAL6.htm>, դիտվել է՝ 07.03.2023:

107 Hardi, “The Anfal Campaign Against the Kurds,” 116-117.

108 Ihsan, *Nation Building in Kurdistan*, 88.

109 Human Rights Watch, “Fifth, Sixth and Seventh Anfals: The Mountain Valleys of Shaqlawa and Rawanduz, May 15-August 26, 1988,” https://www.hrw.org/reports/1993/iraqanfal/ANFAL7.htm#P74_25519#P74_25519, դիտվել է՝ 07.03.202:

110 “Story of Anfal.”

111 Նույն տեղում:

Ութերորդ «Անֆալ»-ը

1988 թ. օգոստոսի 20-ին ուժի մեջ է մտնում Իրանի և Իրաքի միջև հրադադարը: Եվ դրանով իրաքյան բանակի ձեռքերն ազատվում են քուրդ ապստամբների դեմ արշավը ավարտին հասցնելու համար¹¹²: Ութերորդ «Անֆալ»-ը տեղի է ունենում օգոստոսի 25-ից սեպտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում, երբ ավերածություններ են իրագործվում Բադինանի շրջանում, որը Քուրդիստանի դեմոկրատական կուսակցության հենակետն էր: Քիմիական հարձակումները սկսվում են ավելի քան 30 գյուղերի (Ջևա Շքանի, Տուկայի, Գլենասկայի, Բիրջինիի, Տիլաքքուրի, Բարկավրեի, Վիրմեյիի, Բիլեջանեի և Իկմալայի և այլն) վրա, ինչի հետևանքով խուճապի մատնված բնակչությունը զանգվածաբար շարժվում է դեպի թուրքական սահման: Օգոստոսի 26-ին, սակայն, իրաքյան զորքերը փակել էին դեպի Թուրքիա փախուստի ճանապարհը¹¹³: Նրանք, ովքեր կարողանում են անցնել գլխավոր ճանապարհը կամ ավելի մոտ էին գտնվում սահմանին, հասցնում են փախչել, իսկ մյուսները ձերբակալվում և տեղափոխվում են ճամբար: Տղամարդկանց առանձնացնում են մահապատժի ենթարկելու համար, իսկ կանանց կալանավորում Ֆորտ Դուլսոկում, այնուհետև՝ Մոսուլի մոտ գտնվող Սալամիայում մինչև սեպտեմբերի համաներումը¹¹⁴: Ենթադրվում է, որ վերջին «Անֆալ»-ի ժամանակ 65 000 – 80 000 խաղաղ բնակիչ Բադինանի շրջանից փախել է Թուրքիա: Որևէ մեկին թույլ չի տրվում անցնել սահմանը, սակայն երկու օր անց փախստականները, որոնց հետապնդում էր իրաքյան բանակը, այնուամենայնիվ անցնում են Թուրքիա¹¹⁵:

1988 թ. օգոստոսի 29-ին իրաքյան զինվորականները զեկուցում են, որ ավարտին են հասցրել հարձակողական գործողությունները «Անֆալ»-ի վերջին փուլի համար: Սակայն, իրաքյան ուժերի գործողությունները շարունակվում են ևս մեկ շաբաթ, որի ընթացքում հետապնդումների են ենթարկում Բադինանում փրկված քրդերին: Այդ գործողությունների շրջանակներում ավելի քան 13 000 քուրդ ուղարկվում է նոր ճամբար, որ հիմնված էր Դոհուկ քաղաքի մոտ գտնվող Նիզարկա բանտում¹¹⁶: Կալանավորներին պահում էին փոքր, հակասանիտարական խցերում: Իրաքցի սպաները չէին կերակրում բանտարկյալներին և նույնիսկ արգելում էին խմել բանտի բակի ծորակի ջրից: Շատ քուրդ բանտարկյալներ սովից խուսափում են միայն տեղի բնակիչների բարյացակամության շնորհիվ, որոնք պարկերով ուտելիք էին թողնում նրանց համար բանտի ցանկապատի մոտ¹¹⁷:

112 Leezenberg, “The Anfal Operations in Iraqi Kurdistan,” 378.

113 Hardi, “The Anfal Campaign Against the Kurds,” 117.

114 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 22.

115 Hardi, “The Anfal Campaign Against the Kurds,” 117.

116 Kelly, *Ghosts of Halabja*, 31.

117 “Story of Anfal.”

«Անֆալ» արշավից հետո տեղի ունեցած գործընթացները

Եվ 1988 թ. սեպտեմբերին Իրաքի կառավարությունը հասնում է իր հիմնական նպատակներին: Քրդական գյուղերն ավերվել էին, և 15-50 տ. բոլոր տղամարդիկ սպանվել կամ ստիպված էին եղել փախչել: Քրդական դիմադրության շարժումը ջախջախվում է, իսկ կողմնակիցները՝ փախչում Իրան: Ամբողջ Իրաքյան Քուրդիստանը Սադամ Հուսեյնի վերահսկողության տակ է անցնում¹¹⁸: Միայն 2 000 գյուղերի ավերումն արձանագրված է Իրաքի կառավարության փաստաթղթերում: Իսկ «Անֆալ» արշավի ընթացքում հողին է հավասարեցվում 4 049 գյուղ¹¹⁹:

1988 թ. սեպտեմբերի 6-ին Սադամ Հուսեյնի կառավարությունը հայտարարում է «ընդհանուր և համապարփակ համաներում բոլոր իրաքցի քրդերին, ինչպես Իրաքի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս»¹²⁰: Սակայն հետագայում իրաքյան հետախուզական ծառայություններն ուշիուշով հետևում են բոլոր այն գործողություններին, որոնք կարող էին ուշադրություն հրավիրել «Անֆալ»-ի իրադարձությունների վրա: Իրաքի կառավարության հատուկ զգուշավորությունը, որ ցուցաբերվում էր «Անֆալ»-ի մասին յուրաքանչյուր հիշատակման հարցում, թերևս ցույց է տալիս Սադամ Հուսեյնի մտահոգությունը, որ կմեղադրվի ցեղասպանության իրագործման համար¹²¹:

2003 թ. Սադամ Հուսեյնի իշխանության տապալումից հետո Իրաքյան Քուրդիստանի կառավարությունը և իրաքյան այլ կառույցներ սկսում են որոնել «Անֆալ»-ի հետևանքներն արտացոլող զանգվածային գերեզմանները: Քուրդիստանի նահատակների և «Անֆալ»-ի գործերի նախարարության տվյալների համաձայն՝ մինչ օրս Իրաքի կենտրոնական և հարավային շրջանների անապատում 63 զանգվածային գերեզման է հայտնաբերվել: Այս բացահայտումներից ի վեր միայն 3 737 դի է այդ զանգվածային գերեզմաններից տեղափոխվել և թաղվել Իրաքյան Քուրդիստանում¹²²: Բայց դա անհետացածների միայն մի փոքր հատվածն է, քանի որ տվյալներ կան, որ ցեղասպանության ընթացքում մինչև 100 000 քուրդ է անհետացել¹²³: Անհետացածներ-

118 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 22.

119 Kelly, *Ghosts of Halabja*, 32.

120 “Story of Anfal.”

121 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 23.

122 “The ‘Anfal’ massacres and ‘genocide’: 179,000 bodies still lie buried in mass graves,” *Medya News*, April 14, 2021, <https://medyanews.net/the-anfal-massacres-and-genocide-179000-bodies-still-lie-buried-in-mass-graves/>, դիտվել է՝ 07.03.2023; Dilshad Anwar, Rikar Hussein, “Iraq Unearths Mass Graves Believed to Contain Kurds Slain in 1987-88,” *VOA*, July 25, 2019, <https://www.voanews.com/a/extremism-watch-iraq-unearths-mass-graves-believed-contain-kurds-slain-1987-88/6172578.html>, դիտվել է՝ 07.03.2023; Kosar Nawzad, “Team finds over 300 Kurdish Anfal victims in southern Iraqi mass grave,” *Kurdistan24*, April 12, 2019, <https://www.kurdistan24.net/en/story/19375-Team-finds-over-300-Kurdish-Anfal-victims-in-southern-Iraqi-mass-grave>, դիտվել է՝ 07.03.2023:

123 Shabaz Jamal, “Anfal Victims Feel Forgotten,” *The Institute for War & Peace Reporting*, <https://iwpr.net/global-voices/anfal-victims-feel-forgotten>; Heather Pringle, “Witness to Genocide,” <https://archive.archaeology.org/0901/etc/iraq.html>, դիտվել է՝ 20.04.2023:

րի մասին հաճախ ասվում է, որ նրանք «անֆալացել» են. այս եզրույթի կիրառումը տարածվել է նաև զանգվածային անհետացման այլ դեպքերի համար¹²⁴:

1991 թ. Իրաքի ոստիկանության գաղտնի փաստաթղթերը (ավելի քան 5 մլն էջ), ինչպես նաև բազմաթիվ տեսաերկեր և ձայներիզներ, որոնք արձանագրում են Սադամ Հուսեյնի՝ Իրաքի նախագահ եղած ժամանակ կատարված վայրագությունները և մարդու իրավունքների ոտնահարման դեպքերը, հայտնվում են քրդական ուժերի ձեռքում, սակայն անվտանգության նկատառումներից ելնելով՝ փաստաթղթերի բնօրինակները փոխանցվում են ԱՄՆ-ին¹²⁵:

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի աջակցությամբ, որը հետամուտ էր լինում փաստաթղթերի պաշտոնական պահպանման գործընթացին, Պենտագոնը 1992 և 1993 թթ. փաստաթղթերը Հյուսիսային Իրաքից տեղափոխում է ԱՄՆ: Պաշտպանության հետախուզության գործակալությունը (Defense Intelligence Agency) լուսապատճենում է դրանք, ապա փոխանցում Վաշինգտոնում գտնվող ԱՄՆ ազգային արխիվի և փաստաթղթավորման ծառայության (U.S. National Archive and Records Service) պահպանմանը¹²⁶: Իսկ 1997 թվականից Կոլորադո-Բոլդերի համալսարանի արխիվները ձեռք են բերում բնօրինակ փաստաթղթերն ու պատճենները¹²⁷: Այդ կերպ հնարավորություն է ստեղծվում, որ Սադամ Հուսեյնի օրոք մարդու իրավունքների զանգվածային խախտման դեպքերի շուրջ խոր հետազոտություններ կատարվեն: Այդ նյութերը «Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպության համար հասանելի են դառնում 1992 թ., ինչի շնորհիվ էլ կազմվում է «Ցեղասպանությունն Իրաքում. «Անֆալ» արշավն ընդդեմ քրդերի»¹²⁸ զեկույցը, որը մանրամասնում է ցեղասպանական գործողության իրադարձությունները¹²⁹: 2009 թվականից Պենտագոնը և հետախուզական համայնքը գիտնականներին թույլ են տալիս հետազոտել լուսապատճենված փաստաթղթերը¹³⁰:

Գաղտնի ոստիկանության փաստաթղթերը 2005 թ. ԱՄՆ կառավարությունը վե-

124 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 35; Peter Galbraith, *Saddam's Documents: A Report to the Committee on Foreign Relations, United States Senate* (Washington: U.S. Government Printing Office, 1992), 10.

125 Barton Gellman "U.S. To Airlift Archive of Atrocities out of Iraq," *The Washington Post*, May 19, 1992, <https://www.washingtonpost.com/archive/politics/1992/05/19/us-to-airlift-archive-of-atrocities-out-of-iraq/f9791b28-6a6e-46f6-9a86-07e7f61bd725/>, դիտվել է՝ 20.04.2023:

126 Ferdinand Hennerbichler, Bruce Montgomery, "U.S. Restitution of the Iraq Secret Police Files from Saddam Hussein's Regime Regarding the Kurds in Iraq," *Advances in Anthropology* 5, no 1 (2015): 35.

127 The University of Colorado Boulder, "CU-Boulder Archives Acquires Iraqi Secret Police Files," <https://www.colorado.edu/today/1998/02/03/cu-boulder-archives-acquires-iraqi-secret-police-files>, դիտվել է՝ 20.04.2023:

128 Middle East Watch/Human Rights Watch, *Genocide in Iraq: The Anfal Campaign Against the Kurds*, 1993, <https://www.hrw.org/reports/1993/iraqanfal/>, դիտվել է՝ 20.04.2023:

129 Chenar Chalak, "Thirty-four years on, Anfal survivors still seek compensation," *Rudaw*, April 13, 2022, <https://www.rudaw.net/english/kurdistan/130420225>, դիտվել է՝ 20.04.2023:

130 Bruce Montgomery, "US Seizure, Exploitation, and Restitution of Saddam Hussein's Archive of Atrocity," *Journal of American Studies* 48, no 2 (2014): 559.

րադարձնում է Իրաքին¹³¹: Իսկ 2014 թ. Կոլորադո-Քոլորեթի համալսարանը Մուլեյմանիայում գտնվող «Ժին»¹³² արխիվային կենտրոնին բարձր մակարդակի արարողությամբ հանձնում է փաստաթղթերի պատճենները¹³³:

2003 թ.՝ ԱՄՆ-ի գլխավորած կռիվներից հետո, Իրաքի հիշողության հիմնադրամը (Iraqi Memory Foundation), որը ստեղծվել է իրաքցի վտարանդի Քանան Մակիայի նախաձեռնությամբ, «Բասա» կուսակցության գրագրությունն է ձեռք բերում: ԱՄՆ պաշտպանության նախարարությունը Մակիային թույլ է տալիս հավաքել փաստաթղթերը այն պայմանով, որ դրանք պահպանի Սադամ Հուսեյնի ռեժիմի օրոք կատարված վայրագություններն ի ցույց դնելու նպատակով¹³⁴:

2005 թ. ԱՄՆ պաշտպանության նախարարությունը փաստաթղթերը տեղափոխում է ԱՄՆ և թվայնացնում: 2008 թ. Մակիան համաձայնության է գալիս Սթենֆորդի Հուվեր ինստիտուտի¹³⁵ հետ և արխիվները հետազոտական նպատակներով փոխանցում նրա պահպանությանը¹³⁶: 2020 թ. օգոստոսին «Բասա» կուսակցության փաստաթղթերը ԱՄՆ-ից հետ են ուղարկվում Իրաք, սակայն Բաղդադը դեռևս դրանց հանրային հասանելիությունը չի ապահովել,¹³⁷ ինչը Հուսեյնի կառավարման օրոք տուժած քրդերի շրջանում դժգոհության առաջացման տեղիք է տալիս: Շրջանառվում է այն պնդումը, թե «Բասա» կուսակցության փաստաթղթերի պահման վայրն անհայտ է¹³⁸:

Արաբացման գործոնը

Արաբացումն «Անֆալ» արշավի հիմնական տարրերից մեկն է եղել: Այն բնութագրվում է որպես ոչ արաբ բնակչության վրա արաբական ազդեցության աճի գործընթաց¹³⁹, որը լեզվական տեղաշարժ էր առաջացնում արաբերենի աստիճանական տարածմամբ,

131 Joseph Sassoon, “Michael Brill, The North Iraq Dataset (NIDS) files: Northern Iraq under Ba’ thist rule, 1968–91,” *Journal of Contemporary Iraq & the Arab World* 14, no 1 (2020): 106, 120.

132 Zheen Center, <https://zheen.org/en/home/>, դիտվել է՝ 20.05.2023:

133 Hennerbichler, Montgomery, “U.S. Restitution of the Iraq Secret Police Files,” 36.

134 Elizabeth Thompson, “Ba’ath Party Archives and the Khmer Rouge Records: The Importance of Cultural Accessibility,” *Honors Projects* (2021), 3, <https://digitalcommons.spu.edu/cgi/viewcontent.cgi?article=1154&context=honorsprojects>, դիտվել է՝ 20.05.2023:

135 Ավելի քան 10 մլն էջ լուսապատճեն և 1 500 վիդեո ֆայլ, որոնք Իրաքի հիշողության հիմնադրամը «Բասա»-ի տարածաշրջանային հրամանատարության շտաբից և այլ աղբյուրներից է հավաքվել, պահվում են Հուվեր ինստիտուտի արխիվում: Տե՛ս Hoover Institution, “Hizb al-Ba’th al-Arabi al-Ishtiraki Records (Ba’th Party Records),” <https://www.hoover.org/library-archives/collections/hizb-al-bath-al-arabi-al-ishtiraki-records-bath-party-records>, դիտվել է՝ 20.05.2023:

136 Thompson, “Ba’ath Party Archives,” 3.

137 “Return of Saddam-era archive to Iraq opens debate, old wounds,” *Rudaw*, September 11, 2020, <https://www.rudaw.net/english/middleeast/iraq/110920203>, դիտվել է՝ 20.05.2023:

138 Omar al-Jaffal, “Iraq’s Baath Party archive location unknown,” *Al-Monitor*, September 21, 2020, <https://www.al-monitor.com/originals/2020/09/iraq-baath-archive-us.html>, դիտվել է՝ 20.05.2023:

139 Dwight F. Reynolds, *Cambridge Companion to Modern Arab Culture* (Cambridge: Cambridge University Press, 2015), 3.

ինչպես նաև ընդօրինակում արաբական այն պետությունների (Ալժիր, Իրաք, Քուվեյթ, Սուդան) վարած քաղաքականությունը, որոնց կառավարություններն ազգայնական դիրք էին բռնել ոչ արաբալեզու փոքրամասնությունների դեմ:

1930-ական և հատկապես 1970-ական թվականներից իրաքյան վարչակազմերը հազարավոր էթնիկ քրդերի և այլ ազգային փոքրամասնությունների տեղափոխում էին Հյուսիսային Իրաքից և այդ տարածքը բնակեցնում արաբներով¹⁴⁰: Քրդերն արտաքսվում էին արաբաբնակ հարավ կամ փախչում լեռնային շրջաններ, իսկ նրանց տները տրվում էին արաբ վերաբնակիչներին: Բացի այդ՝ տեղերում մնացած ոչ արաբ ընտանիքները սահմանափակումների էին բախվում աշխատանքի և սեփականության իրավունքի հարցում: Տեղանուններն արաբացվում էին, իսկ քրդերի ձուլման նպատակով արաբ տղամարդկանց պարզևներ էին տալիս քուրդ կանանց հետ ամուսնանալու դեպքում¹⁴¹:

Այս գործընթացի միջոցով իրաքյան կառավարությունը հնարավորություն է ստանում ամբողջական վերահսկողություն սահմանել Իրաքի հյուսիսում գտնվող հարուստ նավթային ռեսուրսների և գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ¹⁴²: Այսինքն՝ այս ամենի միջոցով նաև տարածքային խնդիր էր լուծվում: Նույն նպատակին է միտված եղել Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության իրագործումը: Այնուամենայնիվ, Իրաքի իշխանությունները քրդերին համատարած կերպով բնաջնջելու խնդիր չէին դրել, ինչպես որ Հայոց ցեղասպանության դեպքում է եղել: Պատահական չէ, որ 1915 թ. սեպտեմբերի 16-ին Հալեպի կուսակալությանն ուղարկած հրամանագրում Օսմանյան կայսրության մեծ վեզիր և ներքին գործերի նախարար Թալեաթը գրել է, որ որոշել են բնաջնջել Թուրքիայում բնակվող բոլոր հայերին: «Նրանց գոյությունը պետք է վերջ դրվի որքան էլ միջոցները ողբերգական լինեն: Չպետք է հաշվի առնել ոչ տարիքը, ոչ սեռը և ոչ էլ խղճի խայթը»¹⁴³, – նշվում է հրամանագրում:

1980-ական թթ. արաբացման քաղաքականությունը շարունակվում է նոր թափով, և պատահական չէ, որ մինչև «Անֆալ»-ի իրագործումը՝ 1980-1988 թթ., Իրաքի իշխանությունները 1 650 գյուղ են ավերում¹⁴⁴: 1987 թ. հունիսին Բաղդադը սկսում է ի ցույց դնել իր մտադրությունը, որ սպանելու է բոլոր այն քրդերին, որոնք բնակվում են Հյուսիսային Իրաքի «արգելված» գյուղական տարածքներում¹⁴⁵, հատկապես

140 “Background: Forced Displacement and Arabization of Northern Iraq the Mass Displacement of the mid-1970s”, <https://www.hrw.org/reports/2004/iraq0804/4.htm>, դիտվել է՝ 20.05.2023:

141 Greg Muttitt, *Fuel on the Fire: Oil and Politics in Occupied Iraq* (New York: New Press, 2012), 234.

142 Hania Mufti, *Iraq, Claims in Conflict: Reversing Ethnic Cleansing in Northern Iraq* (New York, NY: Human Rights Watch, 2004), 7.

143 Peter Balakian, *Black Dog of Fate* (New York: Broadway Books, 1998), 170.

144 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 15.

145 Դեռևս «Անֆալ»-ի գործողություններին նախորդող շրջանում Իրաքի կառավարությունը Մուլեյմանիա, Էրբիլ և Դուհուկ նահանգների խոշոր գյուղական տարածքները «արգելված տարածքներ» է հայտարարում: Բնակչությանը սովմանահ անելու և հեռանալ դրդելու նպատակով տնտեսական էմբարգո է սահմանվում այդ տարածքների նկատմամբ: Այդտեղ մնացած քուրդ գյուղացիները,

այն գյուղերում, որոնք հարակից էին փեշմերգայի ապստամբների գործունեության կենտրոններին¹⁴⁶: Արաբացման արշավի շրջանակներում է տեղի ունեցել նաև 1987 թ. հոկտեմբերի մարդահամարը, որին չհերկայացած քաղաքացիներն այլևս չեն ճանաչվում որպես Իրաքի քաղաքացիներ: Քուրդ բնակչության մեծ մասը, որ տեղյակ էր մարդահամարից, որոշում է չմասնակցել¹⁴⁷:

Մարդահամարը տեղի էր ունենում թիրախավորված խմբին առանձնացնելու համար, քանի որ մասնակիցներին տրվում էր երկու տարբերակ՝ նույնականանալ որպես արաբ կամ քուրդ: Իսկ իրաքյան կառավարության «արգելված» հոչակած տարածքում ապրողներին «ազգային շարքեր» վերադառնալու հնարավորություն էր տրվում, այսինքն՝ լքել իրենց տները և ընդունել վերաբնակեցումը ճամբարներում կամ կորցնել քաղաքացիությունը: Նրանք, ովքեր մերժում էին վերաբնակեցումը, մեղադրվում էին գինվորական ծառայությունից խուսափելու համար: Իսկ նրանք, ովքեր հրաժարվում էին քաղաքացիությունից, մարդահամարի հրամանագրի համաձայն՝ ենթարկվում էին դասավիճակների նկատմամբ մահապատիժ սահմանող որոշմանը¹⁴⁸:

Ուշագրավ է, որ Իրաքի իշխանությունը մեծ ջանքեր էր գործադրում ցեղասպանական գործողությունների իրական էությունը գաղտնի պահելու և տեղեկատվության հոսքերի նկատմամբ վերահսկողություն պահպանելու համար: 1988 թ. ընթացքում իրաքյան ռադիոն հեռարձակում էր «հերոսական» «Անֆալ» արշավների մասին լուրերը այն համատեքստում, թե իբր դրանք ուղղված են Իրանի դիվերսանտների և նրա հետ համագործակցողների դեմ, և խուսափում քիմիական զենքի կիրառման, քաղաքացիական անձանց տեղահանությունների և մահապատիժների, ինչպես նաև այդ գործողությունների կատարման ժամանակ գյուղերի ոչնչացման մասին որևէ հիշատակում անելու¹⁴⁹:

«Անֆալ» գործողության համատեքստում հատուկ նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ Իրաքի իշխանությունները, Հյուսիսային Իրաքի նավթով հարուստ շրջաններն արաբացնելուն զուգահեռ, ցանկացել են բացառել քրդական

որոնք համարվում էին «դիվերսանտներ», «Իրանի գործակալներ» կամ «դասավիճակներ», ենթարկվում են անկանոն հարձակման: Իրաքի կառավարության 1987 թ. հունիսի 22-ի հրամանում նշվում է, որ «բոլոր այն գյուղերը, որտեղ դեռևս կան դիվերսանտներ, Իրանի գործակալներ և դավաճաններ, անվտանգության նկատառումներից ելնելով՝ կհամարվեն սահմաններից դուրս, որտեղ գործերը կարող են կրակ բացել ըստ ցանկության՝ առանց որևէ հրահանգի»: Ավելի մանրամասն տե՛ս World Peace Foundation “Iraq: Assaults against the Kurds,” https://sites.tufts.edu/atrocitiesendings/2015/09/16/iraq-assaults-against-the-kurds/#_edn8, դիտվել է՝ 18.02.2023; Dina Rizk Khoury, *Iraq in Wartime: Soldiering, Martyrdom, and Remembrance* (Cambridge: Cambridge University Press, 2013), 117-118; “U.S.: Anfal the campaign included poison gas, ‘savagely attacks,’” CNN, August 21, 2006, <https://edition.cnn.com/2006/WORLD/meast/08/21/husseini.anfal/>, դիտվել է՝ 18.02.2023:

146 Judith S. Yaphe, “Iraq: Human Rights in the Republic of Fear,” in *Middle East and North Africa: Governance, Democratization, Human Rights*, ed. Paul J. Magnarella (New York: Routledge, 2017), 51.

147 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 17.

148 Judith S. Yaphe, “Iraq: Human Rights in the Republic of Fear,” 51.

149 Leezenberg, “The Anfal Operations in Iraqi Kurdistan,” 384.

ինքնության վերածնունդը: Իսկ այդ շրջանների նավթային ռեսուրսները շատ էին անհրաժեշտ Բաղդադին, դրա համար էլ 1988 թ. «Անֆալ»-ի գործողությունների ժամանակ զանգվածային սպանդ են իրագործում նաև նավթով հարուստ Քիրքուկի գյուղերում՝ դատարկելով քրդական բնակչությունից¹⁵⁰: Այս ամենով մեկտեղ՝ պետք է ի նկատի ունենալ, որ քրդերի ունեցվածքին ու հողերին տիրանալու ձգտումը ևս մեծ դերակատարություն է ունեցել նրանց դեմ ուղղված ցեղասպանական արշավը սկսելու գործում:

Դատական գործընթացները

2005 թ. Հաագայի շրջանային դատարանը հոլանդացի Ֆրանս վան Անրաաթին դատապարտում է 15 տարվա ազատազրկման պատերազմական հանցագործությունների, մասնավորապես հումք մատակարարելու համար, ինչը Սադամ Հուսեյնի վարչակազմն օգտագործել էր 1980-1988 թթ. Իրանի հետ պատերազմում՝ թունավոր գազ արտադրելու համար: Իսկ այդ թունավոր գազը կիրառվել է նաև Իրաքի քուրդ բնակչության դեմ, ներառյալ՝ 1988 թ. Հալաբջա քաղաքի վրա հարձակման ժամանակ, որի հետևանքով զոհվել է մոտ 5 000 մարդ: Դատարանը որոշում է, որ 1980-ական թթ. Իրաքում հազարավոր քրդերի սպանությունը ցեղասպանություն է¹⁵¹:

Սակայն 2005 թ. դեկտեմբերի 23-ին Հաագայի շրջանային դատարանն արդարացնում է մեղադրյալին ցեղասպանության իրագործման մեղսակցության հարցում՝ անբավարար ապացույցների պատճառով՝ դատապարտելով միայն ռազմական հանցագործությունների իրագործմանը մեղսակցելու համար¹⁵²: Հետաքրքրական է, որ 2003 թ. Վան Անրաաթը հարցազրույցում խոստովանում է, որ քիմիական նյութեր է մատակարարել, սակայն պնդում է, որ չի իմացել, թե դրանք նախատեսված են եղել Իրաքի համար և օգտագործվելու էին թունավոր գազ արտադրելու համար¹⁵³:

Անրաաթը բողոքարկում է Հաագայի շրջանային դատարանի որոշումը Նիդերլանդների վերաքննիչ դատարանում: Բայց նրա բողոքը մերժվում է, և Վերաքննիչ դատարանը նրա պատիժը երկու տարով երկարաձգում է՝ դատապարտելով 17 տարվա

150 Joost Hiltermann, “Kirkuk and the Kurds: A Difficult Choice Ahead, International Crisis Group,” *International Crisis Group*, May 22, 2007, <https://www.crisisgroup.org/middle-east-north-africa/gulf-and-arabian-peninsula/kirkuk-and-kurds-difficult-choice-ahead>, դիտվել է՝ 18.02.2023; “Iraq: Fixing Security in Kirkuk,” International Crisis Group, Middle East Report N°215, June 15, 2020, <https://icg-prod.s3.amazonaws.com/215-iraq-fixing-security-in-kirkuk.pdf>, դիտվել է՝ 18.02.2023:

151 “Killing of Iraq Kurds ‘genocide,’” *BBC News*, December 23, 2005, <http://news.bbc.co.uk/2/hi/europe/4555000.stm>, դիտվել է՝ 18.02.2023; Ian Traynor, “‘Dutch Chemical Ali’ on trial for genocide,” *The Guardian*, March 19, 2005, <https://www.theguardian.com/world/2005/mar/19/iraq.iantraynor>, դիտվել է՝ 18.02.2023:

152 “Public Prosecutor v. Frans Cornelis Adrianus van Anraat,” District Court of The Hague, The Netherlands, The International Crimes Database, <https://www.internationalcrimesdatabase.org/Case/178>, դիտվել է՝ 05.06.2023:

153 “Dutchman jailed for 17 years over Iraq poison gas,” *Reuters*, May 9, 2007, <https://www.reuters.com/article/us-dutch-iraq-sentence-idUSL0970477820070509>, դիտվել է՝ 18.02.2023:

ազատագրված¹⁵⁴: Պատժի խստությունը բացատրելիս Վերաքննիչ դատարանն անդրադառնում է հանցագործությունների լրջությանը, ամբաստանյալի զգալի ներդրմանը և զոհերի հանդեպ նրա զղջման կամ կարեկցանքի բացակայությանը¹⁵⁵: Վերջնական բողոքարկման ժամանակ Նիդերլանդների գերագույն դատարանն անփոփոխ է թողնում դատավճիռը, սակայն նվազեցնում ազատագրվումը մինչև 16 տարի 6 ամիս՝ հաշվի առնելով դատավարության երկարատևությունը¹⁵⁶:

2005 թ. սեպտեմբերի 6-ին իրաքյան հեռուստատեսությամբ հեռարձակված հարցազրույցում քուրդ քաղաքական գործիչ, Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին հայտարարում է, որ դատավորները Սադամ Հուսեյնից ուղղակիորեն խոստովանություններ են կորզել, որ իր իշխանության ժամանակ պատվիրել է զանգվածային սպանոց և այլ հանցագործություններ, և արժանի է մահվան: Սակայն երկու օր անց Սադամ Հուսեյնի փաստաբան Խալիլ Դուլեյմին հերքում է՝ ասելով, որ ոչ մի խոստովանություն չկա¹⁵⁷:

2006 թ. ապրիլի 4-ին Իրաքի բարձրագույն քրեական դատարանը Սադամ Հուսեյնին և վեց համամարաստանյանների¹⁵⁸ մեղադրում է 1980-ական թթ. վերջին իրաքցի քրդերի դեմ «Անֆալ» արշավի շրջանակներում ցեղասպանության իրագործման համար՝ նշելով, որ Հուսեյնը 1988 թ. ձգտել է ոչնչացնել քուրդ ժողովրդին. այդ ընթացքում զինվորականները սպանել են առնվազն 50 000 քուրդ խաղաղ բնակչի և ավերել 2000 գյուղ¹⁵⁹: Վանդերբիլթի համալսարանի իրավունքի պրոֆեսոր Մայքլ Նյուտոնը, որ 1980-ական թթ. Հյուսիսային Իրաքում է եղել, դատավարության ընթացքում ներկայացնում է «Անֆալ»-ի ոճրագործությունների 9 312 էջ կազմող ապացույցները: Դրանցից ամենաապշեցուցիչը կործանումից առաջ և հետո քրդական գյուղերի արբանյակային պատկերներն են, որոնք ցույց են տալիս, որ 2 000 գյուղ բոլորովին

154 “Public Prosecutor v. Frans Cornelis Adrianus van Anraat,” Court of Appeal of The Hague, The Netherlands, The International Crimes Database, <https://www.internationalcrimesdatabase.org/Case/168>, դիտվել է՝ 05.11.2022:

155 Harmen Van der Wilt, “Genocide v. War Crimes in the Van Anraat Appeal,” *Journal of International Criminal Justice* 6, no. 3 (2008): 557.

156 “Conviction of Frans Van Anraat for Supplying Raw Materials for Mustard Gas to the Saddam Hussein Regime,” <https://mm-law.com/vananraat>, դիտվել է՝ 05.06.2023:

157 “Lawyer denies Saddam confession,” *BBC News*, September 8, 2005, http://news.bbc.co.uk/2/middle_east/4225182.stm, դիտվել է՝ 18.02.2023:

158 «Անֆալ»-ի գործով ցեղասպանության համար մեղադրվող վեց ամբաստանյալներն էին Ալի Հասան ալ Մաջիդը (Քիմիական Ալի), Սուլթան Հաշիմ Ահմադ ալ Թալը (Իրաքի բանակի նախկին գեներալ, որ ղեկավարել է ռազմական ուժերն «Անֆալ» արշավի ժամանակ), Հուսեյն Ռաշիդ Մուհամեդը (Իրաքի բանակի նախկին հրամանատար, որ վերահսկել է «Անֆալ» արշավի գործողությունները), Սաբիր ալ Դուրին («Բասսա» կուսակցության նախկին պաշտոնյա, որ մեծ դեր է խաղացել «Անֆալ» արշավի ծրագրման և իրագործման գործում), Ֆարհան Մուրաբ Սալեիր (ռազմական հետախուզության նախկին աշխատակից, որ ներգրավված է եղել «Անֆալ» արշավում), Թահեր Թաուֆիք ալ Անին (հետախուզության նախկին աշխատակից, որ ներգրավված է եղել «Անֆալ» արշավում):

159 Edward Wong, “Hussein Charged with Genocide in 50,000 Deaths,” *The New York Times*, April 5, 2006, <https://www.nytimes.com/2006/04/05/world/middleeast/hussein-charged-with-genocide-in-50000-deaths.html>, դիտվել է՝ 18.02.2023:

ավերվել է¹⁶⁰: Դատախազները ցույց են տալիս ռազմական հետախուզության, նախագահի գրասենյակի և զինվորական հրամանատարների հուշագրերը, որոնցում մանրամասն ներկայացված են մանանելի գազի և նյարդապարալիտիկ քիմիական նյութերի կիրառման հրամանները¹⁶¹: Մյուս կողմից էլ ամբաստանյալները վկայում են, որ «Անֆալ»-ի հարձակումների ժամանակ օրինական ռազմական թիրախներ են եղել քուրդ պարտիզանները, որոնք 1980-1988 թթ. իրանա-իրաքյան պատերազմի վերջին փուլում անցել էին Իրանի կողմը¹⁶²: Նրանց պնդմամբ՝ իրենց իրական շարժառիթը Հյուսիսային Իրաքում իրանցիներին հաղթելն է եղել:

Այնուամենայնիվ, «Անֆալ»-ին վերաբերող դատավարությունն առանձին պետք է լիներ 1982 թ. Դուջեյլի կոտորածը քննող դատավարությունից: Դեռ 2005 թ. հուլիսին Սադամ Հուսեյնը կանգնում է Իրաքի հատուկ տրիբունալի առաջ: Դատավարության ընթացքում նրան մեղադրանք է առաջադրվում մարդկության դեմ հանցագործությունների իրագործման մասով՝ 1982 թ. իր դեմ կատարված մահափորձից հետո Դուջեյլ քաղաքում 148 շիա տղամարդկանց սպանելու համար¹⁶³: Սակայն նախկին նախագահն Իրաքի հատուկ տրիբունալում իրեն մեղավոր չի ճանաչում: 2006 թ. նոյեմբերի 5-ին Հուսեյնն ու ևս երկու մեղադրյալ մեղավոր են ճանաչվում մարդկության դեմ հանցագործությունների կատարման համար¹⁶⁴: 2006 թ. դեկտեմբերի 30-ին Բաղդադի հարավ-արևելյան արվարձանում Սադամ Հուսեյնը մահապատժի է ենթարկվում՝ կախաղան բարձրացվելով. հաջորդ օրը հուղարկավորվում է իր ծննդավայրում՝ Տիկրիտ քաղաքի մոտ գտնվող Ալ Աուջա գյուղում¹⁶⁵:

Սադամ Հուսեյնի, նրա զարմիկ Ալի Հասան ալ Մաջիդի և հինգ այլ համամբաստանյալների գործով՝ «Անֆալ»-ի դատավարությունը սկսվում է 2006 թ. օգոստոսի 21-ին: Նրանք մեղադրվում էին 1988 թ. «Անֆալ» արշավը ծրագրելու և իրագործելու համար, ինչը ներառել է լայնածավալ և համակարգված հարձակումների շարք՝ ուղղված Հյուսիսային Իրաքի քրդական բնակչության դեմ: Ըստ Իրաքի տրիբունալի գլխավոր դատախազի՝ իրաքյան ուժերը բազմիցս օգտագործել են քիմիական զենք, սպանել մինչև 182 000 խաղաղ բնակչի, բռնի տեղահանել

160 “Michael Newton, Leading Genocide Expert, Discusses the Trials of Saddam Hussein at Stanford Law School,” *The Stanford Review*, April 30, 2009, <https://stanfordreview.org/michael-newton-leading-genocide-expert-discusses-t/>, դիտվել է՝ 18.02.2023:

161 “FACTBOX-Key facts about Iraq’s Anfal trial,” *Reuters*, June 27, 2007, <https://www.reuters.com/article/uk-iraq-anfal-idUKL236644520070624>, դիտվել է՝ 18.02.2023:

162 Ross Colvin, “Iraqi court to give verdict in Anfal genocide trial,” *Reuters*, June 23, 2007, <https://www.reuters.com/article/uk-iraq-anfal-idUKCOL33751120070623>, դիտվել է՝ 18.02.2023:

163 Claudia Martin, *The Iraq War* (New York: Cavendish Square Publishing, 2017), 20.

164 “Timeline: Saddam’s Dujail trial,” *Al Jazeera*, November 5, 2006, <https://www.aljazeera.com/news/2006/11/5/timeline-saddams-dujail-trial>.

165 *The Iraq War 2003-2011* (US Defense Department, 2012), 74; “Saddam buried overnight in the home village: elder” January 21, 2007, *Reuters*, <https://www.reuters.com/article/us-iraq-saddam-burial-idUKKHA02827520061231>, դիտվել է՝ 20.05.2023:

հարյուրհազարավոր քրդերի և գրեթե ամբողջությամբ ավերել տեղական ենթակառուցվածքները¹⁶⁶:

Սադամ Հուսեյնի համախոհները հերքում էին մեղադրանքները: Սուլթան Հաշիմ ալ Թալբ, որ «Անֆալ»-ի հարձակման օպերատիվ խմբի հրամանատարն է եղել և իրաքյան բանակի առաջին կորպուսի ղեկավարը, դատարանին փորձում է հավաստիացնել, որ իրաքյան զինված ուժերի նպատակը եղել է զինված խմբավորումների դեմ պայքարելը, այլ ոչ թե խաղաղ բանկիչներին հետապնդելը: Իսկ ռազմական հետախուզության տնօրեն Սարիր ալ Դուրին էլ նշում է, որ իրենց նպատակն է եղել Հյուսիսային Իրաքը մաքրել իրանական զորքերից¹⁶⁷:

Սկզբում Սադամ Հուսեյնը և Ալի Հասան ալ Մաջիդը մեղադրվում էին ցեղասպանության, ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների համար: Մեղադրող կողմը նշում է, որ այն գործողությունը, որ կատարվել է զանգվածային սպանությունների, օդային ռմբակոծությունների, գազային հարձակումների, գյուղերի ոչնչացման և գյուղերից դեպի քաղաք քրդերի տեղահանման միջոցով, ցեղասպանություն է¹⁶⁸: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մասով նրանք մեղադրվում էին դիտավորյալ սպանությունների, ստրկության և ապօրինի բանտարկության համար: Սադամ Հուսեյնը մեղադրվում է ռազմական մի շարք հանցագործությունների համար, օրինակ՝ որ միտումնավոր հարձակվել է ոչ ռազմական շենքերի և խաղաղ բնակիչների վրա, ապօրինաբար բռնագրավել և ոչնչացրել նրանց գույքը¹⁶⁹: Ի տարբերություն Դուջեյլի կոտորածի դատավարության՝ «Անֆալ»-ի դատավարությունը ներառում է ականատեսների և մեծ քանակությամբ փաստագրական ապացույցների ներկայացում: Այնուամենայնիվ, քանի որ Սադամ Հուսեյնի մահապատիժը նախքան «Անֆալ»-ի դատավարության ավարտը 2006 թ. դեկտեմբերի վերջին արդեն իրագործվել էր, նրա դեմ գործը կարճվում է¹⁷⁰: Հուսեյնին կախաղան բարձրանալուց ինը օր անց դատարանի առաջին հանձնարարականը լինում է նրա դեմ ուղղված բոլոր մեղադրանքները հանելու մասին¹⁷¹: Ուստի Մաջիդը միայնակ է առերեսվում ցեղասպանություն իրագործելու մեղադրանքին: Իսկ մյուս հինգ ամբաստանյալները մեղադրվում են ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների իրագործման համար: Մաջիդը

166 International Center for Transitional Justice, “The Prosecution Witness and Documentary Evidence Phases of the Anfal Trial,” 3, <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Iraq-Anfal-Tribunal-2006-English2.pdf>, դիտվել է՝ 18.02.2023:

167 Mark Oliver, “Saddam co-defendants deny Anfal genocide,” *The Guardian*, August 22, 2006, <https://www.theguardian.com/world/2006/aug/22/iraq.markoliver>, դիտվել է՝ 10.05.2023:

168 Michael Howard, “Saddam refuses to plead in Kurd genocide trial,” *The Guardian*, August 22, 2006, <https://www.theguardian.com/world/2006/aug/22/iraq.warcrimes>, դիտվել է՝ 10.05.2023:

169 Lionel Beehner, “Phase Two in the Saddam Trial,” <https://www.cfr.org/backgrounder/phase-two-saddam-trial>, դիտվել է՝ 10.05.2023:

170 Hardi, *Gendered Experiences of Genocide*, 24.

171 “Genocide Charges Against Saddam Dropped”, *CBS News*, January 8, 2007, <https://www.cbsnews.com/news/genocide-charges-against-saddam-dropped/>, դիտվել է՝ 10.05.2023:

նույնիսկ ներողություն չի խնդրում իր արարքների համար՝ դատարանին ասելով, որ հրամայել է ոչնչացնել քրդական և ասորական գյուղերը, քանի որ դրանք «լի են եղել Իրանի գործակալներով»¹⁷²:

Ուշագրավ է, որ դատարանի վճիռներից մեկում նշվում է, որ ցեղասպանության հանցագործությունը քուրդ ազգի դեմ իրագործվել է երկու մոտեցմամբ՝ նախ՝ քիմիական զենքի կիրառմամբ (ոչ սովորական զենքեր) և ապա՝ «Անֆալ» արշավների անցկացման մեթոդի կիրառմամբ¹⁷³:

2007 թ. հունիսի 24-ին դատարանը մահապատժի է դատապարտում Մաջիդին և պաշտպանության նախկին նախարար Սուլթան Հաշեմ Ահմեդին «Անֆալ»-ի իրագործման հարցում նրանց դերակատարության համար: Մաջիդի դատավճիռը պետք է ի կատար ածվեր հոկտեմբերի 16-ին, սակայն հետաձգվում է Ահմեդի մահապատժի շուրջ վեճի պատճառով: Իրաքի որոշ բարձրաստիճան ղեկավարներ և ամերիկացի հրամանատարներ ցանկանում են խնայել նրան¹⁷⁴: Մասնավորապես Իրաքի նախագահ Ջալալ Թալաբանին դեմ էր արտահայտվում պաշտպանության նախկին նախարար Սուլթան Հաշիմ Ահմեդին կախաղան հանելու որոշմանը՝ համոզմունք հայտնելով, որ նրան պետք է խնայել, քանի որ մահվան սպառնալիքի տակ է կատարել Հուսեյնի հրամանները և պաշտոնական կապի մեջ է եղել քրդական համայնքի հետ¹⁷⁵:

Ի վերջո նախագահական խորհուրդը հրաժարվում է վավերացնել մահապատժի որոշումը: Իսկ արդեն 2018 թ. Իրաքի խորհրդարանի խոսնակ Սալիմ ալ Ջաբրուրին կոչ է անում Իրաքի իշխանություններին ներում չնորհել Սադամ Հուսեյնի պաշտպանության նախկին նախարարին առողջական վիճակի վատթարացման պատճառով¹⁷⁶: Նախկին նախարարը Նասիրիայի բանտից տեղափոխվում է Բաղդադի բանտ, որտեղ էլ 2020 թ. ամռանը սրտի կաթվածից մահանում է¹⁷⁷:

Իսկ Մաջիդը 2008 թ. դեկտեմբերի 2-ին ևս մեկ անգամ դատապարտվում է մահապատժի, բայց այս անգամ՝ 1991 թ. Պարսից ծոցի պատերազմին հաջորդած ապստամբության ժամանակ 20 000 – 100 000 շիա մահմեդականների սպանության գործում դերակատարություն ունենալու համար¹⁷⁸:

172 “Death sought for ‘Chemical Ali’,” *BBC News*, April 2, 2007, <http://news.bbc.co.uk/2/hi/middle-east/6518319.stm>, դիտվել է՝ 10.05.2023:

173 Iraqi High Tribunal, Second Criminal Court, Bagdad, No.: 1/Second Criminal/ 2006 Date: 2007 June 24, p. 19, https://kc-interlaw.org/web/viewer.html?file=https://images.kc-interlaw.org/root/root/images/142182021_anfal-first-instance-eng.pdf, դիտվել է՝ 10.01.2023:

174 Nada Bakri, “Hussein Aide ‘Chemical’ Ali Executed in Iraq,” *The New York Times*, January 25, 2010, <https://www.nytimes.com/2010/01/26/world/middleeast/26execute.html>, դիտվել է՝ 10.05.2023:

175 “Iraqi president opposes minister’s hanging,” *The Irish Times*, September 8, 2007, <https://www.irishtimes.com/news/iraqi-president-opposes-minister-s-hanging-1.960479>, դիտվել է՝ 10.05.2023:

176 “Iraqi Parliamentary Speaker seeks pardon for Saddam Hussein’s Defense Minister,” <https://www.kurdistan24.net/en/news/e3a15126-8cc8-4ee5-8d2f-8bdac85ec090>, դիտվել է՝ 05.10.2023:

177 “Iraq: Saddam Hussein’s Defense Minister – Sultan Hashim Dies in Prison,” <https://eurasianimes.com/iraq-saddam-husseins-defense-minister-sultan-hashim-dies-in-prison/>, դիտվել է՝ 05.10.2022:

178 “Chemical Ali sentenced – again -- to death,” *CNN*, December 2, 2008, <http://edition.cnn.com/2008/WORLD/meast/12/02/iraq.chemicalali/index.html>, դիտվել է՝ 18.02.2023:

2009 թ. մարտի 2-ին Մաջիդը երրորդ անգամ է դատապարտվում մահապատժի, այս անգամ արդեն՝ 1999 թ. մեծ այաթոլլա Մոհամմադ ալ Սադրի սպանության համար¹⁷⁹: Մարտի 17-ին Մաջիդին մահապատժի ենթարկելու հարցում Իրաքի նախարարների կաբինետը սկսում է ճնշում գործադրել նախագահական խորհրդի վրա¹⁸⁰: Իսկ ահա 2010 թ. հունվարի 17-ին Ալի Հասան ալ Մաջիդը չորրորդ անգամ է մահապատժի դատապարտվում, այս անգամ՝ 1988 թ. Հալաբջայի վրա թունավոր գազերով հարձակման գործում ներգրավված լինելու համար, որի հետևանքով զոհվել է մոտ 5 000 իրաքցի¹⁸¹: Ի վերջո 2010 թ. հունվարի 25-ին Մաջիդը կախաղան է բարձրացվում Բաղդադում¹⁸²:

«Անֆալ»-ի հիշողությունը և ճանաչումը

2010 թ. մարտի 1-ին Իրաքի բարձրագույն քրեական դատարանը Հալաբջայի կոտորածը ճանաչում է որպես ցեղասպանություն: Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը ողջունում է այդ որոշումը¹⁸³: Նույն թվականի մարտի 20-ին Կանադայի խորհրդարանը բանաձև է ընդունում՝ Հալաբջայի վրա հարձակումը ճանաչելով որպես մարդկության դեմ ուղղված հանցագործություն¹⁸⁴:

Իրաքի գերագույն քրեական դատարանը 2010 թ. ձերբակալության հրամանագիր է հրապարակում 258 քուրդ մուսթաշարերի¹⁸⁵ համար, որոնք «Անֆալ» արշավի ժամանակ Սադամ Հուսեյնի «Բասսա» կուսակցության անդամ են եղել և մեղադրվում էին «Անֆալ»-ի գործողություններին մասնակցելու համար: Օրդերն ուղարկվում է նաև Իրաքյան Քուրդիստանի տարածաշրջանային կառավարության համապատասխան մարմիններին¹⁸⁶: Սակայն Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը կոնկրետ քայլեր չի ձեռնարկում, և նրանք չեն ձերբակալվում՝ շտրիկով իշխող կուսակցությունների հետ իրենց ունեցած կապերի: Այս իրողությունն «Անֆալ»-ի զոհերի հարազատների շրջանում գայրույթի պատճառ է դառնում¹⁸⁷:

179 Paul Bartrop, *A Biographical Encyclopedia of Contemporary Genocide: Portraits of Evil and Good* (anta Barbara, CA: ABC-CLIO, 2012), 12.

180 "Iraqi Cabinet presses for 'Chemical Ali's execution," *CNN*, March 17, 2009, <http://edition.cnn.com/2009/WORLD/meast/03/17/iraq.chemical.ali.decision/index.html>, դիտվել է՝ 18.02.2023:

181 Mohammed Tawfeeq, "Saddam cousin 'Chemical Ali' given fourth death sentence," *CNN*, January 17, 2010, <http://edition.cnn.com/2010/WORLD/meast/01/17/iraq.chemical.ali.sentence/index.html>, դիտվել է՝ 18.02.2023:

182 "Chemical Ali' hanged in Iraq," *BBC*, January 25, 2010, https://www.bbc.co.uk/worldservice/news/2010/01/100125_chemical_ali.shtml, դիտվել է՝ 18.02.2023:

183 Robert A. Burke, *Counter-Terrorism for Emergency Responders* (Boca Raton: CRC Press, 2017), 448.

184 "Canada's parliament passes Motion on Halabja as a crime against humanity," <https://ekurd.net/mismas/articles/misc2010/3/state3679.htm>, դիտվել է՝ 18.02.2023:

185 Քրդական ցեղային խորհրդականներ:

186 "Arrest warrant for Baathist Kurds," October 28, 2010, <https://anfenglish.com/news/arrest-warrant-for-baathist-kurds-2277>, դիտվել է՝ 01.05.2023:

187 Dana Taib Menmy, "More victims of Saddam's purge found, Kurds seek justice," *Al-Monitor*, August

Իրաքի քրդերի շրջանում «Անֆալ»-ը *կոլեկտիվ տրավմա* է համարվում և Իրաքի քրդական ազգային ինքնության կարևոր բաղկացուցիչ տարր է դարձել¹⁸⁸: 2007 թ. Քուրդիստանի տարածաշրջանային կառավարությունը ապրիլի 14-ը հայտարարում է որպես «Անֆալ» արշավի հիշատակի օր: Օրվա ընտրությունը Քուրդիստանի խորհրդարանի խոսնակ Ադնան Մուֆթին բացատրում էր նրանով, որ թեև «Անֆալ»-ը սկսվել է 1988 թ. ապրիլի 14-ից առաջ, սակայն «Բասա» կուսակցության ղեկավարած կառավարությունն այդ օրն է սկսել «Անֆալ»-ի ամենամեծ գործողությունները Գարմիանի շրջաններում՝ Սուլեյմանիայի հարավում և հարավ-արևելքում¹⁸⁹: Հարկ է նկատել, որ իրաքցի քրդերի դեմ իրագործված ցեղասպանության գոհերի հիշատակի ոգեկոչման արարողություններ են տեղի ունենում նաև այն երկրներում, որտեղ կազմակերպված քրդական համայնք կա¹⁹⁰:

ԱՄՆ-ի գլխավորած կռալիցիայի՝ Իրաք ներխուժումից հետո Իրաքյան Քուրդիստանում հուշարձաններ և թանգարաններ են հայտնվում՝ նվիրած քուրդ ժողովրդի տառապանքներին: 2003 թ. Սուլեյմանիայում՝ Իրաքի գլխավոր անվտանգության վարչության նախկին «Ամնիա Սուրակա» բանտում թանգարան է հիմնվում, որտեղ քուրդ բանտարկյալները ֆիզիկական, մտավոր նվաստացումների և կտտանքների են ենթարկվել: Շենքը չեն նորոգել ցույց տալու համար Սադամ Հուսեյնի իշխանության գործած դաժանությունները¹⁹¹:

Թանգարանում ցուցադրված են մանեկեններ, որոնց միջոցով ներկայացվում է, թե ինչպես են մարդկանց խոշտանգել բանտում: Ջարդված հայելիների 182 000 բեկորները խորհրդանշում են ցեղասպանական «Անֆալ» արշավի ժամանակ սպանված քրդերի ոգեկոչումը¹⁹², 4 500 լուսարձակները ներկայացնում են Հուսեյնի վարչակարգի ավերած քրդական գյուղերը¹⁹³: «Անֆալ»-ին նվիրված մեկ այլ ցուցահանդես կա՝

7, 2019, <https://www.al-monitor.com/originals/2019/08/anfal-genocide-kurdistan-iraqi-saddam.html>, դիտվել է՝ 18.02.2023; Nahwi Saeed, “Why is Reconciliation so Important in Iraqi Kurdistan? The Case of Anfal”, <https://blogs.lse.ac.uk/mec/2021/04/28/why-is-reconciliation-so-important-in-iraqi-kurdistan-the-case-of-anfal/>, դիտվել է՝ 01.02.2023; “Families of Anfal victims in Iraqi Kurdistan demand the arrest of former regime’s Kurdish agents,” *Ekurd Daily*, May 25, 2014, <https://ekurd.net/mismas/articles/misc2014/5/state8020.htm>, դիտվել է՝ 18.02.2023:

188 Cockrell-Abdullah, “Constituting Histories Through Culture in Iraqi Kurdistan,” *Journal of Critical Global South Studies* 2, no. 1 (2018): 70.

189 “Anfal campaign receives a national day of remembrance,” Archived from the original on 7 January 2019, <https://web.archive.org/web/20190107074855/http://cabinet.gov.krd/a/d.aspx?s=010000&l=12&a=17470>, դիտվել է՝ 18.02.2023:

190 Mari Toivanen and Bahar Baser, “Remembering the Past in Diasporic Spaces: Kurdish Reflections on Genocide Memorialization for Anfal,” *Genocide Studies International*, 13, no. 1 (2019): 17-18.

191 Peggy Faw Gish, with a foreword by Jonathan Wilson-Hartgrove, *Walking Through Fire: Iraqis’ Struggle for Justice and Reconciliation* (Eugene, Ore: Cascade Books, 2013), 163.

192 Orlando Crowcroft, “The World’s Most Depressing Museum is in Iraq, of course,” *Vice News*, October 31, 2013, <https://www.vice.com/en/article/4w7dv9/sulaymaniyahs-main-tourist-attraction-is-a-torture-museum>, դիտվել է՝ 18.02.2023:

193 Autumn Cockrell-Abdullah, “Constituting Histories Through Culture in Iraqi Kurdistan,” *Zanj: The Journal of Critical Global South Studies* 2, no. 1 (2018): 75.

արտաշիրմված մարմինների նկարներով և սպանված կամ անհետացած նշանավոր քրդերի անուններով:

2003 թ. մարտին մեծ մասամբ ավերված Հալաբջայում կառուցվում է նահատակների հուշարձան՝ նվիրված 1988 թ. սպանված հազարավոր մարդկանց: Հալաբջայի իրադարձությունների 15-ամյակին հիշատակի միջոցառումներ են տեղի ունենում¹⁹⁴:

2006 թ. մարտի 16-ին մի քանի հազար բնակիչ անկարգություններ է կազմակերպում՝ ի նշան բողոքի, թե նվիրաբերված միջոցները գողացվել են, և ավերված քաղաքը չի վերակառուցվել: Դեպի հուշարձան պաշտոնյաների մուտքը արգելափակելու ցուցարարների փորձերն ավարտվում են անվտանգության ուժերի՝ ամբոխի վրա կրակոցներով: Մեկ ցուցարար է սպանվում, տասնյակ մարդիկ՝ վիրավորվում: Ցուցարարները ներխուժելով հրդեհում են հուշարձանը՝ ոչնչացնելով նաև արխիվների մեծ մասը¹⁹⁵: Սակայն հուշահամալիրը, որը հայտնի է որպես Հալաբջայի հուշարձան և խաղաղության թանգարան, հետագայում վերակառուցվում է¹⁹⁶:

«Անֆալ» արշավի ընթացքում գոհվածների հարազատները վերջին տարիներին խանգարել են անգամ ոգեկոչման արարողությունը՝ մեղադրելով քուրդ պաշտոնյաներին իրենց խնդրանքներին չընդառաջելու և փոխհատուցումները նվազեցնելու համար: Քուրդիստանի իշխանությունների հասցեին քննադատություններ են հնչում նաև կոռուպցիայի, ընտանեավարության և նավթային եկամուտների սխալ կառավարման վերաբերյալ¹⁹⁷:

2014 թ. ապրիլի 29-ին Հաազայում՝ Քիմիական գենքի արգելման կազմակերպության կենտրոնակայանի այգում հուշարձան է բացվում՝ նվիրված 1988 թ. Իրաքում Հալաբջայի քրդերի վրա քիմիական հարձակման գոհերի հիշատակին¹⁹⁸: Իսկ Էրբիլի կենտրոնում նախատեսվում է կառուցել Քուրդիստանի թանգարան: Ճարտարապետ Դենիել Լիբեսկինդը 2016 թ. ապրիլին Սան Ֆրանցիսկոյում «Bloomberg Businessweek Design» կոնֆերանսի ժամանակ ներկայացնում է Քուրդիստանի թանգարանի դիզայնը¹⁹⁹: Վերջինս հայտարարում է, որ թանգարանը մտադիր է ստեղծել «Քուր-

194 “A memorial to Saddam’s victims,” *NBC News*, March 16, 2003, <https://www.nbcnews.com/id/wbna3070505>, դիտվել է՝ 01.06.2022:

195 John Cookson, *The Kurds: My Friends in the North* (New York: Hybrid Global Publishing, 2021), 162; Winthrop Rodgers, “Halabja anniversary takes a political turn,” *Al-Monitor*, March 23, 2022, <https://www.al-monitor.com/originals/2022/03/halabja-anniversary-takes-political-turn>, դիտվել է՝ 01.06.2022; Robert F. Worth, “Kurds Destroy Monument in Rage at Leadership,” *The New York Times*, March 17, 2006, <https://www.nytimes.com/2006/03/17/world/middleeast/kurds-destroy-monument-in-rage-at-leadership.html>, դիտվել է՝ 01.06.2022; Amy Rubin, “Memorial to Gas Attack Victims Spurs Controversy,” https://www.pbs.org/america/builds2/memorial/memorial_halabja.html, դիտվել է՝ 01.06.2023:

196 Geoff Hann, Karen Dabrowska, *Tina Townsend-Greaves, Iraq: The ancient sites and Iraqi Kurdistan* (Guilford, CT: Bradt Travel Guides, 2015), 409.

197 Aras Ahmed Mhamad, “Mourning the Kurdish victims of the Black Anfal Campaign,” <https://www.newarab.com/opinion/mourning-kurdish-victims-black-anfal-campaign>, դիտվել է՝ 01.06.2022:

198 “Halabja monument opens in the Hague,” *Anadolu*, April 29, 2014, <https://www.aa.com.tr/en/archive/halabja-monument-opens-in-the-hague/163408>, դիտվել է՝ 01.06.2022:

199 Studio Libeskind, “The Kurdistan Museum,” *Architect Magazine*, April 12, 2016, https://www.architectmagazine.com/project-gallery/the-kurdistan-museum_o, դիտվել է՝ 01.06.2022:

դիստանի տարածաշրջանում առաջին խոշոր կենտրոնը քուրդ ժողովրդի պատմության և մշակույթի համար»²⁰⁰:

Նախատեսվում է, որ թանգարանը ունենալու է չորս անկանոն ձևով հատվածներ, և երկու ուղիներ, որոնք կոչվելու են «Անֆալյան գիծ» և «Ազատության գիծ». դրանք կրաժանեն թանգարանը²⁰¹: Ենթի չորս երկրաչափական հատվածները խորհրդանշելու են քրդական շրջանները Թուրքիայում, Սիրիայում, Իրանում և Իրաքում: «Անֆալյան գիծը» խորհրդանշելու է Սադամ Հուսեյնի՝ քրդերի դեմ իրագործված ցեղասպանությունը, իսկ կանաչով լցված վանդակավոր կառույցը՝ «Ազատության գիծը», ձգվելու է դեպի երկինք և ավարտվելու հավերժական բոցով, որը խորհրդանշական իմաստ ունի քրդական մշակույթում²⁰²:

«Human Rights Watch» իրավապաշտպան կազմակերպությունը 1993 թ. հետաքննություն անցկացնելուց հետո միջազգային հանրությանը կոչ է անում «Անֆալ» արշավը ճանաչել որպես ցեղասպանություն²⁰³: Կազմակերպությունը փորձում էր ցեղասպանության ճանաչման հարցը ՄԱԿ-ի համար դարձնել առաջնային, սակայն այդ ջանքերը քաղցրություն չեն ստանում ՄԱԿ-ի անդամ պետություններից:

«Անֆալ»-ի միջազգային ճանաչմանը հասնելու հարցում քրդերի գործուն քայլերը սկսվում են 2008 թ. սկզբից: Այդ ժամանակ Իրաքի խորհրդարանը 1988 թ. իրաքյան ուժերի իրագործած «Անֆալ» արշավը ճանաչում է որպես քրդերի դեմ ուղղված ցեղասպանություն²⁰⁴:

«Անֆալ»-ի միջազգային ճանաչման գործընթացը սկսվում է 2012 թ., երբ նոյեմբերին Նորվեգիայի խորհրդարանն «Անֆալ» արշավը և Հալաբջայի թունավոր գազով հարձակումը ճանաչում է որպես ցեղասպանություն²⁰⁵: Նույն տարվա դեկտեմբերի 5-ին Շվեդիայի խորհրդարանն է ճանաչում «Անֆալ»-ը որպես ցեղասպանություն²⁰⁶: Շվեդիայի ճանաչման հարցում հատկապես մեծ են եղել քրդական սփյուռքի գործադրած ջանքերը, որը 1970-ականներից շատ ակտիվ գործունեություն է ծավալում:

200 “Exclusive Video: Kurdistan Museum design unveiled,” <https://www.kurdistan24.net/en/story/4932-EXCLUSIVE-VIDEO-Kurdistan-Museum-design-unveiled>, դիտվել է՝ 01.06.2022:

201 Julia Franz and Meara Sharma, “The Kurds have no country of their own and their story is largely untold. A planned museum in Erbil aims to change that,” <https://theworld.org/stories/2017-01-30/kurds-have-no-country-their-own-and-their-story-largely-untold-planned-museum>, դիտվել է՝ 05.06.2023:

202 “Kurdistan Museum,” <https://kurdistanmemoryprogramme.com/kurdistan-museum/>, դիտվել է՝ 05.05.2023:

203 Middle East Watch/Human Rights Watch, *Genocide in Iraq*.

204 Abdel Hamid Zebari, “Iraqi Kurds Seek Recognition of Genocide by Saddam,” *Al-Monitor*, March 7, 2013, <https://www.al-monitor.com/originals/2013/03/iraq-kurds-genocide.html>, դիտվել է՝ 01.06.2022:

205 Ofra Bengio, “Israel Owes It to the Kurds to Recognize Halabja as Genocide,” *Haaretz*, April 4, 2013, <https://www.haaretz.com/opinion/2013-04-04/ty-article/ofra-bengio-israel-stand-with-kurds/0000017f-dbc4-db5a-a57f-dbeec8400000>, դիտվել է՝ 01.06.2022; Kurdistan Regional Government-Iraq Representation in Austria, “Anfal and Halabja: A dark period of Kurdish history,” <http://austria.krg.org/en/ein-dunkles-kapitel-der-kurdischen-geschichte-2/>, դիտվել է՝ 05.05.2023:

206 “The Swedish Parliament Recognizes the Anfal Campaign as Genocide on Kurds,” <https://www.gulanmedia.com/en/story/110517/1621545139-2747-the-swedish-parliament-recognizes-the-anfal-campaign-as-genocide-on-kurds>, դիտվել է՝ 05.05.2023:

Բացի այդ՝ Շվեդիայի խորհրդարանում քրդական ծագում ունեցող բազմաթիվ պատգամավորներ կան²⁰⁷:

2013 թ. փետրվարի 28-ին Մեծ Բրիտանիայի համայնքների պալատը «Անֆալ»-ը պաշտոնապես ճանաչում է որպես ցեղասպանություն²⁰⁸: Ճանաչման արշավը ղեկավարել է պահպանողական պատգամավոր Նադիին Չահավին, որը ծագումով քուրդ է²⁰⁹: Սակայն բրիտանական կառավարությունը պնդում էր, որ յուրաքանչյուր պաշտոնական հռչակում, որ «Անֆալ»-ի գործողությունները ցեղասպանություն են, պետք է բխի դատարաններից և ոչ թե քաղաքական մարմնից²¹⁰:

Այնուամենայնիվ, պետք է նկատի ունենալ, որ իրաքցի քրդերը չեն մոռացել վարչապետ Թեոչերի օրոք Սադամ Հուսեյնի գինելու հարցում Մեծ Բրիտանիայի մեղսակցության մասին: Թեոչերի աջակցության մասին փաստերը բացահայտվում են 2011 թ., երբ 1981 թ.-ից սկսած պետական գաղտնի փաստաթղթերը հրապարակվում են: Այդ փաստաթղթերի համաձայն՝ Թեոչերը հավանություն է տվել Իրաքի հետ ուղղակի պայմանագրերին և աչք փակել «ոչ մահաբեր» ուղղակի տեխնիկայի շարունակական վաճառքի վրա²¹¹:

Մեծ Բրիտանիայի համայնքների պալատի որոշմանը հետևում է Հարավային Կորեայի խորհրդարանի ճանաչումը²¹²: Իրաքում Կորեայի դեսպանը 2013 թ. հունիսին հայտարարում է, որ իր երկիրը պաշտոնապես ճանաչում է քրդերի ցեղասպանությունը, և միջազգային հանրությանը խնդրում անել ամեն ինչ Քուրդիստանում նման ողբերգությունից խուսափելու համար²¹³:

2015 թ. հուլիսի 29-ին քրդերի ցեղասպանությունը ճանաչող երկկուսակցական բանաձև է ներկայացվում ԱՄՆ Կոնգրեսի ներկայացուցիչների պալատում, որում կոչ էր արվում ԱՄՆ կառավարությանը «ճանաչել Իրաքում քուրդ ժողովրդի դեմ իրագործված ցեղասպանության արշավը»²¹⁴: Մյուս երկրներում, այդ թվում՝ Կա-

207 Bahar Baser & Mari Toivanen, “The politics of genocide recognition: Kurdish nation-building and commemoration in the post-Saddam era,” *Journal of Genocide Research* 19, no. 3 (2017): 13.

208 UK Parliament, “Recognition of the Kurdish Genocide,” <https://edm.parliament.uk/early-day-motion/45337/recognition-of-the-kurdish-genocide>, դիտվել է՝ 03.05.2023:

209 Gary Kent, “Historic Debate Secures Parliamentary Recognition of the Kurdish Genocide,” *HuffPost*, May 1, 2013, https://www.huffingtonpost.co.uk/gary-kent/parliamentary-recognition-of-the-kurdish-genocide_b_2789300.html, դիտվել է՝ 01.06.2022:

210 Bruce P. Montgomery, *The Seizure of Saddam Hussein’s Archive of Atrocity* (Lanham, MD: Lexington Books, 2019), 71.

211 Sofia Barbarani, “Iraq Kurds press states to recognize the genocide,” *Al Jazeera*, April 14, 2014, <https://www.aljazeera.com/features/2014/4/14/iraq-kurds-press-states-to-recognise-genocide>, դիտվել է՝ 01.06.2022:

212 Ihsan, *Nation Building in Kurdistan*, 139.

213 “South Korea Recognizes Kurdish Genocide,” <https://www.gulanmedia.com/en/story/111508/1621546138-3847-south-korea-recognizes-kurdish-genocide>, դիտվել է՝ 01.06.2022:

214 Bruce P. Montgomery, *The Seizure of Saddam Hussein’s Archive of Atrocity*, 71; H.Res.403 - Recognizing the campaign of genocide against the Kurdish people in Iraq, <https://www.congress.gov/bill/114th-congress/house-resolution/403/text?r=80&s=1>, դիտվել է՝ 01.11.2022:

նադայում²¹⁵, Նիդերլանդներում, Գերմանիայում²¹⁶, Ֆրանսիայում²¹⁷ և Իսրայելում²¹⁸, նույնպես քննարկումներ են ընթանում «Անֆալ»-ը որպես ցեղասպանություն ճանաչելու ուղղությամբ²¹⁹:

Օրինակ՝ Գերմանիայի խորհրդարանը դատապարտել է «Անֆալ»-ը, սակայն չի ճանաչել այն որպես ցեղասպանություն, և քրդերը Գերմանիայի դժկամությունը պայմանավորում են նաև նրանով, որ գերմանական ընկերությունները Հուսեյնի վարչակարգին թունավոր գազ են վաճառել ու խուսափում են փոխհատուցման հարցից²²⁰:

Ուշագրավ է, որ ՄԱԿ-ը և Եվրախորհրդարանն անցած տարիներին «Անֆալ»-ի հիշատակի միջոցառումներ են անցկացրել: 2012 թ. մարտի 8-ին Եվրախորհրդարանում համաժողով է տեղի ունենում՝ նվիրված Հալաբջայի հարձակմանը՝ որպես ցեղասպանություն²²¹:

Ինչ վերաբերում է Թուրքիայի դիրքորոշմանը, ապա այդ երկրում քրդամեն ժողովուրդների դեմոկրատական կուսակցությունը, խորհրդարանի որոշ պատգամավորներ, մի շարք կազմակերպություններ բազմիցս արժարծել են քրդերի ցեղասպանությունը ճանաչելու հարցը²²²: Պաշտոնական Անկարան, սակայն, հայտարարում է, որ պայքարում է քուրդ անջատողականների դեմ, և հրաժարվում է ճանաչել «Անֆալ»-ի հարձակումները որպես ցեղասպանություն: Մյուս կողմից էլ՝ շարունակում է Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը հերքելու ժխտողական քա-

215 Ava Homa, “Canadian MP introduces motion to recognize Kurdish genocide,” <https://www.kurdistan24.net/en/story/9909-Canadian-MP-introduces-motion-to-recognize-Kurdish-genocide>, դիտվել է՝ 01.05.2023:

216 “Die Linke calls for Germany to recognize genocide of Kurds in Iraq,” <https://morningstaronline.co.uk/article/w/die-linke-calls-for-germany-to-recognise-genocide-of-kurds-in-iraq>, դիտվել է՝ 01.05.2023:

217 Alannah Travers, “France National Assembly rejects resolution recognizing genocide against Kurds,” <https://www.rudaw.net/english/world/26112021>, դիտվել է՝ 01.05.2023:

218 Jonah Naghi, “Recognizing the Kurdish Holocaust,” <https://israelpolicyforum.org/2017/03/21/recognizing-kurdish-holocaust/#>, դիտվել է՝ 01.05.2023:

219 Ofra Bengio, “Israel Owes It to the Kurds to Recognize Halabja as Genocide.”

220 Bahar Baser & Mari Toivanen, “The politics of genocide recognition,” 16.

221 “The Kurdish Genocide Achieving Justice through EU Recognition,” https://www.europarl.europa.eu/meetdocs/2009_2014/documents/d-iq/dv/03_kurdishgenocidesofanfalandhalabja_03_kurdishgenocidesofanfalandhalabja_en.pdf; “Final declarations from the Halabja conference in European Parliament”, Halabja Conference, March 8, 2012, <https://www.peaceinkurdistancampaign.com/final-declarations-from-the-halabja-conference-in-european-parliament/>, դիտվել է՝ 01.05.2023:

222 “HDP calls on Turkish parliament to recognise Halabja massacre as genocide,” <https://www.rudaw.net/english/middleeast/turkey/16032017>, դիտվել է՝ 20.01.2023; “Turkey’s pro-Kurdish party asks parliament to recognize Anfal killings as genocide,” *Duvar English*, April 14, 2020, <https://www.duvarenglish.com/human-rights/2020/04/14/turkeys-pro-kurdish-party-asks-parliament-to-recognize-anfal-killings-as-genocide>, դիտվել է՝ 01.06.2022; “HDP calls for parliamentary recognition of Halabja Massacre as Kurdish Genocide,” *Agos*, March 17, 2015, <https://www.agos.com.tr/en/article/10905/hdp-calls-for-parliamentary-recognition-of-halabja-massacre-as-kurdish-genocide#:~:text=HDP%20calls%20for%20parliamentary%20recognition%20of%20Halabja%20Massacre%20as%20Kurdish%20Genocide>, դիտվել է՝ 01.06.2022; “İHD: Turkey should recognize Halabja Massacre as a genocide,” <https://m.bianet.org/bianet/human-rights/259140-ihd-turkey-should-recognize-halabja-massacre-as-a-genocide>, դիտվել է՝ 20.05.2023:

դաքականությունը: Եվ սա տեղի է ունենում այն պայմաններում, երբ Թուրքիան ճանաչում է Հոլոքոստի, Բոսնիայի, Ռուանդայի և Կամբոջայի ցեղասպանությունները²²³:

Ըստ քրդական աղբյուրների՝ Թուրքիան հակաահարելչական քողի ներքո կատարվող գործողությունների ընթացքում պարբերաբար քիմիական զենք է կիրառում քրդերի դեմ նաև Իրաքյան Քուրդիստանում: 2021 թ. ապրիլի 24-ին Թուրքիան Քուրդիստանի աշխատավորական կուսակցության դեմ նախաձեռնում է «Ճանկկայծակ» գործողությունը, որի ընթացքում քիմիական զենք է կիրառում: Քուրդիստանի համայնքների միության (KCK) խոսնակ Զազրոս Հիվան բրիտանական «Morning Star» օրաթերթի հետ զրույցում այս իրադարձության մասին ասում է. «Դա քրդերի դեմ ուղղված ցեղասպանական արշավի մի մասն է, որը միտումնավոր կերպով համընկնում է Հայոց ցեղասպանության 106-րդ տարելիցի հետ: Քրդերին ուղղված ուղերձը պարզ է. «Մենք ձեզ կսպանենք այնպես, ինչպես 20-րդ դարասկզբին սպանեցինք հայերին»²²⁴:

2022 թ. հոկտեմբերին քրդական մի շարք կուսակցություններ և կազմակերպություններ դատապարտում են Թուրքիայի ձեռնարկած անդրսահմանային գործողությունների շրջանակներում քիմիական զենքի կիրառումը Իրաքյան Քուրդիստանում՝ Թուրքիայի գործողությունները նմանեցնելով քիմիական զենքի օգտագործմամբ Հալաբջա քաղաքի վրա Իրաքի բռնապետ Սադամ Հուսեյնի կատարած հարձակմանը²²⁵: Իսկ քուրդ պատմաբան Սեդաթ Ուլուգանան Թուրքիային մեղադրում է, որ քուրդ մարտիկների դեմ քիմիական հարձակումներով այդ երկիրը զբաղված է «ցեղասպանական պրակտիկայով»²²⁶:

Պատահական չէ, որ 1923 թվականից՝ Թուրքիայի Հանրապետության ստեղծումից ի վեր, քրդերի զանգվածային սպանություններ են իրագործվել, ինչպիսիք են Շեյխ Սայիդի, Դերսիմի ապստամբությունների ճնշումն ու Զիլանի կոտորածը: Թուրքական կառավարությունը մինչև 1991 թ. քրդերին դատում էր «լեռնային թուրքերի» շարքին՝ ժխտելով այդպիսի էթնիկ միավորի գոյությունը: Հետևաբար արգելվում էր նաև «քուրդ» և «Քուրդիստան» բառերի հիշատակումը՝ փոխարինվելով դրանք «լեռնային թուրքեր» և «Արևելք» տերմիններով:

223 “Genocides,” <https://weremember.gov.tr/genocides.html>, դիտվել է՝ 20.05.2023:

224 Steve Sweeney, “Turkey accused of chemical weapons attacks in Iraqi Kurdistan,” *Morning Star*, April 27, 2021, <https://morningstaronline.co.uk/article/w/turkey-accused-of-chemical-weapons-attacks-in-iraqi-kurdistan>, դիտվել է՝ 10.05.2023:

225 “Turkey’s chemical use akin to Saddam’s in Halabja: Kurdish organizations,” *Medya News*, October 19, 2022, <https://medyanews.net/turkeys-chemical-use-akin-to-saddams-in-halabja-kurdish-organisations/>, դիտվել է՝ 10.05.2023:

226 “Turkish forces have historically used chemical weapons in a ‘genocide regime’ against Kurds says historian,” *Medya News*, October 26, 2022, <https://medyanews.net/turkish-forces-have-historically-used-chemical-weapons-in-a-genocide-regime-against-kurds-says-historian/>, դիտվել է՝ 10.05.2023:

«Անֆալ»-ը՝ որպես ցեղասպանության օրինակ

Բազմաթիվ մասնագետներ «Անֆալ»-ը դիտարկում են որպես ցեղասպանություն: «Անֆալ» արշավի ընթացքում քուրդ բնակչության մի մասի դեմ կատարված գործողությունները համարվում են ցեղասպանության ամենափաստագրված դեպքերից²²⁷: Որոշ հետազոտողներ այն ընդունում են որպես դասական ցեղասպանություն²²⁸:

Ճիշտ է՝ Իրաքի կառավարության փաստաթղթերը վկայում են Սադամ Հուսեյնի ռեժիմի ցեղասպանական մտադրության մասին, որ կառավարությունը նպատակ է ունեցել սպանել քուրդ բնակիչներին, սակայն «Անֆալ»-ի գործողություններն ավելի շատ կառավարության կենտրոնացված քաղաքականության, այլ ոչ թե համատարած էթնիկ ատելության հետևանք են եղել²²⁹: Այսինքն՝ Իրաքում այդ գործողություններին դրդող ուժն էթնիկ ատելությունը չի եղել: Իրաքի իշխանությունները մի կողմից նպատակ են ունեցել ճշգրիտ քրդական ապստամբ խմբերին, իսկ մյուս կողմից՝ ձգտել են քրդերից մաքրել և արաբացնել Իրաքյան Քուրդիստանի այն տարածքները, որոնք տնտեսապես և քաղաքականապես ռազմավարական նշանակություն են ունեցել²³⁰: Ցեղասպանագետ Սոփիեն Ջեկոբսը կարծում է, որ եթե իրանա-իրաքյան պատերազմը տեղի չունենար, միևնույն է, Սադամ Հուսեյնն այլ պատճառ էր օգտագործելու քրդերին բնաջնջելու համար. Իրաքի շուրջ նրա պանարաբական տեսլականում քրդերի համար տեղ չի եղել²³¹: Իսկ Սամանտա Փաուերը գրում է, որ քուրդ խաղաղ բնակիչները մահապատժի են ենթարկվել ոչ թե այն պատճառով, թե ինչ էին արել, այլ նրա համար, որ քուրդ էին²³²: Իրավունքի պրոֆեսոր Մայքլ Նյուտոնը, որ մասնակցել է Իրաքի բարձրագույն դատարանի կանտոնադրության մշակմանը և 2006-2007 թթ. ծառայել որպես Իրաքի դատական պալատների միջազգային իրավունքի հարցերով խորհրդական, նշում է, որ «Անֆալ»-ի գործով դատարանի առաջ կանգնած ամբաստանյալները կանխամտածված, համակարգված և կազմակերպված արշավների շարք են անցկացրել, որոնց նպատակն է եղել Հյուսիսային Իրաքում արմատախիլ անել քրդական քաղաքակրթության և մշակույթի բոլոր հետքերը²³³:

Ցեղասպանագետ Հենրի Թերիոն «Անֆալ»-ի ցեղասպանական գործընթացը համապատասխան է համարում ցեղասպանագետ Ռոջեր Սմիթի մշակած «մենաշնոր-

227 Michiel Leezenberg, “The Anfal Operations in Iraqi Kurdistan,” 375.

228 Michael A. Newton, “The Anfal Genocide: Personal Reflections and Legal Residue”, *Vanderbilt Law Review* 40, no. 5 (2021): 1536.

229 Michiel Leezenberg, “The Anfal Operations in Iraqi Kurdistan,” 375, 382.

230 Sherko Kirmanj, Aram Rafaat, “The Kurdish genocide in Iraq: The Security-Anfal and the Identity-Anfal,” *National Identities* 23, no. 2 (2020): 18.

231 Steven L. Jacobs, “Kurdish Genocide and Saddam Hussein,” in *Modern Genocide: Analyzing the Controversies and Issues*, ed. Paul R. Bartrop (Santa Barbara: ABC-CLIO, 2018), 192.

232 Samantha Power, *A Problem from Hell: America and the Age of Genocide* (New York: Basic Books, 2013), 172.

233 Michael A. Newton, “The Anfal Genocide: Personal Reflections and Legal Residue”, *Vanderbilt Law Review* 40, no. 5 (2007): 1525.

հային ցեղասպանության»²³⁴ կատեգորիային, որը ներկայացնում է այն դեպքերը, երբ ցեղասպանությունն իրագործվում է հասարակության ներսում մի խմբի ձեռքով ընդդեմ նույն հասարակության մեկ կամ մի քանի այլ խմբերի՝ իշխանություն ձեռք բերելու և/կամ ամրապնդելու համար: «Անֆալ»-ի գործողություններով նպատակ է դրված եղել ոչնչացնել քրդերի կյանքը, սոցիալական և քաղաքական կառույցները, քրդական ինքնությունն ու ապահովել Հուսեյնի և «Բաաս» կուսակցության իշխանությունը Իրաքում: Թերիոն «Անֆալ»-ը համեմատում է Թուրքիայում քրդերի էթնոցիդի կամ թուրքացման քաղաքականության հետ²³⁵:

Կարևոր է այն հանգամանքը, որ Սադամ Հուսեյնը ցեղասպանական գործողություններ է իրագործել քրդերի դեմ այն պայմաններում, երբ քրդական ինքնապաշտպանական ջոկատները դիմադրում էին իրաքյան զինված ուժերին: Իսկ ինքնապաշտպանության դիմելու հանգամանքը որևէ կերպ չի խանգարել, որպեսզի իրաքյան դատարանը Հուսեյնի իշխանության գործողությունները որակի որպես ցեղասպանություն: Իսկ համեմատության շրջանակում այս իրողությունը հիմնադրով է դարձնում թուրքական ժխտողականների տարածած այն թեզը, թե Հայոց ցեղասպանության ժամանակ հայերն ապստամբել կամ ինքնապաշտպանության են դիմել, դրա համար էլ կոտորվել են:

THE “ANFAL” CAMPAIGN AGAINST THE KURDS OF IRAQ

Narek M. Poghosyan

Armenian Genocide Museum-Institute Foundation, Armenia

SUMMARY

During the active regional ethnopolitical ferment, the Kurds appeared in genocidal processes over time, acting as perpetrators, witnesses, casual observers and saviors, as it happened during the massacres of Armenians, Greeks, Assyrians, and Yezidis in the Ottoman Empire.

In another period, 1987-1989, the Kurds were already the target of genocidal violence, when Saddam Hussein's regime launched the campaign called “Anfal” against the Kurdish population of Northern Iraq, which was carried in a total of eight phases and caused thousands of Kurds to be killed or displaced. The Arabization process was one of the main elements of Anfal campaign.

Moreover, the attacks against the Kurdish population were accompanied by the use of

234 Roger Smith, “Human Destructiveness and Politics: The Twentieth Century as an Age of Genocide,” in *Genocide and the Modern Age*, ed. Walliman and Dobkowski, (Syracuse: Syracuse University Press: 2000), 25-26.

235 Henry C. Theriault, “The Role of Turkish Policy Regarding Kurdish Statehood,” in *Modern Genocide: Analyzing the Controversies and Issues*, ed. Paul R. Bartrop (Santa Barbara: ABC-CLIO, 2018), 211-212.

chemical weapons. Especially during the attack on Halabja, chemical weapons were used against a large number of civilians.

However, after the overthrow of Saddam Hussein's regime in 2003, Iraq, facing the crimes committed by his government, not only initiated legal proceedings on the Anfal issue but also recognized the Anfal campaign as genocide. And among Iraqi Kurds, the memory of Anfal became one of the important components of the Kurdish national identity.

Key words: Kurds, Hamidiye regiments, Ottoman Empire, Iraqi Kurdistan, Genocide, crimes against humanity, Iran-Iraq War, chemical weapons, Halabja, Arabization.

КАМПАНИЯ АНФАЛЬ ПРОТИВ КУРДОВ ИРАКА

Нарек М. Погосян

Фонд “Музей-Институт Геноцида армян,” Армения

РЕЗЮМЕ

В результате активных региональных этнополитических брожений курды со временем оказались в геноцидных процессах, выступая в роли виновников, свидетелей, случайных наблюдателей и спасителей, как это произошло во время массовых убийств армян, греков, ассирийцев и езидов в Османской империи.

В другой период, в 1987-1989 годах, курды уже стали объектом геноцидного насилия, когда режим Саддама Хусейна начал операцию под названием «Анфаль» против курдского населения Северного Ирака, которая проходила в общей сложности в восемь этапов и привела к гибели или перемещению тысячи курдов. А процесс арабизации был одним из главных элементов Анфалья.

Нападения на курдское население сопровождалось применением химического оружия. Особенно во время нападения на Халабджу химическое оружие было применено против большого количества мирных жителей.

После свержения режима Саддама Хусейна в 2003 году Ирак, столкнувшись с преступлениями, совершенными его правительством, не только инициировал судебное разбирательство по вопросу Анфаль, но и признал кампанию Анфаль геноцидом. Среди иракских курдов память об Анфале стала одной из важных составляющих курдской национальной идентичности.

Ключевые слова: Курды, гамидийские полки, Османская империя, Ирак, Иракский Курдистан, геноцид, преступления против человечности, Ирано-иракская война, химическое оружие, Халабджа, арабизация.

REFERENCES

«1915 թ. հետքերով գնացող «Հարյուրամյա ցավը» վերակենդանացած հիշողության ուժիմն ու այն ընդհատող հիշողության ջարդն է» [The “Hundred Years’ Pain” in the footsteps of 1915 is a revived memory regime and the memory massacre that interrupts it]. <https://akunq.net/am/?p=60728>;

«Մեր պապերը մասնակցել են հայերի ջարդերին. քուրդ քաղաքապետ» [Our grandfathers participated in massacres of Armenians: Kurdish mayor]. *Civilnet*, December 17, 2014, <https://shorturl.at/clnAM>;

«Սպանե՛ք յոթ հայի և դրախտ կընկնեք. քրդերի վկայությունները Յեղասպանության մասին» [Kill seven Armenians and you will go to heaven: Kurdish testimonies about the Genocide]. *Civilnet*, February 12, 2015, <https://shorturl.at/glrHS>;

«Ֆիրաթ Այդինքայա. Քրդերը և Հայոց ցեղասպանությունը 8 հարցի միջոցով» [Firat Aydinkaya: The Kurds and the Armenian Genocide through 8 questions]. <https://akunq.net/am/?p=74606>;

Bayburdyan, Vahan. *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին* [Armenian-Kurdish relations in the Ottoman Empire in the 19th century and the beginning of the 20th century], ed. H., Inchikyan. Yerevan: Hayastan, 1989;

Bayburdyan, Vahan. *Քրդերը, Հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո* [Kurds, Armenian question and Armenian-Kurdish relations in the light of history]. Yerevan: Author’s Publication, 2008;

Gyunel Teqin, Gyulich’eq. *Ինձ առանց լվանալու կթաղեք: Քրդերը Հայոց ցեղասպանության մասին* [You will bury me without washing. Kurds about the Armenian Genocide]. Yerevan, Vernatun, 2015;

Hatikyan, Hakob. *Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878-1923 թթ.* [Western Armenians in the target of the secret services of the Ottoman Empire from 1878 - 1923.]. Yerevan: AATs gitausumnakan kentron, 2016;

Harutyunyan, Gevorg. «1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում» [The Russo-Turkish War of 1877-1878 and the Armenian Question in the Treaty of San Stefano]. *Patmabanasirakan Handes* 2 (2006): 29-30;

Hovhannisyanyan, Nikolay. *Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը. քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում* [Kurds’ participation in Armenian Genocide: The Kurdish factor in the Armenian concept of solving the issue of Western Armenia]. Yerevan: Tigran Mets, 2016;

Leo. *Հայկական հարցի վավերագրերը* [Documents of the Armenian question]. Yerevan: YSU Publishing, 2014;

Manukyan, Suren. «Հանցակցությունը որպես համախմբող գործոն. Օսմանյան

կայսրությունում 1894-96 թթ. հայերի կոտորածներին քրդերի ներգրավման պատճառների հարցի շուրջ» [Accomplice as a unifying factor: On the question of the reasons for the involvement of the Kurds in the massacres of Armenians in the Ottoman Empire in 1894-96]. *Ts'eghaspanagitakan handes* 6, no. 2 (2018): 24-52;

Poghosyan, Step'an. *Քրդերը և Հայկական հարցը* [Kurds and the Armenian question]. Yerevan: Hayastan, 1991;

Sasuni, Karo. *Քիրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերությունները (ԺԵ. դարէն մինչև մեր օրերը)* [Kurdish National Movements and Armenian-Kurdish Relations (From the XV Century to Our Days)]. Beirut: Hamazkayin, 1969:

Հեղինակի մասին
About the Author
Об авторе

Նարեկ Մ. Պողոսյան, պատմական գիտությունների թեկնածու, «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի Համեմատական ցեղասպանագիտության բաժնի գիտաշխատող:

Ուսումնասիրությունների ոլորտները՝ Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռաֆայել Լեմկինի կողմից, տեխնոլոգիական առաջընթացը և ցեղասպանության իրագործման ռիսկերը, ցեղասպանությունների առանձին օրինակներ (Բանգլադեշ, Կամբոջա, Թիմոր, Անֆալ և այլն), համեմատական ցեղասպանագիտություն, էլիտիցիդ:

Էլ. փոստի հասցե՝ poghosyan.narek@genocide-museum.am

Narek M. Poghosyan, PhD in History, Researcher at the Comparative Genocide Studies Department, Armenian Genocide Museum-Institute Foundation.

Research fields: the study of the Armenian Genocide by Raphael Lemkin, technological progress and the risks of committing Genocide, other genocides (Bangladesh, Cambodia, Timor, Anfal campaign, etc.), comparative genocide studies, eliticide.

E-mail: poghosyan.narek@genocide-museum.am

Нарек М. Погосян, кандидат исторических наук, научный сотрудник Отдела сравнительного геноцидоведения Фонда “Музей-институт Геноцида армян.”

Область исследований – изучение проблемы Геноцида армян Рафаэлем Лемкиным, технологический прогресс и риски совершения геноцида, отдельные примеры геноцидов (Бангладеш, Камбоджа, Тимор, Анфаль и др.), сравнительное изучение геноцидов, элителицид.

Эл. почта: poghosyan.narek@genocide-museum.am

ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐ

Հեղինակների համար

- Հոդվածը պետք է ներկայացնել «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն՝ հեղինակի և բոլոր համահեղինակների(եթե գրված է համահեղինակությամբ) մասին տեղեկատվությամբ:
- Հոդվածը պետք է լինի բացառապես հեղինակի/համահեղինակների կողմից կատարված ուսումնասիրություն. խստիվ արգելվում է գրագողությունը:
- Հոդվածը չպետք է նախկինում նույնությամբ տպագրված լինի որևէ լեզվով՝ բացառությամբ առանձին դեպքերի՝ խմբագրի համաձայնությամբ:
- Հոդվածը չպետք է միաժամանակ հանձնված լինի տպագրության կամ դիտարկման մեկ այլ տեղում:
- Հոդվածը պետք է բարեխղճորեն շարադրված լինի՝ պահպանելով «Ցեղասպանագիտական հանդեսի» սահմանած կանոնները:
- Հոդվածի շրջանակում կատարված ուսումնասիրությունը պետք է հիմնված լինի ստույգ տվյալների վրա:
- Հոդվածը պետք է ունենա գիտական նորոյթ և արդիականություն:
- Հոդվածում (հղման տեսքով) թույլատրելի է երախտագիտություն հայտնել ուսումնասիրությանը որևէ կերպ աջակցած անձանց:
- Հեղինակը պարտավոր է համագործակցել խմբագրակազմի հետ, կատարել անհրաժեշտ փոփոխությունները, հավելումները կամ կրճատումները, ինչպես նաև շտկել սխալները:
- Հեղինակն իրավունք չունի վիճարկելու խմբագրության՝ հոդվածը չտպագրելու որոշումը կամ գրախոսության բացասական կարծիքը՝ առանց հիմնարար փաստարկների:

Գրախոսների համար

«Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածները գրախոսվում են առկա մեկ գրախոսի կողմից: Գրախոսությունը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքի հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ:

Գրախոսը պետք է՝

- նյութը գրախոսի՝ անկախ անձնական հետաքրքրություններից ու շահերից՝ դրսևորելով բացառապես գիտական անաչառ մոտեցում,
- լրացնի գրախոսման համար նրան ուղարկված ձևաթուղթը հնարավորինս սեղմ ժամկետներում,
- շահերի բախման առկայության դեպքում այդ մասին տեղեկացնել խմբագրությանը:

Գրախոսված ձևաթուղթը պահվում է «Ցեղասպանագիտական հանդեսի» արխիվում, չի տրամադրվում որևէ մեկին՝ այդ թվում՝ հեղինակին, և այն հրապարակման ենթակա չէ: Գրախոսման արդյունքների, առաջարկների ու դիտարկումների մասին հեղինակին տեղեկացվում է տրամադրված էլ. փոստի միջոցով:

Խմբագրակազմի համար

Խմբագրակազմը պարտավորվում է՝

- կազմակերպել «Ցեղասպանագիտական հանդեսին» ներկայացված հոդվածների պատշաճ գրախոսությունը,
- հոդվածը «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրություն հանձնելուց հետո՝ երկու ամսվա ընթացքում, հեղինակին տեղեկացնել խմբագրական խորհրդի որոշման վերաբերյալ,
- հետևել պարբերականի հրատարակչական էթիկետին և երաշխավորել հրատարակվող աշխատանքների գիտական բարձր մակարդակը,
- չհրապարակել հեղինակի և գրախոսի անձնական տվյալները և չտրամադրել դրանք երկու կողմերին:

Խմբագրությունն իրավունք ունի մերժելու հոդվածի տպագրությունը, եթե այն չի համապատասխանում խմբագրության կողմից սահմանված պահանջներին:

Խմբագրությունը նյութերի տպագրության կամ մերժման որոշումը կայացնում է՝ հիմնվելով գրախոսների կատարած առաջարկների ու դիտարկումների վրա՝ հանդեսի տեխնիկական պահանջներին բավարարելու դեպքում:

Գրախոսման փուլի ավարտից և հեղինակի կողմից կատարված շտկումներից հետո հոդվածները խմբագրվում են «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրական մոտեցումներին համաձայն:

Հեղինակային իրավունք

Հրատարակված նյութերի հեղինակային իրավունքը (©) պատկանում է «Ցեղասպանագիտական հանդեսին»: Տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո հեղինակը պարտավորվում է լրացնել և ստորագրել հեղինակային իրավունքի փոխանցման վերաբերյալ ձևաթուղթը:

Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր

Հեղինակի պատասխանատվությունն է հեղինակային իրավունքով պաշտպանված ցանկացած նյութի (լուսանկար, տեքստ, պատկեր, աղյուսակ, դիագրամ և այլն) տպագրության կամ վերատպության համար գրավոր թույլտվություն ստանալը (ում պատկանում է հեղինակային իրավունքը): Դրանք պետք է տրամադրվեն «Ցեղասպանագիտական հանդեսի» խմբագրությանը (տպագրելու վերաբերյալ դրական որոշում ստանալուց հետո): Հեղինակային իրավունքով պաշտպանված նյութերի համար ձևաթուղթը կտրամադրվի խմբագրության կողմից:

ՅՈՒՅՈՒՄՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման համար կարող են ներկայացվել գիտական հոդվածներ, գրախոսություններ, ինչպես նաև, առանձին դեպքերում խմբագրության որոշմամբ, մշակված անտիպ հուշագրություններ:

Ցեղասպանագիտական հանդեսում հրատարակման ներկայացվող հոդվածները լինելու են հիմնականում հայերենով (արևելահայերեն, արևմտահայերեն), իսկ առանձին դեպքերում՝ խմբագրության համաձայնությամբ՝ նաև օտար լեզուներով:

Ներկայացվող հոդվածները նախ դիտարկվում և հավանության են արժանանում խմբագրակազմի կողմից, ապա՝ թեմատիկ, որակական և տեխնիկական պահանջների

բավարարման դեպքում միայն՝ ուղարկվում գրախոսության:

Յեղասպանագիտական հանդեսին ներկայացված հոդվածները գրախոսվում են առնվազն մեկ գրախոսի կողմից, գործընթացը կազմակերպվում է երկկողմանի գաղտնիության սկզբունքով: Գրախոսությունների արդյունքների հիման վրա խմբագրությունը որոշում է կայացնում նյութը հրատարակելու կամ մերժելու վերաբերյալ: Խմբագրությունն իրավունք ունի անմիջապես մերժել ներկայացված նյութը՝ Յեղասպանագիտական հանդեսի տեխնիկական և գիտական պահանջներին չբավարարելու դեպքում:

Յեղասպանագիտական հանդեսում հոդվածների տպագրությունը կատարվում է անվճար հիմունքով:

ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Ծավալը՝ մինչև 30 էջ (ավելի մեծ ծավալի դեպքում՝ խմբագրության որոշմամբ):
2. Հայերեն տեքստը կազմել «Sylfaen» տառատեսակով, լատինատառ և սլավոնատառ տեքստերը՝ «Times New Roman» տառատեսակով, 12 տառաչափով, իսկ հղումները՝ 10 տառաչափով:
3. Առաջին էջում գրել հոդվածի հեղինակ(ներ)ի անունը, հայրանվան սկզբնատառը, ազգանունը, գիտական աստիճանը:
4. Հոդվածի վերնագիրը գրել ՄԵԾԱՏԱՌ-ԵՐՈՎ, թավատառ, հավասարեցնել կենտրոնում:
5. Հաջորդ տողում գրել «Բանալի բառեր — » արտահայտությունը և կցել նվազագույնը 5 հանգուցային բառ կամ արտահայտություն՝ 10 տառաչափով:
6. Հոդվածի բնագրի լեզվով գրել կարճ ներածական հատված (Abstract)՝ 150-200 բառ:
7. Անհրաժեշտության պարագայում բուն տեքստից անմիջապես հետո հասցեագրել երախտագիտություն անհատներին և/կամ կազմակերպություններին (acknowledgment):
8. Հոդվածի բուն տեքստից հետո (եթե կա երախտագիտության խոսք, ապա դրանից հետո) գրել նախ անգլերեն, ապա՝ ռուսերեն ամփոփումը: Անգլերեն հոդվածի դեպքում գրել նախ հայերեն, ապա՝ ռուսերեն ամփոփում, իսկ ռուսերեն հոդվածի դեպքում՝ նախ հայերեն, ապա՝ անգլերեն ամփոփում:
Յուրաքանչյուր լեզվով ամփոփման վերնագրից հետո կցել համապատասխան լեզվով բանալի բառեր (բանալի բառերը բոլոր լեզուներով տրվող ամփոփումներում պետք է լինեն նույնը):
9. Ամփոփումներից հետո ներկայացնել ոչ լատինատառ գրականության ցանկն այբբենական կարգով՝ նշելով նյութի վերնագիրը բնագրով, իսկ [] փակագծերում տալ համարժեք անգլերեն թարգմանությունը: Հղման այլ մանրամասները (հեղինակի անուն, ազգանուն, հրատարակչության անունը, վայրը, ամսագրի վերնագիրը և այլն) տալ լատինատառ՝ ներկայացված տառադարձմամբ, օրինակ՝

Marut'yan, Harut'yun. *Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Յեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը* [Iconography of Armenian Identity. Vol. 1: The Memory of Genocide and the Karabagh Movement]. Yerevan: Gitut'yun, 2009;

Սուրիական տարեցոյց [Syrian Almanach]. Cairo: Zareh Pe'rpe'rean, 1924;

Ցավի, հիշողության և պայքարի կրթողներ. Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված կրթողներ [Memorials of Sorrow, Remembrance and Struggle]. Yerevan: Ministry of Diaspora, 2010;

Sahakyan, Vera. «Հատուկ կազմակերպության (Թեշքիլաթ-ը Մախսուսե) ձևավորման նախադրյալները», *Հայոց ցեղասպանություն – 100. Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու* [“Prerequisites of the Formation of Special Organization (Teşkilât-ı

Mahsusa)” in Armenian Genocide -100. Collection of Papers of the International Conference]. Yerevan: Gitut’yun, 2016, 198-212.

Marutyun, Harutyun. «Ինքնություն «ամրացման» երկու հնարատրություններ Հայաստան-Սփիւք յարաբերությունների համատեքստում», *Սփիւք եւ ինքնություն* (խմբ.՝ Շահան Գաստահարյան) [“Two ‘possibilities’ of strengthening Identity in the Context of Armenia-Diaspora Relations,” in Diaspora and Identity (ed. Shahan Kandaharian)]. Antelias-Lebanon: Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2018, 219-233.

Margaryan, Narine. «Հայ երեխաների թրքացման գործընթացն Օսմանյան կայսրության պետական որբանոցներում (1915-1918 թթ.)» [Turkification of Armenian Children in the Ottoman Empire’s State Orphanages (1915-1918)]. *Ts’eghaspanagitakan handes* 4 no. 1 (2016): 25-43;

Antonyan, Aram. «Տօքոս. Ալթունյան» [Dr. Alt’unyan]. *Veratsnund* (Paris), 27 May, 1919, no. 12.

10. Ներկայացնել նաև հեղինակի մասին տվյալներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ գրել նաև պաշտոնը և աշխատավայրը, ուսումնասիրությունների ոլորտը, էլ. փոստի հասցեն:

ՀՂՈՒՄՆԵՐ

11. Ցեղասպանագիտական հանդեսի հղումները ձևավորել համաձայն *The Chicago Manual of Style Online 17th Edition*-ի:

Հղումները պետք է համարակալվեն սկզբից մինչև վերջ: Անկախ լեզվից յուրաքանչյուր աղբյուր, եթե շարունակաբար հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից պետք է օգտագործվի՝

Նույն տեղում: (եթե էջը նույնն է)

Նույն տեղում, ...: (եթե էջը փոխվում է)

Ա. *Գրքեր* (մենագրություններ կամ համահեղինակությամբ աշխատություններ)

1) Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը (ամբողջությամբ), հեղինակի ազգանունը, վերնագիրը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Բոլոր գրքերի վերնագրերը գրել շեղատառ:

Անգլերեն վերնագրերի բոլոր բառերը (բացառությամբ նախդիրների, հոդերի կամ շաղկապների) գրել մեծատառ: Օր.՝

1. Սարգիս Թորոսյան, *Դարդանելից մինչև Պաղեստին* (Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013), 55:

2. Валерий Тунян, *Россия и Армянский вопрос* (Ереван: Музей-институт Геноцида армян, 1998), 55.

3. Vahagn Dadrian, *The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus* (Providence - Oxford: Berghahn Books, 1995), 55.

2) Եթե նույն հոդվածում գիրքը հղվում է մեկից ավելի անգամ, ապա սկսած երկրորդ հղումից և անկախ լեզվից պետք է նշվի կրճատ տարբերակը՝ հեղինակի ազգանունը, գրքի շեղատառ վերնագիրը (կարճ վերնագրերի դեպքում) կամ վերնագրի առաջին մի

քանի բառը (երկար վերնագրի դեպքում): Օր.՝

Թորոպյան, *Դարդանելից մինչև Պաղեստին*, 55:

Туняян, *Россия и Армянский вопрос*, 55.

Dadrian, *The History of the Armenian Genocide*, 55.

4) Մեկից ավելի հեղինակների դեպքում, գրել առաջին երկու հեղինակների անունները և ազգանուններն ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”; “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

Բ. Թարգմանված գրքեր

Հղումները պետք է պարունակեն հրատարակության ամբողջական տվյալները. հեղինակի անունը, ազգանունը, գրքի վերնագիրը, թարգմանողի ամբողջական անունը և ազգանունը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Գրքի վերնագիրը պետք է գրել շեղատառ:

1. Jhumpa Lahiri, *In Other Words*, trans. Ann Goldstein (New York: Alfred A. Knopf, 2016), 146.

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում), շեղատառ, էջը: Օր.՝

1. Lahiri, *In Other Words*, 184.

Գ. Թվային գրքերի (ebook)

Թվային գրքերի օգտագործման դեպքում գրել գրքի տվյալները վերոնշյալ սկզբունքներով, ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը: Եթե գրքի էջերը առկա չեն, ապա պետք է նշել բաժնի կամ գլխի համարը և դիտման ժամանակը: Օր.՝

1. Herman Melville, *Moby-Dick; or, The Whale* (New York: Harper & Brothers, 1851), 627, <http://mel.hofstra.edu/moby-dick-the-whale-proofs.html>, դիտվել է 17.07.2019:

2. Philip B. Kurland and Ralph Lerner, eds., *The Founders' Constitution* (Chicago: University of Chicago Press, 1987), chap. 10, doc. 19, <http://press-pubs.uchicago.edu/founders/>, դիտվել է 17.07.2019:

3. Brooke Borel, *The Chicago Guide to Fact-Checking* (Chicago: University of Chicago Press, 2016), 92, ProQuest Ebrary.

4. Jane Austen, *Pride and Prejudice* (New York: Penguin Classics, 2007), chap. 3, Kindle.

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է գրել հեղինակի ազգանունը և գրքի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) շեղատառ, էջը կամ բաժնի կամ գլխի համարը: Օր.՝

1. Melville, *Moby-Dick*, 722–723.

2. Kurland and Lerner, *Founders' Constitution*, chap. 4, doc. 29.

3. Borel, *Fact-Checking*, 104–105.

4. Austen, *Pride and Prejudice*, chap. 14.

Դ. Ժողովածուներ

1) Ժողովածուները պետք է հղվեն՝ նշելով հեղինակի անունը, ազգանունը ամբողջական,

հողվածի կամ գլխի վերնագիրը չակերտների մեջ, ամբողջ ժողովածուի վերնագիրը, խմբագիր(ներ)ը կամ կազմող(ներ)ը, հրատարակության քաղաք(ներ)ը, հրատարակիչը, տարեթիվը: Օր.՝

1. Vahakn Dadrian, “Ottoman Archives and Denial of the Armenian Genocide,” in *The Armenian Genocide: History, Politics, Ethics*, ed. Richard G. Hovannisian (New York: St. Martin’s Press, 1992), 280.
2. Վերժինե Սվազյան, «Հայոց ցեղասպանությունը ըստ ականատես վերապրողների վկայությունների», *Հայոց Մեծ եղեռն 90*, հողվածների ժողովածու (Երևան, ԵՊՀ հրատ., 2005), 471:
3. Сурен Манукян, “Наказание за верность.” От Эрзурумского конгресса до Сарыкамышского сражения,” *Первая мировая война: взгляд спустя столетие: доклады и выступления участников V Международной научно-практической конференции* (М.: Изд-во МНЭПУ, 2016), 648.

2) Բազմակի ոչ շարունակական հղումներնրի դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի կամ գլխի վերնագիրը ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ ձևով (երկար վերնագրերի դեպքում) չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Dadrian, “*Ottoman Archives*,” 471.
2. Սվազյան, «*Հայոց ցեղասպանությունը*», 471:
3. Манукян, “*Наказание за верность*,” 648.

Ե. Հողվածներ

1) Հողվածներ հղելիս նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հողվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Առկայության դեպքում ավելացնել գրքի URL կամ շտեմարանի անունը, նաև `DOI-ն (Digital Object Identifier): Օր.՝

1. Rouben P. Adalian, “Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire,” *Journal of Genocide Research* 3, no. 1 (2001): 35.
- Shao-Hsun Keng, Chun-Hung Lin, and Peter F. Orazem, “Expanding College Access in Taiwan, 1978–2014: Effects on Graduate Quality and Income Inequality,” *Journal of Human Capital* 11, no. 1 (2017): 9–10, <https://doi.org/10.1086/690235>
3. Peter LaSalle, “Conundrum: A Story about Reading,” *New England Review* 38, no. 1 (2017): 95, Project MUSE.
4. Շուշան Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը. հրովարտակներ, հրահանգներ ու կոչեր», *Ցեղասպանագիտական հանդես* 6, թիվ 2 (2014), 40:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հողվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Adalian, “Comparative Policy and Differential Practice,” 35.
2. Keng, Lin, and Orazem, “Expanding College Access,” 23.
6. Խաչատրյան, «Ջիհադը և Հայոց ցեղասպանությունը», 40:

Զ. Համահեղինակությամբ հողվածներ

Երեքից ավել համահեղինակ ունեցող հոդվածներում նշել առաջին հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, ապա՝ «և ուրիշներ», “и др.”, “et. al.”, որից հետո շարունակել վերը նշված սկզբունքներով:

է. Մամուլ

Մամուլի հոդվածներ հղելիս պետք է նշել հեղինակի ամբողջական անունը, ազգանունը, հոդվածի վերնագիրը չակերտների մեջ, իսկ հանդեսի անվանումը շեղատառ: Մշել նաև հանդեսի տպագրության վայրը: Օր.՝

1. Գալստյան Սուսանա, «Երվանդ Օտյանը և ազգային տոնը», *Ազգ օրաթերթ* (Երևան), 24 ապրիլի 2010, 13:
2. Rebecca Mead, “The Prophet of Dystopia,” *New Yorker*, April 17, 2017, 43.
3. Farhad Manjoo, “Snap Makes a Bet on the Cultural Supremacy of the Camera,” *New York Times*, March 8, 2017, <https://www.nytimes.com/2017/03/08/technology/snap-makes-a-bet-on-the-cultural-supremacy-of-the-camera.html>.
4. Խմբագրական, *Ազատամարտ* օրաթերթ (Կ.Պոլիս), 31 հոկտեմբեր/13 նոյեմբեր 1914, 1:

Բազմակի ոչ շարունակական հղումների դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, հոդվածի ամբողջական (կարճ վերնագրերի դեպքում) կամ կրճատ (երկար վերնագրերի դեպքում) վերնագիրը չակերտների մեջ, էջը: Օր.՝

1. Գալստյան, «Երվանդ Օտյանը», 13:
2. Mead, “The Prophet of Dystopia,” 43.
3. Manjoo, “Snap.”
4. Խմբագրական, 1:

Ը. Թեզեր և ատենախոսություններ

Թեզերը և ատենախոսությունները հղելիս պետք է նշել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ, թեզի կամ ատենախոսության վերնագիրը չակերտների մեջ, պաշտպանության վայրը, տարեթիվը, էջը: Օր.՝

1. Cynthia Lillian Rutz, “King Lear and Its Folktale Analogues” (PhD diss., University of Chicago, 2013), 99–100.
2. Նարեկ Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը Ռ-աֆայել Լեմկինի կողմից» (ատեն., ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2017), 77:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք է նշել հեղինակի ազգանունը, թեզի կամ ատենախոսության վերնագիրը՝ ամբողջությամբ կամ կրճատ, շեղատառ, չակերտների մեջ, պաշտպանության վայրը և տարեթիվը, էջը:

1. Rutz, “King Lear,” 158.
2. Պողոսյան, «Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրությունը», 77:

Թ. Համացանց

Համացանցային նյութերը հղելիս՝ գրել հեղինակի անունը և ազգանունը ամբողջությամբ (եթե նշված է), նյութի վերնագիրը (եթե նշված է), ապա՝ համացանցային հասցեն և նյութից օգտվելու ամսաթիվը: Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton,” <http://www.genocidewatch.org/genocide/tenstagesofgenocide.html>, դիտվել է 17.07.2019:

2. Նարինե Մարգարյան, «Օսմանյան Կայսրության Պետական Որբանոցներում Կիրառվող Թրքացման Մեթոդները», <http://www.genocide-museum.am/arm/05.02.2019-MargaryanNarine.php>, դիտվել է 17.07.2019:

3. Katie Bouman, “How to Take a Picture of a Black Hole,” filmed November 2016 at TEDxBeaconStreet, Brookline, MA, video, 12:51, https://www.ted.com/talks/katie_bouman_what_does_a_black_hole_look_like, դիտվել է 17.07.2019:

Բազմակի ոչ շարունակական հղման դեպքում պետք նշել հեղինակի ազգանունը և/կամ նյութի վերնագիրը(երկար վերնագրերի դեպքում՝ կրճատ): Օր.՝

1. “The Ten Stages of Genocide by Dr. Gregory Stanton.”

2. Մարգարյան, «Օսմանյան Կայսրության»:

3. Bouman, “Black Hole.”

12. Անձնական հաղորդակցություններ

Անձնական հաղորդակցությունները, ներառյալ էլեկտրոնային և տեքստային նամակները (messages), ինչպես նաև սոցիալական ցանցերի միջոցով ուղարկվող հաղորդագրությունները հղելիս, պետք է նշել հետևյալ կերպ.

1. Պետրոս Տեր-Մաթոսյան, Ֆեյսբուքյան նամակ հեղինակին, 1 օգոստոսի 2017 թ.:

2. Պետրոս Տեր-Մաթոսյան, էլեկտրոնային նամակ հեղինակին, 15 մարտի 2017 թ.:

13. Ամսաթվերի գրելաձև

1. Խոսքին քերականորեն չկապվող ամսաթվերում նախադաս թվանշանը գրել առանց չակերտի և առանց հոդի, իսկ ամսանունը՝ սեռական հոլովաձևով: Պահպանել ամսաթիվ-ամսանուն-տարեթիվ հերթականությունը: Ամսանունը գրել փոքրատառ: Այսպես՝ 15 մայիսի 2018 թ. կամ 15.05.2019:

Թույլատրելի է նաև ամսանվան ուղիղ ձևով գրությունը: Օրինակ՝ 15 մայիս 2018 թ.: Շարադասության փոփոխության դեպքում ամսանունը կարող է գրվել նաև սկզբում: Օրինակ՝ մայիսի 15 2018 թ.:

1. Ամիս-ամսաթիվը և տարեթիվն իրարից ստորակետով չանջատել: Օրինակ՝ 3 հունվարի 2019 թ. կամ 2019 թ. փետրվարի 1:

2. Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերում գործածել միջակետ: Օրինակ՝ 25.01.2019:

3. «Թվական» բառի համառոտագրությունը՝ «թ.»-ն, գրել թվանշանից առանձին՝ թողնելով բացատ: Օրինակ՝ 31 հունվարի 2019 թ.: Միայն թվերով գրվող ամիս-ամսաթվերից հետո «թ.»-ն չգրել՝ համարելով ավելորդ:

14. Տառադարձություն

Հայերեն

Ա ա - A a
Բ բ - B b
Գ գ - G g
Դ դ - D d
Ե ե - E e
Զ զ - Z z
Է է - E' e'
Ը ը - È è
Թ թ - T' t'
Ճ ճ - Zh zh
Ի ի - I i
Լ լ - L l
Խ խ - Kh kh
Մ մ - Ts ts
Կ կ - K k
Հ հ - H h
Չ չ - Dz dz
Ղ ղ - Gh gh
Ճ ճ - Ch ch
Մ մ - M m
Յ յ - Y y
Ն ն - N n
Շ շ - Sh sh
Ո ո - Vo vo (բառամիջում գրելի օ ձևով)
Չ չ - Ch' ch'
Պ պ - P p
Ջ յ - J j
Ռ ռ - R' r'
Ս ս - S s
Վ վ - V v
Տ տ - T t
Ր ր - R r
Յ ճ - Ts' ts'
Ու ու - U u
Փ փ - P'p'
Ք ք - Q q
Եվ է Ev ev
Օ օ - O' o'
Ֆ ֆ - F f

Ռուսերեն

А а - A a
Б б - B b
В в - V v
Г г - G g
Д д - D d
Е е - E e
Ё ё - Io io
Ж ж - Zh zh
З з - Z z
И и - I i
Й й - İ ï
К к - K k
Л л - L l
М м - M m
Н н - N n
О о - O o
П п - P p
Р р - R r
С с - S s
Т т - T t
У у - U u
Ф ф - F f
Х х - Kh kh
Ц ц - Ts ts
Ч ч - Ch ch
Ш ш - Sh sh
Щ щ - Shch shch
Ъ ъ - “
Ы ы - Y y
Ь ь - ‘
Э э - E' e'
Ю ю - Iu iu
Я я - Ia ia

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ օֆսեթ,
տպաքանակը՝ 100:

Համակարգչային ձևավորումը՝ Քրիստինե Վարդանյանի

Տպագրությունը՝ «ՀՈՎՍԵՓՅԱՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Վ. Վաղարշյան 24/3
Հեռ.՝ +374 43 10-70-90
hovsepyanprint@gmail.com